ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(1918 – 1920 ԹԹ.)
(անկախության 100 - ամյակի առթիվ)

ԵՐԵՎԱՆ – 2018

Հակոբյան Ա. Մ., Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Անկախության 100-
ամյակի առթիվ, Պատ. խմբ.՝ ..., Եր., 2018, էջ 150:

Սույն հոբելյանական հրատարակությունը նվիրված է պետական մակարդակով մեզանում նշվող Հայաստանի Հանրապետության 100-ամյա տարեդարձին: Աշխատանքում ընդհանուր գծերով ներկայացված է պատմական դեպքերի ու իրադարձությունների, այդ թվում Մայիսյան հաղթական հերոսամարտերի այն գործընթացը, որն ի վերջո հանգեցրեց Հայաստանի անկախությանը: Գրքում կարմիր թելի պես անցկացվում է այն գաղափարը, որ հին և միջնադարյան հայոց պետականությունների կորստից հետո էլ հայ ժողովրդի մեջ շարունակեց պահպանվել ազատության ու անկախության ոգին ու տեսլականը, որն ի վերջո իր մարմնավորումը գտավ՝ հանձին Հայաստանի Հանրապետության: Ամփոփ կերպով ներկայացված է հայոց պետականաշինության գործընթացը, պատկերված են հայ ժողովրդի ու հայ հասարակական-քաղաքական ուժերի ու գործիչների թափած գերմարդկային ջիգերն ու ջանքերը, ովքեր կարողացան Առաջին աշխարհամարտի, ռուսական հեղափոխությունների քաղաքական ցնցումների, Հայոց Մեծ եղեռն տեսած, 1918 թ. թուրքական ներխուժման պայմաններում կյանքի ու մահվան եզրին կանգնած ժողովուրդն ու երկիրը դուրս բերել այդ դժոխքից ու կերտել 20-րդ դարի հայոց առաջին անկախ պետականությունը՝ ՀՀ: Միաժամանակ ցույց է տրված իրավահաջորդության կապը Հայաստանի երեք հանրապետությունների միջև: Հանգամանալի ներկայացված են Առաջին Հանրապետության շրջանում ձեռք բերված այն նյութական ու հոգևոր արժեքներն ու արդյունքները, նաև ժողովրդի ապրած խորը հիասթափությունները, որոնք օգտակար, արդիական, դասառատ և ուսանելի են նաև մեր ժամանակներում:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Պատմական չափանիշներով յուրաքանչյուր ազգ-ժողովրդի ինքնակազմակերպման բարձրագույն ձևը սեփական ազգային, անկախ և կենսունակ պետականության ստեղծումն է ու բնականոն գործունեությունը: Հազարամյակներ շարունակ այդ տեսլականին է ուղղված եղել հայ քաղաքական միտքը: Հայ ազգային ոգուն և էությանը խորթ չեն ազատությունը և անկախությունը, Մեծն Նժդեհի խոսքերով ասած՝ **վճռական մենակի հոգեբանությունը**: Իսկ մեծանուն գրող, հասարակական-քաղաքական գործիչ Լ.. Շանթի դիտարկմամբ՝ անկախության ձգտումը հայ ժողովրդի մեջ այնքան հին է, որքան ինքը՝ հայ ժողովուրդը:

Հին և միջին դարերում հայ քաղաքական միտքը կերտել է անկախ պետականությունների ու արքայատոհմերի հարուստ ընտրանի՝ Արարատյան (Վանի), Երվանդունի, Արտաշիսյան, Արշակունի, Բագրատունի, Զաքարյան, Կիլիկյան և այլն: Սակայն հետագա դարերում արտաքին ու ներքին ոչ նպաստավոր հանգամանքների (գործոնների) պատճառով հայ ժողովուրդը կորցրեց իր անկախ պետականությունը: Հայաստանը դարձավ ռազմական թատերաբեմ օտար նվաճողների համար, պատմության ընթացքում ավելի քան չորս անգամ բաժանվեց, ծվատվեցին ու բռնազավթվեցին նրա տարածքները: Բայց հայ հասարակական-քաղաքական շրջանակները, հայ ազատաբաղձ միտքը երբեք չդադարեցին ուղիներ փնտրել Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրման և սեփական ազգային պետականության վերականգնման ուղղությամբ:

Առհասարակ կորցնել անկախ պետականությունը նշանակում է զրկվել ոչ միայն պետական կառույցներով ինքնապաշտպանվելու զորեղ, գործուն լծակից՝ կանոնավոր բանակից, պետական, քաղաքական-դիվանագիտական կառույցներից, ժողովրդին համախմբող ուժից, սեփական նյութական ռեսուրսներին տնօրինելուց և այլն, այլև դրանով վտանգվում են ու խախտվում ազգի ու երկրի բնականոն կյանքի ու ստեղծարար գործունեության կարելիությունները:

Միաժամանակ հարկ է նշել, որ հայոց պետականության դարավոր կորստի պայմաններում հայ ազգի ինքնության ու ինքնապաշտպանության զորեղ կռվաններ են հանդիսացել ա) հայ նահապետական ավանդական ընտանիքը՝ իբրև ազգի ինքնապահպանման բջիջ, բ) մայրենի լեզուն, գիրն ու գրչությունը՝ իբրև հզոր զենք ուծացման վտանգներին դիմակայելու և գ) հայ եկեղեցին ի մասնավորի հայ առաքելական սուրբ եկեղեցին՝ իբրև ազգի հոգևոր համախմբման ու պահպանության միջոց: Այդուհանդերձ, այս և այլ ձևերով հայ ժողովուրդը դիմակայելով, պայքարելով, արարելով պահպանեց իր հայրենիքն ու ազգային ինքնությունը՝ հասնելով նոր ժամանակներ:

Ուշ միջնադարում և նոր ժամանակներում, երբ Հայաստանն ու հայ ժողովուրդը, երկու անգամ ևս բաժանվելով հարևան տերությունների միջև և չկարողանալով տանել դրանց ճնշումներն ու հալածանքները, սկսում է դարձյալ ազատագրվելու ուղիներ փնտրել: Հարկ է նշել, որ պատմական այդ փուլում հայ ազատագրական շարժման ու պայքարի օջախներ դարձան ա) **հայկական գաղթօջախները**, բ) **հայ մելիքական տները** և գ) **հայ առաքելական եկեղեցին՝** հայոց հայրապետի գլխավորությամբ: Տեսնելով, որ սեփական ուժերով ի վիճակի չեն ազատագրվել՝ վերջիններս ավելի հաճախ դիմել են օտար տերությունների, անգամ Հռոմի պապի օգնությանը, ինչը, սակայն, գործնական որևէ արդյունքի չի հանգեցրել: Հայ քաղաքական միտքը, ազատագրության գաղափարաբանները ծրագրեր մշակեցին, հայրենիքը ազատագրելու ակնկալիքով՝ դեգերեցին եվրոպական երկրներ ու Ռուսաստան, բանակցեցին օտար պետությունների ղեկավարների հետ, սակայն վերջին հաշվով հուսախաբ հետ վերադարձան:

Միաժամանակ հարկ է փաստել այն իրողությունը, որ ի սկզբանե հայ ազատագրական շարժման նպատակը եղել է ոչ թե ազատագրել հայրենիքը պարսկաթուրքական տիրապետությունից և միանալ Ռուսաստանին, ինչպես ներկայացնում են խորհրդահայ շատ պատմաբաններ և ռուսամետ հեղինակներ, այլ Ռուսաստանի կամ Արևմուտքի որևէ քրիստոնյա տերության օգնությամբ ու հովանավորությամբ **վերականգնել հայոց անկախ պետականությունը**: Հասկանալի է, որ հայ հասարակական-քաղաքական մտքի ու

գործիչների դարավոր դեգերումներից ու հուսախաբություններից հետո դեռ էլի ժամանակ պետք է անցներ, մինչև որ նրանք կհանգեին **սեփական ուժերին ապավինելու** աներկբա գաղափարին: Բայց ում էլ որ դիմել են, ինչ քայլերի էլ որ դիմել են նրանց մեջ միշտ առկա է եղել անկախ պետականության հասնելու գաղափարը:
Հայրենիքի ազատագրության և ազգային պետականության ստեղծման գաղափարի նյութականացման համար ավելի առարկայական նախադրյալներ ստեղծվեցին արդեն 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբներին, երբ նոր պայմաններում Հայաստանի ազատագրության գաղափարաբան գործիչները, գրողները, իմաստասերները, դարավերջին ասպարեզ իջած հայ ազգային քաղաքական կուսակցությունները, ազատագրական պայքարի նվիրյալ մարտիկները (ֆիդայիները), մյուս ճնշված ազգերի, հատկապես բալկանյան ժողովուրդների օրինակով համարձակորեն պայքարի դրոշ պարզեցին օտարի ճնշումներից ու բռնություններից ազատագրվելու և սեփական հայրենիքում պետականություն կերտելու, աշխարհի քաղաքակիրթ մյուս ազգերի պես ազատ-անկախ ապրելու, արարելու, ստեղծագործելու իրավունքը նվաճելու նպատակով:
19-րդ դարի երկրորդ կեսից սկսած՝ ազգային ինքնագիտակցության ու ինքնաճանաչման որակապես նոր վերելքի շրջանում, երբ աշխարհի նախկինում ճնշված և պետականազուրկ շատ ազգեր ու ժողովուրդներ Բալկաններում, Լատինական Ամերիկայում և այլուր քաղաքական ազատություն և անկախություն ձեռք բերեցին, հայ հասարակական-քաղաքական մտքում ևս **անկախության գիտակցությունը**՝ իբրև **գերագույն քաղաքակրթական արժեք**, կրկին վերսկսեց պարարտ հող գտնել և իրական կերպարանք ստանալ:
Հայ ազատագրական շարժման ու պայքարի կիզակետում առաջին հերթին գտնվել է սուլթանական բիրտ լծից առավել ճնշված ու հարստահարված Արևմտյան Հայաստանն ու արևմտահայությանը ազատագրելու հիմնահարցը: Դրա համար էլ այդ գերնպատակով դարավերջին ասպարեզ իջած հայ ազգային երեք՝ Արմենական, Հնչակյան և ՀՅԴ քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը, իր մարտավարական առանձին դրսևորումներով հանդերձ, որդեգրել էր Արևմտյան Հայաստանը (այն ժամանակ գործածվող արտահայտությամբ՝ Թուրքահայաստանը) ազատագրելու

ռազմավարություն: Պարզաբանման կարգով նշենք, որ պատմական այդ շրջափուլում, երբ ասվում էր «Հայաստան»՝ դրա տակ հասկացվում էր զուտ Արևմտյան Հայաստանը:
Ինչ վերաբերում է Ռուսական կայսրության տիրապետության ներքո գտնվող Արևելյան Հայաստանի ու արևելահայության կացությունը, ապա նրանց սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը համեմատաբար ավելի տանելի էր: Ուստի Հայաստանի այդ հատվածի ազատագրության և անկախության հարցը կարծես այնքան էլ սուր և հրատապ կերպով չէր դրվում:
Հայ քաղաքական կուսակցություններից առաջինը հնչակյաններն իրենց ծրագրում հռչակեցին «Թուրքահայաստանի քաղաքական անկախության» և պատմական Հայաստանի երեք հատվածներից «Մեծ Հայաստան» ստեղծելու պահանջը: Ընդսմին, հնչակյանների համար Հայաստանի քաղաքական անկախությունը վերջնանպատակ չէր, այլ լոկ անհրաժեշտ նախապայման հայ ժողովրդի քաղաքական ու սոցիալ-տնտեսական կյանքի արմատական վերափոխման համար: Սակայն հաշվի առնելով Հայաստանի աշխարհաքաղաքական պայմանները և իրար դիմակայող ուժերի անհավասար հարաբերակցությունը, ինչպես նաև ներքին ու արտաքին մի շարք աննպաստ պայմաններ՝ դժվար չէ նկատել, որ ժամանակաշրջանի այդ կտրվածքում գործնականում շատ դժվարին խնդիր էր, եթե չասենք գրեթե անհնարին, ոչ միայն Հայաստանի անկախության ձեռքբերումը, այլև, ինչպես ցույց տվեց Բեռլինի (1878 թ.) դաշնագրի 61-րդ հոդվածի գործադրման պատմությունը, քիչ թե շատ բարենորոգումներ կատարելը:
Ըստ ամենայնի, կարծում ենք, որ այս ամենը հաշվի էին առել 1890 թ. ամռան վերջին Թիֆլիսում հեղափոխական բազմաթիվ խմբակների միակցության միջոցով քաղաքական ասպարեզ իջած Հայ Յեղափոխականների Դաշնակցություն (ՀՅԴ) կուսակցության գաղափարական և կազմակերպական ղեկավարները՝ **Քրիստափոր Միքայելյանը (1859-1905), Սիմոն Զավարյանը (1865-1913) , Ռոստոմը (Ստեփան Զորյան)** (**1867-1919),** ովքեր, Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ազատագրության համար կյանքի և մահվան կռիվ հայտարարելով թուրքական կառավարությանը, բոլոր բռնացողներին ու հարստահարողներին, այնուամենայնիվ, գիտակցաբար

անկախության պահանջ չէին դնում: Դարասկզբին ՀՅԴ (1907 թ.) երկրորդ ծրագրում դարձյալ հեռատեսորեն խոսվում էր ընդամենը երկու Հայաստանների՝ Արևմտյան և Արևելյան, ինքնավարության պահանջի մասին՝ համապատասխանաբար՝ Թուրքիայի և Ռուսաստանի կազմում:
Ի տարբերություն Արմենական և Հնչակյան կուսակցությունների՝ ՀՅԴ-ն միանգամից չի դրել անկախության պահանջ, նա հետևել է մի կողմից հայ հանրության գիտակցության մեջ անկախության գաղափարի ներքին համոզմունք ու տիրապետող պահանջմունք դառնալու գործընթացին, իսկ մյուս կողմից՝ դրա համար սոցիալ-քաղաքական անհրաժեշտ նախադրյալների առաջացմանը:
Արդարև, այդ ժամանակներում հայ ժողովրդի մեջ, որքան էլ բաղձալի լիներ անցյալի անկախ պետականության վերհուշը, այնուամենայնիվ, ժողովուրդն իր ճնշող մեծամասնությամբ Հայաստանի անկախության խնդիր բացահայտ չի բարձրացրել և առկա պատմաքաղաքական պայմաններում նա դեռևս դրան պատրաստ չէր ո՛չ քաղաքականապես, ո՛չ տնտեսապես, ո՛չ էլ հոգեբանորեն: Ինքնին հասկանալի է, որ ժամանակաշրջանի այդ կտրվածքում անկախության պահանջը ոչ միայն իրական չէր, այլև՝ վտանգավոր:
ՀՅԴ-ը, նկատի առնելով ժողովրդի անվտանգության խնդիրը, նաև տվյալ պատմաքաղաքական պայմաններում ժողովրդի քաղաքականապես և հոգեբանորեն ոչ բավարար պատրաստ լինելը և այլ գործոններ, հեռատեսորեն միանգամից չբարձրացրեց Հայաստանի (Թուրքահայաստանի) անկախության խնդիրը, թեև նրա գաղափարական ըմբռնումներում մշտապես կենսարթուն է եղել այդ գաղափարը: Ակներև է, որ 19-րդ դարավերջի ազգային-ազատագրական կռիվները, վերջին հաշվով, մղվում էին ժողովրդի ազատության ու հայրենիքի անկախության համար:
Տակավին կուսակցության արշալույսին՝ 1890 թ. սեպտեմբերին, ՀՅԴ հիմնադիր Երրորդության առաջնեկ **Քրիստափոր Միքայելյանի** կողմից գրված առաջին ծրագրային փաստաթուղթ հանդիսացող «Մանիֆեստում» հայ հեղափոխական խմբերին կոչ էր արվում՝ «Միացնել բոլոր ուժերը՝ նպատակ դնելով **Թուքահայաստանի քաղաքական և տնտեսական ազատության**»: Դաշնակցության գաղափարաքաղաքական ղեկավարությունը իր մշակած ծրագրերում,

խոսելով Հայաստանի քաղաքական և տնտեսական ազատության, ժողովրդավարության, ընկերվարության (սոցիալիզմի), ինչպես եւ արդար աշխատանքի արմատավորման մասին, անկախության հարցը գիտակցաբար միանգամից հրապարակայնորեն չէր դնում: Դաշնակցություն կուսակցության պատմության առաջին հետազոտող Միքայել Վարանդյանը փաստում է, որ Դաշնակցության հիմնադիրները (ռահվիրաները)՝ իբրև զգաստ իրապաշտներ, հրաժարվեցին անկախությունից և առաջ քաշեցին ավելի համեստ ու սահմանափակ պահանջներ: Կուսակցության հիմնադիրներ Ք. Միքայելյանն ու Ս. Զավարյանը քաջ ըմբռնում էին, թե հայկական անկախության պահանջը որքան գրգռիչ ու թշնամական վերաբերմունքի կարժանանար հայկական վիլայեթների մահմեդականների շրջանում: Դրա համար էլ այն ժամանակվա հայ իրականության առաջատար քաղաքական ուժի՝ Դաշնակցություն կուսակցության երկու՝ 1892թ. և 1907թ. ծրագրերում, Ընդհանուր ժողովների որոշումներում, Հայաստանի քաղաքական անկախության մասին ակնարկ չկա, այլ որպես առաջին քայլ նպատակահարմար էր համարվում բավարարվել ազգային-տարածքային **ինքնավարության** (վարչական ապակենտրոնացման) կարգավիճակով՝ օսմանյան Թուրքիայի և Ռուսական կայսրության կազմում: Սա էր այն ժամանակվա ու պայմաններին համապատասխան, թերևս, միակ հնարավոր ու իրատեսական լուծումը: Իսկ անկախությունը դիտվում էր իբրև հեռավոր նպատակ: Բերված փաստական հիմնավորումները ցույց են տալիս, որ քաղաքական ասպարեզ իջած ՀՅԴ կուսակցությունը ծայրահեղ, արկածախնդրական որևէ նպակադրումներ չի ունեցել, ինչպես որ տասնամյակներ շարունակ զրպարտչաբար բամբասել են նրա քաղաքական հակառակորդները:
Այսպիսով, մինչև Առաջին համաշխարհային պատերազմը, Դաշնակցությունն Արևմտյան Հայաստանի՝ Թուրքիայից քաղաքական անջատման, առավել ևս, անկախության պահանջ չի բարձրացրել և այդ իմաստով անհիմն են այն բոլոր թուրք և ոչ թուրք հեղինակների «ամբոխային տրամաբանության» վրա հիմնված պնդումներն ու մեղադրանքները, թե իբր Արևմտյան Հայաստանին ու արևմտահայությանը բաժին հասած «ցավալի», «տխուր» ճակատագիրը հետևանք էր առաջին հերթին հայ ժողովրդի գլխավոր կուսակցության

վարած թշնամական, անջատական, անկախական, «արկածախնդրական» քաղաքականության: Պատմական իրողություններն ու փաստերը ի հակառակը՝ ապացուցում են, որ Արևմտյան Հայաստանի և արևմտահայության ողբերգական ճակատագիրը պարզապես հետևանք էր թուրքական (օսմանյան) կառավարության վարած հետևողական հայաջինջ պետական քաղաքականության:
ՀՅԴ համար մինչև 1918 թ. Հայաստանի անկախության հռչակումը ավելի մեծ կարևորություն է ունեցել ազգապահպանության խնդիրը: Հայապահպանության խնդրին էր ուղղված Դաշնակցության մարտավարությունը՝ սկսած հայդուկային (զինական) խմբեր ու զենք Արևմտահայաստան՝ «Երկիր», փոխադրելուց, ժողովրդին զինելուց և ինքնապաշտպանական մեծ ու փոքր մարտեր մղելուց, վերջացրած հայ եկեղեցու գույքի պաշտպանությանն ուղղված դիմադրական ելույթներով և հայ-թաթարական արյունալի ընդհարումների ժամանակ հայերի պայքարի հմուտ և անձնուրաց ղեկավարումը: Մի խոսքով, այդ պատմափուլում հայ քաղաքական գլխավոր ուժի՝ ՀՅԴ ծրագրերում ու գործելակերպում առաջնային պլանում են եղել նախ հայության և հայրենիքի պաշտպանության, ապա հետո՝ անկախության ու պետականության հիմնախնդիրները: ՀՅԴ առաջին տասնամյակների քաղաքական ուղեգիծն էր՝ ազգային-ազատագրական շարժման ճանապարհով, ի վերջո, հասնել պետական անկախության: Ընդ որում, նրա գործունեության դաշտում է եղել 19-րդ դարի կեսերից հայ ազատագրական գաղափարախոսությամբ արդեն մշակված օտար տերությունների կողմից սահմաններով տարանջատված (թուրքահայերի, ռուսահայերի և պարսկահայերի) միասնական ազգի ու հայրենիքի ազատագրության գաղափարը:
Վրա հասած Առաջին աշխարհամարտը շատ հարցերի պատասխան պետք է տար: Պատերազմի առաջին տարիների ընթացքը ցույց տվեց, որ Դաշնակցություն կուսակցությանը, հայ ազգային մյուս քաղաքական շրջանակներին մտահոգող գլխավոր խնդիրը եղել է ոչ այնքան անկախության, որքան Արևմտյան Հայաստանի ու արևմտահայության ճակատագրի հիմնահարցը: Այդ ժամանակ ծառացած գլխավոր խնդիրը ռուսական զորքի և հայ կամավորական խմբերի միջոցով Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր:

Սույն պատմական ակնարկից հետո աշխատության հետագա շարադրանքում ցույց կտրվի, թե ինչպես հայ ժողովուրդը, բաժանված իր երկու հատվածներով, անկախ իր կամքից ներքաշվեց պատերազմական թոհուբոհի մեջ, մեծ զրկանքներ կրեց, ապրեց իր պատմության, թերևս, ամենաողբերգական էջը՝ Հայոց մեծ եղեռնը, անցավ 1917 թ. ռուսական երկու հեղափոխությունների ալիքով, ապրեց թուրքերի 1918 թ. դեպի Անդրկովկաս ու Հայաստան ներխուժման սարսափը, կյանքի ու մահվան ճակատագրական գոտեմարտում, հանձին Մայիսյան հաղթական հերոսամարտերի, նվաճեց իր ապրելու, հարատևելու և սեփական անկախ պետականությունը արարելու (կերտելու) իրավունքը:
Լրանում է հայ ժողովրդի 20-րդ դարի պատմության ամենանշանակալի իրադարձություններից մեկի՝ Հայաստանի առաջին հանրապետության անկախության 100-ամյակը, որի համառոտ տարեգրությանն ու պատմական գնահատականին է նվիրված սույն աշխատությունը: Սույն աշխատության նպատակն է Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի առթիվ ժամանակակից պահանջների ոգով, քաղաքական ու կուսակցական նախասիրություններից զերծ, հնարավորինս հանրամատչելի կերպով լայն ընթերցող շրջանակներին ներկայացնել Առաջին Հանրապետության համառոտ պատմությունը: Անկասկած շատ կարևոր է մեկդարյա հեռավորությունից քննել, գնահատել ու արժևորել Առաջին Հանրապետության պատմությունը, հաշվի առնել դրա փորձն ու դասերը, որոնք շատ օգտակար և ուսանելի են մեր այսօրվա և վաղվա համար, քանզի այսօր էլ մեր առջև ծառացած են գրեթե համանման խնդիրներ: Ունենք անկախ պետականության ամրակայման խնդիր, եվրոպական արժեքային համակարգով ընթանալու ուղեգիծ: Մենք շրջապատված ենք նույն հարևաններով, տարածաշրջանում հավակնություններ ունեն նույնատիպ տերություններ, օրակարգում են Անկախ Արցախը վերջնական հանգրվանին հասցնելու նպատակ, Հայաստան-գաղթաշխարհ կապերը ներդաշնակելու ու միասնացնելու խնդիր և այլն: Այդ ամենի այն դեպքում, երբ թերևս, փոխվել են միայն ժամանակները և իրադրությունը:

Գլ. 1.- Հայաստանը անկախության վերականգնման ճանապարհին: Ռուսական 1917 թ. հեղափոխություններից մինչև 1918 թ. մայիս

1.1.Իրադրությունը Անդրկովկասում և Հայաստանում ռուսական 1917 թ. հեղափոխությունների շրջանում

Ամեն ինչ սկսվեց Առաջին աշխարհամարտից և դրա հետևանքներից մեկը հանդիսացող 1917 թ. ռուսական երկու հեղափոխություններից: Պատմագիտական ու քաղաքագիտական գրականության մեջ ընդունված է ասել, որ սովորաբար պատերազմները հեղափոխությունների ու քաղաքական հեղաշրջումների համար կատարում են քաղաքական կատալիզատորի (արագացուցիչ) դեր, որովհետև պատերազմների պայմաններում առաջացած ռազմաքաղաքական ու սոցիալ-տնտեսական ծանր ու լարված պայմանները, ժողովրդի ընդհանուր դժգոհությունը, արտաքին միջամտությունները, քաղաքական առանձին ընդդիմադիր ուժերի ձեռքին դառնում են գործիք (միջոց) իշխանությունը նվաճելու համար: Իբրև արտաքին գործոն՝ Հայաստանի անկախությունը ուղղակիորեն կապված էր 1917 թ. ռուսական հեղափոխությունների հետ, ինչպես որ կարելի է նույն կերպ ասել, թե Հայաստանի երրորդ հանրապետության անկախությունը մեծապես պայմանավորված էր ԽՍՀՄ փլուզման և կոմունիստական տոտալիտարիզմի (ամբողջատիրության) խորը ճգնաժամի հետ: Ի դեպ, եթե Առաջին հանրապետության հռչակման նախակարապետն ու հիմնաքարը եղան Մայիսյան հաղթական հերոսամարտերը, ապա Երրորդ Հանրապետության համար՝ Արցախյան ազգային-ազատագրական հաղթական պատերազմը: Երկու դեպքում էլ հաղթանակը կերտողը հայ ժողովուրդն էր: Եվ այդ իմաստով սխալ է այն մտայնությունը, երբ փորձ է արվում ժողովրդի՝ զոհողություններով ու մարդկային վիթխարի կորուստներով ձեռք բերած հաղթանակի պտուղները հանիրավի վերագրել այս կամ այն կուսակցությանը կամ նրա առաջնորդին:

Ինչպես հայտնի է, ձգձգվող աշխարհամարտի պայմաններում, Ռուսաստանում 1917 թ. հեղափոխություն և հեղաշրջում անունը ստացած նման երկու փորձ կատարվեց: Դրանցից մեկը Փետրվարյան հեղափոխությունն էր, որի արդյունքում տապալվեց ցարական

ինքնակալությունը, վերջ տրվեց Ռոմանովների արքայատոհմի ավելի քան 300-ամյա տիրապետությանը: Երկրում հաստատվեց երկիշխանություն: Դրանցից մեկը աշխատավորական զանգվածների շահերը ներկայացնող բանվորագյուղացիական **սովետներն (խորհուրդներ)** էին, իսկ մյուսը՝ հարուստ, ունևոր շերտերի, այսպես կոչված առևտրա-արդյունաբերական բուրժուազիայի ստեղծած **ժամանակավոր կառավարությունը**: Փետրվարյան հեղափոխությունը մեծ փոփոխություններ ու հասարակական-քաղաքական լուրջ տեղաշարժեր առաջացրեց հսկայածավալ կայսրությունում: Երբեմնի հզոր Ռուսական կայսրության հիմքերը թուլացան, հասարակական-քաղաքական կյանքը տակնուվրա եղավ:
Հեղափոխության ալիքը հասավ նաև Անդրկովկաս ու Հայաստան: Քանի որ ցարիզմը տապալվել էր, բնականաբար վերացվեց նաև Կովկասի փոխարքայությունը: Դրա փոխարեն 1917 թ. մարտի 9-ին երկրամասում հիմնվեց ժամանակավոր կառավարության տեղական գործադիր իշխանության մարմինը, որը կոչվեց **Անդրկովկասյան հատուկ կոմիտե**, ռուսերենի հապավումով այսպես կոչված **ՕԶԱԿՈՄ** (Особый закавказский комитет), որի մեջ մտան կովկասյան հիմնական չորս՝ հայ, վրացի, կովկասյան թուրք և ռուս ազգությունների 5 անդամներ: Ինչպես ժամանակավոր կառավարությունը, այնպես էլ տեղական իշխանության մարմինները պետք է կառավարեին երկիրը մինչև **Համառուսաստանյան Սահմանադիր** (հիմնադիր) ժողովի հրավիրումը և օրինական իշխանության ձևավորումը:
Փետրվարյան հեղափոխությունից հետո տեղի ունեցավ ազգային ինքնագիտակցության աճ, զարթոնք ապրեց ազգային կյանքը, հրատապ նշանակություն ստացավ ազգային հարցը: Լայն գործունեություն ծավալեցին հայ քաղաքական կուսակցությունները՝ ՀՅԴ, Ս. Դ. Հնչակը, նոր ձևավորված ՀԺԿ[1], Հայ ս. ռամկավարները, Հայ սոց.-դեմ. մենշևիկները, բոլշևիկները, էսէռները և այլն, որոնց անվիճելի առաջատարը ՀՅԴ-ն էր, թեև Հայոց մեծ եղեռնի ընթացքում նրա շարքերը մեծ կորուստներ էին կրել: Ծանոթացման կարգով տեղեկացնենք, որ 1907 թ. Շտուտգարդի միջազգային սոցիալիստական կոնգրեսին ներկայացված հաշվետվությամբ,

[1] 1917 թ. ապրիլին «Մշակ» թերթի հետևորդներից Թիֆլիսում ստեղծվեց Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ), որը դավանում էր ազատական-ժողովրդավարական գաղափարներ:

ընդհանուր հաշվով, ՀՅԴ շարքերում հաշվառման կանգնած անդամների թիվը կազմել է մոտ 165 հազար մարդ, ինչը վկայում է այդ կուսակցության մեծ կշռի ու ազդեցության մասին:
Հեղափոխության ընձեռած լայն ու ազատ գործունեության պայմաններում կուսակցությունները անմիջական կապ հաստատեցին ժողովրդական լայն զանգվածների հետ՝ աշխատելով պատասխան ու ընթացք տալ նրանց հուզող հարցերին: Հայ քաղաքական կուսակցությունների ջանքերով, բացառությամբ բոլշևիկների, հայ հասարակական-քաղաքական կյանքը համակարգելու և հայությանը սպառնացող վտանգներին համատեղ դիմակայելու նպատակով 1917 թ. մարտի 7-ին Թիֆլիսի Հայոց առաջնորդարանում տեղի ունեցած խորհրդակցությունում ստեղծվում է **Միջկուսակցական մարմին**: Այդ մարմնում ընդգրկված էին ՀՅԴ, ՀԺԿ, Սոց.-դեմ, էսէռ և Ս Դ Հնչակյան կուսակցությունների ներկայացուցիչները: Հետագայում հնչակյանների ներկայացուցիչները հրաժարվեցին մասնակցել Միջկուսակցական մարմնի աշխատանքներին:
Ծրագրվում էր նախապատրաստել ու հրավիրել ազգային համագումար, որի աշխատանքները պետք է ղեկավարեր տակավին 1914 թ. նոյեմբերին Հայկական հարցի կապակցությամբ ստեղծված **Հայ Ազգային բյուրոն**՝ վերջինիս կազմը համալրելով հայկական բոլոր կուսակցությունների ու հասարակական հոսանքների նոր ներկայացուցիչներով: Ազգային բյուրոյի կազմը բազմակուսակցական էր՝ թվով 18 հոգի, իսկ նրան կից գործադիր մարմինը՝ 5 մարդ: Ի դեպ, Ազգային բյուրոյում, որպես անդամ հրավիրվել էր նաև Սոց.-դեմ. բոլշևիկներից «Պայքար» թերթի ներկայացուցիչ Ասքանազ Մռավյանը, որը, սակայն, հրաժարվեց «հակահեղափոխական» այդ մարմնի աշխատանքներին մասնակցել: Ազգային բյուրոյի նիստերից զատ և նրան զուգահեռ՝ պարբերաբար գումարվում էին Միջկուսակցական մարմնի խորհրդակցություններ:
Հայ հասարակական-քաղաքական բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները, բացառությամբ հայ բոլշևիկների, հիմնականում պաշտպանում էին ժամանակավոր կառավարության արտաքին և ներքին քաղաքականությունը: Հայ բոլշևիկները, առաջնորդվելով իրենց մայր կուսակցության ծրագրային հիմնադրույթներով, նպատակ էին դրել չբավարարվել Փետրվարյան

հեղափոխության արդյունքներով, այլ հասնել սոցիալիստական հեղափոխության:
Փետրվարից հետո օրախնդիր դարձավ Անդրկովկասում տեղական ինքնակառավարում (զեմստվո) մտցնելու հարցը, որը տևական ժամանակ ցարական կառավարությունը չէր ուզում գործադրել՝ վախենալով երկրամասի հեղափոխականանալու վտանգներից: Հայ քաղաքական շրջանակները առաջ քաշեցին Անդրկովկասի վարչական վերաբաժանման խնդիրը ազգային (էթնիկ) հատկանիշներով երեք՝ հայ, վրացի, կովկասյան թուրք միավորների միջև՝ ներքին լայն ինքնավարությամբ:
Մյուս կողմից՝ ժամանակավոր կառավարությունը 1917 թ. ապրիլին ընդունում է որոշում պատերազմի իրավունքով նվաճված Թուրքահայաստանի մարզերից (Էրզրումի, Վանի, Խնուսի) իր անմիջական ենթակայության ներքո ստեղծել կառավարման հատուկ վարչաձև՝ ռուս զորավար **Պյոտր Ավերյանովի** գլխավորությամբ: Նրա քաղաքացիական գծով տեղակալն էր բժիշկ **Հակոբ Զավրիյանը** (**Զավրիև**): Սկսվեց արևմտահայ գաղթականության ներհոսքը Մայր Հայրենիք: Հույս էր ներշնչվում, որ դրականորեն կլուծվի Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) խնդիրը:
Նկատի ունենալով, որ 1917 թ. ապրիլին, թուրք-ադրբեջանցիներն արդեն հրավիրում են իրենց ազգային՝ մուսուլմանական համագումարը, Հայ Ազգային բյուրոն որոշում է արագացնել արևելահայերի (ռուսահայերի) համագումարի նախապատրաստումը և գումարումը: Համագումարի նախապատրաստման ու հրավիրման գործը, բացի Ազգային բյուրոյից, դրված էր նաև Միջկուսակցական մարմնի վրա: Ընտրությունների անցկացման դժվարությունների, միջկուսակցական տարաձայնությունների, աննպաստ քաղաքական հանգամանքների և այլն-ի հետևանքով Արևելահայոց համագումարի հրավիրումը հետաձգվեց մինչև աշուն:
Ինչպես արդեն ասվեց, սկզբնական շրջանում հայերն, իրենց կուսակցությունների հետ միասին, արտահայտվում էին ռուսական համապետականության օգտին այն ակնկալությամբ, որպեսզի նրա օգնությամբ կարողանան լուծել մեծապես հայաթափ եղած Թուրքահայաստանի հարցը և Անդրկովկասում անցկացնել, ըստ պատմա-ազգագրական հատկանիշի, վարչական արդարացի

վերաբաժանում: Միաժամանակ հայ ազգային կուսակցությունները արտահայտվում էին Անդրկովկասի ու Հայաստանի լայն ինքնավարության օգտին: Օրինակ, 1917 թ. աշնանը Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրություններին գնացող Դաշնակցությունը արտահայտվում էր Ռուսաստանի ֆեդերատիվ (դաշնակցային) դեմոկրատական հանրապետության օգտին: Բայց մի քանի օր անց՝ Սահմանադիր ժողովի (նոյեմբերի 12-ի) ընտրություններից և Անդրկովկասյան կոմիսարիատի (նոյեմբերի 15-ի) ստեղծումից հետո, ՀՅԴ Կովկասյան հատվածում կատարվում է քաղաքական էվոլյուցիա (բնաշրջում), ազգային-մշակութային ինքնավարությունից անցում է կատարվում՝ «**ազգերի ինքնորոշման**» պահանջի: Հավանաբար այս մտայնության թելադրանքով էլ հայ քաղաքական գործիչները կազմեցին «Թուրքահայաստանի ինքնորոշման մասին» դեկրետի նախագիծը:

Կարելի է ասել, որ Փետրվարյան հեղափոխության հաղթանակով, հայ ժողովրդի ու նրա քաղաքական ուժերի կամքից ու մտայնությունից անկախ, սկսվեց **Հայաստանի անկախացման անտեսանելի գործընթացը**: Հայտնի է, որ, սկսած 19-րդ դարի երկրորդ կեսից, հայ ժողովրդի ու նրա քաղաքական կուսակցությունների գլխավոր խնդիրը **Հայկական հարցի**, այլ խոսքով՝ Արևմտյան Հայաստանի ազատագրումն էր սուլթանական բիրտ լծից: Սակայն աշխարհավեր պատերազմն իր չարաղետ հետևանքներով հանգեցրեց նրան, որ երիտթուրքերի կառավարությունը ցեղասպանության միջոցով հայաթափեց Արևմտյան Հայաստանը և հայրենազրկեց իր հայրենիքից: Իսկ մյուս կողմից մենք տեսնում ենք, որ Ռուսաստանում ծավալվող դեպքերի ու իրադարձությունների հետևանքով Արևելյան Հայաստանը (Ռուսահայաստանը) ինքնաբերաբար կանգնեց ազատության և անկախության փաստի առաջ:

Բայց պետք է նաև արձանագրել, որ մինչ այդ հայ հասարակական-քաղաքական գրեթե բոլոր ուժերը, այդ թվում նաև ՀՅԴ, հատկապես ռուսաստանյան հատվածը, ցուցաբերում էին ընդգծված ռուսական կողմնորոշում, ճանաչված տեսաբան Դավիթ Անանունի պատկերավոր բնորոշմամբ «բռնել էին ռուսական փեշից», պատրաստ էին բավարարվել Հայաստանի լայն ինքնավարությամբ, սակայն Ռուսաստանում ծավալվող հետագա կազմալուծիչ գործընթացները

ինքնաբերաբար, փլուզվող կայսրության փլատակների տակ չմնալու թելադրանքով, (ինչպես, որ նույնը կատարվեց 1991 թ.), չնայած սպասվելիք մեծ վտանգներին, պետք է բռներ անկախացման և սեփական ազգային պետականության կերտման ուղին: Հետփետրվարյան խառնակ շրջանում դասակարգային իշխանության մարմինների կողքին առաջացան նաև ազգային իշխանության ձևեր: Ի վերջո ամիսներ տևող ձգձգումներից հետո հայ հասարակական-քաղաքական կյանքում նշանակալի իրադարձություն եղավ 1917 թ. աշնանը (սեպտեմբերի 29 - հոկտեմբերի 13) հայաշատ Թիֆլիսում բազմակուսակցական հիմունքներով Արևելահայոց համագումարի (համախորհրդակցության) հրավիրումը: Անդրկովկասում ու ամբողջ Ռուսաստանում հաշվում էր 1,8 մլն հայ: Համագումարի ավելի քան 200 պատգամավորների (ընդամենը 228 պատգամավորներից ճշտվել ու հաստատվել է 203-ի մանդատը) կեսից ավելին՝ 116-ը Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության անդամներ էին, մնացածը ՀԺԿ, Սոց.-դեմ., Սոց.-հեղ. (էսէռ) և անկուսակցական: Հատկանշական է, որ ինչպես Միջկուսակցական մարմնում, այնպես էլ Արևելահայոց համագումարում ստեղծվել էին կուսակցական չորս խմբակցություններ, որոնք հետագայում պահպանվեցին նաև անկախություն ձեռք բերած Հայաստանի խորհրդարանում: Անդրկովկասի բոլշևիկները, այդ թվում Թիֆլիսի բոլշևիկյան կոմիտեի քարտուղար Անաստաս Միկոյանը, պաշտոնապես բոյկոտեցին համախորհրդակցությունը՝ այն որակելով որպես «նացիոնալիստական, հակաբանվորական և հակառևոլյուցիոն»: Արևելահայոց համագումարն, իր ընդունած քաղաքական բանաձևում (զեկ. անկուսակցական Հակոբ Մանանդյան) շեշտելով հայերի ռուսական օրիենտացիան, բացարձակ վստահություն էր հայտնում Ժամանակավոր կառավարությանը: Հարկ է հատուկ ընդգծել, որ Ռուսաստանում եթե եղել է մի իշխանություն, որից հայերը մեծ ակնկալիքներ են ունեցել, և որն իր ձեռնարկած գործնական քայլերով բավականին հույսեր է ներշնչել, ապա դա եղել է Ժամանակավոր կառավարությունը՝ **Ալեքսանդր Կերենսկու** գլխավորությամբ, որի մի քանի անդամների հետ, ի դեպ, սերտ ու մտերիմ կապերի մեջ են եղել հայ առանձին քաղաքական գործիչներ՝ բժ. Հակոբ Զավրիյանը, Սամսոն Հարությունյանը, Հովհաննես Սաղաթելյանը և ուրիշներ:

Քննելով օրախնդիր բազում (Անդրկովկասի վարչական բաժանումների, զեմստվոներ (տեղական ինքնակառավարում) մտցնելու, ազգային զորքի կազմակերպման (ինքնապաշտպանության), գաղթականության, պարենավորման և այլն) խնդիրներ համագումարը միաժամանակ առաջ քաշեց ազգերի ինքնորոշման իրավունքի իրացման հիման վրա **ազգային պետականության գաղափարը** և անհրաժեշտության դեպքում դրան պատրաստ լինելու հրամայականը: Նրա ընդունած առանցքային որոշումներից էր հետևյալ բանաձևը. «Ընդունել ազգերի ինքնորոշման իրավունքը, հայ ժողովուրդը պիտի ձգտի իրականացնել իր այդ իրավունքը **պետականության հիմունքներով ու սկզբունքներով**»: Կարելի է վստահաբար ասել, որ Արևելահայոց համագումարը դրեց ազգային պետականության գաղափարի նյութականացման առաջին հիմնաքարը:

Արևելահայոց համագումարի վերջում բազմակուսակցական սկզբունքով ընտրվեց 15 հոգուց բաղկացած գործադիր մարմին՝ **Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդ՝** կուսակցությունների քաղաքական կշռին համապատասխան, մասնակցությամբ՝ ՀՅԴ՝ 6, ՀԺԿ՝ 2, Սոց.-դեմ.՝ 2, էսէռ՝ 2 և անկուսակցական՝ 3: Խորհրդի նախագահ ընտրվեց հասարակական-քաղաքական գործիչ, գրող **Ավետիս Ահարոնյանը**(1866–1948): Հայոց Ազգային խորհուրդը՝ որպես գործադիր մարմին, ստանձնեց արևելահայ հատվածի քաղաքական կյանքի ղեկավարությունը և դեպքերի բերումով փաստորեն դարձավ հայ ժողովրդի գերագույն իշխանություն: Նա փաստորեն զբաղեցրեց արդեն հեղինակազրկված Ազգային բյուրոյի տեղը:

Արևելահայ կյանքի գերագույն գործադիր այդ մարմինը սկսեց իր առաջին քայլերն անել ազգային պետականության գաղափարի նյութականացման ուղղությամբ: Հայոց Ազգային խորհուրդն ուներ իր բաժինները կամ կոմիսարիատները՝ զինվորական, գաղթականության, դպրոցական, պարենավորման, բժշկական և այլն: Դեպքերն այնպես դասավորվեցին, որ Թիֆլիսի Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը դարձավ հայության ու հայ կյանքի գերագույն իշխանություն և հենց նրան էր բախտ վիճակված հռչակել **Հայաստանի պետական անկախությունը**:

Բացի Թիֆլիսի Հայոց Ազգային խորհրդից՝ ավելի վաղ (1917 թ. մայիսին) Երևանում հիմնվել էր **Արևմտահայոց Ազգային խորհուրդը՝**

հայ ազատագրական պայքարի ճանաչված գործիչ **Վահան Փափազյանի** (1876-1973) նախագահությամբ: Արևմտահայոց Ազգային խորհուրդը ավելի հաճախ զբաղվում էր Հայկական հարցով, արևմտահայ բնավեր գաղթականության խնդիրներով:
Կարելի է ասել, որ հետփետրվարյան շրջանում Անդրկովկասում փաստորեն գոյություն ուներ ոչ թե **երկիշխանություն**, այլ առնվազն եռիշխանություն՝ 1) **ՕԶակԿոմ**-ը՝ որպես ժամանակավոր կառավարության տեղական (տարածաշրջանային) իշխանության գործադիր մարմին, 2) բանվորների, զինվորների և գյուղացիների պատգամավորների **խորհուրդներ՝** իբրև դասակարգային ներկայացուցչության մարմին՝ իր Երկրային կենտրոնով և 3) **ազգային խորհուրդներ՝** որպես ազգային իշխանության մարմիններ: Վերջինիս թվին էին դասվում Հայոց (կենտրոնական) Ազգային խորհուրդը, Արևմտահայ Ազգային խորհուրդը, տեղական՝ Երևանի, Բաքվի, Սյունիքի, Ղարաբաղի, Զավախքի, Նախիջևանի և այլ հայ ազգային խորհուրդները: Անվիճելի է, որ կովկասահայ կյանքում իշխանության վերոնշյալ երեք իշխանական մարմիններից ամենաազդեցիկն ու ամենահեղինակավորը բնականաբար հայ ազգային խորհուրդներն էին, ի մասնավորի՝ Կենտրոնական խորհուրդը:
Մինչ Անդրկովկասում տեղի էին ունենում ազգային-քաղաքական ուժերի վերախմբավորում ու կոնսոլիդացիա, բուն Ռուսաստանում քաղաքական իրադարձությունները զարգացան գլխապտույտ արագությամբ և ունեցան անսպասելի ավարտ: Փետրվարյան հեղափոխությունից հետո բոլշևիկները, որոնք առանձնապես չունեին քաղաքական մեծ կշիռ, արտասահմանից վերադարձած Վ. Լենինի և Լ. Տրոցկու գլխավորությամբ խնդիր դրեցին «Ամբողջ իշխանությունը սովետներին» կարգախոսով՝ զինված ապստամբության միջոցով տապալել ժամանակավոր կառավարությունը և գրավել իշխանությունը: Տվյալներ կան, որ հեղափոխություն կատարելու, իշխանությունը գրավելու և Ռուսաստանը պատերազմից դուրս բելելու համար բոլշևիկները, անձամբ Վ. Լենինը մեծ չափերով ֆինանսավորվել են Կայզերական Գերմանիայի կողմից և կապեր են ունեցել գերմանական գաղտնի ծառայությունների հետ: Խնդիրն այն է, որ Քառյակ դաշինքի առաջատար Գերմանիան անչափ շահագրգռված էր, որ հեղափոխություն կատարելով և խառնակ վիճակ ստեղծելով Անտանտի դաշնակից

Ռուսաստանում, վերջինս ստիպված լինի դուրս գալ պատերազմից, որպեսզի իր ռազմական ծանրաբեռնվածությունը թուլանա և ամբողջ ուժերը կենտրոնացնի Արևմտյան ճակատում՝ Անգլիայի, Ֆրանսիայի և նրանց դաշնակից մյուս երկրների դեմ:
Վերցնելով զինված ապստամբության կուրս՝ բոլշևիկները լայն քարոզչություն ծավալեցին ժողովրդական զանգվածներին հուզող հաշտության, հողի, հացի, աշխատանքի և այլ հարցերի շուրջը և խոստացան իշխանության գալուն պես իբրև թե դրանց լուծում տալ: Միաժամանակ օգտվելով ժամանակավոր կառավարության թույլ տված սխալներից ու հապաղումներից՝ 1917 թ. հոկտեմբերի 25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7) բոլշևիկները, հասարակական լայն շերտերում բավարար աջակցություն չունենալով հանդերձ, մայրաքաղաք Պետրոգրադում (Սանկտ Պետերբուրգ) զինված պետական հեղաշրջում կատարեցին և իշխանությունը վերցրին իրենց ձեռքը: Այդպիսով՝ վերջ տրվեց ժամանակավոր կառավարությանը, իսկ քիչ ավելի ուշ՝ 1918 թ. հունվարի 6-ին, բավարար ձայներ չհավաքելու պատճառով, Վ. Լենինի գլխավորած բոլշևիկյան կառավարությունը ժողովրդավարական ճանապարհով ընտրված Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի (խորհրդարանի) բացվելուն պես ուժով ցրեց այն: Այդ գործողությունը բնորոշվեց որպես երկրորդ պետական հեղաշրջում:
Հանրագումարի բերելով ու գնահատելով ռուսական 1917 թ. երկու հեղափոխությունների արդյունքները՝ կարելի է եզրակացնել, որ Փետրվարյան հեղափոխության շնորհիվ տապալվեց ցարական ինքնակալական համակարգը: Իշխանությունը ստանձնած Ժամանակավոր կառավարությունը պատերազմի պայմաններում ի վիճակի չեղավ երկրում իրականացնել ժողովրդավարական վերափոխումներ, լուծումներ տալ հասարակ ժողովրդին հուզող բազում հարցերին: Մյուս կողմից՝ անցյալի իր ավանդույթներով ու հոգեկերտվածքով նման գործընթացներին պատրաստ չէին ռուսաստանցի ժողովուրդները: Արդյունքում այդ հանգամանքից օգտվեցին իրենց ծրագրերով ու գործելակերպով մաքսիմալիստ ու ծայրահեղական բոլշևիկները, կատարեցին պետական հեղաշրջում և հիմնեցին ռուս ժողովրդին ավելի **հասկանալի** բռնատիրական վարչակարգ, որը շատ գծերով նման էր ինքնակալական համակարգին: Այդպիսով՝ Հոկտեմբերյան հեղաշրջմամբ սկսվում է

խորհրդային պետության պատմության ժամանակաշրջանը, որը տևում է ավելի քան 70 տարի, մինչև 1991 թ.:
Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո դրությունը մետրոպոլիայում և նրա ծայրամասերում ավելի բարդացավ: Կայսրության առանձին երկրամասեր, այդ թվում Անդրկովկասը դուրս մնացին խորհրդային կառավարության (կենտրոնի) վերահսկողությունից: Բոլշևիկյան հեղաշրջումը միանշանակ չընդունվեց Անդրկովկասում: Երկրամասի ազդեցիկ քաղաքական ուժերը հիմնականում բացասաբար ընդունեցին այդ հեղաշրջումը և չճանաչեցին խորհրդային իշխանությունը: Անդրկովկասի ամենաազդեցիկ երեք կուսակցությունները՝ վրաց մենշևիկները, հայ դաշնակցականները և կովկասյան թուրք (ադրբեջանական) մուսավաթականները կազմալուծված ու անգործության մատնված ՕԶԱԿոմի փոխարեն 1917 թ. նոյեմբերի 15-ին ստեղծեցին իշխանության նոր մարմին՝ **Անդրկովկասյան կոմիսարիատ,** որն իբրև գործադիր իշխանություն (վրաց մենշևիկ **Ե. Գեգեչկորու** գլխավորությամբ), ժամանակավորապես ստանձնեց երկրամասի կառավարումը, իսկ 1918 թ. փետրվարի 10-ին բացվեց նաև **Անդրկովկասյան սեյմը** (խորհրդարանը)՝ իբրև օրենսդիր մարմին: Անդրկովկասյան կոմիսարիատի և Սեյմի գոյության առաջին իսկ օրերից երևան եկան երկրամասի երեք գլխավոր ազգային միավորների քաղաքական կողմնորոշումների, տարածքային հավակնությունների ու շահերի ներհակությունները: Միաժամանակ դեպքերի և իրադարձությունների հետագա բերումով սկսվեց Անդրկովկասի աստիճանական մեկուսացումը Ռուսաստանից:
Հոկտեմբերյան դեպքերից անմիջապես հետո Հայոց Ազգային խորհուրդը հրապարակեց կոչ՝ ուղղված հայ հանրությանը՝ իր բռնելիք քաղաքական ուղու մասին: Կոչում ասվում էր, որ Ազգային խորհուրդը, իր գործունեության կիզակետում ունենալով հայ ժողովրդի կենսական շահերը, խնդիր ունի այդ շահերը ներդաշնակել ռուսական և հարևան ժողովուրդների շահերին՝ նպատակ դնելով ընթանալու ազատության և պետականության ճանապարհով:
Նորահռչակ խորհրդային իշխանության պայմաններում գնալով խորանում էր խզումը Կենտրոնի (Պետրոգրադի) և Անդրկովկասի միջև: Խորհրդային Ռուսաստանի և Անդրկովկասի կառավարությունները իրար հանդեպ անհաշտ էին: Հոկտեմբերյան հեղաշրջման

հաղթարշավի կարգախոսով բոլշևիկները վերցրին կուրս Կովկասում ևս հաստատել խորհրդային կարգեր: Այդ նպատակով՝ Վ. Լենինի հանձնարարականով ականավոր բոլշևիկ **Ստեփան Շահումյանը** (1878-1918 թթ.) նշանակվեց կովկասյան գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար: Պատմական իրողություն է, որ հանձին Ս. Շահումյանի ու Բաքվի խորհրդի՝ տեղի է ունեցել ՀՅԴ-բոլշևիկ համագործակցության հաջողված փորձ՝ Կովկասի խորհրդայնացման պայմանով Թուրքահայաստանի անկախացմանը հասնելու նպատակով:

Քանի որ Ռուսաստանի խորհրդային կառավարությունը 1917 թ. նոյեմբերի 2-ի համապատասխան հռչակագրով (դեկլարացիայով) խոստացել էր ճնշված ազգերին տալ ազատ ինքնորոշման իրավունք, այդ հիման վրա հայ ազդեցիկ մի շարք գործիչների՝ Ստ. Շահումյանի, Վ. Տերյանի, Ռոստոմի (Ստ. Զորյան), Հ. Զավրիյանի, Պ. Պռոշյանի և ուրիշների ջանքերով մշակվեց նախագիծ, և խորհրդային կառավարությունը (ժողովրդական կոմիսարների խորհուրդ)՝ Վ. Լենինի գլխավորությամբ, 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունեց **Թուրքահայաստանի (Արևմտյան Հայաստանի) մասին** դեկրետը (հրովարտակ), որով սահմանվում էր ռուսական զորքերի կողմից գրավյալ Արևմտյան Հայաստանի հայերի **ազատ ինքնորոշման իրավունք**՝ ընդհուպ մինչև **լիակատար անկախություն**: Սակայն բոլշևիկների հռչակած դեկրետը մնաց օդից կախված քարոզչական հնարք, չկենսագործվեց կյանքում: Ընդհակառակը, շուտով, 1918 թ. մարտի 3-ին կնքված Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը ի չիք դարձրեց հայության հույսերը Թուրքահայաստանի ինքնորոշման հարցում: Այդ կողոպտիչ պայմանագրով Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը, հիասթափեցնելով հայ ժողովրդին, Գերմանիայի դաշնակից Թուրքիային հանձնեց ոչ միայն աշխարհամարտի տարիներին մեծ զոհողությունների գնով նվաճված Արևմտյան Հայաստանը, այլև բնիկ արևելահայ տարածքները՝ Կարսը, Արդահանը, իսկ Վրաստանից՝ Բաթումը: Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագիրը սառը ցնցուղ եղավ հայ ռուսամետ քաղաքական կուսակցությունների վրա, ինչը ինքնաբերաբար նրանց մղեց անկախության գաղափարին:

Այսպիսով՝ Առաջին աշխարհամարտի պայմաններում 1917 թ. Ռուսաստանում տեղի ունեցած խոշոր իրադարձությունները հայության համար շատ բարդ, անորոշ ու դժվարին կացություն ստեղծեցին: Ստեղծված պայմաններում հայերը ինքնապաշտպանական քայլեր ձեռնարկեցին: Ստեղծվեցին ազգային խորհուրդներ, որոնցից կենտրոնականը Թիֆլիսի Հայոց Ազգային խորհուրդն էր: Ռուսական կայսրության փլուզման պայմաններում հայ Ազգային խորհուրդները կոչված էին կազմակերպելու ժողովրդի ինքնապաշտպանությունը, իսկ հարկ եղած դեպքում տանելու **անկախության ուղիով**: Առաջին աշխարհամարտի թոհուբոհով անցած, եղեռն տեսած հայ ժողովուրդը թևակոխեց 1918 թվականը: Թուրքական հարձակման պայմաններում տեղի ունեցան նոր ճակատագրական իրադարձություններ, կյանքի ու մահվան կռիվներ, կախվեց արևելահայերի լինել-չլինելու վտանգը: Բայց ի վերջո կերտվեց հաղթական Մայիսը և դրվեց հայոց անկախ պետականության հիմնաքարը:

1.2.Թուրք-անդրկովկասյան ռազմաքաղաքական հարաբերությունները 1917թ. վերջին և 1918 թ. սկզբներին

Ռուսական հեղափոխությունների հետևանքով ուժեղացան կազմալուծիչ ու անիշխանական գործընթացները, քայքայվեց ռուսական բանակը, կազմալուծվեցին ռազմաճակատները, այդ թվում Կովկասյանը: Խնդիրն այն է, որ բոլշևիկները համապատասխան հրովարտակով հայտարարեցին, որ վերջ է տրվում պատերազմին, զինվորի համազգեստ հագած զինվորները կարող են լքել ռազմաճակատը, վերադառնալ տուն և ստանալ բոլշևիկների խոստացած ազատությունը, հողը, գործարանը, հացը, աշխատանքը և այլն: Դրա հետևանքով տարերայնորեն քայքայվեց նաև Արևմտյան Հայաստանով ձգվող Կովկասյան շուրջ 720 կմ երկարությամբ ռազմաճակատը և ռուսական շուրջ կեսմիլիոնանոց զինվորականությունը զանգվածաբար սկսեց լքել ռազմաճակատը և ցամաքով և ծովով (առանձին դեպքերում բռնի զինաթափման ենթարկվելով) վերադառնալ տուն: Ռուսական բանակի քայքայման ու ռազմաճակատների կազմալուծման պատճառներից էր նաև այն հանգամանքը, որ հին բանակը քաղաքականապես բոլշևիկներին այնքան էլ վստահություն չէր ներշնչում:

Ռուսական զորքի առաջին խմբաքանակը ռազմաճակատը լքեց 1917 թ. դեկտեմբերի 10-ին: Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարության հրահանգով Կովկասում ռուսական բանակի հրամանատարությունը հրաման էր արձակել, որ մինչև 1917 թ. դեկտեմբերի 25-ը պետք է լիովին դատարկվեր Կովկասյան ռազմաճակատը: Ըստ հրամանի՝ այնտեղ չպետք է մնար ոչ մի ռուս զինվոր: Արդեն 1918 թ. հունվարի վերջերին Կովկասյան ճակատը հիմնականում դատարկված էր ռուսական զորքերից: Ինքնին հասկանալի է, թե հայ ժողովրդի համար ինչ էր նշանակում ռուսական զորքերի դուրսբերումը Արևմտյան Հայաստանից: Ռազմաճակատի մերկացումը ազդանշան հանդիսացավ, որպեսզի թուրքերը խախտեն 1917 թ. դեկտեմբերի 5-ին ստորագրված Երզնկայի թուրք-անդրկովկասյան զինադադարը և անցնեն լայնամասշտաբ հարձակման: Դա նշանակում էր, որ հայ ժողովրդի գլխին կրկին կախվում է թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքը:
Հիրավի, ռազմաճակատի քայքայումը ամենից ավելի ծանր անդրադարձավ հայ ժողովրդի վիճակի վրա: Այս կապակցությամբ տեղին է հիշեցնել պատմական այն դառը ճշմարտությունը, որ 70 տարի շարունակ մեզանում միակողմանիորեն գովերգված ու փառաբանված «Մեծ Հոկտեմբերը» այնպես չէ, որ հայ ժողովրդին միայն բարիք է բերել, այլ այդ հոկտեմբերը նաև կամա թե ակամա ճանապարհ է հարթել հայ ժողովրդի դարավոր թշնամու համար Հայաստանի խորքերը ներխուժելու, հայության նոր կոտորածներ իրականացնելու և նրա զգալի տարածքները բռնազավթելու համար: Այդ իմաստով, Սփյուռքի մի հեղինակ, իրոք, ցավով ու տեղին է նշել, որ 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումը ոչ մի ժողովրդի համար այնքան աղետաբեր չեղավ, որչափ հայերի համար:
Հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը անհանգստացած էին ռուսական զորքերի հեռացումից՝ միշտ գիտակցելով, որ առանց Ռուսաստանի ամեն ինչ վատ է լինելու: Միանգամայն այլ էր թուրք-մուսավաթականների և մասամբ էլ վրաց մենշևիկների վերաբերմունքը ռուսական զորքերի հեռացման հանդեպ: Մասնավորապես թուրք-թաթարներին շատ էր դուր գալիս բոլշևիկների հռչակած «առանց զավթումների ու ռազմատուգանքների անջատ հաշտություն» կարգախոսը, քանզի դա իրավունք էր տալիս Թուրքիային կրկին

տիրանալու ռուսական զորքերի կողմից գրավյալ հայկական հողերին: Հիրավի, ռուսական զորքերից Կովկասյան ռազմաճակատի պարպումը կործանարար եղավ Թուրքահայաստանի համար:
Խորհրդային կառավարությունը իր իշխանությունը պահելու համար պատրաստ էր մեծ զիջումներ անել Գերմանիային և նրա դաշնակիցներ Ավստրո-Հունգարիային, Թուրքիային ու Բուլղարիային: Խորհրդային Ռուսաստանը բանակցելով Գերմանական խմբավորման հետ, ինչպես արդեն ասվեց, կնքեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որով Ռուսաստանը դուրս եկավ Անտանտի կազմից և Գերմանիային և նրա դաշնակիցներին զիջեց շուրջ 1 մլն քառ. կմ տարածք, այդ թվում ամբողջ Արևմտյան Հայաստանը և արևելահայ Կարսի և Արդահանի շրջանները: Այլ խոսքով՝ բոլշևիկյան պետական հեղաշրջումը բարիք հանդիսացավ Գերմանիայի և նրա դաշնակիցների համար, որոնք ոչ միայն հավելյալ տարածքներ ստացան, այլև Ռուսաստանին դուրս բերելով Անտանտի կազմից՝ իրենց ուժերը կենտրոնացրին վերջինիս երկրների դեմ:
Կովկասյան ռազմաճակատի քայքայման պայմաններում ինքնապաշտպանության նպատակով հայ քաղաքական շրջանակներում հրամայական պահանջ առաջացավ ստեղծելու ազգային զորամիավորումներ, որպեսզի ինչ-որ կերպ զբաղեցնեին ճակատը լքած ռուս զորքի տեղը: Ռուսական բանակում ծառայող հայ զինվորներից ու կամավորական խմբերից 1917 թ. նոյեմբերին սկսեց Հայկական առանձին բանակային կորպուսի ձևավորումը: Կորպուսի հրամանատար նշանակվեց գեներալ-լեյտենանտ **Թովմաս Նազարբեկյանը** (1855-1928), սպայակույտի պետ՝ գեներալ **Եվգենի Վիշինսկին**, իսկ հատուկ կոմիսար՝ **Դրաստամատ Կանայանը (Դրոն)** (1883-1956): Բանակային կորպուսի մեջ էր մտնում նաև արևմտահայերից կազմված երկրապահ կամավորական զորաբաժինը (դիվիզիան), որի հրամանատար նշանակվեց գեներալի կոչում ստացած **Անդրանիկը (Օզանյան)** (1865-1927): Անդրանիկի կողքին խիզախաբար կռվում էին **Սեբաստացի Մուրադը** (1874-1918), **Սեպուհը** (**Արշակ Ներսիսյանը**), **Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյանը)** (1886-1955) և ուրիշներ: 1918 թ. մարտի 1-ի դրությամբ Հայկական առանձին բանակային կորպուսը, կազմված երեք դիվիզիայից և մեկ հեծյալ գնդից, իր շարքերում ուներ ավելի քան 26 հազար զինվոր ու սպա:

Փաստենք, որ հայկական զինուժը հետագայում դարձավ հայկական ազգային բանակի հիմքը:
Ռուսական բանակի քայքայումը շատ ձեռնտու էր թուրքերին, որոնք կարծես հենց դրան էին սպասում: Եվ 1918 թ. հունվարի 30-ին թուրք նվաճողները, խախտելով 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքված թուրք-անդրկովկասյան զինադադարը, ձմռվա սառնամանիքների պայմաններում անցան լայնամասշտաբ հարձակման Կովկասյան ամբողջ ռազմաճակատում՝ Տրապիզոնից մինչև Ուրմիա լիճը: Նրանք կարճ ժամանակամիջոցում (երկու-երեք ամսում) վերագրավեցին փաստորեն ամբողջ Արևմտյան Հայաստանը, իսկ գարնանը սկսեցին «բախել» Անդրկովկասի ու Արևելյան Հայաստանի դռները: Մինչև ատամները զինված թուրքական դիվիզիաներին դիմակայող միակ իրական ուժը նոր ձևավորված Հայկական կորպուսն էր, որը, սակայն, միայնակ ի զորու չէր կասեցնել թշնամու առաջխաղացումը: Թուրքական հարձակման և ձմեռվա սաստիկ ցրտերի պայմաններում տեղի ունեցան արևմտահայության նոր կոտորածներ ու գաղթ: Արևմտյան Հայաստանը Երզնկայից մինչև Վան գործնականում հայաթափվեց:
Արդյունք չտվեցին 1918 թ. մարտ ամսին Տրապիզոնում ընթացող թուրք-անդրկովկասյան անջատ հաշտության բանակցությունները: Կովկասյան իշխանությունները փորձում էին բանակցությունների միջոցով կանխել թուրքերի հետագա առաջխաղացումը դեպի Անդրկովկաս: Նրանք ակնկալում էին պահպանել գոնե 1914 թ. նախապատերազմյան սահմանները: Բայց մինչ բանակցությունները սկսելը հայտնի դարձավ, որ 1918 թ. մարտի 3-ին, ինչպես արդեն ասվեց, Խորհրդային Ռուսաստանը, հիասթափեցնելով հայ ժողովրդին, կնքեց Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որով Գերմանիայի դաշնակից Թուրքիային էր հանձնվում ոչ միայն 1914-1917 թթ. պատերազմի ընթացքում այնքան մեծ դժվարությամբ ու անթիվ զոհերի գնով գրավյալ արևմտահայ նահանգները, այլև Արևելյան Հայաստանի մասը կազմող Կարսի մարզը ընդհուպ մինչև Ախուրյան գետը, ինչպես նաև Վրաստանից՝ Բաթումը: Այսինքն՝ վերականգնվում էր այն սահմանագիծը, որը գոյություն էր ունեցել մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը: Բրեստի դաշնագրի 4-րդ հոդվածով և նույն օրը ստորագրված լրացուցիչ պայմանագրի 5-րդ կետով

Ռուսաստանը պարտավորվում էր ոչ միայն լիակատար մաքրել վեր նշված տարածքներն իր զորքերից ու կանոնավոր հանձնել Թուրքիային, այլև զորացրել հայկական զինվորական կազմավորումները (խմբերը), մինչդեռ Թուրքիան պետք է իր բանակը պահեր մարտական վիճակում: Բնականաբար Տրապիզոնի հաշտության բանակցությունները մտան փակուղի և ապրիլի սկզբին ընդհատվեցին:
Բրեստի կողոպտիչ պայմանագիրը հաղթաթուղթ դարձավ թուրքիայի ձեռքին իր հետագա պանթուրքական զավթողական պլաններն իրականացնելու համար: Թուրքական պատվիրակությունը, գոտեպնդված իր ռազմական հաջողություններով, պահանջեց Թուրքիային հանձնել Կարսը, Արդահանը, Բաթումը: Միաժամանակ թուրքերը պահանջ դրեցին, որ Անդրկովկասը անջատվի Ռուսաստանից, իրեն անկախ հռչակի: Պետք է նշել, որ Բրեստի պայմանագրով Կարսի և Բաթումի մարզերի հանձնումը Թուրքիային դարձավ այն ազդակներից մեկը, որն ինքնաբերաբար Անդրկովկասյան իշխանություններին մղեց երկրամասի՝ Ռուսաստանից անջատմանը: Թուրքական հարձակման սպառնալիքի պայմաններում հայ քաղաքական շրջանակները՝ ՀՅԴ գլխավորությամբ, փոխեցին իրենց դիրքորոշումը Հայաստանի ապագա (հետագա) քաղաքական կարգավիճակի հարցում: Եթե 1917 թ. աշնանը Համառուսական Սահմանադիր ժողովի ընտրությունների և Անդրկովկասյան կոմիսարիատի ձևավորման փուլում ՀՅԴ կուսակցությունը խոսում էր ազգերի ինքնորոշման պահանջի մասին, ապա արդեն 1918 թ. հունվարի վերջից թուրք-անդրկովկասյան հրադադարի խախտման և թուրքական զորքերի կովկասյան ռազմաճակատի երկայնքով հարձակման պայմաններում Դաշնակցությունն այլևս աննպատակահարմար, անգամ վտանգավոր էր համարում ինքնորոշման սկզբունքով Անդրկովկասի ու Հայաստանի անջատումը Ռուսաստանից: Հայ քաղաքական կուսակցություններին ՀՅԴ-ի հետ միասին, աշխարհաքաղաքական ստեղծված սպառնալիքների առկայության պատճառով, ամենևին ցանկալի չէր, որ Ռուսաստանը հեռանա Անդրկովկասից:

Այն բանից հետո, երբ 1918 թ. հունվարի 6-ին Վ. Լենինի գլխավորած խորհրդային կառավարությունը ցրեց ժողովրդավարական

ճանապարհով ընտրված Համառուսաստանյան **Սահմանադիր ժողովը**, հիմնականում դրա անդրկովկասյան հատվածի պատգամավորների թվի, կուսակցական համամասնության սկզբունքով, եռապատկման միջոցով կազմվեց **Անդրկովկասյան սեյմը** (խորհրդարանը): 1918 թ. փետրվարի 10-ին բացված սեյմի 125 պատգամավորներից 32-ը մենշևիկ էին, 30-ը՝ մուսավաթական և 27-ը՝ դաշնակցական, մնացածը այլ կուսակցություններից ու ազգային ներկայացուցիչներից: Սեյմը կազմեց նոր կառավարություն՝ վրաց մենշևիկ **Ակակի Չխենկելու** գլխավորությամբ, որը վարում էր Ռուսաստանից անջատ քաղաքականություն: Սակայն թե՛ անդրկովկասյան կառավարության և թե՛ Սեյմի ներսում գոյություն ունեին ազգային-քաղաքական խորը հակասություններ ու տարամերժ դիրքորոշումներ, որոնք սկսված թուրքական ներխուժման պայմաններում, անկենսունակ էին դարձնում երեք ազգային-տարածքային միավորներից բաղկացած Անդրկովկասյան՝ իրեն արդեն անկախ հռչակած դաշնակցային հանրապետության գոյությունը:
Բանն այն է, որ 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Թուրքիայի պահանջով Անդրկովկասյան Սեյմը հռչակեց **Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական Հանրապետության (ԱԴԴՀ)** անկախությունը: Թուրքիան շահագրգռված էր Անդրկովկասի անկախացմանը նրանով, որ նա ցանկանում էր Անդրկովկասն իրավաբանորեն անջատել Ռուսաստանից, որպեսզի առանց վերջինիս միջամտության երես առ երես «**լուծեր**» Անդրկովկասի հարցը, ինչպես նաև **իրականացներ** իր պանթուրքական զավթողական հետագա պլանները:
Թեև սկզբում հայերը բողոքեցին այդ ակտի դեմ (որովհետև նրանք ամենևին մտադիր չէին մեկուսանալու և կտրվելու Ռուսաստանից՝ ամենից առաջ նկատի ունենալով թուրքական ներխուժման վտանգը), սակայն հարևան ազգային միավորներից չմեկուսանալու նպատակով ի վերջո ճարահատված հավանություն տվեցին Անդրկովկասի անկախության փաստին, հակառակ պարագայում նոր կոտորածների ուրվականն ավելի առարկայական էր դառնալու: Այդպես վարվեցին Սեյմի ՀՅԴ խմբակցությունը, Հայոց Ազգային ժողովի արտակարգ նիստը, ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովը, Հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները և այլք: Անդրկովկասյան իշխանությունները հույս ունեին, որ երկրամասի անկախության հռչակումն իրավական հիմք կտա

թուրքերի հետ խաղաղ բանակցություններ վերսկսելու և շուտափույթ հաշտություն կնքելու: Բայց նրանց հույսերը չարդարացան: Ստեղծված ռազմաքաղաքական իրադրության պայմաններում Անդրկովկասյան սեյմը ոչ միայն չկարողացավ կազմակերպել երկրամասի պաշտպանությունը, այլև իր ներսում առկա ազգամիջյան և սոցիալ-քաղաքական հակասությունների ու չհամաձայնեցված գործողությունների հետևանքով գործնականում նպաստեց թուրքերի ներխուժմանը Անդրկովկաս: Այս գործում, թաթար մուսավաթական պարագլուխներից զատ, թուրք ջարդարար-զավթիչներին, կարելի է ասել, որ մեծ ծառայություն մատուցեց նաև վրաց մենշևիկների աջ թևի պարագլուխ, թուրքասեր Ա. Չխենկելին, որի կարգադրությամբ էլ ապրիլի կեսերին գրեթե առանց դիմադրության ամուր պաշտպանված Կարս բերդաքաղաքը հանձնվեց թուրքերին:
Դեռ մինչ Սեյմի կողմից Անդրկովկասի անկախության պաշտոնական հռչակումը՝ 1918 թ. ապրիլի 6-8-ը, ճակատամերձ Ալեքսանդրապոլում Հայոց Ազգային խորհրդի նախաձեռնությամբ գումարվեց հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցություն: Այնտեղ քննարկվեցին ռազմաճակատի, զորքի, հաշտության, անկախության և այլ հարցեր: Նրանում որոշվեց՝ բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը: Խորհրդակցությունում քննության առնվեց Հ. Քաջազնունու զեկուցումը, որի մեջ վերջինս աշխատում էր ապացուցել, որ ստեղծված պայմաններում պետք է համաձայնվել վրացիների և ադրբեջանցիների հետ և ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանները, այլապես կքայքայվի Անդրկովկասյան խախուտ դաշնությունը, և հայ ժողովուրդը կհայտնվի թուրքերի դեմ մեն-մենակ: Խորհրդակցությունը որոշեց՝ ճանաչել Բրեստի պայմանագիրը, սեյմում դեմ քվեարկել անկախությանը, ուժեղացնել երկրի պաշտպանությունը:
Վերը շարադրվածից հետևում է, որ պատմական տվյալ փուլում, թուքական մահաբեր նեխուժման սպառնալիքի պայմաններում **ՀՅԴ և հայ մյուս քաղաքական շրջանակների համար առաջնայինը եղել է ժողովրդի անվտանգությունը, քան Ռուսաստանից անջատումն ու անկախությունը:**

1.3.Թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան և Մայիսյան հերոսամարտերը

Տրապիզոնի հաշտության բանակցությունների ձախողումից հետո թուրքական զորքերը արշավեցին Արևելյան Հայաստան: 1918 թ. մարտի վերջին ընկավ Սարիղամիշը; Ինչպես արդեն ասվեց, Անդրկովկասյան կառավարության (նախագահ՝ Ա. Չխենկելի) դավաճանական վարքագծի հետևանքով գրեթե առանց դիմադրության 1918 թ. ապրիլի 12-ին թուրքերին հանձնվեց լավ ամրացված Կարս քաղաք-ամրոցը: Չկար համերաշխություն Անդրկովկասի կառավարության ներսում և Սեյմում: Կառավարության նախագահ, մենշևիկ Ա. Չխենկելին վարում էր ըստ էության թուրքամետ գիծ: Անդրկովկասի երեք հիմնական ազգերի (հայ, վրացի, կովկասյան թուրք) անմիաբանությունն էր հիմնական պատճառը, որ թուրքական զորքերը ռազմական հաջողություններ էին ունենում: Ընդ որում, կովկասյան թուրքերը բացահայտ համակրում և օժանդակում էին իրեն ցեղակից օսմանցի թուրքերին: Վրացիների և կովկասյան թուրքերի համագործակցության և հակառուսական տրամադրվածության մի յուրօրինակ դրսևորում եղավ այն, որ նրանք զենք և զինամթերք խլելու պատրվակով, օսմանցի թուրք էմիսարների ներշնչումով, Անդրկովկասյան երկաթուղու Շամխոր-Ելիզավետպոլ (Գանձակ) կայարանամերձ հանգույցներում 1918 թ. հունվարին հարձակվեցին հայրենիք վերադարձող ռուս զինվորականության վրա նրանց զինաթափեցին և իրականացրին զանգվածային կոտորածներ: Թուրք զավթիչների դեմ պայքարի հարցում հայ քաղաքական գրեթե բոլոր կուսակցությունները և հոսանքները միակամ էին: Դա էր հաստատում 1918 թ. ապրիլին Ալեքսանդրապոլում Հայոց Ազգային խորհրդի նախաձեռնությամբ կայացած հայ քաղաքական կուսակցությունների և անկուսակցական գործիչների խորհրդակցությունում ընդունված համատեղ որոշումը՝ բոլոր հնարավոր միջոցներով շարունակել երկրի պաշտպանությունը: Սակայն հայությունը միայնակ ի վիճակի չէր դիմակայելու թուրք զավթիչներին: Թուրքական զորքերի հաջողությունները հարկադրեցին Անդրկովկասի կառավարությանը վերսկսել Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Մայիսի 11-ին Բաթումում սկսվեցին թուրք-անդրկովկասյան հաշտության նոր բանակցություններ: Սակայն

ռազմական հաջողություններով արբեցած թուրքերն ամենևին մտադրություն չունեին բավարարվել անգամ Բրեստի հաշտության պայմաններով: Այժմ նրանք կողոպտչական նոր պահանջներ ներկայացրին, որի պատճառով բնակցությունները դարձյալ մտան փակուղի և ընդհատվեցին:
Հանդիպելով թույլ դիմադրության՝ Յաղուբ Շևքեթ փաշայի գլխավորած 35 - հազարանոց «Կարս» խմբավորումը անցավ նոր հարձակման: Ներխուժելով Անդրկովկաս՝ Թուրքիան իր առջև երկու կարևոր ռազմավարական խնդիր էր դրել. ա) գրավել Արևելյան Հայաստանը և արևելահայությանն էլ արժանացնել արևմտահայության ճակատագրին և բ) Հայաստանի վրայով շարժվել Արևելյան Անդրկովկաս, գրավել Բաքուն, տիրանալ նավթին, իսկ այնտեղից էլ՝ համաթուրանական պլաններով շարժվել դեպի իր ցեղակից մյուս Անդրկասպյան երկրներ, ընդհուպ՝ Սիբիր և ստեղծել Մեծ Թուրանի կայսրություն՝ Բալկաններից մինչև Բայկալ լիճ, ինչպես որ ծրագրել էին երիտթուրք պարագլուխները աշխարհամարտի նախօրյակին:
Օգտվելով նպաստավոր հանգամանքից՝ մայիսի 15-ին թուրքական զորքերը հանկարծակի հարձակումով գրավեցին Ալեքսանդրապոլը (Գյումրին) և առաջ շարժվեցին երկու հիմնական ուղղություններով: Թուրքական զորքերի մի խմբավորում Ալեքսանդրապոլից իջավ հարավ և երկաթուղուն համընթաց շարժվեց դեպի Արարատյան դաշտ՝ Երևանը և էջմիածինը գրավելու, իսկ մյուսը՝ Ղարաքիլիսա (Վանաձոր) – Դիլիջան- Քարվանսարա (Իջևան)-Ղազախով ռազմավարական ուղղություն վերցրեց դեպի Բաքու: Հայկական ազգային զորամասերը անկարող էին երկարատև դիմադրություն ցույց տալ զավթիչների կանոնավոր զորքին: Հայ ժողովրդի գլխին նորից կախվեց ֆիզիկական բնաջնջման վտանգը:
Արարատյան դաշտ ներխուժած թուրքական ուժերը մայիսի 20-ին գրավեցին Արաքս կայարանը, իսկ 21-ին՝ Սարդարապատ գյուղն ու կիսակայարանը: Սկզբում գոյություն ուներ պարտվողական տրամադրություն, իր բարձրության վրա չէր Հայկական կորպուսի հրամանատարությունը, որը շարունակ կատարում էր թուրք հրամանատարության պահանջները: Թուրքերին դիմակայելու համար կատարվեց հայկական զինված ուժերի վերադասավորում: Ստեղծվեց Երևանյան զորախումբը, որի հրամանատար նշանակվեց գեներալ

Մովսես Սիլիկյանը (1862-1937 թթ.), շտաբի պետ, փոխգնդապետ **Ալեքսանդր Վեքիլյանը** (**Վեքիլով**): Երևանի պաշտպանությունը ապահովելու նպատակով միջոցներ ձեռք առնվեցին նաև Սուրմալուի (Կողբ-Իգդիր) և Բաշ-Ապարանի ուղղությամբ:
Չունենալով այլ ելք՝ հայ ժողովուրդը ազգային-ազատագրական պայքարի ելավ, ուր վճռվելու էր նրա լինել-չլինելու հարցը: Այդ օրերին հրապարակվեցին գեներալներ Թ. Նազարբեկյանի և Մ. Սիլիկյանի՝ հայ ժողովրդին ուղղված մարտաշունչ կոչերը՝ **Հայրենիքն ազատելու համար ելնել սրբազան պատերազմի:**
Սրանից ուղիղ 100 տարի առաջ, մայիսի 22-ի վաղ առավոտյան, եկեղեցու զանգերի ղողանջների ներքո սկսվեց **Սարդարապատի** պատմական ճակատամարտը: Սարդարապատի զորաբաժինը, որի հրամանատարը գնդապետ **Դանիել Բեկ-Փիրումյանն** (1861-**1921**) էր, հրետանային նախապատրաստությունից հետո անցավ հակահարձակման: Հայկական զինուժը հուժկու գրոհով հետ վերցրեց թշնամու կողմից մեկ օր առաջ գրաված Սարդարապատը: Թուրքերը, մեծ կորուստներ տալով, խուճապահար նահանջեցին մինչև Արաքս կայարանի մոտակա բարձունքները: Իսկ մի քանի օր տևած համառ ու ծանր մարտերից հետո թուրքական 15-հազարանոց զորքը պարտվեց և հարկադրված նահանջեց Ալեքսանդրապոլի ուղղությամբ:

Այդ հաղթանակը բարձրացրեց զորքի և ժողովրդի մարտական ոգին: Նույնիսկ մտադրություն կար դեպի Կարս շրջանցիկ հարվածով ազատագրել Ալեքսանդրապոլը: Սակայն զենքի ու զինամթերքի պակասի հետևանքով հնարավոր չեղավ այդ պլանը իրագործել: Հարկ է նշել, որ հայրենիքի պաշտպանության համար ոտքի ելավ Երևանի ու Արարատյան դաշտի ողջ հայ բնակչությունը: Հարյուրավոր մարդիկ, անկախ կուսակցական պատկանելիությունից, մասնագիտությունից, քաղաքական համոզմունքներից ու տարիքից, ներկայանում էին զորամաս ու մեկնում ճակատ: Գյուղացիները տրամադրում էին փոխադրամիջոցներ, փամփուշտ, սննդամթերք, մտնում աշխարհազորայինների շարքերը, փորում խրամատներ: Հերոսամարտը ստացավ համաժողովրդական բնույթ, հայ ժողովուրդը համախմբվել, մեկ բռունցք էր դարձել, որովհետև յուրաքանչյուր հայ

գիտակցում էր, որ ինքը մարտնչում է հանուն իր ընտանիքի, զավակների, հայրենի հողի ու ազգային արժանապատվության: Դաշտի ինքնապաշտպանության ոգին ժողովրդի բուռն ցանկությամբ Հայոց Ազգային խորհրդի լիազոր, Երևանի դիկտատոր հռչակված **Արամ Մանուկյանն** էր (1879-1919 թթ.): Ա. Մանուկյանի բացառիկ ազգանվեր կերպարը լավ հասկանալու համար ուշագրավ են հետևյալ դրվագները: Թուրքական հարձակման պայմաններում սկզբում հայության որոշ հատվածներում իշխում էր պարտվողական տրամադրություն, շատերը ընդդիմանում էին կռվի դուրս գալ, զինվորները չէին ցանկանում ճակատ մեկնել: Ականատես հուշագիրը պատմում է, որ ռազմաճակատ մեկնել չցանկացող 7-8 հազար զինվորներ և նրանց միացած բազմահազար ամբոխը (ժողովուրդ) հավաքված էին Երևանի Ազգային խորհրդի մուտքի առաջ և կընդդիմանային ճակատ գնալու: Այդ պահին պատշգամբ է դուրս գալիս Արամը և ասում.«**Կամ այստեղ ինձ կխփեք, կամ բոլորդ կգնաք կռվի դաշտ**»: Արամի սրտառուչ այդ երկու խոսքը բավական էր, որ զինվորների մեջ բռնկվի հայրենասիրական կայծը և բոլորը միակամ մեկնեն ռազմաճակատ:

Մայիսյան այդ ճակատագրական օրերին ուշագրավ է նաև հետևյալ դրվագը, որը մեջ ենք բերում ամբողջությամբ. «Մայիսի 19-ի առավոտյան զորավար Սիլիկյանը ուղիղ հեռագրաթելի մոտ է կանչում Արամին:

-ՍԻԼԻԿՅԱՆ.- Արամ, բարև, մեր դրությունը վճռական է, մենք առանց կռվի նահանջում ենք դեպ Զեյվա, թշնամին գերազանց ուժեր ունի, իմ զորամասս քայքայվում է թիկունքի ընդհանուր քայքայման պատճառով, դասալքությունը բազմացել է: Մտածում եմ, թե ստիպված եմ նահանջել…:

-ԱՐԱՄ.- Զորավար, Ձեր խոսակցությունից եզրակացնում եմ, որ Դուք մտադիր եք նահանջել դեպի Երևան և նույնիսկ մայրաքաղաքը ենթարկել ռմբակոծման:

-ՍԻԼԻԿՅԱՆ,- Ամեն ինչ հնարավոր է:

-ԱՐԱՄ,- Այդ չի լինի: Ասացեք անմիջապես՝ ի՞նչ է պետք Ձեզ՝ հարձակողականի անցնելու և նախօրոք դրված խնդրի իրագործման համար:

-ՍԻԼԻԿՅԱՆ.- Փամփուշտներ, մարդիկ, հաց, տեղափոխության միջոցներ, իսկ գլխավորը՝ թիկունքի ոգևորությունը, և հաղթանակը երաշխավորում եմ:
-ԱՐԱՄ.- Պահեցե՛ք, զորավա՛ր, երկու օր, և ամեն ինչ կլինի»:
«Արամը իբրև շարժական ոգի ամեն տեղ էր՝ հրապարակում, շուկայում, տներում, եկեղեցիներում, և կոգևորեր իր խոսքերով, և՛ կներշնչեր ամենքին: Եվ գործը եռաց: Բոլորն էլ աշխատում էին: Խրամատներ կփորեին և՛ շրջանային դատարանի նախագահը, և՛ դպրոցական երեխան, և՛ երիտասարդ գեղեցկուհի երևանցին, և՛ 60 տարեկան վանուհին»:
Եվ վերջապես հասավ վճռական գոտեմարտի պահը: Սիլիկյանը հաղորդեց, որ ինքը ամեն ինչ ունի և լրացուցիչ օգնության կարիք չունի: Սարդարապատի տակ ահեղ մարտերն ընթացան մի քանի օր շարունակ: Մայիսի 26-ին՝ երեկոյան, Ազգային խորհուրդը հավաքվել և սրտատրոփ սպասում էր ճակատամարտի ելքին: Ստացվեց զորավար Սիլիկյանի զեկուցումը. «16-ժամյա համառ մարտերից հետո թշնամին ջախջախված է»: Բոլորի աչքերի մեջ արցունքներ երևացին: Հաղթանակն ապահովված էր:
Ահա Ա. Մանուկյանի դերակատարության մեկ-երկու դրվագը, որը բավական է պատկերացում կազմելու 20-րդ դարի, իրավամբ, այդ մեծ հայի մասին: Առանց չափազանցության կարելի է վստահաբար ասել, որ Արամի աննկուն կամքի և հմուտ կազմակերպչական ջանքերի շնորհիվ հայ ժաղովուրդը հաղթանակ տոնեց:
Սարդարապատի ճակատամարտին գրեթե զուգընթաց, մայիսյան վերջին շաբաթը, ահեղ մարտեր մղվեցին նաև **Բաշ-Ապարանում** և **Ղարաքիլիսայում**: Մայիսի 22-ին թուրքական մի դիվիզիա, գրավելով Համամլուն (Սպիտակ), շարժվեց դեպի Բաշ-Ապարան՝ նպատակ ունենալով Երևանի վրա գրոհել հյուսիսից, մտնել Արարատյան դաշտ և Սարդարապատի մոտ հայկական զորամասերին հարվածել թիկունքից: Ստեղծվեց հարվածային խումբ: Հայկական զորամասը, Դրոյի հմուտ ղեկավարությամբ, ոչ միայն կասեցրեց թուրքերի առաջընթացը, այլև խիզախ հակագրոհով փախուստի մատնեց թշնամուն: Այդ կռիվներում հայերին օգնում էր **Ջահանգիր աղայի** քրդական (եզդիական) ջոկատը:

Արարատյան դաշտի հաղթանակի վերաբերյալ Արամ Մանուկյանի հեռագիրը ոգևորիչ ազդեցություն ունեցավ Ղարաքիլիսա-Դիլիջան ուղղությամբ խմբված Հայկական կորպուսի հիմնական ուժերի վրա: Մայիսի 25-29-ը ահեղ մարտեր տեղի ունեցան Ղարաքիլիսայի (Վանաձոր) մոտ: Երկու կողմերն էլ ունեցան մեծ կորուստներ: Չնայած թշնամին ի վերջո գրավեց Ղարաքիլիսան և շարժվեց առաջ, սակայն այնտեղ նույնպես հայերը ցույց տվեցին հիրավի հերոսական դիմադրություն: Այդ մասին հետո խոստովանել է թուրք հրամանատար Մեհմեդ Վեհիբ փաշան: Ղարաքիլիսայի կռիվներում աչքի ընկան սպաներ Ալեքսանդր Բեյ Մամիկոնյանը, Նիկոլայ Ղորղանյանը, Գարեգին Նժդեհը, մարտերում հերոսաբար զոհվեց կապիտան Գուրգեն Տեր-Մովսիսյանը և ուրիշներ:
Դրանով հանդերձ՝ ցավով պետք է արձանագրել, որ Մայիսյան հերոսամարտերի օրերին Անդրանիկը, մեկուսանալով, նեղացածի կեցվածք ընդունելով գործնականում մասնակցություն չցուցաբերեց ռազմական գործողություններին: Ս. Վրացյանի, Գ. Նժդեհի վկայությամբ՝ այդ օրերին նա գտնվում էր Ամենայն հայոց բանաստեղծ Հ. Թումանյանի հայրենի գյուղ Դսեղում, այն դեպքում, որ նա կարող էր մասնակցություն ունենալ 4-5 օր տևած Ղարաքիլիսայի ճակատամարտին, որտեղ, ի վերջո, թուրքերին հաջողվեց կոտրել հայերի դիմադրությունը և շարժվել **դեպի** Դիլիջան-Ղազախ ուղղությամբ: Այսպիսով՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերում հայ ժողովուրդը կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ ու վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքերի ծրագիրը: Մայիսյան հերոսամարտը ամբողջ հայ ժողովրդի հավաքական ուժի և ազգային միասնության հաղթանակն էր: Ավելին, եղեռն տեսած, կյանքի ու մահվան եզրին կանգնած հայ ժողովուրդը ոչ միայն պահպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր ազատ ու անկախ ապրելու իրավունքը: Մայիսյան հերոսամարտերը հող ստեղծեցին հայոց անկախ պետականության վերականգնման և ազգային վերածննդի համար: Եվ հենց այդ հաղթանակի օրերին հռչակվեց Հայաստանի անկախությունը: Մայիսյան հերոսամարտը դարձավ հայոց նոր ժամանակների Ավարայրը, որ իր խաղացած դերով ու նշանակությամբ, հիրավի, հայ ժողովրդի

պատմության ամենահերոսական դրվագներից է: Այս դեպքերով, կարելի է ասել, փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական իրադարձություններով հարուստ նոր պատմության շրջանը և սկսվում **նորագույն**՝ հայկական պետականությունների պատմության ժամանակաշրջանը:

1. 4.Հայաստանի Հանրապետության հռչակումը

1918 թ. գարնանը, թուրքական զորքերի Անդրկովկաս ներխուժման պայմաններում, սուր հակասություններ էին առաջացել իրեն անկախ հռչակած Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական հանրապետության թե՛ կառավարության և թե՛ խորհրդարանի (Սեյմի) ներսում: Հիմնականում վրացի, հայ և կովկասյան թուրք (թաթար) ազգերի ներկայացուցիչներից բաղկացած Անդրկովկասյան դաշնային իշխանության մարմիններում առկա էին ազգային-տարածքային սուր վեճեր, քաղաքական իրարամերժ կողմնորոշումներ, միջկուսակցական հակամարտություններ և այլն: Նրանց միջև չկար միասնություն պատերազմի և խաղաղության հարցում: Եթե հայերը, մասամբ նաև վրացիները թուրքական զորքերին դիմակայելու, ինքնապաշտպանվելու ջանքեր էին թափում, ապա թաթար-ադրբեջանցիները, ըստ էության, աղ ու հացով էին դիմավորում օսմանցի թուրքերի մուտքը Անդրկովկաս: Քաղաքական կողմնորոշման առումով, եթե հայերը կողմնորոշված էին դեպի **Ռուսաստան,** Կովկասի մուսուլմանները՝ միանշանակ դեպի Թուրքիա, ապա վրացիները իրենց շահերի թելադրանքով հակվեցին դեպի Գերմանիա: Պատկերավոր ասած՝ 1918 թ. գարնանը երկրամասում ստեղծվել էր կռիլովյան հայտնի առակի այն պատկերը, երբ Անդրկովկասյան դաշնային հանրապետության երեք ազգային միավորներից յուրաքանչյուրը «անդրկովկասյան սայլը» միաժամանակ քաշում էր իր ուղղությամբ: Այդ անհամաձայնությունների ու ազգային շահերի հակասությունների հետևանքով էր, որ Անդրկովկասն ի վիճակի չեղավ քիչ թե շատ դիմադրություն ցույց տալ թուրքական ներխուժմանը: Ստացվել էր այնպես, որ թուրք-անդրկովկասյան պատերազմը, ըստ էության, վերածվել էր թուրք-հայկական պատերազմի: Եվ որքան թուրքերը խորանում էին Անդրկովկաս, այնքան սրվում ու բացահայտ էին դառնում

անդրկովկասյան երեք ազգային միավորների ներքին հակասությունները:
Սրված տարաձայնությունների պատճառով 1918 թ. մայիսի երկրորդ կեսին Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի: Վրացիները, գաղտնի բանակցելով ստացան Գերմանիայի հովանավորությունը, ադրբեջանցիները հասկանալիորեն բռնել էին թուրքերի փեշից ու քաշում էին դեպի Բաքու, որը այդ օրերին Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի ձեռքում էր: Առանց հովանավորի էին մնացել միայն հայերը, որովհետև իրենց ակնկալած հովանավոր Ռուսաստանը, **իր** զորքը դուրս էր բերվել Անդրկովկասից: Հայկական զինուժը շարունակում էր օրհասական կռիվներ մղել երկրամասի խորքերը շարժվող թուրքական զորքերի դեմ: Ստեղծված պայմաններում առաջինը վրացիները քայլեր ձեռնարկեցին Անդրկովկասյան դաշնության քայքայման և իրենց անկախության հռչակման ուղղությամբ: **Ինչպես** արդեն ասվեց, նրանք ստացան Օսմանյան Թուրքիայի դաշնակից Կայզերական Գերմանիայի հովանավորությունը: Գերմանիան ստանձնեց Վրաստանի հովանավորությունը, որովհետև վերջինս ուներ տնտեսական և հաղորդակցության միջոցների տեսակետից գրավչություն (երկաթուղի, նավահանգիստ, ենթակառուցվածքներ, հանքահումքային ռեսուրսներ և այլն), մի բան, որ պակասում էր Հայաստանին: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ Գերմանիայի դաշնակից թուրքերը առանձնապես մեծ թշնամանք չէին տածում վրացիների հանդեպ: Այս պարագան ևս իր դերն ունեցավ Գերմանիայի հովանավորությունն ստանալու գործում:
Մայիսի 21-25-ի օրերին վրաց մենշևիկների առաջնորդներ Նոյ Ժորդանիան, Ակակի Չխենկելին, Նոյ Ռամիշվիլին և մյուսները Բաթումում և Թիֆլիսում անդրկուլիսային բանակցություններ վարեցին գերմանացի ներկայացուցիչներ գեներալ ֆոն Լոսովի, կոմս Շուլենբուրգի, ֆոն Կրեսի հետ և համապատասխան համաձայնագրերով ստացան սկզբունքային երաշխիքներ Վրաստանի անկախության ու տարածքային ամբողջության վերաբերյալ: Վրաց ղեկավարները ծրագրեցին, որ մայիսի 26-ին պետք է լուծարել Անդրկովկասյան սեյմը և նույն օրը պաշտոնապես հռչակել Վրաստանի անկախությունը: Պարզվում է, որ մայիսի 25-ին Սեյմի սոց.-դեմ.

(մենշևիկների) խմբակցության խոսնակ Իրակլի Ծերեթելին մահմեդական (ադրբեջանական) խմբակցության ղեկավարներին արդեն տեղեկացրել էր Վրաստանի անկախանալու մտադրության մասին: Դրանից հետո մահմեդականները ևս ձեռնամուխ եղան Ադրբեջանի անկախացման գործընթացին՝ բնականաբար, ստանալով Թուրքիայի հովանավորությունը: Մինչդեռ այդ ամենը կարծես գաղտնի էր պահվում հայերից, որպեսզի վերջին պահին նրանց կանգնեցնեն արդեն կատարված փաստի առաջ: Իհարկե, հայ պատվիրակությունը Բաթումում և գործիչները Թիֆլիսում կռահում էին վրացիների մտադրությունների մասին: Բաթումում հայ պատվիրակները անգամ փորձել են վրացիների օրինակով ֆոն Լոսովից ստանալ գերմանացիների հովանավորությունը, սակայն արդյունքի չեն հասել: Պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձությունները զարգացան այնպես, որ Անդրկովկասի անկախությանը հաջորդեց նրա միասնության խարխլումը և ինքնուրույն ազգային պետությունների առաջացումը: Բանն այն էր, որ թուրքական հարձակման պայմաններում քաղաքական իրարամերժ կողմնորոշումների, ազգային հակոտնյա շահերի և միջկուսակցական հակասությունների հետևանքով շատ շուտով Անդրկովկասյան դաշնության փլուզումը դարձավ անխուսափելի:
1918 թ. մայիսի 26-ը քաղաքական առումով դառնում է ճակատագրական օր Անդրկովկասի համար: Այդ օրը նախապատրաստվել էր Վրաստանի անկախության հռչակումը: Ինքնին հասկանալի **էր,** որ Վրաստանի անկախությունը նշանակում **էր** Անդրկովկասյան դաշնային դեմոկրատական հանրապետության (ԱԴՀ) քայքայում:
Այդ օրը՝ կեսօրին, գումարվեց Անդրկովկասյան Սեյմի վերջին նիստը: Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկների) խմբակցությունը (ղեկ. Ա. Ծերեթելին) առաջարկ մտցրեց Սեյմի արձակման և Անդրկովկասյան դաշնային հանրապետության լուծարման մասին: Սեյմը ձայների ճնշող մեծամասնությամբ որոշում ընդունեց Անդրկովկասի Հանրապետության լուծարման և իր **լիազորությունները** վայր դնելու վերաբերյալ: Եվ ցերեկվա ժամը 3-ին լուծարվեց Սեյմը: Նույն օրը՝ ժամը 4-ին, նույն դահլիճում Վրաց Ազգային խորհուրդը՝ Նոյ Ժորդանիայի նախագահությամբ, ինչպես արդեն ասվեց, նախապես ստանալով

Գերմանիայի հովանավորությունը, մեծ հանդիսավորությամբ Վրաստանը պաշտոնապես հռչակեց անկախ հանրապետություն: Վրաստանի անկախության հռչակումից մի տեսակ անակնկալի գալով՝ պատմական այդ նույն օրը՝ մայիսի 26-ի երեկոյան, գումարվեց նաև Հայոց Ազգային խորհրդի նիստ, որում, գնահատելով ստեղծված իրավիճակը, Վրաստանի անկախությունն ընդունվեց որպես կատարված փաստ: Միաժամանակ Ազգային խորհուրդն իր վրա վերցրեց հայկական շրջանների նկատմամբ ժամանակավոր կառավարության գործառույթները:
Հաջորդ օրը՝ մայիսի 27-ին, ՀՅԴ Թիֆլիսի ներկայացուցչական ժողովի և թաղային կոմիտեների անդամների համատեղ արտակարգ նիստում, լսելով ստեղծված իրավիճակի, Սեյմի ցրման, Վրաստանի անկախության և Անդրկովկասյան կառավարության լուծարման հարցերը, ներկայացուցչական ժողովը առաջարկում է Հայոց Ազգային խորհրդին, ուժեղացնելով իր կազմը, դիկտատորական իրավունքներով ստանձնել կառավարության գործառույթներ հայ կյանքի բոլոր ոլորտներում: Այդ նշանակում է, որ ՀՅԴ-ն, որը մինչ այդ թե՛ իր ծրագրերով և թե՛ իր գործելակերպով արտահայտվում էր ռուսական համապետականության օգտին, բավարարվելով միայն Ռուսաստանի կազմում ինքնավարության պահանջով, այժմ Ռուսաստանում և Անդրկովկասում ծավալվող պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ ինքնաբերաբար կանգնում է **անկախ պետականության գաղափարի նյութականացման փաստի առաջ:**
Այն բանից հետո, երբ մայիսի 27-ին մուսուլմանների Ազգային խորհուրդը, հիմք ունենալով Անդրկովկաս ներխուժած իր ցեղակից Թուրքիայի անվերապահ աջակցությունն ու հովանավորությունը, հայտարարեց Արևելակովկասյան մուսուլմանական հանրապետության (ԱԿՄՀ) անկախության մասին, որն, ի դեպ, հենց այդ ժամանակ թուրքերն առաջին անգամ կոչեցին «Ադրբեջան», Հայոց Ազգային խորհրդին չէր մնում այլ բան, քան դիմել Հայաստանի անկախության քայլին: Չնայած թուրքական զորքերի մահաբեր սպառնալիքներին՝ անկախության քայլն արդարացված էր ու այլընտրանք չուներ այն իմաստով, որ, ինչպես նշում էր Հայաստանի առաջին վարչապետ Հովհաննես Քաջազնունին, ճակատագրական այդ օրերին, եթե տեր չդառնայինք մեր հայրենիքին, չդիմեինք անկախության քայլին, ապա

հայկական գավառները բաժին կդառնային հարևաններին՝ թուրքերին, վրացիներին, ադրբեջանցիներին:
Հայոց Ազգային խորհրդի մայիսի 27-ի երեկոյան նիստում ստեղծված կացության մասին հանգամանալի զեկուցում տվեցին Բաթումից նոր վերադարձած հայ պատվիրակներ Հ. Քաջազնունին և Ալ. Խատիսյանը: Նրանք նույնպես ելքը տեսնում էին Հայաստանի անկախության հռչակման մեջ:
Անկախության խնդիրը քննարկվեց Ազգային խորհրդի մայիսի 28-ի նիստերում (առավոտյան և երեկոյան): Այդ օրը պետք է պատասխան տրվեր նաև Բաթումում մայիսի 26-ին թուրքերի կողմից Հայաստանին ներկայացված երեքօրյա վերջնագրին, քանի որ հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, լրանում էր դրա ժամկետը: Անհրաժեշտ էր շուտափույթ պատվիրակություն ուղարկել Բաթում և հաշտության պայմանագիր կնքել՝ լուծել պատերազմի և խաղաղության խնդիրը: Բուռն քննարկումներից հետո Հայոց Ազգային խորհուրդը որոշեց ընդունել թուրքերի վերջնագիրը՝ Բաթում գործուղել նոր պատվիրակություն ՝ Ալ. Խատիսյան, Հ. Քաջազնունի, Մ. Պապաջանյան կազմով՝ տալով նրան անսահմանափակ լիազորություն՝ բանակցելու և Անկախ Հայաստանի անունից կնքելու հաշտություն: Սակայն անկախության պաշտոնական հայտարարության հարցը առայժմ հետաձգվեց, չնայած այդ օրը անկախության կողմնակիցները խորհրդում արդեն ունեին մեծամասնություն: Հարկ է փաստել, որ Ս. Վրացյանի բնորոշմամբ՝ Ազգային խորհրդի մեռելոցի տանը նմանվող տխուր քննարկումների ընթացքում Դաշնակցության ղեկավար կազմում ևս եղել են անկախության խնդրում մտավախություն արտահայտողներ, այդ թվում Ա. Ահարոնյանը, Ս. Վրացյանը,, Ռ. Տեր-Մինասյանը, Ա. Բաբալյանը և ուրիշներ: Նրանց մտավախությունը բացատրվում էր 1918 թ. գարնանը թուրքական արշավանքի պայմաններում, արդեն քանիցս ասված, հայ ժողովրդի համար ստեղծված չափազանց բարդ ռազմաքաղաքական վիճակով, որի ժամանակ «անկախությունը կարող էր ավելի ևս ծանրացնել կացությունը»:
Այդ օրերին ևս Հայոց Ազգային խորհուրդը տարակուսում էր անկախության խնդրում և դրա համար կային լուրջ հիմքեր: Հայ ժողովրդի հիշողության դաշտում էր 1,5 միլիոն արևմտահայերի կորուստը, թշնամու զորքը գտնվում էր Երևանի մոտերքում,

Հայաստանին ներկայացվել էր վերջնագիր և մտավախություն կար, որ թույլ ու անօգնական երկրի անկախության հռչակումը, առանց քաղաքական ծանրակշիռ փաստարկների ու երաշխիքների, կարող էր լուրջ սպառնալիքի տակ դնել նաև արևելահայության գոյությունը: Սակայն դրա կողքին պետք է փաստել այն իրողությունը, որ Մայիսյան հաղթական հերոսամարտերը լիցք ու վստահություն հաղորդեցին և ծանրակշիռ հիմք հանդիսացան Հայաստանի անկախության համար: Հաջորդ օրը՝ մայիսի 29-ին, գումարվեց ՀՅԴ Արևելյան և Հայաստանի բյուրոների, ՀՅԴ Թիֆլիսի ԿԿ-ի և Սեյմի ու Հայոց Ազգային խորհրդի դաշնակցական ներկայացուցիչների միացյալ նիստը: Այստեղ մեկ անգամ ևս քննության առնվեց քաղաքական կացությունը և որոշվեց Հայաստանը հայտարարել անկախ հանրապետություն: Այդ հիման վրա հանձնարարվեց Ա. Ահարոնյանին, Ն. Աղբալյանին, Հ. Քաջազնունուն և Ալ. Խատիսյանին մշակել Հայաստանի անկախության պաշտոնական հայտարարագիրը (հռչակագիրը): Հայտարարագրի տեքստը, որը ձևակերպել է Նիկոլ Աղբալյանը, ընդունվեց Հայոց Ազգային խորհրդում, իսկ մայիսի 31-ին այն լույս տեսավ մամուլում: Նրանում ասվում էր. «**Անդրկովկասի քաղաքական ամբողջության լուծարումով և Վրաստանի ու Ադրբեջանի անկախության հռչակումով ստեղծված նոր կացության հանդեպ՝ Հայոց ազգային խորհուրդը իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Որոշ ծանրակշիռ պատճառներով թողնելով մոտիկ օրերում կազմելու հայոց ազգային կառավարություն՝ Ազգային խորհուրդը ժամանակավորապես ստանձնում է կառավարական բոլոր ֆունկցիաները՝ հայկական գավառների քաղաքական և վարչական ղեկը վարելու համար**»[2]:

Միաժամանակ որոշվեց կազմել կառավարություն միջկուսակցական (կոալիցիոն) սկզբունքով, ինչպես նաև Ազգային խորհուրդն ու նորակազմ կառավարությունը տեղափոխել Երևան, որը պետք է դառնար Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքը: Երևանի՝ մայրաքաղաք ճանաչվելու վերաբերյալ չկա կոնկրետ ընդունված որոշում, սակայն հաշվի առնելով, որ հնամենի **2700-**ամյա էրեբունի-Երևանը սկսած 15-րդ դարից համարվել է Արևելյան Հայաստանի, 1828 թ.՝ Հայկական մարզի, իսկ 1849 թ. Էրիվանի նահանգի վարչական

[2] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 222, ց. 1, գ. 120, թ. 59-60, «Հորիզոն», Թիֆլիս, 31. V. 1 918 թ.:

կենտրոնը, բնականաբար, առանց որևէ տարակուսանքի այն ընդունվել ու ճանաչվել է որպես նորընծա հանրապետության մայրաքաղաք:
Այդ նույն՝ մայիսի 29-ի միացյալ նիստում, Հ. Քաջազնունին առաջադրվեց կառավարության նախագահի (վարչապետի) թեկնածու: Սակայն ամբողջական կառավարության կազմվելը հետաձգվեց: Խնդիրն այն էր, որ կառավարությունը պետք է կազմվեր կոալիցիոն սկզբունքով, իսկ դրա համար պահանջվում էր միջկուսակցական խորհրդատվությունների միջոցով գալ փոխադարձ համաձայնության: Միաժամանակ, հարկավոր էր խորհրդակցել և կառավարության մեջ ներգրավել երևանյան այն կարող ուժերը, որոնք պետական կառույցների ձևավորման ուղղությամբ արդեն հսկայական աշխատանք էին կատարել՝ Հայոց Ազգային խորհրդի լիազոր և Երևանի դիկտատոր Արամի գլխավորությամբ: Բայց պետք է ասել, որ վարչապետի պաշտոնակատար Հ. Քաջազնունին Թիֆլիսում մեկ ամսից ավելի բանակցեց ՀԺԿ, Հայ սոց.-դեմ. և Սոցիալիստ-հեղափոխական (էսէռ) կուսակցությունների ներկայացուցիչների հետ անդրանիկ կոալիցիոն կառավարության ձևավորման շուրջ, սակայն տարբեր պատճառներով ու առարկություններով համաձայնության չեկան, և կառավարության ձևավորումը կատարվեց անհատական սկզբունքով: Կառավարության կազմը ավարտուն տեսք ստացավ արդեն մայրաքաղաք Երևանում:
Անդրադառնալով Հայաստանի անկախության օրվա և մի քանի օր ուշ հրապարակված հռչակագրի տեքստի բովանդակությանը՝ կարելի փաստել հետևյալը: Անկախության ստույգ օրվա կապակցությամբ երբեմն հարց է ծագում. ինչո՞ւ է մեզնում ընդունված մայիսի 28-ը համարել Հայաստանի անկախության (նաև պետականության) օր: Դա բացատրվում է նրանով, որ մայիսի 28-ին (երեքշաբթի) Հայոց Ազգային խորհուրդը, ինչպես արդեն ասվեց, վճիռ կայացրեց լայն լիազորություններով Բաթում ուղարկել նոր պատվիրակություն և **Անկախ Հայաստանի անունից** բանակցել ու հաշտություն կնքել Թուրքիայի հետ. այդ իսկ պատճառով «Մայիսի 28-ը» հայոց պատմության մեջ մտավ որպես Հայաստանի անկախության օր: Իսկ երկու օր անց՝ մայիսի 30-ին, ընդունված և 31-ին հրապարակված հայտարարագիրը եկավ պաշտոնապես ձևակերպում տալու այդ ակտին: Հռչակագրում քաղաքական և հոգեբանական որոշակի գործոնների թելադրանքով թեև կոնկրետ չէր խոսվում անկախության մասին, սակայն

դիվանագիտական մոտեցմամբ ձևակերպված այն միտքը, որ Հայոց Ազգային խորհուրդն իրեն հայտարարում է հայկական գավառների գերագույն և միակ իշխանությունը, **դա** ինքնըստինքյան նշանակում էր Հայաստանի անկախության հռչակում: Բացի այդ, հայտարարագրում հեռատեսորեն մատնանշվում է «հայկական գավառներ» հասկացությունը, որի տակ հասկացվում են Անդրկովկասի նահանգներում գտնվող հայաբնակ բոլոր գավառները, այդ թվում՝ Նախիջևանը, Զանգեզուրը, Ղարաբաղը, Գանձակի հայկական շրջանները, Լոռին, Ձավախքը, թուրքական զորքերի կողմից ռազմակալած Երևանի նահանգի մի շարք գավառները, Սուրմալուն և Կարսի մարզը: «Հայկական գավառներ» անվան տակ տրամաբանորեն կարելի է ենթադրել, որ անգամ նկատի էր առնվում արևմտահայ գավառները:
Հարկ է նշել, որ մայիսի 28-ին Թիֆլիսում Արամյանցի տանը Հայաստանի անկախության մասին վճիռը կայացվել է խորհրդի անդամների բուռն քննարկումների և խռովահույզ տրամադրությունների պայմաններում: Սակայն ինչպես վկայում է Ալ. Խատիսյանը, Ազգային խորհուրդը ներկայացնող գրեթե բոլոր կուսակցությունների խմբակցությունները ի վերջո հանգեցին անկախության տեսլականին (գաղափարին) և անկախության բանաձևը ընդունվեց Ազգային խորհրդի բոլոր կուսակցությունների համաձայնությամբ: Մայիսյան այդ ծանր օրերին Հայոց Ազգային խորհուրդը ներկայացնող քաղաքական բոլոր ուժերը հանդես եկան գրեթե միասնական, ինչը պայմանավորված էր արտաքին վտանգով ու առաջին հերթին թուրքական մահաբեր ներխուժմամբ: Արդարև, պատմական տվյալ պահին այլընտրանք չկար: Կնշանակի՝ 1918 թ. մայիսին՝ ճակատագրական այդ իրադարձությունների ժամանակ, Ազգային խորհուրդը ներկայացնող կուսակցությունները և անկուսակցական ներկայացուցիչները ցուցաբերել են ազգային համախմբման ու միասնության վառ օրինակ: Իհարկե, Ազգային խորհրդի շատ անդամներ **երկյուղած** ու թերահավատ զգացումով էին համակված անկախության հանդեպ: Այդ մտավախությունը, ինչպես արդեն քանիցս ասվել է, պետք է բացատրել 1918 թ. գարնանը, թուրքական աղետալի արշավանքների պայմաններում, հայության գլխին կախված ֆիզիկական բնաջնջման

վտանգով: Անկախության խնդրում կար նաև հոգեբանական արգելք, որն ամենից առաջ նշանակում էր կտրվել Ռուսաստանից:
Եվ, իրոք, Հայոց Ազգային խորհուրդը տարակուսում էր այդ հարցում և դրա համար, ինչպես նշվեց, կային լուրջ հիմնապատճառներ: Հակառակ հայերի՝ անկախության հարցում ամենևին չտատանվեցին վրացիները և թաթարները (ադրբեջանցիները): Նրանք չերկմտեցին այն պարզ պատճառով, որ արդեն ունեին իրենց հովանավոր պետությունները՝ հանձինս Գերմանիայի և Թուրքիայի, իսկ Հայաստանը չուներ այդպիսին: Այդ էր պատճառը, որ Հայոց Ազգային խորհրդի ընդունած պատմական հայտարարության մեջ որոշակիորեն չէր շեշտվում անկախության հանգամանքը: Այս տարակուսանքների ու մտավախությունների առկայությամբ հանդերձ՝ բնավ չի կարելի կիսել այն հեղինակների տեսակետը, ովքեր Հայաստանի անկախությունը դիտում են իբրև զուտ արտաքին ուժերի, տվյալ դեպքում Թուրքիայի թելադրանք և նույնիսկ «նվերը» հայ ժողովրդին: Ցավոք, նման տեսակետ է արտահայտել նաև Անդրանիկը: Այնինչ հայ-թուրքական հարաբերությունների նախընթաց պատմությունը, հանրահայտ փաստերը, պատմության դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությունը հուշում են, որ **եթե չլինեին Մայիսյան հաղթական հերոսամարտերը, Բաքվի ինքնապաշտպանությունը և խնդիրը թողնվեր Թուրքիային, ապա նա ոչ միայն Հայաստանը չէր «անկախացնի», այլև հնարավորության դեպքում, արդեն ընթերցողին ծանոթ պանթուրքական ծրագրերի համատեքստում, Անդրկովկասում ևս հայ չէր թողնի ու արևելահայոց հարցը «կլուծեր» արևմտահայոց հարցի նման**:
Ինչ վերաբերում է այն հարցին, թե այդ պահին ինչպիսին էր անկախության խնդիրը հայ հանրության ընկալումներում, ապա պետք է արձանագրել, որ Հայաստանի անկախության հռչակումից հետո ժողովուրդն իր մեծամասնությամբ՝ (հատկապես գաղութահայությունը, գաղթականությունը, անկախությունը կերտած Արարատյան դաշտի բնակչությունը և այլն) անկախությունն ընդունեց անվարան, և նա պատրաստ էր ենթարկվել նոր զրկանքների ու զոհաբերությունների: Բայց դրա հետ մեկտեղ՝ մեզանում միանշանակ չի եղել վերաբերմունքը Հայաստանի անկախության հարցում: Եղել են նաև հայ քաղաքական առանձին ուժեր ու հատվածներ, ովքեր դեմ են եղել Հայաստանի անկախությանը, Ռուսաստանից անջատվելուն: Այսպես, օրինակ,

հնչակյանները, ովքեր տակավին անցյալ դարավերջից իրենց ծրագրերով խոսում էին երեք կտոր՝ Ռուսահայ, Թուրքահայ և Պարսկահայ ազատագրված տարածքներից Միացյալ Հայաստան ստեղծելու մասին, այժմ արդեն ստեղծված իրավիճակում Ս. Դ. **Հնչակյան կուսակցությունը, համենայնդեպս նրա անդկովկասյան հատվածը,** Հայաստանի անկախությանը կտրականապես դեմ արտահայտվեց: Մենք էլ չենք խոսում հայ կոմունիստ-բոլշևիկների մասին: Վերջիններս առհասարակ չէին պատկերացնում Հայաստանի անջատումը և գոյությունը առանց Խորհրդային Ռուսաստանի: Համայնավարների պատկերացմամբ՝ այնպես, ինչպես որբը չի կարող ապրել առանց խնամակալի, նույնպես և հայ ժողովուրդը իբր **չէր** կարող գոյատևել առանց Ռուսաստանի: Հարկ է նշել, որ հայ կոմունիստները ներկայումս էլ շարունակում են քարոզել Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ նման թերարժեքություն, որպես միակ հովանավորի՝ **Ռուսաստանին** կառչած մնալու ստրկամիտ մտայնությունը: Այնինչ, Հայաստանի ու հայ ժողովրդի պաշտպանության ու անվտանգության միակ հուսալի երաշխավորը կարող է լինել միայն ինքը՝ հայ ժողովուրդը, նրա հոգևոր ներուժը, ազգային բանակը, պետական ու հանրային մյուս կառույցները և այլն:
Չնայած անկախությունը եկավ արագ և անսպասելի, սակայն այն ուներ իր ներքին տրամաբանությունը: Այն ժամանակներում պատմական իրողությունն ու ճշմարտությունն այն էր, որ եթե Հայոց Ազգային խորհուրդը տվյալ պահին իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա, ինչպես վերը նշվեց, հայապատկան գավառները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցի թաթարներին և վրացիներին: Հարկ է նկատել, որ այդպես էին վճռել նաև Կովկասի այն ժամանակվա փաստական տերերը՝ Գերմանիան և Թուրքիան:
Հայաստանի անկախության **ապահովման** և արևելահայության ֆիզիկական **փրկության** գործում, Մայիսյան հաղթական հերոսամարտերի կողքին, անշուշտ, պետք է արձանագրել նաև Անդրկովկասի բոլշևիկների առաջնորդ Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունայի օբյեկտիվորեն խաղացած դրական դերը: Բանն այն է Բաքվի կոմունան, որի հետ համագործակցում էին ՀՅԴ Բաքվի ԿԿ-ը և նրա ազդեցության տակ գտնվող Բաքվի հայ Ազգային խորհուրդը,

իրենց զինյալ ուժերով կարողացան մի քանի ամիս շարունակ **իրենց** վրա գրավել թուրքական գլխավոր հարվածային ուժերը և դրանով իսկ օբյեկտիվորեն նպաստել Հայաստանի Հանրապետության ամրակայմանը: Նորահայտ փաստաթղթերը լույս են սփռում այն իրողության վրա, որ Կոմունայի և Դաշնակցության զինյալ ուժերը համատեղ դիմագրավել են թուրքական հարձակումներին և պաշտպանել քաղաքը: ՀՅԴ-ի կողմից այդ պայքարը ղեկավարել են Բյուրոյի անդամներ՝ Ռոստոմը (ՍՏ. Զորյան) և Աբրահամ Գյուլխանդանյանը: Փաստերը նաև վկայում են, որ Բաքվի դաշնակցականները ճանաչել են խորհրդային իշխանությունը թե՛ Ռուսաստանում և թե՛ Բաքվում և աջակցել են նրան: Անհիմն մեղադրանք է խորհրդային հեղինակների աշխատություններում դեգերող այն զրպարտանքը, թե Դաշնակցությունը մեղսակից է Կոմունայի անկման գործում: Կոմունայի պարտության պատճառները պետք է փնտրել Հյուսիսային Կովկասից ու բուն Ռուսաստանից կտրվելու, օգնություն չստանալու, շրջափակման մեջ հայտնվելու, ներքին ռեսուրսները սպառելու և համանման հանգամանքներով: Այդուհանդերձ, ըստ արժանվույն պետք է գնահատել Բաքվի կոմունայի **դերը** և քաղաքի պաշտպանությունը ՀՀ քաղաքական ու ֆիզիկական գոյության **ապահովման գործում**՝ հետանկախական առաջին մի քանի ամիսներին: Այդ ժամանակ հարցականի տակ էր դրված ոչ միայն Հայաստանի քաղաքական միավորի ինքնուրույն գոյությունը, այլև բուն արևելահայության ֆիզիկական գոյությունը: Նկատենք, որ մինչև Մայիսյան հերոսամարտերը թուրքերը դեմ էին ինքնուրույն Հայաստանի ստեղծման ցանկացած գաղափարի:

Այս առումով հետաքրքրությունից զուրկ չէ և այն, որ Հայաստանի ու հայ ժողովրդի հետագա ճակատագրի հարցում Թուրքիայի կառավարող շրջաններում գոյություն է ունեցել երկու հիմնական մոտեցում: Այդ մասին պատմում է Ալ. Խատիսյանն իր հուշերում: Դրանցից մեկը՝ առավել ծայրահեղ թևը, որը գլխավորում էր ռազմական նախարար Էնվեր փաշան, գտնում էր, որ հայերին պետք է հիմնովին բնաջնջել նաև Կովկասի մեջ և մեկընդմիշտ ազատվել Հայկական հարցից: Մյուս հոսանքը, որը պաշտպանում էր մեծ վեզիր (վարչապետ) Թալեաթ փաշան, գտնում էր, որ անհնար է հայերին լիովին ոչնչացնել, ուստի ավելի լավ է՝ հայերին ինչ-որ չափով գոհացում տրվի, որովհետև, եթե

նույնիսկ 100 000 հայեր մնան աշխարհի երեսին, իրենց հանգիստ չպիտի տան: Նրա կարծիքով, հայկական մի փոքր պետության գոյությունը կարող է պատնեշ, «բուֆեր» լինել Թուրքիայի և նրա դարավոր թշնամի Ռուսաստանի միջև, իսկ մյուս կողմից անկախ Հայաստանի գոյությունը միջազգային հանրության շրջանում կարող է հայացք ձևավորել, որ դրանով լուծվել է Հայկական հարցն ու այլևս կարիք չկա դրսի միջամտության: Ընդ որում, այդ փոքրիկ Հայաստանը ստեղծվելու էր ոչ թե արևմտահայ հողի վրա, որը թուրքերն անվերապահորեն իրենցն էին համարում, այլ նախկին **Ռուսական** կայսրության տիրապետության տակ գտնվող արևելահայ մի հողակտորի վրա: Ի վերջո այդ պայքարում ընդունվում է Թալեաթի տեսակետը:

Սակայն ստեղծված իրավիճակում անկախ Հայաստանի գոյությունը կարող էր և ժամանակավոր լինել, որովհետև պանթուրքական պլաններով 1918 թ. ամռանը դեպի Բաքու շտապող թուրքական զորքը մտադիր էր, ինչպես ասում են, «ձեռի հետ» վերացնել հայկական պետությունը, չէր բացառվում նաև հայ ազգաբնակչությանը: Եվ պատահական չպետք է համարել թուրքական զորքերի կողմից 1918 թ. սեպտեմբերին, Բաքվի գրավումից անմիջապես հետո, Ստամբուլում լույս տեսնող կառավարական (իթթիհատական) «Ենի գյուն» («Նոր օր») պաշտոնաթերթում զետեղված Անդրկովկասի այն քարտեզը, որում Հայաստանը իսպառ բացակայում էր ոչ միայն որպես պետություն, այլև իբրև աշխարհագրական հասկացություն: Այդ քարտեզում հայ ազգաբնակչության տեղաբաշխումն Անդրկովկաում ներկայացված էր ընդամենը մի քանի առանձին կղզյակների տեսքով: Դրա փոխարեն ամբողջ Արևելյան Հայաստանը պատկերված է «մեծ Ադրբեջանի» կազմում: Հավանաբար այս քարտեզը նկատի ունեն ներկայիս ալիևականները, երբ Հայաստանի Հանրապետության տարածքը, ըստ էության, համարում են ադրբեջանական հող, իսկ Երևանն էլ թուրքական քաղաք, որը «նվիրել են» հայերին:

Նույն կերպ հայկական պետականության ստեղծման մտադրություն չուներ նաև Գերմանիան, որը, ինչպես հայտնի է, որոշակի պատասխանատվություն էր կրում հայ ժողովրդի ճակատագի հարցում: Նա էլ խնդրի լուծումը տեսնում էր հայկական տարածքները (գավառները) Վրաստանի և Ադրբեջանի միջև **տարրալուծելը**: Այս

ամենը ցույց է տալիս, թե որքան կարևոր էր Հայաստանի անկախության քայլը: Հայաստանի անկախության ակտը և դրա կյանքի կոչելը անբեկանելի պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք:
Այդ օրերին հայ ժողովուրդն ունեցավ իր երկրորդ Ավարայրը: Մայիսվերջյան հաղթական շաբաթը, փաստորեն, ծնեց Հայաստանի անկախությունը: Կարելի է վստահ ասել, որ անկախությունը ձեռք բերվեց ոչ թե Թիֆլիսում՝ Հայոց Ազգային խորհրդի **վախվորած** ու հոգեմաշ նիստերում, այլ այդ իրավունքը արժանիորեն նվաճվեց Սարդարապատում, Բաշ-Ապարանում, Ղարաքիլիսայում: Մայիսյան հերոսամարտերում հայ ժողովուրդը գերմարդկային ճիգերով կարողացավ թշնամուն արժանի հակահարված տալ և վիժեցնել Արևելյան Հայաստանը զավթելու և տեղի հայությանը ոչնչացնելու երիտթուրքական ծրագիրը: Ավելին, հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը: «Մայիսի 28-ի» բանաձևը իրավական վավերացումը եղավ Հայաստանում մղվող մայիսյան հաղթական հերոսամարտերի: «Մայիս 28-ի» պատմական որոշումից երկու շաբաթ անց՝ **հունիսի 13-ին**, նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին **ի լուր «դաշնակիցների» և ընդհանրապես աշխարհի** պաշտոնապես հայտարարություն արեց **Հայաստանի անկախության մասին**:
Վերոշարադրյալից կարելի է հետևեցնել, որ Հայաստանի Հանրապետությունը ծնունդ առավ վահագնյան պատերազմական կրակներից, կյանքի ու մահավան կռիվներից, գերմարդկային ճիգերի արդյունքում, մի բան, որ չես ասի ո՛չ Վրաստանի և առավել ևս ո՛չ Ադրբեջանի անկախացման պարագայում: Այդ նշանակում է, որ շատ ավելի թանկ է Հայաստանի ձեռք բերած անկախությունը: Իսկ թանկ, զոհողությունների գնով նվաճածի արժեքը շատ ավելի մեծ է, ուստի այն պետք է պահպանել, գուրգուրել և հետագայում ավելի զարգացնել: Դրանում է **կայանում?** «Մայիսի 28-ի» պատմական որոշման անանց նշանակությունը:
Այսպիսով, հարյուրամյակների ընդմիջումից հետո կրկին վերականգվեց հայոց անկախ պետականությունը: Հայաստանի անկախության հռչակումը, իրավամբ, շրջադարձային եղավ հայ ժողովրդի

քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքում: Դրանով կարելի է ասել, որ փակվում է հայ ժողովրդի ողբերգական և հերոսական դրվագներով հարուստ նոր պատմության ժամանակաշրջանն ու սկսվում նորագույն՝ հայկական պետականությունների կերտման **պատմական** դարաշրջանը: Ահա դրանում է **կայանում**? Մայիսյան հերոսամարտերի ու «**Մայիս 28-ի**» 100-ամյա խորհուրդը: Ի նշանավորումն այդ իրադարձության՝ Մայիսի 28-ը համարվում է համայն հայության նվիրական տոներից մեկը՝ **Առաջին հանրապետության անկախության օրը**:

Գլ. 2.- Հայաստանի Հանրապետության կազմավորումը: Պետականության կայացումը

2.1.Բաթումի պայմանագիրը

Ինչպես արդեն ասվեց, Մայիսյան հերոսամարտերի ահեղ օրերին երկրամասի երեք հիմնական ժողովուրդների շահերի սուր հակասությունների և քաղաքական իրարամերժ կողմնորոշումների պատճառով Անդրկովկասյան սեյմը (պառլամենտը) ցրվեց, ու կազմալուծվեց Անդրկովկասյան Հանրապետությունը: Մայիսի 26-ին, 27-ին և 28-ին հաջորդաբար իրենց անկախությունը հռչակեցին Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը:
Անդրկովկասյան Հանրապետության կազմալուծումը ենթադրում էր, որ իրենց անկախությունը հռչակած յուրաքանչյուր հանրապետություն պետք է ինքը առանձին լուծեր Թուրքիայի հետ պատերազմի ու խաղաղության հարցը: Հենց այդ առաքելությամբ նորանկախ Հայաստանի պատվիրակությունը Ալ. Խատիսյանի գլխավորությամբ մեկնեց Բաթում՝ թուրքերի հետ բանակցելու և հաշտություն կնքելու, որովհետև մայիսի 26-ին երեք օր ժամկետով թուրքերի ներկայացրած վերջնագրին պետք է պատասխան տրվեր: Մի քանի օր տևած բանակցությունների արդյունքում 1918 թ. հունիսի 4-ին հայերի համար շատ ծանր պայմաններով կնքվեց Բաթումի հաշտության պայմանագիրը Հայաստանի Հանրապետության և Օսմանյան Թուրքիայի միջև:
14 հոդվածից բաղկացած պայմանագրի համաձայն՝ Հայաստանը ունենալու էր սահմանափակ թվով զորք՝ ընդամենը մեկ դիվիզիա: Երկաթուղիների վերահսկողությունն անցնելու էր Թուրքիային, որպեսզի իբր կարողանա Հայաստանի վրայով զորք տեղափոխել Ադրբեջան՝ խորտակելու Ստ. Շահումյանի գլխավորած Բաքվի կոմունան և տիրանալու Բաքվի նավթին: Դրանից զատ՝ Հայաստանը պարտավորվում էր կազմալուծել հայկական ազգային անկանոն զորախմբերը և այլն: Բաթումի պայմանագրից հետո Անդրանիկն իր զորամասով ու 25 հազար գաղթականներով հեռացավ և ամրացավ Զանգեզուրում՝ օտարոտի դիրք գրավելով **«թուրքերի ձեռքով ստեղծված» հանրապետության նկատմամբ:**

Այսպիսով՝ տարածքային առումով Թուրքիային էր անցնում ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Արևելյան Հայաստանի զգալի մասը՝ Կարսի մարզը և երկաթուղիներով ձգվող շուրջ 5 գավառ: Հայաստանի Հանրապետությանը փաստորեն մնում էր ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածք, որն ընդգրկում էր Սևանա լճի ավազանը և Արարատյան դաշտի մի մասը: Այս կապակցությամբ տեղին է հիշեցնել գերմանացի մի դիվանագետի արտահայտած հետևյալ պատկերավոր խոսքերը. «Թուրքերը հայերին տեղ տվեցին՝ Սևանում լողանալու համար, բայց դուրս գալու՝ չորանալու համար տեղ չտվեցին»: Իսկ վաստակաշատ պատմաբան Լեոն (Առաքել Բաբախանյանը), նորահռչակ հանրապետության այդ անձուկ տարածքը նկատի ունենալով, այն համարում էր ոչ թե ապրելու համար տեղ, այլ ընդամենը գերեզման: Այդուհանդերձ, այս կապակցությամբ գլխավորը անկախության փաստի արձանագրումն ու ընդունումն էր բիրտ թշնամու՝ Թուրքիայի կողմից: Ընդհանուր հաշվով՝ Թուրքիան Արևելյան Հայաստանից խլում էր 28 հազ. քառ. կմ տարածք: Բաթումի պայմանագիրը, որը չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի կառավարությունների կողմից, իր ուժը պահպանեց մինչև համաշխարհային պատերազմի ավարտը՝ 1918 թ. նոյեմբերը:

Հարց է ծագում. եթե հայ ժողովուրդը հաղթանակ էր տարել Մայիսյան հերոսամարտերում, ապա ինչո՞ւ էր նման կողոպտիչ պայմանագիր կնքում: Բանն այն էր, որ չնայած Մայիսյան հաղթական հերոսամարտերին, այդուհանդերձ, պահպանվում էր թուրքական մահացու վտանգը արևելահայության գլխին: Բաքու շտապող թուրքական զորքը մտադիր էր այն գրավելուց հետո հետ դառնալ և լիովին վերացնել «հայկական սեպը»: Սակայն, ինչպես ասում են, ուրբաթն ավելի շուտ եկավ, քան շաբաթը: Ռազմաքաղաքական իրադարձությունները զարգացան այնպես, որ հայկական կողմը, մեծ զիջումների գնալու գնով, հնարավորություն ունեցավ դադար վերցնել ու որոշ ժամանակ շահել այն իմաստով, որ, Բաքուն 1918 թ. սեպտեմբերի 15-ին գրավելուց հետո, մինչ թուրքերը հետ կդառնային, Անտանտի երկրները հաղթեցին և թուրքերը հոկտեմբերի 30-ի Մուդրոսի զինադադարով հարկադրված հեռացան Անդրկովկասից, և դրանով ձախողվեց երիտթուրքերի այդ հրեշավոր ծրագիրը:

Բայց մյուս կողմից, ճակատագրի հեգնանքով, սա անկախ Հայաստանի առաջին միջազգային փաստաթուղթն էր, որով Թուրքիան առաջինը պաշտոնապես ճանաչեց Հայաստանի անկախությունը: Դա պատերազմից դուրս գալու և հայ ժողովրդին վերջնական բնաջնջումից ազատելու միակ հնարավոր ելքն էր այդ ժամանակ: Վարչապետ Քաջազնունու կառավարությունը, բարդությունների և թյուրիմացությունների տեղիք չտալու համար միչև Առաջին աշխարհամարտի ավարտը աշխատում էր հավատարիմ մնալ այդ պայմանագրին: Բաթումի պայմանագրի շնորհիվ ձեռք բերված դադարը հնարավորություն տվեց սկսելու **պետականաշինության** գործընթացը:

2.2.Պետական իշխանության մարմինների ձևավորումը

ա) **Կառավարության ստեղծումը**:
Հայաստանի անկախության հռչակումից հետո շատ ավելի դժվար ու տևական էր լինելու պետականության կայացումը և երկրի դինամիկ զարգացումը: Պետականաշինության առաջին քայլը, բնականաբար, սկսվեց կառավարության ձևավորումից:
Ինչպես ասվեց, Հայոց Ազգային խորհրդի անկախության վերաբերյալ մայիսվերջյան պաշտոնական հայտարարության համաձայն՝ կառավարության կազմելը հետաձգվեց: Խնդիրն այն էր, որ նոր կառավարություն հնարավոր չէր միանգամից կազմել, որովհետև դրա համար պահանջվում էին միջկուսակցական խորհրդակցություններ և փոխադարձ համաձայնություն: Միաժամանակ հարկավոր էր խորհրդակցել և կառավարության մեջ ներգրավել երևանյան այն կարող ուժերը, որոնք պետական կառույցների ձևավորման ուղղությամբ արդեն հսկայական աշխատանք էին կատարել՝ Հայոց Ազգային խորհրդի լիազոր և Երևանի դիկտատոր Արամի գլխավորությամբ:
Հայաստանի անկախության հռչակումից և Բաթումի հաշտության պայմանագրի կնքումից հետո առաջնային խնդիր դարձավ պետական իշխանության երեք հիմնական՝ **գործադիր**, **օրենսդիր** և **դատական** մարմինների ձևավորումը: **Յուրաքանչյուր պետության ժողովրդավարական համարվելու առաջնային նախապայմանը** նրա ընտրովիության համակարգն է, իշխանության եռաթև մարմինների՝

գործադիր, օրենսդիր, դատական տարանջատվածության աստիճանը և իրար հակակշռելու մեխանիզմի առկայությունը և այլն: Այդ համատեքստում անուրանալի է ՀՅԴ կուսակցության դերակատարությունը պետականության կայացման գործում: Նա է եղել հայոց պետական մեքենան առաջ շարժող քաղաքական գլխավոր ուժը, հիմնականում իր ուսերին է կրել անկախ պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ամբողջ պատասխանատվությունը: Ցարական մենատիրական, երբեմնի նահանգական նախկին կառավարման համակարգի փոխարեն, այն էլ պատերազմներից խարխլված վարչակարգի ու կիսավեր տնտեսության պայմաններում, պետք է ստեղծվեր եվրոպական արժեհամակարգով հանրապետական-ժողովրդավարական կառավարման ձև ընդունած **պետական ապարատ**՝ նոր գաղափարախոսությամբ, պետահիրավական ու տնտեսավարման, կրթամշակութային նոր համակարգով:
Բաթումի պայմանագրից հետո Թիֆլիսում ստեղծվեց անդրանիկ ոչ լիակազմ կառավարություն, որի նախագահ (վարչապետ) ընտրվեց **Հովհաննես Քաջազնունին** (1868-1938): Կառավարությունը պետք է ամբողջացվեր (համալրվեր) Երևանում: 1918 թ. հուլիսի 17-ի վաղ առավոտյան կառավարության և Հայոց Ազգային խորհրդի անդամները Թիֆլիսից, ոչ հարմարավետ գնացքով, մեկնեցին դեպի Աղստաֆա, այնտեղից էլ գերմանական երկու ավտոմեքենայով հուլիսի 19-ին ժամանեցին մայրաքաղաք Երևան և անմիջապես անցան գործի: Հուլիսի 24-ին Թիֆլիսի և Երևանի ազգային խորհուրդների համատեղ նիստում հրապարակվեց անդրանիկ կառավարության կազմը՝ **Հովհաննես Քաջազնունի** (նախարար-նախագահ կամ վարչապետ), **Ալեքսանդր Խատիսյան** (արտ. գործ նախարար), **Արամ Մանուկյան** (ներք. գործ. նախարար), **Խաչատուր Կարճիկյան** (ֆինանսների նախարար), **Հովհաննես Հախվերդյան** (զինվորական նախարար) և մի փոքր ուշ՝ հուլիսի 28-ին, **Գրիգոր Պետրոսյան** (արդարադատության նախարար): Վերջին երկուսը անկուսակցական էին: Հայոց Ազգային խորհրդի և կառավարության Հայաստանի մայրաքաղաք փոխադրումով Երևանը վերածվեց հայ հասարակական-քաղաքական, տնտեսական և կրթամշակութային կյանքի կենտրոնի: Այդ իմաստով, գործնականում Երևանը Թիֆլիսից խլեց այդ առաջնության դափնին:

Իշխանության ղեկը ստանձնած նորաստեղծ կառավարության գլխավոր խնդիրներից էին՝ ստեղծել պետական գործուն մեքենա, պետական իրավակարգ, հաստատել կարգուկանոն, երկիրը դուրս բերել քաոսից ու անիշխանությունից, պայքարել սովի ու համաճարակների դեմ, գաղթականությանը սնունդ, բնակարան ու աշխատանք տալ, կարգավորել պարենավորումը և ֆինանսները, ոտքի կանգնեցնել տնտեսությունը, առաջ տանել կրթամշակութային գործը, ստեղծել կանոնավոր բանակ, հնազանդեցնել ազգամիջյան ներքին խռովությունները, լուծել սահմանային վեճերը, հաստատել դիվանագիտական կապեր, հասնել Հայաստանի միջազգային ճանաչման և այլն, մի խոսքով՝ ստեղծել կազմակերպված պետություն:
Եվ Այդ բազում խնդիրները լուծելու նպատակով կառավարությունը լծվեց գործի և հանրապետության գոյության 2,5 տարիների ընթացքում տարավ պետականաշինության իր հասանելիք բեռը:
Խոսելով հանրապետությունում բարձրագույն գործադիր իշխանության (կառավարության) կայացման մասին՝ հարկ է փաստել, որ իր գոյության 2,5 տարվա ընթացքում հանրապետությունն ունեցել է չորս վարչապետ, որոնք բոլորն էլ ՀՅԴ նշանավոր գործիչներ էին՝ **Հովհաննես Քաջազնունի** (1918 թ. հունիսի 7-ից մինչև 1919 թ. օգոստոսի 7-ը, իսկ փաստորեն՝ մինչև ապրիլ, երբ Հայաստանի խորհրդի որոշմամբ Քաջազնունին գործուղվեց Եվրոպա և ԱՄՆ՝ օգնություն ստանալու համար), **Ալեքսանդր Խատիսյան** (1919 թ. օգոստոսի 7-ից մինչև 1920 թ մայիսի 5-ը), **Համո Օհանջանյան** (1920 թ. մայիսի 5-ից **մինչև** նույն տարվա նոյեմբերի 23-ը) և **Սիմոն Վրացյան** (նոյեմբերի 23-ից մինչև դեկտեմբերի 2-ը): Ընդ որում, ՀՅԴ երկու անգամ՝ 1918 թ. նոյեմբերի 4-ից – 1919 թ. հունիսի սկիզբը՝ ՀԺԿ-ի, իսկ 1920 թ. նոյեմբերի 23-ից դեկտեմբերի 2-ը էսէռների հետ կազմել է կոալիցիոն (խառը) կառավարություն:
Հարկ է նշել, որ առանձնապես կշռելի է եղել ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիոն կառավարությունը: Հ. Քաջազնունու գլխավորած կառավարության աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ՀՅԴ ընդառաջ գնաց ՀԺԿ ցանկությանը և 1918 թ. նոյեմբերի սկզբին ձևավորվեց կոալիցիոն կառավարություն՝ դարձյալ Հ. Քաջազնունու գլխավորությամբ: Բանն այն է, որ Օսմանյան Թուրքիայի պարտությունը դարձել էր օրերի հարց, իսկ Հայաստանում նշմարվում էին

կայունացման որոշ միտումներ, ուստի իշխանատենչության հակումներ ցուցաբերող ժողովրդականները ցանկություն հայտնեցին մտնել կառավարության մեջ և ՀՅԴ-ի հետ միասին կիսել պատասխանատվությունը ժողովրդի, հայրենիքի ու պետության առաջ: Այդ նպատակով Թիֆլիսից Երևան ժամանեցին ՀԺԿ ԿԿ-ի անդամներ Մինաս Բերբերյանը, Գևորգ Մելիք-Ղարագյոզյանը, Սամսոն Հարությունյանը, Լևոն Ղուլյանը և ուրիշներ: Բանակցությունների արդյունքում ձևավորվեց ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիոն կառավարություն, որի մեջ մտան 4 դաշնակցական, 4 ժողովրդական և 1 անկուսակցական՝ նախարար-նախագահ (վարչապետ) Հ. Քաջազնունու գլխավորությամբ: Կոալիցիոն համատեղ աշխատանքը դրսևորվեց նաև խորհրդարանական աշխատանքում և ձևավորվեց ՀՅԴ-ՀԺԿ խորհրդարանական մեծամասնություն:

Հարկ է նկատել, որ հանրապետության ֆինանսա-տնտեսական, վարչա-իրավական բնույթի աշխատանքների բնագավառներում ՀԺԿ շարքերում կային բարձր կրթություն ու որակավորում ստացած մեծ թվով հմուտ մասնագետ կադրեր, որոնց կարիքը մեծապես զգացվում էր: Սակայն ժողովրդական նախարարները առանձնապես մեծ ձգտում չէին ցուցաբերում «լծվելու հայկական պետական նավին»: Նրանց **չէին** բավարարում Թիֆլիսի համեմատ Երևանի ոչ այնքան հարմարավետ պայմանները, և բացի այդ՝ նրանք վախենում էին համաճարակներից վարակվելուց: 1919 թ. հունվարին միայն Երևանում կար 21000 բծավոր տիֆով հիվանդ: Բայց և այնպես, չնայած երկու կուսակցությունների մեջ առկա երբեմն տարբեր դիրքորոշումների ու ներքին մի շարք անհամաձայնությունների՝ ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիան գործեց շուրջ 7 ամիս: Ինչպես վերը նշվեց, կոալիցիոն կառավարության ստեղծման մի փորձ էլ տեղի ունեցավ ՀՀ մայրամուտին: Պատմական փորձի ու գնահատականի առումով հարկ է նշել, որ տակավին Առաջին **Հանրապետության** ժամանակներից ՀՅԴ պատրաստակամ է եղել կառավարման կոլեկտիվ-կոալիցիոն աշխատանքի, և այս լավ ավանդույթը նա ժամանակ առ ժամանակ հաջողությամբ շարունակում է Երրորդ հանրապետությունում: Բերված փաստը հաստատում է, որ Առաջին հանրապետության հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը չի ձգտել միակուսակցական ամբողջատիրական (տոտալիտար) կառավարման վարչաձևին, ինչն այդքան բնորոշ էր

մեզ բոլորիս ծանոթ ԽՍՀՄ կոմունիստական-բոլշևիկյան ավելի քան 70-ամյա բռնավարչակարգին:

բ) **Արամ Մանուկյանի քաղաքական դիմանկարը**

Խոսելով ՀՀ անդրանիկ կառավարության մասին՝ հարկ է հատուկ անդրադառնալ Արամ Մանուկյանի **պետականակերտ դերակատարությանը** և առհասարակ նրա քաղաքական դիմանկարին: **Մայիսյան հաղթական հերոսամարտերի հաղթանակի և Հայաստանի անկախության կայացման գործում իր ցուցաբերած բացառիկ դերի ու ծառայությունների համար նրան իրավամբ կարելի է համարել 20-րդ դարի հայ ամենանշանավոր գործիչներից մեկը, իրավամբ, Առաջին հանրապետության հիմնադիրը:**
Ինչպես արդեն վերը նշվեց, մինչ նորակազմ կառավարությունը Թիֆլիսից կժամաներ մայրաքաղաք և գործի կանցներ, դրանից ամիսներ առաջ տեղում պետական կառուցվածքներ ստեղծելու և կարգուկանոն հաստատելու ուղղությամբ հսկայական կազմակերպչական աշխատանք էր իրականացրել Երևանի Ազգային խորհրդի փաստացի ղեկավար, ժողովրդի կողմից դիկտատոր ճանաչված, հայ ազատագրական շարժման ականավոր գործիչ, շուշեցի **Արամ Մանուկյանը** (**Սարգիս Հովհաննիսյան**) (1879-1919 թթ.), որին իրավամբ կարելի է համարել **Հայաստանի Առաջին Հանրապետության** հիմնադիր: Այդ պատվանվանը նա արժանի է այն իմաստով, որ նախ Մայիսյան հաղթական հերոսամարտերը մեծապես կերտվեցին նրա անձնական կամքի ու կազմակերպական ջանքերի շնորհիվ և նաև այն բանի համար, որ մինչ Հ. Քաջազնունու անդրանիկ կառավարությունը կժամաներ Հայաստան, նա արդեն վիթխարի աշխատանք էր տարել պետության կազմակերպական կառույցներ ստեղծելու ուղղությամբ: Արամի քաղաքական վաստակը գնահատելու համար բավական է միայն մատնանշել, որ նա հիմնականում կազմակերպեց ու ոգեշնչեց ժողովրդին դարի ամենաճակատագրական երկու հաղթական հերոսամարտերում՝ 1915 թ. Վանի ինքնապաշտպանության, 1918 թ. Սարդարապատի ու Բաշ Ապարանի ճակատամարտերի ժամանակ: Եթե առաջինի դեպքում փրկվեց շուրջ 150 հազար վան-վասպուրականցի, ապա երկրորդի արդյունքում արևելահայությունը փրկվեց

երիտթուրքական նոր եղեռնից, և դրվեց Հայաստանի անկախության հիմքը, մի անկախություն, առանց որի հավանաբար դժվար կլիներ խոսել մեր ժամանակների Հայաստանի երրորդ հանրապետության մասին: Արամի հուշագիրներից Օ. Մխիթարյանը այսպես է բնութագրել Վանի և Սարդարապատի հերոսին. «Արամի կազմակերպչական ուժը այնքան տիրական էր, որ ոչ ոք կարող էր ընդդիմանալ: Երբ անիկա կը խնդրեր, կարծես կը հրամայեր, երբ անիկա կը բանաձեւեր, կարծես անհեղելի օրենքներ կը գծեր, կարծես ոչ թե ծրագիր էր այդ այլեւս, այլ արդեն վաղուց գործադրված իրողություն»:
Արամը տակավին Վանում 1915 թ. հերոսական ինքնապաշտպանությունից հետո նշանակվել էր Վան-Վասպուրականի ժամանակավոր նահանգապետ և ի հայտ էր բերել նաև պետական գործչին բնորոշ ունակություններ, հիմնել նահանգային վարչություն, օրենսդիր և գործադիր մարմիններ, ոստիկանություն, կրթական տեսչություն և այլն: Վան-Վասպուրականում ձեռք բերած այդ հարուստ փորձը նա գործադրեց նորանկախ հանրապետությունում:
1918 թ. սկզբներից նա ստեղծել էր տեղական կառավարություն՝ «վարիչների մարմին», որը կառավարում էր Երևանի նահանգը: Արամը գլխավորում էր վարիչ մարմինը, նաև զինվորական բաժանմունքը: Արամի տարերքն էր և՛ **պաշտպանելը**, և՛ **կառուցելը**: Նրա գլխավորած վարչությունն ուներ ներքին գործերի, զինվորական, պարենավորման, ֆինանսների, գաղթականության և այլ բաժանմունքներ: Վարիչ մարմնում ընդգրկված էին ճանաչված հեղինակություններ Մ. Մուսինյանը, Հ. Մելիքյանը, Ս. Թորոսյանը, Թ. Տոշյանը, Ա. Շահխաթունին և ուրիշներ:
Հ. Քաջազնունու կաբինետում ն. գ. նախարարությունը, որը գլխավորում էր Արամը համարվում էր բարձրագույն վարչական մարմինը: Կառավարչական իրավասությունների ծավալի մեծության առումով **ՆԳՆ-ն.** ամենախոշոր կառույցն էր: Նա էր տնօրինում ու համակարգում նահանգային ու գավառային մարմինների, քաղաքային ինքնավարությունների, գաղթականության, կրթության, առողջապահության, ոստիկանության և այլ ոլորտների աշխատանքները: Հետագայում այդ նախարարությունից տրոհվեցին ու առաջացան մի շարք նոր նախարարություններ: Բայց մինչ այդ՝ մինչև իր մահը՝ 1919 թ. հունվար, այդ աշխատանքները օրնիբուն տնօրինում ու

անսպառ եռանդով ու անձնազոհ նվիրումով վարում էր Արամը: Նա ամեն տեղ էր: Հենց ժողովրդի, գաղթականության, որբերի հետ շփումների հետևանքով նա վարակվեց բծավոր տիֆով և 1919 թ. հունվարի 29-ին կնքեց իր մահկանացուն: Ասում են, որ անգամ ծանր հիվանդ վիճակում նա հրաժարվել է դեղ ընդունել՝ խորհուրդ տալով այդ դեղերով փրկել որևէ գաղթականի: Ժամանակագիրները նշում են, որ նրա թաղումը վերածվեց բազմահազարանոց սգո միջոցառման, որպիսին դեռ չէր տեսել Երևանը: Արամն այն ազնիվ ու անկաշառ պետական բարձրաստիճան ծառայողներից էր, որ անգամ հուղարկավորության համար խնայած որևէ միջոց չի ունեցել, և ստիպված այդ նպատակով խորհրդարանն է մի փոքր գումար հատկացրել: Կարելի է վստահաբար ասել, որ 20-րդ դարի հայոց ճակատագրական երկու տասնամյակներին Ա. Մանուկյանը իր ժողովրդի համար, հիրավի, աստվածաշնչյան Մովսեսի դերը խաղաց, իսկ վերջում, տակավին չորս տասնամյակ չբոլորած, իր կյանքն էլ զոհաբերեց հանուն ժողովրդի փրկության:
Արամը վայելում էր հսկայական ժողովրդականություն թե՛ արևելահայության, թե՛ արևմտահայության և թե՛ անգամ այլազգիների (քրդերի, ասորիների, հույների և այլն) մեջ: Եվ պատահական չէր, որ նա վաստակել էր «Փաշա» պատվանունը: Նա եղել է ոչ թե նեղ կուսակցական, այլ համազգային, համապետական նշանակության ազգային, քաղաքական և պետական գործիչ:
Հիրավի, երբ կամա թե ակամա խոսք է բացվում Մայիսյան հերոսամարտերի ու **Առաջին Հանրապետության** մասին, ապա մեր առջև առաջին հերթին պատկերանում է Արամ Մանուկյանի կերպարը: Հիրավի, անհնար է պատկերացնել Հայոց անկախ պետականության վերականգնումը առանց Արամ Մանուկյան գործչի: Մեկդարյա հեռավորությունից տալով 20-րդ դարի հայ մեծագույն գործիչների մեկի՝ Արամ Մանուկյանի հայ ազատագրական պայքարի ու **Առաջին Հանրապետության** կայացման գործում նրա խաղացած վիթխարի դերի գնահատականը՝ տեղին է մեջբերել մեր լավագույն մտավորականներից, գրաքննադատ, պետական գործիչ **Նիկոլ Աղբալյանի** հետևյալ սրտառուչ խոսքերը՝ նվիրված Ա. Մանուկյանի հիշատակին. «Երբ գիշերը գայ, մտէք ձեր հոգիի սենյակը և խօսեցէք ձեր խղճի հետ և ըսէք, արդեօք աշխատե՞ր էք հայ ժողովրդի համար,

ինչպէս Արամը, եղե՞ր էք այնքան անձնազոհ, որքան Արամ, տե՞ր էք ձեր ամբողջ կեանքը հայ ժողովրդին, ինչպէս Արամը»:
Այս նույն առիթով, հայ մեծերից Գարեգին Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյանը) գտնում էր, որ Արամին կարելի է դասել պաշտամունքի արժանի հայ այն մեծ մեռելների թվին, որը ամենից քիչ իրեն ու իր կուսակցությանը կպատկանի, բայց առավել ու ամբողջական իր ցեղին և պատմությանը:
Կարծում ենք, առաջիկայում Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի տոնակատարությունը անցկացնելիս ամենից առաջ հարկ է պետական բարձր մակարդակով այցելություն կազմակերպել և ծաղիկ խոնարհել, իրավամբ, **Առաջին Հանրապետության** հիմնադիր Արամի պայծառ հիշատակը հավերժացնող նորաբաց արձանի առաջ, և համոզված ենք, որ այդուհետ այն կդառնա ժողովրդական տոնախմբության ու պետական տոնացույցի անբաժան մաս:
Բացի այդ, հայ ժողովրդի մեծագույն զավակներից մեկի՝ **Առաջին Հանրապետության** փաստացի հիմնադիր Արամ Մանուկյանի անունը հավերժացնելու նպատակով ցանկալի կլիներ, որ ՀՀ դրամի վրա լինի նրա դիմապատկերը՝ Սարդարապատի հուշահամալիրի և Առաջին հանրապետության կառավարության տան համադրմամբ: Եթե ԱՄՆ-ի պետության քաղաքական խորհրդանիշը համարվում է Ջ. Վաշինգտոնը, ապա նոր դարաշրջանում հայոց առաջին անկախ պետականության հիմնադիրը իրավամբ համարվում է Ա. Մանուկյանը, ուստի միանգամայն տեղին ու արդարացված կլինի, եթե 20-րդ դարի հայ մեծագույն ազգային, քաղաքական ու պետական խոշոր գործչի՝ Արամի դիմապատկերը լինի հայկական պետականության ատրիբուտը համարվող ազգային-պետական դրամի վրա: Արամի գործի և ոգու շարունակությունն է Հայաստանի մերօրյա անկախ Հանրապետությունը:

գ) **Օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի ձևավորումը և օրինաստեղծ աշխատանքը**

Առաջին խորհրդարան՝ Հայաստանի խորհուրդ: Ի սկզբանե խնդիր դրվեց հայոց պետականությունը կերտել եվրոպական քաղաքական և պետական կառուցվածքի օրինակով՝ իհարկե, հաշվի առնելով տեղական պայմանները և մեր երկրի ու ժողովրդի

առանձնահատկությունները: Պետք է հիմնվեր **պառլամենտական դեմոկրատական** (ռամկավար) հանրապետություն: ՀՀ որդեգրեց պառլամենտական (խորհրդարանական) կառավարման համակարգ (մոդել): Այդ նշանակում էր, որ բարձրագույն իշխանությունը համարվում էր օրենսդիր մարմինը, իսկ բարձրագույն գործադիր մարմինը՝ կառավարությունը, որի նախագահը (վարչապետը) համարվում էր հանրապետության ամենաբարձր պաշտոնատար անձը: Վերջինս կառավարության հետ միասին ընտրվում էր խորհրդարանի կողմից, հաշվետու էր միայն նրա առաջ և անվերապահ ենթակա էր նրա որոշումներին: Այսինքն՝ նրան վստահություն կամ անվստահություն հայտնելու հարցը լսում էր խորհրդարանը:
Պետության կառուցվածքի հստակեցման առումով ծրագրվում էր Հայկական հարցի լուծումից՝ Միացյալ Հայաստանի ստեղծումից հետո հրավիրել Սահմանադիր ժողով, ընդունել Սահմանադրություն, մտցնել ՀՀ նախագահի ինստիտուտ և այլն, որը, սակայն, ժամանակի սղության և հանգամանքների աննպաստ ընթացքի հետևանքով **չկենսագործվեց:**
Այդ նպատակադրումների իրագործման ճանապարհին, հենց պետական կառավարման եվրոպական արժեքների որդեգրման ուղիով, կառավարության ստեղծումից հետո պետականաշինության երկրորդ կարևոր խնդիրը դարձավ ոչ միայն **բարձրագույն օրենսդիր մարմնի**, այլև գործնականում **հանրապետության բարձրագույն իշխանության** ձևավորումը, որը պաշտոնապես կոչվեց **Հայաստանի խորհուրդ**:
Քանի որ անկախության հռչակումից հետո ժամանակը, քաղաքական հանգամանքները և ֆինանսական միջոցները թույլ չէին տալիս միանգամից խորհրդարանի ընտրություններ անցկացնել, ուստի Թիֆլիսի և Երևանի Ազգային խորհուրդների խառը նիստում որոշվեց՝ Հայոց (կենտրոնական) Ազգային խորհրդի անդամների (15) թվի, կուսակցական համամասնությամբ եռապատկելու (բացի 3 անկուսակցականների), ինչպես նաև հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ հրավիրելու միջոցով կազմել Հայաստանի մեկպալատանի առաջին օրենսդիր մարմինը՝ Հայաստանի խորհուրդը (խորհրդարանը): Ահա այս ճանապարհով խորհրդում պատգամավորական տեղեր զբաղեցրին ՀՅ Դաշնակցությունը՝ 18, Հայ ժողովրդական կուսակցությունը (ՀԺԿ)՝ 6, Սոցիալ-դեմոկրատները՝ 6 (5 մենշևիկ և 1 բոլշևիկ), Սոցիալիստ-

հեղափոխականները (էսէռները)՝ 6, անկուսակցական՝ 2 (երրորդը՝ Տիգրան **Բեկզադյանը,** մեկնեց դիվանագիտական աշխատանքի), ազգային փոքրամասնության ներկայացուցիչներից՝ 6 թուրք, 1 ռուս և 1 քուրդ (եզդի)՝ բոլորը միասին ընդամենը **46 պատգամավոր**: Գործնականում Հայաստանի խորհրդում ներկայացված էին երկրի բոլոր հիմնական քաղաքական ուժերը և ազգությունները: Հայաստանում քաղաքական կուսակցությունները ներկայացնում էին հետևյալ խճապատկերը: Հայաստանում ազատ գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող քաղաքական կուսակցություններ, այդ թվում՝ իրենց հայացքներով ու գործելակերպով առավել ծայրահեղական համարվող բոլշևիկները: Վերջիններից շատերը նույնիսկ պաշտոնավարում էին հանրապետության պետական զանազան հիմնարկություններում՝ լուսավորության, պարենավորման, կապի և այլն: Հանրապետության տարածքում և առհասարակ հայ իրականության մեջ գործող ամենախոշոր և ամենաազդեցիկ քաղաքական ուժը **Հ. Յ. Դաշնակցություն** կուսակցությունն էր, որը և հիմնականում իր ուսերի վրա կրեց անկախ պետականության քաղաքական ողջ պատասխանատվությունը: Այդ շրջանում կովկասահայ հասարակական-քաղաքական կյանքում Դաշնակցությունից հետո երկրորդ քաղաքական ուժը 1917 թ. գարնանը Թիֆլիսում հիմնված ազատական-բուրժուական գաղափարներ դավանող **Հայ ժողովրդական կուսակցությունն** էր (ՀԺԿ), որին հաճախ կոչում են նաև **Հայ կադետներ** անունով՝ ռուսական Կոնստիտուցիոն (Սահմանադրական) դեմոկրատների նմանությամբ: Այս կուսակցության կենտրոնը (Կենտկոմը) գտնվում էր Թիֆլիսում և առանձնապես մեծ խանդավառություն չէր ցուցաբերում հայրենիքում աշխատելու համար: Հանրապետության պետական և հասարակական կյանքում համեստ դեր էին խաղում **էսէռները**, **Սոցիալ-դեմոկրատները՝** մենշևիկ և բոլշևիկ, **Սպեցիֆիկ** (Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպությունը) և **Ս. Դ. Հնչակ**, ինչպես նաև **Հայ Սահմանադրական ռամկավար** և ոչ ազդեցիկ մյուս կոսակցությունները: Հնչակյանները և ռամկավարները համեմատաբար մեծ ազդեցություն ունեին գաղութահայության մեջ: Հայ սահմանադրական ռամկավարները, Ս Դ Հնչակը, Սպեցիֆիկները, Արշակ Զուրաբյանի (Զուրաբով) գլխավորած Անկախ սոցիալիստները և այլն համարվում էին արտախորհրդարանական կուսակցություններ, պատգամավոր

չունեին խորհրդարանում և իշխանություններին քննադատում էին խորհրդարանից դուրս:
Հարկ է ընդգծել, որ Հայաստանի խորհուրդը կամ խորհրդարանը աչքի է ընկել ուժեղ ընդդիմությամբ: Հայտնի է, որ **յուրաքանչյուր խորհրդարանի շարժիչ ուժը նրանում առկա ընդդիմությունն է**: Խորհրդարանում գործել են չորս կուսակցական խմբակցություններ, էլ չխոսելով ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասին: Հիմնական կառավարող ՀՅԴ խմբակցությունը խորհրդարանում մեծամասնություն չի ունեցել: Այնտեղ ներկայացված են եղել հանրապետության քաղաքական դաշտի փաստորեն բոլոր երեք թևերը՝ աջ՝ ՀԺԿ, կենտրոն՝ ՀՅԴ և ձախ՝ Սոց.-դեմ. և էսէռ խմբակցությունները: Վերջիններս դավանում էին ձախամետ, ծայրահեղական-հեղափոխական հայացքներ, որն էլ իր դրոշմն էր թողնում խորհրդարանի ընդունած շատ օրենքների ու որոշումների վրա: Խորհրդում հարաբերական մեծամասնություն կազմող ՀՅԴ խմբակցությունը երկրի արտաքին և ներքին քաղաքականության կուրս վարելիս ավելի հաճախակի գործակցել է աջակողմյան-ազատական հայացքներ դավանող ՀԺԿ խմբակցության հետ: Եվ պատահական չէ, որ 1918 թ. նոյեմբերի սկզբներին ՀՅԴ-ՀԺԿ կուսակցությունները կազմեցին կոալիցիոն կառավարություն, որը շարունակվեց մինչև 1919 թ. հունիսի սկիզբը:
Հայաստանի խորհրդի նստաշրջանի պաշտոնական բացումը հանդիսավոր շուքով կատարվեց 1918 թ. օգոստոսի 1-ին՝ կեսօրին, Երևանի քաղաքային ակումբի շենքում: Այն բացեց Հայոց Ազգային խորհրդի փոխնախագահ, տարիքով ավագագույն, մասնագիտությամբ գյուղատնտես Ավետիք Սահակյանը: Հենց նա էլ հետո ընտրվեց խորհրդարանի նախագահ: Խորհրդարանի բացման օրը՝ ժամը 12-ին «Մեր հայրենիք» օրհներգի հնչյունների ներքո խորհրդարանի շենքի գլխին բարձրացվեց Հայաստանի պետական դրոշը՝ **Եռագույնը**:
Հուշագիր բժիշկ Հ. Մելիքյանի նկարագրությամբ ժողովուրդը խռնվել էր քաղաքային ակումբի շենքի առջևում գտնվող կենտրոնական այգում և մայթերին: Նա այդ օրը համարում է Երևանի տարեգրության ամենահիշարժան օրերից մեկը: Խարհրդարանի հանդիսավոր բացմանը ներկա էին Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Թուրքիայի, Պարսկաստանի և Ուկրաինայի պատվիրակները:

Դահլիճում պատգամավորական խմբակցությունները տեղեր էին զբաղեցրել ըստ իրենց քաղաքական դիրքորոշման թևերի. աջ կողմում՝ ՀԺԿ, կենտրոնում՝ ՀՅԴ, ձախ թևում՝ Սոց.-դեմ. և էսէռ պատգամավորները: Անկուսակցական 2 պատգամավորները և ազգային փոքրամասնությունների 8 պատվիրակները տեղեր էին զբաղեցրել դահլիճի աջ կողմում: Դահլիճի օթյակներից մեկը հարմարեցված էր կառավարության անդամների համար: Առանձին տեղ էր պատրաստված նաև Ամենայն Հայոց կաթողիկոսի համար: Խորհրդի նիստերին ներկա էին լինում հասարակայնության ներկայացուցիչներ, որոնց համար դահլիճի հետևի մասում հատկացված էին տեղեր:
Առաջին օրը հաստատվեցին պատգամավորների մանդատները և խորհրդի աշխատակարգը՝ **ռեգլամենտը**, ընտրվեց նախագահություն: ՀՅԴ խմբակցության խոսնակ Սմբատ Խաչատրյանի առաջարկով Հայաստանի խորհրդի (խորհրդարանի) նախագահ է ընտրվում նույն **Ավետիք Սահակյանը** (1865-1933): Խորհրդարանի փոխնախագահներ են ընտրվում **Գրիգոր Տեր-Խաչատրյանը** (ՀԺԿ), **Դավիթ Զուբյանը** (էսէռ), իսկ ավագ քարտուղար, անկուսակցական՝ **Պետրոս Զաքարյանը**:
Հանդիսավոր նիստի ավարտից հետո դրսում՝ հրապարակում, տեղի ունեցավ ՀՀ առաջին զորահանդեսը, որն ընդունեց Հայկական կորպուսի հրամանատար, զորավար Թ. Նազարբեկյանը: Ականատեսը պատմում է, որ հայ ազգային զորքը շարքեշարք անցնում էր իրենց առջևից, և այդ պահին հուզմունքից հազարավոր հանդիսականների աչքերից հոսում էին արտասուքի կաթիլներ:
Հաջորդ երկու նիստերում լսվեց և ձայների մեծամասնությամբ հավանության արժանացավ Հ. Քաջազնունու կառավարության հայտագիրը: Վերջինս Հայաստանի վիճակը բնութագրում էր որպես «**անձև քաոս և ավերակների կույտ**»: Կառավարությունն իր գործունեության հիմքում դնում էր հետևյալ հիմնական խնդիրները՝ կասեցնել երկրի քայքայման գործընթացը, հաստատել տարրական իրավակարգ և կատարել դատահիրավական բարեփոխումներ, բացել հաղորդակցության ուղիները, վերականգնել կապի միջոցները, մեղմել պարենային ճգնաժամը և գաղթականության վիճակը, ստեղծել սեփական դրամական համակարգ, վերակառուցել երկրի զինուժը, դրացիական հարաբերություններ հաստատել հարևան երկրների հետ և այլն: Հ. Քաջազնունու կաբինետի ծրագրում ուղիներ էին

մատնանշվում ստեղծված իրավիճակից դուրս գալու և երկրի կայունությունը որոշ չափով կայունացնելու ուղղությամբ: Դարձյալ կուսակցական համամասնությունը պահպանելու սկզբունքով կազմվեցին խորհրդարանի 14 մշտական հանձնաժողովները, որոնց մեջ գերիշխում էին սոցիալ-տնտեսական բնույթի խնդիրներով զբաղվող ոլորտները: Հայաստանի խորհրդի առաջին ամիսների գործունեության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն ոչ միայն բարձրագույն օրենսդիր մարմին էր, այլև ուներ նաև գործադիր իշխանության գործառույթներ: Խորհուրդը հաճախ իր հանձնաժողովների՝ կարգադրիչ, պարենավորման, գաղթականության, բժշկասանիտարական, դպրոցական և այլն միջոցով փաստորեն տնօրինում էր կառավարչական բնույթի գործերի, ինչպիսիք էին՝ խոլերայի, բծավոր տիֆի և այլ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի, ժողովրդի պարենավորման, գաղթականների խնամատարության, անօրինական զենքի բռնագրավման, կենսականորեն կարևոր ապրանքների պետական մենաշնորհի ու բռնագրավումների և նույնիսկ ժողովրդական կրթության գործերը: Խորհրդարանը հաճախ օրենքների անվան տակ հրապարակում էր վարչական հրահանգներ ու որոշումներ: Խորհրդարանին կից գործում էր Պետական վերահսկողության մարմինը՝ շուրջ 100-ի հասնող աշխատակիցներով, որը օրենսդիր իշխանության կողմից գործադիր իշխանության ֆինանսատնտեսական գործունեության, պետբյուջեի (ելևմտի) կատարման և այլնի վրա վերահսկողության իրականացման, պաշտոնական զեղծումների, չարաշահումների ու կոռուպցիայի բացահայտման ու պայքարի կարևոր լծակներից մեկն էր: Ընդսմին, Պետական վերահսկիչը միանգամայն անկախ էր գործադիր իշխանությունից՝ կառավարությունից, և ենթակա ու պատասխանատու էր միայն խորհրդարանի առաջ: Պետական վերահսկիչը չէր կարող լինել տվյալ կառավարող կուսակցության անդամ: Նա ընտրվում էր ընդդիմադիր կուսակցությունից կամ էլ անկուսակցական: Առաջին հանրապետության Պետական վերահսկիչ մարմնի նշանավոր դեմքերից էր ՀԺԿ անդամ, ճանաչված հասարակական և պետական գործիչ, իրավաբան ու ֆինանսիստ **Մինաս Բերբերյանը** (1871-1919): Սակայն, ցավոք, շատ հայ մեծամեծերի պես, նա ևս վախճանվեց համաճարակից: Համեմատական առումով կարելի է ասել, որ Առաջին հանրապետության Պետական

վերահսկիչ մարմինը դարձյալ հիշեցնում է մերօրյա Ազգային ժողովի Վերահսկիչ պալատը, իսկ փոխված նոր սահմանադրությամբ՝ Հաշվեքննիչ պալատը:
Համապատասխան օրենքներով սահմանվեցին պատգամավորների իրավասությունների շրջանակները, մի հանգամանք, որն ուսանելի է նաև Հայաստանի մերօրյա Ազգային ժողովի համար: Այսպես, օրինակ, նիստերից անհարգելի բացակայության դեպքում պատգամավորի աշխատավարձը պահվում էր՝ բացակայած օրերի հաշվով: Սահմանված էր նաև, որ պատգամավորը չէր կարող վարել որևէ այլ պետական կամ վճարովի հասարակական պաշտոն: Այդ պաշտոնների տեսակն ու քանակը որոշում էր ինքը՝ խորհրդարանը (բացառություն էր արված համալսարանի դասախոսին և դիվանագիտական ներկայացուցիչ նշանակված պատգամավորին) և այլն: Նիստերը գումարվում էին շաբաթական երկու անգամ՝ երեքշաբթի և ուրբաթ օրերին, սովորաբար երեկոյան ժամերին, որոնք երբեմն ավարտվում էին կեսգիշերին, անհրաժեշտության դեպքում հրավիրվում էին արտահերթ նիստեր, քվեարկությունները անցնում էին ձայների պարզ մեծամասնությամբ, փակ քվեարկությունները կատարվում էին քվեաշարերի միջոցով և այլն: Այսպիսով, երբ ձևավորվեց Հայաստանի խորհրդարանը, այն իր մեջ բովանդակում էր երկրի գերագույն իշխանությունը: Նախագահական համակարգի բացակայության պայմաններում բարձրագույն գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ենթակա էր խորհրդարանին, այսինքն՝ Հայաստանը պառլամենտական գերակայության հանրապետություն էր: Այդ իմաստով հատկանշական է, որ ՀՀ ներկայիս՝ 2015 թ. փոխված Սահմանադրությամբ դարձյալ նախապատվություն է տրվել խորհրդարանական կառավարման մոդելին, ինչը ընդգծում է իրավահաջորդական կապը Հայաստանի առաջին է երրորդ հանրապետությունների միջև:
Հայաստանի առաջին գումարման ոչ ընտրովի խորհրդարանի գործունեության հիմնական առանցքը բնականաբար օրինաստեղծ աշխատանքն էր, երկրի բնականոն կենսագործունեության համար անհրաժեշտ իրավական դաշտի ստեղծումը: Հայաստանի խորհուրդը մի կողմից փորձում էր ստեղծել իր սեփական, ազգային բովանդակությամբ օրենքները, իսկ մյուս կողմից՝ ժամանակի սղության և

արհեստավարժության պակասի հետևանքով՝ ընդօրինակում ու հարմարեցնում էր դրսի օրենքները:
Անկախության հռչակումից հետո, չնայած հանրապետության տնտեսական և քաղաքական դժնդակ պայմաններին, այնուամենայնիվ, նորակազմ խորհրդարանն ու կառավարությունը առանձին ճիգեր գործադրեցին եվրոպական ժողովրդավարական երկրների օրինակով կազմակերպելու և քիչ թե շատ բնականոն հունի մեջ դնելու Հայաստանի պետական և հասարակական կյանքը:
Քանի որ ՀՀ՝ որպես պետական միավոր, անջատվել էր, փաստորեն, նախկին Ռուսական կայսրությունից, ուստի 1918 թ. դեկտեմբերի 6-ին հաստատված օրենքով նպատակահարմար գտան ՀՀ տարածքի վրա ժամանակավորապես պահպանել նախկինում գործող ռուսական օրենքները՝ որոշ փոփոխություններով ու լրացումներով:
Մի շարք օրենքներով քայլեր ձեռնարկվեցին դատական իշխանության ձևավորման ուղղությամբ: Հանրապետությունում օրինականության վերականգնման և կարգուկանոն հաստատելու նպատակով, ներքին գործերի նախարար Արամի ներկայացմամբ, ընդունվեց անօրինական զենքի բռնագրավման և պետականացման մասին օրենքը, որով կառավարությունը հետամուտ էր ամրապնդել երկրի ներքին կայունությունը, իսկ մյուս կողմից՝ բռնագրավված զենքով զինել նորաստեղծ հայկական բանակը:
Խորհրդարանի գործունեության կարևոր ոլորտներից էին պետական բյուջեն, կառավարության ֆինանսավարկային քաղաքականությունը: Հանրապետության իշխանությունները մեծ ձգտում ունեին ստեղծելու սեփական ֆինանսական համակարգ, հանգամանք, որն անկախ պետականության կարևոր երաշխիքներից է: Սկզբում շրջանառության մեջ էր Անդրկովկասյան դրամը՝ բոները, որը երեք հանրապետությունների փոխադարձ համաձայնությամբ ժամանակ առ ժամանակ լրացուցիչ թողարկվում էր: Արդեն 1919 թ. կեսերից շրջանառության մեջ են մտցվում արտասահմանում տպված հայկական չեկերը, որոնք համարժեք էին Անդրկովկասյան բոներին: Բայց քանի որ բոները և հայկական չեկերը պետության կողմից ոսկու ֆոնդով և համապատասխան ապրանքային զանգվածով ապահովված չէին, ուստի դրանց շարունակական **էմիսիաների** հետևանքով մեծ արագությամբ արժեզրկվում էին:

Պետբյուջեի եկամտի հիմնական աղբյուրը հարկերն ու տուրքերն էին, որոնք ևս սահմանվում էին խորհրդարանի կողմից: Սովորաբար ֆինանսական ոլորտը այն գլխավոր լծակն էր, որով խորհրդարանը ազդում էր կառավարության վրա:
Յուրացնելով եվրոպական ժողովրդավարական երկրների ֆինանսավարկային քաղաքականության սկզբունքները՝ Հայաստանում ևս սկսեցին աստիճանաբար արմատավորվել այդպիսիք: Սկզբում պետական ծախսերը կատարվում էին նախահաշիվների համաձայն, որոնք կազմում էր կառավարությունը, և քննարկում ու հաստատում էր խորհրդարանը: Նախատեսվող վարկային հատկացումները ստանում էին օրենքի տեսք: Խորհրդարանի կողմից հաստատված տարեկան նախահաշիվների ամբողջությունն էլ, փաստորեն, կազմում էր հանրապետության տարեկան **պետբյուջեն (ելմտացույցը)**:
Այնուհետև՝ 1919 թվականից, սահմանվեց պետբյուջեի կազմման հատուկ կանոնակարգ, համաձայն որի տվյալ տարվա աշնանը յուրաքանչյուր նախարարություն կազմում է եկամուտների ու ծախսերի իր նախահաշիվները, որոնք ներկայացվում են ֆինանսների նախարարություն: Այնտեղ յուրաքանչյուր նախարարության ելևմտի նախահաշվի նախագիծը ենթարկվում է նախնական քննության միջգերատեսչական նախահաշվային հանձնաժողովում: Վերջինս բաղկացած էր տվյալ նախարարության, ֆինանսների նախարարության և Պետական վերահսկիչ մարմնի լիազորի ներկայացուցիչներից: Հիշյալ երեք գերատեսչությունների ներկայացուցիչները փոխզիջումներով համաձայնության գալու դեպքում նախահաշիվների նախագիծը ի մի է բերվում ֆինանսների նախարարությունում և համապատասխան եզրակացությամբ ուղարկվում նախարարների խորհուրդ: Վերջինս , քննարկելով ու հարթելով վիճելի հարցերը, հավանություն է տալիս նախահաշիվների նախագծին և դրանք կրկին վերադարձնում ֆինանսների նախարարություն, որպեսզի այդ համահավաք տվյալների հիման վրա կազմվի պետական տարեկան եկամուտների և ծախսերի (բյուջեի) ամբողջական նախագիծ: Դրանից հետո բյուջեի նախագիծը նախարարների խորհրդում հավանության արժանանալուց ու Պետական վերահսկիչի համապատասխան եզրակացությունից հետո մտցվում է խորհրդարան՝ քննարկման ու հաստատման համար: Ընդ որում, նախապատրաստական այդ բոլոր աշխատանքները պետք է

ավարտվեն մինչև տվյալ տարվա նոյեմբերի 10-ը: Բյուջետային տարին հաշվվում էր նոր տարվա հունվարի մեկից: Եթե խորհրդարանը ինչ-ինչ պատճառներով չի հասցնում քննարկել և հաստատել տարեկան բյուջեն, ապա ուժի մեջ էր մնում նախորդ տարվա ելմտացույցը: Դրվատելի է, որ միջազգայնորեն ընդունված և Հայաստանի առաջին հանրապետությունում սկզբնավորված այս կարգը (օրենքը) տեղ է գտել նաև Երրորդ հանրապետության սահմանադրությունում, որի հիման վրա էլ կազմվում է երկրի գլխավոր ֆինանսական փաստաթուղթը: Հանրապետության խորհրդարանի և կառավարության ուշադրության կենտրոնում է եղել գաղթականների և հատկապես թափառական ու անօգնական որբերի խնամակալության խնդիրը: Պետական մակարդակով բազմաթիվ օրենքներ ընդունվեցին նրանց ֆինանսական ու պարենային օգնության կազմակերպման, աշխատանքի տեղավորման, հողամասեր հատկացնելու, որբերի արհեստագործական ուսուցման ուղղությամբ և այլն: Խորհրդարանում ընկերային բնույթի հարցերով ու հարցապնդումներով ավելի հաճախ հանդես էին գալիս «ձախակողմյան» խմբակցությունները: Սակայն դրան հակառակ՝ նրանք, դժգոհելով կառավարության արտաքին ու ներքին քաղաքականությունից, հաճախ դեմ էին քվեարկում բանակի և երկրի պաշտպանության նպատակներին վարկեր տրամադրելուն, նույնիսկ մի անգամ՝ 1919 թ. փետրվարի վերջին բանը հասել է ծեծկռտուքի:
1919 թ. գարնանը Հայկական հարցի լուծման ուղիների շուրջ լուրջ տարաձայնություններ առաջացան կառավարախորհրդարանական կոալիցիա կազմած երկու ազդեցիկ ՀՅԴ և ՀԺԿ կուսակցությունների միջև: Դրա համար առիթ հանդիսացավ այն հանգամանքը, որ Հայաստանի անկախության առաջին տարեդարձի օրը՝ **1919 թ. մայիսի 28-ին**, կառավարությունը, մինչ այդ խորհրդարանի կողմից մեկ ամսով իրեն տրված հատուկ լիազորությունների հիման վրա, ձայների մեծամասնությամբ, առանց խորհրդարանի գիտության ու ՀԺԿ գաղափարակից Արևմտահայ Ազգային պատվիրակության ղեկավար **Պողոս Նուբար փաշայի** (1851-1930) համաձայնության պաշտոնական հայտարարություն արեց **Միացյալ** և **Անկախ Հայաստանի** հռչակման և Հայաստանի խորհուրդը արևմտահայ 12 ներկայացուցիչներով համալրելու մասին:

Իսկապես, Այդ օրը տեղի ունեցած հանդիսավոր նիստում, օտար դիվանագետների **ներկայությամբ** վարչապետի պաշտոնակատար Ալ. Խատիսյանը հայերեն և ֆրանսերեն լեզվով հրապարակեց Միացյալ և Անկախ Հայաստանի մասին ակտը, որում մասնավորապես ասվում էր.«**Հայաստանի ամբողջությունը վերականգնելու և ժողովրդի լիակատար ազատությունն ու բարգավաճումն ապահովելու համար Հայաստանի կառավարությունը, համաձայն բովանդակ հայ ժողովրդի միահամուռ կամքի և ցանկության, հայտարարում է, որ այսօրվանից Հայաստանի բաժան-բաժան մասերը մշտնջենապես միացած են իբրև անկախ պետական միություն**»[3]:

Այդ հայտագրի գերնպատակը մեկ ազգ, մեկ հայրենիք, մեկ կառավարություն գաղափարի՝ որպես պետական քաղաքականություն, աստիճանական իրագործումն էր: Այլ խոսքով, խնդիր էր դրվում հասնել Հայաստանի երկու հատվածների միավորմանը և Միացյալ, Անկախ Հայաստանի ստեղծմանը: Նախատեսվում էր, բանակցելով արևմտահայ քաղաքական շրջանակների հետ, կազմել Միացյալ Հայաստանի կառավարություն և Միացյալ խորհրդարան: Սակայն այդ ակտին դեմ արտահայտվեցին ոչ միայն ձախակողմյան սոց.-դեմոկրատները և էսէռները, որոնք առհասարակ չէին ընդունում Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, այլ նաև կոալիցիա կազմած ՀԺԿ կուսակցությունը: Վերջինս ոչ թե դեմ էր Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարին, այլ դրա տակ հասկանում **էր** ոչ թե ՀՀ և Արևմտյան Հայաստանի միավորումով Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծում, այլ Արևմտյան Հայաստանի ու Կիլիկիայի 4 սանջակների միավորումով Միացյալ և Անկախ, այսինքն՝ ծովից ծով, Հայաստանի ստեղծում: ՀԺԿ գաղափարաքաղաքական առումով համերաշխ էր Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության և նրա առաջնորդ Պողոս Նուբար փաշայի հետ: Ինչպես հայտնի է, տակավին 1912 թ. նոյեմբերից՝ Հայկական հարցի վերաբացման շրջանից, Արևմտյան Եվրոպայում գործում էր Ամենայն Հայոց կաթողիկոս **Գևորգ Ե**-ի կողմից նշանակված Արևմտահայ Ազգային պատվիրակությունը՝ եգիպտահայ մեծահարուստ, հասարակական գործիչ Պողոս փաշայի

[3] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 35, թ. 84, նաև՝ Միացյալ և Անկախ Հայաստան, Կ. Պոլիս, 1919, էջ 86:

գլխավորությամբ: Այդ տարաձայնությունների մասին ավելի առարկայական կխոսվի «Հայկական հարց» գլխում:
Սակայն Միացյալ և Անկախ Հայաստանի մասին կառավարության հռչակագիրը խորհրդարանում և նրանից դուրս, կուսակցությունների միջև առաջ բերեց սուր տարաձայնություններ: Մի շարք կուսակցություններ բողոք արտահայտեցին, իսկ ՀԺԿ-ն հեռացավ կառավարությունից: Դրանով քայքայվեց առաջին կոալիցիան: Հ. Յ. Դաշնակցությունը միայնակ ստանձնեց երկրի կառավարման ողջ ղեկը և պատասխանատվությունը: 1919 թ. հունիսի սկզբին (5-ին) լուծարվեց խորհրդարանը, դրա հետ միասին քայքայվեց նաև կոալիցիոն կառավարությունը և կազմակերպվեցին խորհրդարանական նոր ընտրություններ:

* * *

Երկրորդ խորհրդարան (պառլամենտ): 1919 թ. գարնանը, երբ ՀՀ վիճակը նկատելիորեն կայունացել էր, սահմաններն ընդարձակվել էին, քիչ մեղմվել էր սովը, շինականն անցել էր խաղաղ աշխատանքի, օրակարգի հարց դարձավ նշանակովի խորհրդարանի արձակումը և համաժողովրդական ընտրությունների միջոցով նոր, ընտրովի խորհրդարանի ձևավորումը: Երեք օր տևողությամբ՝ հունիսի 21-23-ը, տեղի ունեցած խորհրդարանական ընտրություններին տարբեր պատճառաբանություններով ու հիմնավորումներով բոյկոտեցին ու չմասնակցեցին Հայ ժողովրդականները, Ս. ռամկավարները, Հայ սոցիալ-դեմոկրատ մենշևիկները, բոլշևիկները և այլն:
Համաձայն ընտրությունների մասին օրենքի՝ (բաղկացած տասը գլխից և 111 հոդվածներից) դրանք անցան համամասնական՝ կուսակցական սկզբունքով, ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկության միջոցով, որի արդյունքով բացարձակ հաղթանակ տարավ ՀՅԴ կուսակցությունը: Կանոնակարգով նախատեսված 80 պատգամավորական տեղերից 72-ը զբաղեցրեց ՀՅԴ կուսակցությունը, 4-ը՝ էսէռ, 2-ը՝ թուրք, մեկը՝ քուրդ՝ եզդի Յուսուֆ-բեկ Թեյմուրովը և մեկը՝ անկուսակցականի անվան տակ, ծպտված բոլշևիկ՝ կարբեցի Արտաշես Մելքոնյանը:
Բնութագրական է, որ ինչպես այն ժամանակ, այնպես էլ ներկայումս ընտրությունների ժամանակ նախապատվությունը տրվում է

համամասնական-կուսակցական սկզբունքին: Հարկ է ընդգծել, որ հայ ընտրողը հիմնականում ծանոթ էր 20-րդ դարասկզբին հայ իրականության մեջ գործող ազգային և ոչ ազգային քաղաքական կուսակցությունների ծրագրերին, գործելակերպին, գործիչներին և այլն: Ինչպես արդեն ասվել է, այդ կուսակցությունները լրացնում էին Հայաստանի քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը՝ աջ, կենտրոն և ձախ: Եվ պետք է ասել, որ որքան էլ զարմանալի թվա, այն ժամանակվա կուսակցությունները գաղափարապես ու քաղաքական դավանանքով եղել են ավելի կայացած, մի բան, որ չես ասի մեր ժամանակներում 50-60-ի հասնող ՀՀ շատ կուսակցությունների վերաբերյալ: Վերջին երկու-երեք տասնամյակների Հայաստանի հասարակական-քաղաքական կյանքի պատկերը ցույց է տալիս, որ դրանցից շատերը, ըստ էության, գաղափարազուրկ են, հաճախ ստեղծված մեկ անձի շուրջ, ժողովրդին ուղղված հրապուրիչ խոստումներով կրկնում են իրար, արագ քայքայվում կամ՝ «գունափոխվում», դրանց ծրագրերում գրված է մի բան, սակայն իրականում անում են բոլորովին այլ բան և այլն:
Ինչ վերաբերում է Առաջին հանրապետության խորհրդարանի ընտրություններում ՀՅԴ տարած նման բացարձակ հաղթանակին, ապա դա կարելի է բացատրել մի քանի հանքամանքներով. ա) նախ դա խոսում է ՀՅԴ ունեցած ազդեցության ու **քաղաքական** կշռի **մասին**, բ) ցավոք, մի շարք կուսակցությունների՝ ՀԺԿ, Սոց.-դեմ. մենշևիկների, Ս. ռամկավարների և այլն, տարբեր պատճառներով ընտրությունները բոյկոտեցին: **Տվյալները ցույց են տալիս, որ մասնավորապես, եթե ՀԺԿ մասնակցեր ընտրություններին, ապա նա կստանար 15-ից մինչև 20 պատգամավորական տեղ գ) անշուշտ, ընտրությունների ընթացքում թույլ են տրվել զանազան խախտումներ և զեղծարարություններ, մի երևույթ, որից այդպես էլ չենք կարողանում ազատվել 100 տարի անց ևս: Այն ժամանակ միակ ընտրակաշառքը, թերևս, 1919 թ. գարնանից Ամերիկայից ստացվող օգնության ալյուրի բաժանումն էր սովյալ բնակչությանը: Այս կապակցությամբ, տեղին է ասված, որ աղքատ, սովյալ երկրում հնարավոր չէ արդար ընտրություններ անցկացնել:** Այդուհանդերձ, հարկ է փաստել, որ ՀՅԴ հաղթանակը խորհրդարանական ընտրություններում միանգամայն օրինաչափ էր: Ժողովրդի մեջ ՀՅԴ-ի կշռի ու հեղինակության մասին էին հավաստում

նաև ՏԻՄ-երի՝ քաղաքային ու գավառային ինքնավարությունների ընտրություններում տարած ջախջախիչ հաղթանակները: Այսպես, օրինակ, 1918 թ. դեկտեմբերին կայացած Երևանի քաղաքային դումայի ընտրություններում 60 իրավասու տեղերից (չորս կուսակցությունների մասնակցությամբ) ՀՅԴ շահել էր 42 տեղ: ՀՅԴ իր լայն ժողովրդականությունը ապացուցել էր դեռ 1917 թ. նոյեմբերին Համառուսաստանյան Սահմանադիր ժողովի ընտրություններում, երբ նա բնավ էլ իշխանություն չէր և չէր կարող խոսք լինել համառուսաստանյան ընտրություններում իր պաշտոնական դիրքը չարաշահելու մասին: Այդ ընտրությունների ժամանակ Դաշնակցությունը ստացել էր **558400 քվե**, որը կրկնակի շատ էր, քան հայ քաղաքական կուսակցությունների հավաքած ձայները միասին վերցրած: Այլ խոսքով, իրողությունն այն է, որ այն ժամանակ հայ լայն հասարակաշերտեր գնում էին նրա գաղափարների ու առաջնորդների հետևից, և նա հայ իրականության ամենակազմակերպված կուսակցությունն էր:
Երկրորդ գումարման ընտրովի խորհրդարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1919 թ. դարձյալ օգոստոսի 1-ին: Խորհրդարանի նախագահ ընտրվեց գրող, հրապարակախոս **Ավետիս Ահարոնյանը** (1866-1948):Փոխնախագահներ ընտրվեցին **Լևոն Շանթը** (1869-1951) և **Սարգիս Արարատյանը**: 1919 թ. սկզբներին Փարիզ մեկնած ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը ընտրվեց խորհրդարանի պատվավոր նախագահ, որպեսզի Փարիզի հաշտության կոնֆերանսում հայկական պատվիրակությանը ավելի մեծ քաղաքական կշիռ տրվեր, թեև այդ ողջ ընթացքում նա չի վարել խորհրդարանի և ոչ մի նիստ:
Միջանկյալ նշենք, որ խորհրդարանի 12 մշտական հանձնաժողովներում ընդգրկված են եղել ընդդիմության բոլոր 8 անդամները, ընդ որում առանձին ներկայացուցիչներ՝ միաժամանակ նույնիսկ երկու տարբեր հանձնաժողովում:
Օգոստոսի 15-ին լսվեց և հավանություն տրվեց նորընտիր վարչապետ Ալ. Խատիսյանի կառավարության հայտագրին: Նրանում ներկայացված էին նոր կաբինետի ներքին ու արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունները և մոտեցումները: Հայտագրում պաշտպանվում էին Միացյալ Հայաստանի անկախության, օտար ներդրումների խրախուսման, կալվածատիրական հողերի

ազգայնացման, ընդհանուր, պարտադիր և ձրի սկզբնական կրթության անցման և այլ գաղափարներ ու պահանջներ:
Քաղաքական ընդդիմության տեսակետից, անշուշտ, Երկրորդ խորհրդարանը զիջում էր Առաջինին, որովհետև 8-հոգիանոց ընդդիմությունը չէր կարող դիմակայել 72 հոգիանոց ՀՅԴ խմբակցությանը: Սակայն դրա փոխարեն հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը լայն ընդդիմություն ուներ խորհրդարանից դուրս, որն իր դրոշմն էր թողնում օրենսդիր մարմնի աշխատանքների և ընդունած օրենքների վրա: Հանրապետությունում ազատ և ակտիվորեն գործում էին բոլշևիկները, հայ ժողովրդականները և ռամկավարները, մենշևիկները, անկախ սոցիալիստները, սպեցիֆիկները և այլն: Բացի այդ, երկրորդ խորհրդարանի ընդդիմության պակասը լրացվում էր ՀՅԴ խմբակցության ներսում առկա տարբեր թևերով ու հոսանքներով: Պարզվում է, որ ՀՅԴ խորհրդարանական խմբակցության ներսում գոյություն են ունեցել ազգային, ընկերվարական, պետաիրավական, հեղափոխական և այլ հակումներ ունեցող թևեր ու հոսանքներ, որոնք ժամանակ առ ժամանակ սուր քննադատության տակ էին առնում իրենց իսկ ձևավորած կառավարությանը և մի քանի անգամ նույնիսկ դրել են Խատիսյանի, իսկ հետագայում նաև Հ. Օհանջանյանի կաբինետի վստահության հարցը:
ՀՅԴ խորհրդարանական խմբակցության գործունեության ուսանելի փորձն այն է, որ նա շարժափոկի դեր է կատարել կուսակցության բարձրագույն ղեկավար գործադիր մարմնի՝ Բյուրոյի և կառավարության միջև, ինչպես որ սահմանվել էր 1919 թ. աշնանը գումարված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովում: Խորհրդարանական խմբակցությունն էր այն գլխավոր խողովակը, որով կուսակցությունն անցկացնում էր իր քաղաքականությունը, այսինքն՝ հիմնականում պահպանվել են պառլամենտարիզմի ժողովրդավարության սկզբունքները: Ասվում է հիմնականում, որովհետև արձանագրվել են նաև դեպքեր, երբ ՀՅԴ Բյուրոն ուղղակի միջամտել է ՀՅԴ խմբակցության, խորհրդարանի և նույնիսկ կառավարության ներքին գործերին: Ինչպես հետո կտեսնենք, դրությունն ավելի բարդացավ 1920 թ. բոլշևիկների Մայիսյան **ապստամբության** և թուրք-թաթարական խռովությունների ուժգնացման հետևանքով. դրանք սանձելու նպատակով խորհրդարանը ժամանակավորապես ուղարկվեց հարկադիր արձակուրդ և ՀՅԴ Բյուրոն

ամիսներ շարունակ ամբողջ (գործադիր և օրենսդիր) իշխանությունը վերցրեց իր ձեռքը:
Ինչ վերաբերում է Երկրորդ գումարման խորհրդարանի օրենսդրական աշխատանքների արդյունավետությանը, ապա համեմատական կարգով Առաջին խորհրդարանի համեմատ ավելի հասուն էր ու արհեստավարժ: Ընտրովի խորհրդարանը ընդունել է ավելի հասուն իրավաօրենսդրական ակտեր ու փաստաթղթեր: Նա, օրինակ, հատուկ ուշադրություն է դարձրել քաղաքների ու հատկապես մայրաքաղաք Երևանի հատակագծման, վերաշինության ու կառուցապատման հարցերին:1919 թ. դեկտեմբերի 26-ին խորհրդարանի փոխնախագահ Լ. Շանթի վավերացմամբ հաստատվեց «Պետական լեզվի մասին» օրենքը: Համաձայն այդ օրենքի՝ հայերենը դառնում էր պարտադիր պետական և հասարակական բոլոր հաստատություններում: 1919 թ. սեպտեմբեր-դեկտեմբերին ընդունվեցին օրինագծեր ազգագրական-մարդաբանական թանգարան, պետական հանրային գրադարան, թատերական վարժարան, երաժշտական դպրոց (կոնսերվատորիա) հիմնելու մասին, որոնք դրվեցին հանրային կրթության և արվեստի նախարարության իրավասության տակ: 1920 թ. հունվարի 3-ին ընդունվեց օրենք՝ եկեղեցին պետությունից անջատելու մասին: Ապրիլի 3-ին հաստատվեց մեկ այլ օրինագիծ՝ ծխական-եկեղեցական դպրոցները պետական աշխարհիկ դարձնելու մասին: Միաժամանակ հայտարարվում էր խղճի ազատություն: Թույլատրվում էին ինչպես պետական, այնպես էլ ոչ պետական դպրոցներ: Օրենքում պահանջ էր դրված՝ դպրոցը հեռու պահել քաղաքականությունից և այլն: Միանգամայն կեղծիք է խորհրդային պատմակուսակցական գրականության մեջ տարածում գտած քարոզչական այն վարկածը, թե իբր «դաշնակցական Հայաստանում» ոչինչ չի ստեղծվել, իսկ ինչ էլ որ ձեռք է բերվել վերագրվել է բոլշևիկներին ու Խորհրդային Հայաստանին: Հարկ է նշել, որ այս խորհրդարանում ևս ընդունված օրենքներն ավելի շատ ունեցել են սոցիալական ուղղվածություն, որով ընդգծվում էր երկրի հիմնական քաղաքական ղեկավար ուժի՝ ՀՅԴ սոցիալական բովանդակությունը: Դրամի արագ արժեզրկման պայմաններում ժամանակ առ ժամանակ կատարվում էր նվազագույն աշխատավարձի պարբերաբար բարձրացում, ինչպես նաև կենսաթոշակների ու այլ նպաստների շարունակական ինդեքսավորում: 1920 թ. ամռանը

թանկացումների դեմն առնելու նպատակով ընդունվեց օրենք գների բարձրացման մասին: Օրենքով նախատեսվում էր մինչև 2 տարվա բանտարկություն կամ 1 մլն. ռուբլու տուգանք այն անձանց նկատմամբ, ովքեր շահադիտական նպատակով առաջնահերթ անհրաժեշտության ապրանքները (պարեն, վառելանյութ, դեղորայք և այլն) կվաճառեն տնտեսապես չհիմնավորված չափազանց բարձր գներով:
ՀՀ խորհրդարանն ու կառավարությունը նյութական ու ֆինանսական մասնհանումներ էին անում նաև հանրապետության սահմաններից դուրս գտնվող հայ ազգաբնակչությանը: Այսպես, օրինակ, 1919 թ. դեկտեմբերին խորհրդարանի հաստատմամբ կառավարությունը Ախալքալաքի հայ ազգաբնակչության կարիքների համար հատկացրեց 10 մլն. ռուբլի, իսկ 1920 թ. փետրվարին հանրապետության օգնության ֆոնդից նույն գավառի հայ բնակչությանը բաց թողնվեց 30 հազար փութ հացահատիկի սերմացու:
Խորհրդարանը իրավասու էր հաստատելու միջպետական պայմանագրեր ու կոնվենցիաներ, լիազորել կառավարությանը ուրիշ պետությունների հետ բանակցություններ վարելու, պայմանագրեր ու համաձայնագրեր կնքելու, դիվանագիտական միսիաներ (ներկայացուցչություններ) ու պատվիրակություններ հաստատելու և այլն:
Պատգամավորների գործունեությունը չի սահմանափակվել միայն խորհրդարանի շրջանակներում: Ե՛վ առաջին, և՛ երկրորդ խորհրդարանում պատգամավորները անհատապես կամ պատգամավորական հանձնախմբերով գործուղվել են տարբեր շրջաններ, տեղերում ծանոթացել ազգաբնակչության, գաղթականության, զորքի վիճակին ու կարիքներին և իրենց օգտակար առաջարկություններով ու դիտողություններով նպաստել կառավարության ու տեղական իշխանությունների աշխատանքների բարելավմանը, հաճախ էլ տեղերում հարթել են բազում վեճեր և այլն:
Հանրագումարի բերելով Հայաստանի երկու գումարման խորհրդարանների օրենսդրական աշխատանքի արդյունքները՝ կարելի է արձանագրել, որ խորհրդարանն իր կարճատև ու ընդհատումներով գործունեության ընթացքում ընդունել է 300-ից ավելի օրենք և իրավաօրենսդրական առումով ապահովել է նկատելի տեղաշարժեր երկրի սոցիալ-տնտեսական և կրթա-մշակութային ոլորտներում:

Խնդրահարույց պետք է համարել Հայաստանի խորհրդարանի գործունեության 1920 թ. հետմայիսյան ժամանակաշրջանը, երբ բոլշևիկների ապստամբությունը և թուրք-թաթարական ուժգնացող խռովությունները հնազանդեցնելու նպատակով Խորհրդարանն ուղարկվեց հարկադիր արձակուրդ, պատգամավորները մեկնեցին ապստամբական թեժ կետեր: Արտակարգ իրավիճակի թելադրանքով ամբողջ՝ գործադիր, օրենսդիր իշխանությունը ստանձնեց ՀՅԴ Բյուրոն, որն էլ սկսեց խորհրդարանի անունից ընդունել օրենքներ և օրենսդրական ակտեր, որոնք, իհարկե, հետագայում պետք է հաստատվեին խորհրդարանում: Դրանով տեղի ունեցավ պետական կառավարման համակարգի կուսակցականացում, որն, անշուշտ, նահանջ էր ժողովրդավարական գործընթացներից: Եվ այդ հանգամանքը նկատելիորեն թուլացրեց պետականության իրավական, սոցիալ-քաղաքական և ժողովրդավարական հիմքերը: Որպես պատմական փորձ և դաս՝ ներկայումս պետք է հաշվի առնել այդ պարագան և երբեք չպետք է թույլ տալ պետական կառավարման համակարգի կուսակցականացում: Դա եղել է կառավարման մի ձև, որ բնորոշ էր կոմունիստական-բոլշևիկյան միակուսակցական ամբողջատիրական (տոտալիտար) համակարգին, որը գործեց խորհրդային երկրում ավելի քան 70 տարիների ընթացքում: Ամփոփելով Հայաստանի Հանրապետության կառավարության ու խորհրդարանի գործունեությունը՝ կարելի է արձանագրել, որ պետական այդ երկու կառույցներն իրենց կարճատև գոյության ընթացքում ընդունել են 1200-ից ավելի օրենք: Եվ պետք է նշել, որ դրանց ճնշող մեծամասնությունը կառավարող կուսակցության՝ ՀՅԴ-ի ընկերվարական ոգուն համապատասխան ունեցել է սոցիալական ուղղվածություն, միտված է եղել չքավոր (կարիքավոր) խմբերի ու գաղթականության սոցիալական պաշտպանվածության, անվճար կրթության ու բուժսպասարկման, մարդկանց զբաղվածության ապահովման, զոհվածների ընտանիքներին օգնելու և համանման խնդիրների լուծմանը: Բավական է միայն այն փաստի հիշատակումը, որ կես միլիոնից ավելի կարիքավոր բնակիչ արևմտահայ գաղթականների ու որբերի հետ միասին պետությունից որպես նպաստ օրական ստանում էր կես ֆունտ հաց, որը ամսական պետգանձարանի վրա նստում էր ավելի քան 25 մլն. ռուբլի:

Հայաստանի առաջին հանրապետության կառավարության վարած քաղաքականության սոցիալական ուղղվածության մասին է վկայում նաև այն փաստը, որ երկրի թիվ մեկ պաշտոնատար անձի՝ վարչապետի աշխատավարձը (1919 թ. հունվարին՝ 1300 ռուբլի) Հայաստանում սահմանված նվազագույն աշխատավարձին (200 ռուբլի) գերազանցում էր ընդամենը 5,5 անգամ: Սա մի ցուցանիշ է, որը համեմատելի չէ մեր ժամանակների առավելագույն և նվազագույն աշխատավարձերի չափերի հետ, որոնց մկրատը հասնում է մի քանի տասնապատիկի:

դ) Դատական իշխանությունը

Պետական իշխանության կայացման գործում կարևոր էր նաև **դատական իշխանության** ձևավորումը: Յուրաքանչյուր պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով և առաջին հերթին երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Սկզբնական փուլում ժամանակավորապես, որոշ փոփոխություններով պահպանվեցին Ռուսական կայսրության օրենքները՝ «Հավաք օրինաց»-ը, հին դատահիրավական համակարգը: Հետագայում աստիճանաբար սկսեցին արմատավորվել հայ ազգային-պետական ոգուն բնորոշ օրենքներ: 1918 թ. դեկտեմբերի 6-ին հաստատվեց արդարադատության նախարար Սամսոն Հարությունյանի (ՀԺԿ) կազմած «Դատական հիմնարկությունների մասին» օրինագիծը: Դատահիրավական համակարգում մտցվեց եռաստիճան՝ **օկրուգային** կամ **շրջանային** դատարան, **դատական** կամ **դատաստանական** պալատ և **Սենատ** դատական համակարգ: Սենատը դատական բարձրագույն ատյանն էր, որի օղակներից էր դատախազությունն իր բաժիններով: Դատական հսկողություն էր իրականացվում նաև դատական պալատում և շրջանային դատարաններում: Բոլոր շրջաններում (գավառներում) գործում էին նաև ստորին կամ հաշտարար դատարաններ, որոնք նմանվում էին մի տեսակ ընկերական դատարանների և իրավասու էին լսել միայն փոքր կարևորության հայցեր՝ առավելագույնը մինչև վեց ամսվա բանտարկության կամ 500 ռուբլու տուգանքի պատժաչափով: 1919 թ. գարնանից վերացվեցին հաշտարար դատարանները: Զինվորականների գործերով զբաղվում էր զինվորական դատարանը:

Այս դատարաններից զատ՝ ժամանակի ընթացքում ստեղծվեցին նաև այլ դատարաններ՝ արտակարգ և ռազմադաշտային, որոնք, սակայն, հիմնվում էին հանգամանքների ստիպողական թելադրանքով և ունեին ժամանակավոր բնույթ:
Հանրապետության արդարադատության մարմինները ենթարկվում էին միայն օրենքին և պատասխանատու էին միայն օրենքի առջև:
Դատական ատյանների բարձր պաշտոնյաներին, նախարարների խորհրդի առաջարկությամբ, ընտրում էր խորհրդարանը, ինչը դարձյալ փաստում է խորհրդարանի բարձրագույն իշխանություն լինելու հանգամանքը: Ավելին, խորհրդարանի իրավասության մեջ էր մտնում բանտարկյալներին ներում շնորհելը կամ նրանց պատիժը մեղմացնելը և այլն:
Հատկանշական է, որ գրեթե համանման եռաստիճան (ընդհանուր իրավասության, վերաքննիչ և վճռաբեկ) դատական համակարգ է գործում ներկայիս ՀՀ-ում: Հանրապետության դատական համակարգի ժողովրդավարացման դրսևորում էր 1919 թ. **երդվյալ ատենակալների ինստիտուտի** հիմնումը: 1919 թ. ապրիլին Երևանում հիմնվեց Հայաստանի իրավաբանական ընկերությունը: Դատավարությունը և հիմարկ-ձեռարկությունների գործավարությունը տարվում էին պետական լեզվով՝ հայերեն:
Առաջին հանրապետությունում ժամանակի սղության ու քաղաքական հանգամանքների պատճառով հնարավոր չեղավ ընդունել ՀՀ սահմանադրություն, ինչը դժվարացնում էր դատահիրավական համակարգի վրա սահմանադրորեն կանոնակարգված համապատասխան հսկողություն իրականացնել: Բանն այն է, որ հայ հասարակական-քաղաքական ու կառավարական շրջանակները սպասում էին Հայաստանի սահմանների ամբողջացմանը, 1919 թ. սկզբներին Փարիզում բացված խաղաղության կոնֆերանսում Հայկական հարցի արդարացի լուծմանը և դրա արդյունքում Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծմանը, որից հետո միայն կընդունվեր Միացյալ Հայաստանի սահմանադրությունը:

ե) Տեղական իշխանության մարմինները (ՏԻՄ)

Իշխանության համակարգում իրենց ուրույն տեղն ունեին տեղական իշխանության՝ գավառային, քաղաքային և համայնքային մարմինները: Ինչպես արդեն գիտենք, 1918 թ. հունիսի 4-ին Թուրքիայի հետ Բաթումում հաշտություն կնքելուց հետո բոլոր առումներով Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր չափազանց ծանր դրության մեջ. ընդամենը 12 հազ. քառ. կմ տարածք, թուրք-թաթարական շրջափակում, հարյուր հազարավոր գաղթականներ և այլն: Սակայն Աշխարհամարտի ավարտից հետո, երբ պատերազմում պարտված Գերմանիան և Թուրքիան հարկադրված իրենց զորքերը դուրս բերեցին Անդրկովկասից, ՀՀ սահմանները սկսեցին ընդարձակվել՝ իրենց մեջ ներառելով Լոռի-Փամբակը, Ալեքսանդրապոլի գավառը, Էջմիածնի գավառի մնացած մասը, Սուրմալուն, Շարուրը, Նախիջևանը, Կարսի նահանգը և այլն:

1919 թ. գարնանը հանրապետության գավառների թիվը անցնում էր մեկ տասնյակից, քաղաքների թիվը՝ նույնպես: Սոցիալական կազմի տեսակետից հանրապետության բնակչության 85 տոկոսը կազմում էր գյուղացիությունը: Ավելի ուշ՝ 1920 թ. մայիսին, հանրապետության տարածքը վարչական տեսակետից բաժանվեց չորս նահանգների՝ Արարատյան, Շիրակի, Վանանդի և Սյունիքի: Այդ ժամանակ ՀՀ առավելագույն տարածքը հասավ շուրջ 70 հազ. քառ. կմ-ի՝ 2 մլն բնակչությամբ: Գործնականում ՀՀ սահմանները ձգվում էին Արցախից մինչև Օլթիի ածխահանքերը:

1919 թ. մայիսից կառավարության նախաձեռնությամբ մշակվեց և գործողության մեջ դրվեց **Տեղական ինքնակառավարման մարմինների** (**ՏԻՄ**-երի) մասին օրենքը: ՀՀ տեղական ինքնակառավարման մարմինները համարվում էին ռուսական զեմստվոների հայաստանյան նմանակը: Խորհրդարանում գործում էր **Ինքնավարությունների** մշտական հանձնաժողով, որը փորձում էր ՏԻՄ-երի գործունեության համար ապահովել համապատասխան իրավաօրենսդրական դաշտ: ՏԻՄ-երը՝ որպես ժողովրդավարական ընտրովի կառույց, նրա խորհրդի ու վարչության գործառույթների մեջ էին մտնում տեղական նշանակության քաղաքային ու գավառային խնդիրների՝ հողահատկացումների, բնակարանային, ֆինանսական (ելևմտի),

կրթության, բժշկության, սանմաքրման, բնակավայրերի բարեկարգման, վիճակագրության, տուրքերի գանձման և այլ ոլորտներ: Փորձեր արվեցին տարանջատել կենտրոնական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների իրավասությունները, սահմանները և փոխհարաբերությունների շրջանակները: Օրինակ, փորձեր կատարվեցին ՆԳՆ մի շարք գործառույթներ, մասնավորապես, միլիցիան հանձնել ՏԻՄ-երի ենթակայության և այլն:
Հատկանշական է, որ տեղական ինքնակառավարման՝ գավառային, քաղաքային, համայնքային մարմինները ընտրովի էին: Դրանք խորհրդարանի ընտրությունների նման ձևավորվում էին բազմակուսակցական (համամասնական) սկզբունքով անցկացված ընտրությունների միջոցով: Տվյալներ կան, որ ընտրությունների արդյունքով, ՀՅԴ-ից զատ, բավականաչափ իրավասու տեղեր են զբաղեցրել և այդ մարմինների աշխատանքներում ընդգրկված են եղել նաև այլ կուսակցություններ՝ ՀԺԿ, էսէռ, Սոց.-դեմ. մենշևիկ և նույնիսկ բոլշևիկ, անկուսակցականներ և այլն:
Վերակառուցվեցին քաղաքային ինքնավարությունները: 1920 թ. հունվարին Երևանի քաղաքագլուխ **Մկրտիչ Մուսինյանի** նախաձեռնությամբ հիմնվեց ՀՀ քաղաքների միություն՝ իրար հետ համագործակցելու և փորձի փոխանակման նպատակով: ՏԻՄ-եր են ստեղծվել և գործել ՀՀ վարչական տարածքի մեծ մասում՝ 9 քաղաքում և 6 գավառում՝ Երևանի, էջմիածնի, Իջևանի և այլն: Մյուսներում ռազմաքաղաքական, էթնիկ, սոցիալական և այլ խնդիրների պատճառներով հնարավոր չեղավ արմատավորելու կամ այն ավարտին հասցնելու:
Այսպիսով, մեկ-երկու տարում հայաստանյան շատ քաղաքներում և շրջաններում ժողովրդավարական այդ կառույցի՝ տեղական ինքնակառավարման արմատավորումը ինքնին վկայում է, որ Հայաստանի իշխանությունները արել են հնարավորինը, այն ժամանակների չափանիշներով կազմակերպված պետության կայացման ուղղությամբ, որի փորձն ու դասերը ուսանելի կարող են լինել մերօրյա Երրորդ հանրապետության ՏԻՄ-երի վերջնական կայացման համար:

զ) Ազգային բանակի ստեղծումը:

Հայոց անկախ պետականության կայացման ամենազորեղ կռվաններից մեկը սեփական ազգային բանակի ստեղծումն էր: Պատմության փորձը սովորեցնում է, որ այն ազգն է անվտանգ, իսկ պետությունը՝ կենսունակ, որն ունի կարգապահ ու մարտունակ բանակ: Հայկական բանակի դերը առավել ևս կարևորվում էր, եթե նկատի ենք առնում նրա աշխարհաքաղաքական դիրքն ու պայմանները: Դա այդպիսին էր այն ժամանակ և մնում է նույնը 100 տարի անց, այսինքն՝ մեր ժամանակներում:
Բաթումի պայմանագրից հետո Թուրքիայի պահանջով Հայաստանը կարող էր ունենալ ընդամենը մեկ դիվիզիա: Այդ իսկ պատճառով 1918 թ. ամռանը Հայկական առանձին բանակային կորպուսը վերակազմավորվեց մեկ հետևակային դիվիզիայի, որի հրամանատար նշանակվեց գեներալ **Մովսես Սիլիկյանը** (1862-1937): Դիվիզիայի զորայինների ընդհանուր թիվը հասնում էր 16 հազարի:
Հանրապետության առաջին ռազմական նախարարն էր գեներալ Հովհաննես Հախվերդյանը, իսկ հայոց բանակի գլխավոր հրամանատարը (սպարապետ)՝ գեներալ-գնդապետ **Թովմաս Նազարբեկյանը** (1855-1931):
Կազմալուծվեցին ՀՀ տարածքում գտնվող կամավոր հայդուկային խմբերը: Մասնավորապես խոսքը վերաբերում է հայդուկապետ Անդրանիկի գլխավորած հավաքական զորաջոկատին: Գեներալ Անդրանիկը որոշակի տարաձայնություններ ուներ կառավարության հետ, ուստի 1919 թ. գարնանը նա իր սուրը և մյուս զենքերը հանձնեց կաթողիկոսին և մեկընդմիշտ հեռացավ Հայաստանից: Ազգային հերոս Անդրանիկը արտասահմանում շարունակեց իր ազգանվեր գործունեությունը: Նա մահացավ 1927 թ. ԱՄՆ-ի Ֆրեզնո քաղաքում, թաղվեց Փարիզի Պեր-Լաշեզ գերեզմանատանը: Երախտագետ հայ ժողովուրդը ի կատար ածեց Անդրանիկի կտակը: 2000 թ. նրա աճյունը տեղափոխվեց հայրենիք և հանդիսավորությամբ թաղվեց Երևանի Եռաբլուր զինվորական պանթեոնում, ուր հանգչում են Հայաստանի ու արցախյան հերոսամարտի մյուս նահատակ հերոսները:
1919 թ. հունվարից, երբ թուքական զորքն արդեն հեռացել էր Անդրկովկասից, և ավարտվել էր նաև հայ-վրացական պատերազմը,

կատարվեց բանակի մասնակի զորացրում: Դրա փոխարեն հայտարարվեց 20-25 տարեկան զինապարտ քաղաքացիների զորակոչ: 1919 թ. սեպտեմբերին ընդունված քաղաքացիների զորակոչի մասին օրենքը տարածվում էր նաև արևմտահայերի վրա: ՀՀ զինված ուժերը աստիճանաբար համալրվում էին թե՛ զորքով և թե՛ զինտեխնիկայով ու նյութատեխնիկական միջոցներով: Հայոց բանակը համարվում էր մարտունակ: Արդեն 1920 թ. հունվարին հանրապետության զորքի թիվը հասնում էր 25 հազարի, իսկ աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի շրջանում շուրջ 40 հազարի, այդ թվում՝ 33 գեներալ և 2000-ից ավելի սպա՝ չհաշված տաղանդաշատ ու փորձառու նախկին հայդուկապետներն ու խմբապետները:

ՀՀ անվտանգության ապահովման նպատակով երկրի ռազմաքաղաքական համակարգի կարևոր կառույցներից մեկը հանդիսացավ հատուկ ծառայությունների՝ հետախուզության և հակահետախուզության կազմակերպումը, առանց որի անհնարին է պատկերացնել անկախ պետականությունը: Քայլեր արվեցին ձևավորել ու համակարգել հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղությունները՝ ռազմական, քաղաքական-դիվանագիտական, տնտեսական, գիտատեխնիկական և այլ ոլորտներում: ՀՀ անվտանգությանը աջակցություն էր ցուցաբերվում նաև կուսակցական խողովակներով:

Հայաստանի երկրորդ խորհրդարանում գործում էր «Զինվորական» հանձնաժողովը, որը նախագահում էր Ռուբեն Տեր-Մինասյանը: Բնականաբար հանձնաժողովի իրավաօրենսդրական աշխատանքների առանցքը բանակի կայացման ու ամրապնդման հարցերն էին: Խորհրդարանն ու կառավարությունը միջոց ու ջանքեր չէին խնայում առաջին հերթին ամրապնդելու ու զորացնելու հայոց բանակը: Դա երևում է կառավարության ու խորհրդարանի կատարած ֆինանսական հատկացումներից: Վարչապետ Ալ. Խատիսյանի վկայությամբ՝ հանրապետության պետբյուջեի մեծ մասը ծախսվում էր բանակի ու պաշտպանության նպատակների վրա: Երբեմն հանգամանքների թելադրանքով զինվորական նախարարության անունով վարկեր էին բացվում առանց նախահաշիվների: Այսպես, օրինակ, 1919 թ. սեպտեմբերին զինվորական նախարարության անունով նախահաշվից դուրս բացվել է 11,7 մլն. ռուբլու վարկ ամերիկացիներից զորքի համար

կոշիկներ գնելու նպատակով: Անգլիացիներից 600 ջորի, 150 սայլ և զինվորական հանդերձանք գնելու համար հատկացվում է 12 մլն. ռուբլի: 1919 թ. աշնանը բանակի պարենավորման համար հատկացվում է 9,3 մլն. ռուբլի: Արդեն 1920 թ. գարնանը բանակի **համբարակային** կարիքների համար բացվեց 85,4 մլն. ռուբլու վարկ, մեկ ամիս անց՝ 35,6 մլն. ռուբլի, արտակարգ ծախսերի համար՝ 40 մլն. ռուբլի և այլն:

Ֆինանսական հատկացումներ էին կատարվում ոչ միայն բանակի կերակրման ու հանդերձավորման, այլև դրսից կախում չունենալու նպատակով, ռազմամթերքի սեփական արտադրության կազմակերպման ուղղությամբ: Այսպես՝ 1919 թ. աշնանը մարտական գնդակներ պատրաստելու և փամփուշտներ լցնելու արհեստանոց հիմնելու համար հատկացվեց 6 մլն. ռուբլի: Իսկ մեկ այլ օրենքով Ալեքսանդրապոլի հրանոթային արհեստանոցների կազմակերպման ու կահավորման համար հատկացվեց 2 մլն. 172 հազար ռուբլի և այլն:

Պետականության հիմնասյուներից մեկը համարվող ազգային բանակի համար կարևոր է նրա ապաքաղաքականացված լինելը: Հատկանշական է, որ Առաջին հանրապետության շրջանում իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները օրենքով ընտրություններին (խորհրդարանի, տեղական ինքնակառավարման մարմինների) մասնակցելու (ընտրել, ընտրվել) իրավունք չունեին: Առաջին հանրապետության բանակի ապակուսակցականացած լինելու մասին է վկայում նաև այն փաստը, որ վերը հիշատակված բարձրագույն հրամանատարական կազմի 33 գեներալներից գրեթե ոչ մեկը դաշնակցական չէր: Բացառություն էր, թերևս, միայն Դրոն, որն իր նախորդ կենսագրությամբ ավելի շատ հայդուկ էր, քան պրոֆեսիոնալ զինվորական:

Մարտունակ և որակյալ բանակ ունենալը իշխանությունները տեսնում էին ոչ միայն ուժեղ տնտեսություն ունենալու, այլև զինվորների բարոյական կայունության ու հայրենիքին նվիրվածության մեջ: Շատ կարևոր է բանակի ապաքաղաքական լինելը: Բանակը լիովին ապաքաղաքականացնելու և ապակուսակցականացնելու նպատակով առաջարկության կարգով ցանկալի **է**, որ ներկայումս իսկական զինվորական ծառայության մեջ գտնվողները չմասնակցեն խորհրդարանական և ինքնակառավարման մարմինների

ընտրություններին և դրանով հեռու մնան քաղաքական գործընթացներից: Այս կապակցությամբ այնքան էլ համոզիչ չէ այն փաստարկը, թե դրանով խախտվում է քաղաքացի զինվորականի սահմանադրական իրավունքը: Մեր համոզմամբ, հայոց ազգային բանակի զինվորականը այս բարդ ժամանակներում ու տարածաշրջանում ունի առանձնահատուկ առաքելություն՝ հեռու լինել քաղաքականությունից և առաջնորդվել միայն ազգ-հայրենիքին անմնացորդ ծառայելու գիտակցությամբ: Մենք գիտենք նաև, թե մեր ժամանակներում ինչպես են անցկացվում համապետական նշանակության ընտրությունները զորամասերի ընտրական տեղամասերում և ոչ միայն այդտեղ:
Բանակի քանակական ու բարոյական ամրակայման առումով կարևոր է արդարության և հավասարության սկզբունքով զորակոչի մասին օրենքի գործադրումը: Մեր ժամանակների համար շատ ուսանելի է, որ Առաջին հանրապետությունում հայոց բանակ երկամյա պարտադիր զինծառայության էին ենթարկվում զորակոչային տարիքի բոլոր տղա քաղաքացիները՝ առանց սոցիալական, կրթական և դիրքի խտրության, այդ թվում բոլոր պաշտոնատար անձանց զավակները: Իբրև օրինակ՝ տեղին է հիշել, որ Հայաստանի ազատության և անկախության համար մղված կռիվներում որպես հայկական բանակի զինվոր կռվեցին և զոհվեցին վարչապետներ Հ. Քաջազնունու երկու որդիները՝ Աշոտը և Արամը, Հ. Օհանջանյանի միակ որդին, Ալ. Խատիսյանի եղբայրը և այլոք:
Բանակում կարևոր խնդիրներից էին նաև կարգապահության ամրապնդումը, մարտական ոգու բարձրացումը, սեփական ուժերին ապավինելու գիտակցությունը, մայրենի լեզվի արմատավորումը և այլն: Այդ ուղղությամբ ևս զգալի աշխատանքներ կատարվեցին: Սակայն ժամանակի պակասը և արտաքին ու ներքին մի շարք աննպաստ հանգամանքներ հնարավորություն չտվեցին ավարտին հասցնել հայկական ազգային բանակի վերջնական ամրակայումը:

է) Դիվանագիտական կապերի հաստատումը

Պետականության կայացման ճանապարհին ՀՀ քաղաքական ու պետական այրերի առջև ծառացած առաջնահերթ խնդիրներից էր՝ հասնել այլ պետությունների հետ դիվանագիտական կապերի հաստատման և միջազգային ճանաչման: Որքան էլ զարմանալի է՝ ՀՀ առաջին ճանաչողը եղավ Թուրքիան, սակայն կողմերի միջև անմիջական հարաբերություններ չհաստատվեցին: Կարելի է ասել, որ ճանաչումը թելադրված էր Թուրքիայի անկայուն վիճակով և կրում էր ձևական բնույթ:
Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց ու ներկայացուցչություններ հիմնեց ինչպես իր անմիջական մյուս հարևանների՝ Վրաստանի, Պարսկաստանի ու Ադրբեջանի, այնպես էլ Անտանտի և Քառյակ դաշինքի մի շարք երկրների հետ: Ընդհանուր հաշվով՝ մեկ-երկու տարվա ընթացքում Հայաստանը դիվանագիտական կապեր հաստատեց աշխարհի շուրջ 40 պետությունների հետ: Դիվանագիտական ներկայացուցչություններ (դեսպանատներ) բացվեցին Թիֆլիսում, Թեհրանում, Փարիզում, Հռոմում, Վաշինգտոնում, Տոկիոյում, Կիևում, Կրասնոդարում և այլուր: 1920 թ. հունվարին Անտանտի պետությունների Գերագույն խորհուրդը փաստորեն (**de facto**) ճանաչեց Հայաստանի Հանրապետությունը: Հայաստանը պաշտոնապես ճանաչել են ԱՄՆ-ը, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան, Բելգիան, Նորվեգիան, Շվեդիան, Հոլանդիան, Իսպանիան, Պորտուգալիան, Սերբիան, Հունաստանը, Ռումինիան, Իրանը, Վրաստանը, Չինաստանը, Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումները և տասնյակ այլ պետություններ: Տարբեր երկրներում գործուն դիվանագիտական աշխատանք էին վարում Արմեն Գարոն, Տիգրան Բեկզադյանը, Գրիգոր Զամոյանը, Լևոն Եվանգուլյանը, Հովսեփ Արղությանը, Մարտիրոս Հարությունյանը, Միքայել Վարանդյանը, Դիանա Աբգարը և շատ ուրիշներ:
Հայաստանը պատրաստվում էր անդամակցելու այն ժամանակվա միջազգային ամենահեղինակավոր կազմակերպությանը՝ **Ազգերի լիգային**: Սակայն 1920 թ. վերջին Հայաստանի անկախության վերացման ու խորհրդայնացման հետևանքով այդ հարցը փակվեց:

Հայաստանի իշխանությունները ձգտում էին հանրապետության միջազգային ճանաչման միջոցով ոչ միայն Հայկական հարցի լուծման գործում միջազգային նպաստավոր քաղաքական մթնոլորտ ստեղծելու, այլև ակնկալվում էր դրսից ֆինանսատնտեսական օժանդակություն, որպեսզի դրանով մեղմվեր երկրի սոցիալ-տնտեսական ծանր կացությունը, նաև կարգավորվեին հարաբերությունները անմիջական հարևանների հետ:
Կառավարությունը մտադիր էր դրսից փոխառություններ ու վարկեր ստանալ: Հենց այդ նպատակով էր, որ 1920 թ. հունիսին նախկին վարչապետ Ալ. Խատիսյանը գործուղվեց արտասահման: Նախատեսվում էր կնքել 20 մլն. դոլարի «**Անկախության փոխառություն**»: Դրամահավաքի կազմակերպման գործում ՀՀ այդ ձեռնարկին մեծ աջակցություն ցուցաբերեցին գաղթաշխարհի առանց բացառության հասարակական-քաղաքական բոլոր կուսակցություններն ու կազմակերպությունները: Սակայն, ցավոք, հետագայում Հայաստանի խորհրդայնացման հետևանքով դրամահավաքի գործընթացը կասեցվեց:
Այսպիսով, դիվանագիտական կապեր հաստատելով՝ Հայաստանի կառավարությունը նպատակ էր հետապնդում հասնել հանրապետության համընդհանուր միջազգային ճանաչմանը, դրանով նպաստ բերել Հայկական հարցի լուծմանը, օտար պետությունների հետ իրականացնել առևտրատնտեսական հարաբերություններ, ստանալ հումանիտար օգնություն, մի խոսքով՝ հանրապետությունը դարձնել կենսունակ պետություն:

ը) Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները

1919 թ. ամռանը Հայաստանը արդեն կազմակերպված պետություն էր՝ նրան բնորոշ գրեթե բոլոր անկապտելի հատկանիշներով: Առհասարակ , անկախ պետականությունը անհնար է պատկերացնել առանց ազգային-պետական խորհրդանիշների: Առաջիններից մեկը 1918 թ. օգոստոսին Հայաստանի խորհուրդը **Եռագույնը** (կարմիր, կապույտ և ծիրանի գույներով) հռչակեց որպես հանրապետության ազգային պետական դրոշ: Դրոշի կարմիր գույնը խորհրդանշում էր ազատագրական պայքարում հայ ժողովրդի թափած արյունը,

կապույտը՝ Հայաստանի ջինջ երկինքը, իսկ ծիրանագույնը՝ աշխատանքը: Ի դեպ, եռագույնի վերաբերյալ, Նոր Նախիջևանից Ալ. Խատիսյանին ուղղված նամակով և դրոշի մի քանի ջրաներկ պատկերներով, իր գոհունակությունն ու նկատառումներն է արտահայտել մեծանուն գեղանկարիչ **Մարտիրոս Սարյանը**:
Պետական օրհներգ (հիմն) ճանաչվեց ազատության մեծ երգիչ **Մ. Նալբանդյանի** խոսքերի հիման վրա գրված «Մեր հայրենիք» հայրենասիրական երգը: 1920 թ. հուլիսին կառավարությունը հաստատեց զինանշանը (գերբը), որի հեղինակներն էին մեծանուն ճարտարապետ **Ալեքսանդր Թամանյանը** և նկարիչ **Հակոբ Կոջոյանը**: Ի դեպ, զինանշանի վրա պատկերված առյուծը և արծիվը մարմնավորում էին երկու՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանների գաղափարը: Դա նշանակում է, որ հայ ժողովուրդը նպատակ ունի հասնելու երկու Հայաստանների միացմանը՝ Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստանի ստեղծմանը: Հատկանշական է, որ մերօրյա Հայաստանի Հանրապետությունը ընդունել է Առաջին հանրապետության բոլոր երեք խորհրդանիշները՝ դրոշը, օրհներգը և զինանշանը, որն ինքնին ընդգծում է Հայաստանի երկու անկախ հանրապետությունների անմիջական ժառանգորդական կապը:
Հատուկ օրենքով սահմանվեցին ՀՀ պետական և ազգային-կրոնական տոները՝ Նոր տարվա, Ծննդյան և Մկրտության, Մեռելոցի, Վարդանանց, Տյառնընդառաջի, Զատկի, Մայիսի 1-ի, Մայիսի 28-ի, Օգոստոսի 1-ի, Ս. Աստվածածնի և այլն: Սահմանվեցին ոչ աշխատանքային (հանգստյան) օրերը: Այլազգիների համար պաշտոնապես գրանցվեցին և թույլատրվեցին նրանց կրոնական և այլաբնույթ տոները:
Կարգավորվեցին պետության և եկեղեցու փոխհարաբերությունները: Հռչակվեցին բոլոր կրոնների (խղճի) կատարյալ ազատություն և հավասարություն, որը դարձյալ վկայում է ՀՀ ժողովրդավարական բնույթի մասին:
Հայոց պետականության անվիճելի արժեքներից մեկը դարձավ հայերենը պետական-պաշտոնական լեզու ճանաչելը և գործողության մեջ դնելը: Մայրենին ստացավ միակ պետական լեզվի կարգավիճակ: Ցարական ժամանակների նախկին պետական դպրոցները ազգայնացվեցին ու հայաշունչ դարձան:

Սահմանվեցին պետական շքանշաններ: Հայոց անկախ պետականության կայացման գործում կարևոր երևույթ էր ազգային դրամի (արժույթի) ստեղծումը, որը տպվեց Լոնդոնում և 1920 թ. փոխադրվեց Հայաստան: Շրջանառության մեջ էին հայկական չեկերը (կուպյուր), հայկական դրոշմանիշները (մարկա), հիմնվեց հանրապետության պետական բանկը և այլն:
Այսպիսով, դարերի ընդմիջումից հետո, հայ ժողովրդի հերոսական մաքառումների արդյունքում, 1918 թ. մայիսի 28-ին ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Դա օրինաչափ պատմական անհրաժեշտություն էր:
Հայաստանի անկախության հռչակումը նոր դարաշրջան բացեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ: Դրանով փաստորեն սկսվեց հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը:
Անկախ պետականության վերականգնումը պայմաններ ստեղծեց ազգային վերածնության ու զարգացման համար:
Կարճ ժամանակամիջոցում Հայաստանը դարձավ կազմակերպված պետություն՝ բնորոշ գրեթե բոլոր հատկանիշներով՝ իշխանության մարմիններով, տնտեսական-քաղաքական համակարգով, ազգային բանակով, դիվանագիտական կապերով, պետականության խորհրդանիշներով և այլն:
Այդ ամենով հանդերձ՝ Հայաստանի Հանրապետությունը դարձավ աշխարհացրիվ հայության միակ հայրենիքը, նրա հասարակական-քաղաքական և հոգևոր-մշակութային կյանքի միավորման կենտրոնը:

Գլ.3.- Հանրապետության սոցիալ-տնտեսական և կրթամշակութային կյանքը

3.1.«Անձև քաոս և ավերակների կույտ»

Հետաքրքիր է պարզաբանել, թե ինչպիսին էր նորանկախ հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը և ինչպիսի դժվարություններ է հաղթահարել իր կայացման դժվարին ճանապարհին: Հիրավի, անկախության հռչակման առաջին իսկ օրերից ՀՀ հայտնվել էր սոցիալ-տնտեսական աննկարագրելի ծանր դրության մեջ: Առաջին աշխարհամարտի և թուրքական արշավանքի հետևանքով ավերված ու քայքայված հանրապետության փոքր տարածքում պատսպարվում էին 300 հազարից ավելի բնավեր ու սովահար գաղթականներ: Մոլեգնում էին սովն ու համաճարակային հիվանդությունները, գլուխ էին բարձրացրել անիշխանական երևույթները և այլն: Ահա այս աղետալի վիճակը նկատի ուներ առաջին վարչապետ Հովհ. Քաջազնունին 1918 թ. օգոստոսի 3-ին Հայաստանի խորհրդում (խորհրդարանում) ներկայացրած իր անդրանիկ կառավարության ծրագրում (հայտագրում), երբ երկրի կացությունը բնութագրեց՝ «**անձև քաոս և ավերակների կույտ**»: Համեմատական առումով կարելի է փաստել, որ Հայաստանի ներկայիս հանրապետությունն իր կայացման ճանապարհին գտնվել է տնտեսական ու քաղաքական առումներով շատ ավելի նպաստավոր պայմաններում, քան Առաջին հանրապետությունը, որովհետև Երրորդ հանրապետությունը, հանձին Խորհրդային Հայաստանի, ժառանգություն էր ստացել սոցիալ-տնտեսական առումներով անհամեմատ բարվոք երկիր:

Իրոք որ, ծայրահեղ դժվարին պայմաններում ծնվեց Հայաստանի առաջին հանրապետությունը՝ 1915 թ. Մեծ եղեռն, երկարատև պատերազմ, հարյուրհազարավոր գաղթականություն, տնտեսական քայքայվածություն, ավերվածություն, սով, համաճարակ, չորս կողմից թուրք-թաթարական շրջափակում և այլն:

Ցարական Ռուսաստանի մի հետամնաց ծայրագավառ համարվող Հայաստանի տնտեսությունը թույլ էր զարգացած: Աշխարհամարտի և թուրքական ներխուժման հետևանքով առանց այն էլ թույլ

տնտեսությունը կազմալուծվել էր: Որպեսզի պարզ լինի, թե ինչպիսի վնասներ էր պատճառել թուրքական 1918 թ. արշավանքը, բավական է հիշատակել մի երկու փաստ: Հաշվումները ցույց են տվել, որ թուրքական զորքը և թաթարական հրոսակախմբերը Անդրկովկասում ոչնչացրել, թալանել ու ավերել են 329 հայկական գյուղ, որի անմիջական նյութական վնասը կազմել է 460 մլն. ռուբլի (1914 թ. համադրելի գներով):
Հայաստանում վիճակը ավելի ծանրացավ նաև նրանով, որ 1918 թ. աշնանը, երբ թուրքական զորքը հետ քաշվելով գրավված հայկական մի շարք շրջաններից, իր հետ տարավ կամ ոչնչացրեց տեղերում հավաքված հացը և մյուս պարենամթերքները, որպեսզի կոտորածներից փրկված հայությունն այժմ էլ սովից ոչնչանա: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Լևոն Սարգսյանի հաղորդած տվյալներով թուրքերի հետ քաշվելուց հետո միայն Ալեքսանդրապոլի գավառին հասցված նյութական վնասները հասնում էր 2 մլրդ. ռուբլու (1918 թ. համադրելի գներով): Մյուս կողմից՝ թուրք-թաթարական շրջափակումների հետևանքով կտրվել էր արտաքին կապը, չկային ապրանքների կանոնավոր արտահանում և ներմուծում: Վիճակն ավելի բարդացրեց 1918 թ. դեկտեմբերի հայ-վրացական կարճատև պատերազմը:
Պատերազմների և այլ պատճառներով Հայաստանի ավերված տնտեսությունը վերականգնելու համար ֆինանսների նախարար Արտաշես Էնֆիաջյանի (ՀԺԿ) մոտավոր հաշվումներով կպահանջվեր 25 տարի: Բնականաբար անխուսափելի էին սովը և դրան ուղեկից համաճարակային հիվանդությունները՝ տիֆը և խոլերան: Երևանում կային բծավոր տիֆով 21000 հիվանդ: Այդ համաճարակի դեմ պայքարելու նպատակով Հայաստանի խորհուրդն օրենք ընդունեց խնամատարության նախարարությանը 1 մլն. ռուբլի բաց թողնելի մասին: Բայց դա կաթիլ էր ծովում: Ընդամենը մի քանի ամսվա ընթացքում սովը, ցուրտը և համաճարակային հիվանդությունները խլեցին շուրջ 180 հազար մարդու կյանք, որոնց մեծ մասը գաղթականներ էին:
Բացի սովից ու համաճարակներից՝ այն ժամանակ գլուխ բարձրացրեց «մաուզերիզմը», անհիշխանական այլ դրսևորումներ: Եվ այդ զարհուրելի վիճակը շարունակվեց մինչև 1919 թ. գարունը, երբ Հայաստան հասավ ամերիկյան ալյուրը: Հայաստանի հիմնական օգնողը եղավ ԱՄՆ-ը:

Կարճ ժամանակամիջոցում ծովով Բաթում և այնտեղից էլ երկաթուղով Հայաստան հասցվեց 1,3 մլն. փութ (569 վագով) ալյուր, 257 հազար փութ ցորեն: Ամերիկյան ալյուրը, իրոք, մեղմեց սովը: Հավելենք նաև, որ ամերիկյան նպաստամատույց կոմիտեն (Ամերկոմը) իրականացնում էր 15 հազար որբերի խնամքը, որոնց վրա ծախսվեց 90 մլն. ռուբլի: Հայաստան բերվեցին նաև մեծ քանակությամբ հագուստ, սպիտակեղեն, դեղորայք, խտացած կաթ, շաքար, կակաո և այլ մթերքներ: Այս կապակցությամբ պետք է շարունակ հիշել, որ ինչպիսին էլ եղած լինի ԱՄՆ-ի քաղաքական դերը Հայկական հարցում, այնուամենայնիվ, երախտապարտ հայ ժողովուրդը երբեք չպետք է մոռանա ամերիկյան հայափրկիչ մարդասիրական օգնությունը:
Ժողովրդի ֆիզիկական գոյությունը մի կերպ պահպանելու համար կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցներ: Դրսից օգնություն ստանալու նպատակով Եվրոպա և Ամերիկա մեկնեց Հովհ. Քաջազնունին, որին վարչապետի պաշտոնում փոխարինեց **Ալեքսանդր Խատիսյանը** (1876-1945): Մեծ տերությունների ներկայացուցիչներից օգնություն ստանալու նպատակով Թիֆլիս մեկնեց խորհրդարանի նախագահ Ավ. Սահակյանը: Միաժամանակ խորհրդարանը որոշում ընդունեց պարենավորման նպատակով դիմել Փարիզի միջազգային պարենավորման կոմիտեին: Կենսականորեն անհրաժեշտ մթերքների՝ հացի, բամբակի, շաքարի, աղի, գետնախնձորի և այլնի վաճառքի նկատմամբ սահմանվեց պետական մենաշնորհ: Մի շարք դեպքերում պարզապես բռնագրավում էին ունևոր մարդկանց ունեցվածքը, որպեսզի բաժանեին սովյալներին ու անտուններին: Այնուամենայնիվ, կամաց-կամաց կյանքը սկսեց բարելավվել:

2.Գաղթականության վիճակը և ներգաղթի խնդիրը

Հանրապետության ներքին կյանքի բարդ խնդիրներից էր գաղթականության և որբերի հարցը: Ինչպես ասվեց, Արևելյան Հայաստանում ապաստանել էին Մեծ եղեռնից մազապուրծ մոտ 300 հազար արևմտահայեր, մի 200 հազար էլ հայտնվել էին Վրաստանում և Հյուսիսային Կովկասում: Գաղթականության մի հոսք էլ առաջացավ Ադրբեջանի Հանրապետության տարածքից: Ենթարկվելով թուրք-

թաթարական բռնությունների ու կոտորածների՝ տասնյակ հազարավոր հայեր ներգաղթեցին Հայաստան:
Գաղթականության խնդրով հատուկ զբաղվում էին նախարարների խորհրդի խնամատարության և ներքին գործերի նախարարությունները, խորհրդարանում գործում էր «Գաղթականության» հարցերի մշտական հանձնաժողովը, ն. գ. նախարարությունում ևս հիմնվել էր ներգաղթի հանձնաժողով: Կառավարությունն ու խորհրդարանը պարբերաբար լսել են գաղթականության վիճակի, տեղաբաշխման, պարենավորման, խնամքի , աշխատանքի և այլ հարցեր: Ստացվում էր, որ կառավարությունը պետք է դժնդակ պայմաններում հայտնված գաղթականությանը կերակրեր, պատսպարեր, հող և աշխատանք տար: Գաղթական յուրաքանչյուր շնչին օրական տրվում էր կես ֆունտ (200 գրամ) ալյուր, նրա դրամական նպաստը օրական կազմում 60 կոպ.: Գաղթականության մեջ առավել մեծ հոգածություն էին պահանջում որբ երեխաները: Պաշտոնական տվյալներով ՀՀ տարածքում կային 40 հազարից ավելի անտեր ու թափառական որբեր: Նրանց խնամքը իրականացնելու համար հիմնվեցին մի քանի տասնյակ որբանոցներ, որոնցից ամենախոշորը Ալեքսանդրապոլում էր:
Պետությունն իր սուղ միջոցներով ի վիճակի չէր հոգալու որբերի խնամքի ծախսերը: Այդ պատճառով որբերին ու գաղթականությանը օգնության ձեռք էին մեկնում արտասահմանյան բարեգործական կազմակերպությունները: Դրանցից առավել աչքի ընկավ Ամերիկյան օգնության կոմիտեն (ԱՕԿ): 1919 թ. մայիսից Ամերկոմը հիմնականում իր վրա վերցրեց որբ երեխաների խնամակալության գործը: Միջոցներ ձեռնարկվեցին որբերին արհեստներ սովորեցնելու, իսկ հասակավոր գաղթականներին՝ աշխատանքով ապահովելու:
Առավել ծանր ու անորոշ էր Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ գաղթականության վիճակը: Բաքվի աղետյալ հայերին օգնելու նպատակով 1918 թ. հոկտեմբերին խորհրդարանը որոշում կայացրեց հատկացնել 500 հազար ռուբլի: Վրաստանի սահմաններում գտնվող հայ գաղթականությանը օգնություն ցույց տալու համար Վիրահայ Ազգային խորհրդին է փոխանցվում 5 մլն. ռուբլի միանվագ նպաստ, իսկ Իրանում գտնվող հայ գաղթականներին օգնելու համար Հայաստանի արտգործնախարարության հաշվեհամարով բացվում է 300 հազար ռուբլի և այլն:

Առանձնապես ծանր ու վտանգավոր էր Ադրբեջանի իշխանությունների տիրապետության տակ հայտնված հայ փախստականների վիճակը: Անհրաժեշտ է նրանց ներգաղթեցնել և վերաբնակեցնել Հայաստանում: Միայն Նուխիի, Արեշի, Շամախու, Գյոկչայի և Ղուբայի գավառներից 20 հազար հայերի հանրապետություն տեղափոխելու ծախսերի համար 1919 թ. ամռանը բացվեց 9,7 մլն. ռուբլի վարկ: Կառավարության, հայրենակցական միությունների և անձամբ գաղթականների թափած ջանքերի շնորհիվ Հայաստան ներգաղթեցին ավելի քան 16 հազար մարդ: Իրանահայ գաղթականության վերաբնակեցման, Միջագետքի ու Բաքվի գաղթականությանն օգնելու համար նախարարների խորհուրդը հատկացրեց 10,5 մլն. ռուբլի: Կառավարությունը ծրագրել էր Անդրկովկասյան հարևան երկու հանրապետություններից դեպի Հայաստան 80 հազար հայ գաղթական ընդունել և տեղավորել: Ներգաղթի խնդիրներով զբաղվող, արևմտահայ գործիչ, Արմենակ Մաքսապետյանի ներկայացրած ոչ լրիվ տվյալներով 1919 թ. գարնանը Կովկասում կային 222 հազար գաղթական, Բաղդադ-Բակուբեում՝ 15 հազար, Հալեպում՝ 80 հազար, Եգիպտոսում 10 հազար և այլն: Կովկասահայ մամուլում տեղեկություն կա, որ 1919 թ. ամռանը արևմտահայ գավառներում և Կիլիկիայում եղել է 360 հազար հայ: Պետք էր ներգաղթեցնել ոչ միայն Կովկասում ապաստանած արևմտահայերին, այլև Միջագետքի ու այլ վայրերի գաղթականությանը: Հանրապետության ղեկավարության քաղաքական առաջիկա ծրագրերում էր դրված արևմտահայության ներգաղթի կազմակերպումը դեպի Երկիր՝ Արևմտյան Հայաստան: Կառավարությունը քաջ գիտակցում էր, որ առանց զանգվածային ներգաղթի Միացյալ Հայաստանի գաղափարը կարող է վերածվել մեռած տառի: Բացի այդ, նկատի էր առնվում այն հանգամանքը, որ արևմտահայերի ներգաղթը դեպի Երկիր կթեթևացներ կովկասահայ ժողովրդի վիճակը: Բոլոր գործիչները միակամ գտնում էին, որ արևմտահայը պետք է վերադառնա Երկիր ու տեր դառնա իր երկրին ու ունեցվածքին: Խնդիր էր դրված՝ ներգաղթեցնել ոչ միայն Կովկասում ապաստանած արևմտահայերին, այլև Միջագետքի և այլ վայրերում հայտնված գաղթականությանը: 1920 թ. ապրիլին կառավարությունը հատկացնում է 5 մլն. ռուբլի Բակուբեում (Միջագետք) գտնվող 18 հազար եղեռն

վերապրած գաղթականներին և մահմեդականների մոտ գտնվող հայ գերիներին ազատելու համար:
1919 թ. հուլիսի 17-ին Փարիզի խաղաղության խորհրդաժողովը հրաման է արձակում՝ հայ գաղթականներին հնարավորություն տալ վերաբնակվելու իրենց նախկին բնակության վայրերը: Հայաստանի կառավարությունը որոշ քայլեր ձեռնարկեց արևմտահայության ներգաղթը նաև դեպի Երկիր՝ իրենց ծննդավայրերը կազմակերպելու ուղղությամբ: Դեպի Երկիր ներգաղթի կազմակերպման գործում կարևորվում էր նաև կուսակցական և հայրենակցական միությունների դերը: Միացյալ և Անկախ Հայաստանի ակտը գործնական հողի վրա դնելու էական քայլ կլիներ արևմտահայության ներգաղթի կազմակերպումը: Սակայն այդ ծրագրի իրականացումը կապված էր մշտական վտանգների ու մեծ ծախսերի հետ, ուստի և շատ դանդաղ էր ընթանում: Առանց բավականաչափ քաղաքական և տնտեսական պայմանների՝ հնարավոր չէր ներգաղթի արագացումը: Նախնական հաշվարկներով միայն Կովկասից դեպի երկիր պետք է ներգաղթեցվեին 300 հազար մարդ: Այդ ծրագրի իրագործման համար կպահանջվեր 3 մլրդ. ռուբլի:
Բայց մինչ զանգվածային ներգաղթի համար անհրաժեշտ քաղաքական ու տնտեսական հող կստեղծվեր, ՀՀ կառավարությունը ջանում էր իր հնարավորությունների սահմաններում հայ գաղթականության համար ապահովել քիչ թե շատ բավարար կյանքի, աշխատանքի ու կենցաղի պայմաններ: ՀՀ կառավարությունը 1919 թ. կեսերից (հանձին մայիսի 28-ի ակտի) արևմտահայ գաղթականությանը դիտում էր որպես Միացյալ Հայաստանի քաղաքացիներ, և նրանք ևս հանրապետության մյուս քաղաքացիների նման, բնականաբար, ունեին նույն իրավունքներն ու պարտականությունները՝ ընտրելու, ընտրվելու, աշխատանքի, սեփականության, զորակոչի և այլն: Արևմտահայերի իրավաքաղաքացիական հարցերի կարգավորման նպատակով արդարադատության նախարարության դիվանին կից գործում էր հատուկ իրավագիտական բաժին:
Հայոց Եղեռնի միջազգային ճանաչման և դրա գլխավոր պատասխանատու Թուքիայի կողմից նյութական ու տարածքային փոխհատուցման հետ կապված Հայաստանի կառավարությունն ու խորհրդարանը ընդունեցին մի շարք օրենքներ և որոշումներ՝

իթթիհատական կառավարության անդամներին պատասխանատվության կանչելու, տարագրված տաճկահայերին ներգաղթեցնելու, հայրենիքում տնտեսության վերականգնման ծախսերը Թուրքիայի վրա դնելու և այլն: Հայաստանի կառավարությունը և Փարիզ մեկնած պատվիրակությունը 1919-1920 թթ. ընթացքում ընդհանուր թվով 36 հայց-դիմում են ուղղել Փարիզի խաղաղության խորհրդաժողովին արևմտահայերի ներգաղթի վերաբերյալ: Արևմտահայերի տեղահանության, կոտորածների, թալանի և այլնի հետևանքով կրած նյութական վնասների հաշվարկմանն ու միջազգային ատյաններին ներկայացնելուն էր ուղղված Հայաստանի կառավարության որոշմամբ ստեղծված «Հայ բնակչությանը թուրքերի պատճառած վնասների ու կորուստների ուսումնասիրման հանձնաժողովի» գործունեությունը: Այն ղեկավարում էին Խ. Վերմիշյանը և Ա. Անաստասյանը: Հավաքված տվյալները 1919 թ. գարնանը ուղարկվեցին Փարիզի խաղաղության խորհրդաժողովին: Ներկայացված հաշվարկներով արևմտահայության կրած նյութական անմիջական վնասները կազմել էին ավելի քան 14 մլրդ. ֆրանկ:
Հայաստանում և արտասահմանում ներգաղթի իրականացման նպատակով կատարվում էին բարեգործական հանգանակություններ: Միայն ԱՄՆ-ում հանգանակվեց 20 մլն. դոլարի իր և ապրանք, որը պետք է բաշխվեր Երկիր վերադարձող ժողովրդին: Այդ նույն նպատակով նվիրատվության կարգով Անգլիայում հավաքվել էր 40 հազար ֆունտ ստեռլինգ և այլն: Հատկապես ԱՄՆ-ում նմանատիպ հանգանակությունների կազմակերպման խնդրում քարոզչական զգալի աշխատանքներ տարան Հ. Քաջազնունին, Անդրանիկը, Արմեն Գարոն (Փաստրմաճյանը), Ա. Էնֆիաջյանը և ուրիշներ: Միայն Անդրանիկի ջանքերով հավաքվեց 0,5 մլն. դոլարից ավելի:
Փարիզում բացված խաղաղության վեհաժողովը հույսեր էր ներշնչում, որ դրականապես կլուծվի Հայկական հարցը և արևմտահայերը հնարավորություն կստանան վերադառնալ Երկիր և վերականգնել ու շենացնել ավերված օջախները: Սակայն 1920 թ. կեսերից միջազգային քաղաքական հարաբերությունները Հայաստանի համար այնպես անհաջող դասավորվեցին, որ ոչ միայն ներգաղթի խնդիրը փակվեց, այլև բուն արևմտահայ նահանգներում ապաստանած գաղթական խմբաքանակները հարկադրված էին մասամբ արտագաղթել իրենց

հայրենիքից, մասամբ էլ ծպտվելով՝ աստիճանաբար կրոնափոխվել և ուծացվել:
Այսպիսով՝ Հայաստանի անկախության ու պետականության դեմ ուղղված կործանարար գործընթացները, ցավոք, կասեցրին կառավարության կանխագծումները ներգաղթի ասպարեզում: Հայրենիքից զրկված հարյուրհազարավոր տարագիր հայեր ստիպված էին համալրել գաղթաշխարհի (Սփյուռքի) շարքերը:

3.Տնտեսության վերականգնմանը և զարգացմանը ուղղված միջոցառումները

1919 թ. գարնանից, երբ հանրապետության տարածքը զգալիորեն ընդարձակվեց, և ժողովրդի վիճակը փոքր-ինչ կայունացավ, կառավարությունը որոշ ջանքեր գործադրեց տնտեսությունը կարգի բերելու ուղղությամբ:
Հանրապետության տնտեսությունը թույլ էր զարգացած: Հասկանալի պատճառներով այն չէր կարող ուժեղ զարգացած լինել, որովհետև նախկինում Արևելյան Հայաստանը հանդիսանում էր ընդամենը ցարական Ռուսաստանի ագրարային կցորդը: Պետք է ասել, որ տնտեսական այն ծանր վիճակը, որ տիրում էր հանրապետությունում, գրեթե նույն ձևով իշխում էր նաև հարևան երկրներում, բուն Ռուսաստանում, նույնիսկ Արևմտյան Եվրոպայում: Այնպես որ հանրապետության տնտեսական ծանր դրության մեղքը պետք է բարդել ոչ թե հիմնական կառավարող Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության ու նրա կառավարության վրա, ինչպես որ տասնամյակներ շարունակ միակողմանիորեն ներկայացրել են խորհրդային պատմագրությունը և կոմունիստական քարոզչամեքենան, այլ երկրի օբյեկտիվ իրավիճակով, ցարիզմից ստացած ծանր ժառանգությամբ, այն ընդհանուր կացությամբ, ինչը բնորոշ էր պատերազմից նոր դուրս եկած մնացած բոլոր երկրներին:
Այդուհանդերձ, կարճ ժամանակամիջոցում հանրապետության սոցիալ-տնտեսական և կրթա-մշակութային կյանքում կատարվեցին նկատելի տեղաշարժեր ու դրական փոփոխություններ: Հայաստանն իր համեմատական կայունացմանը և բարգավաճմանը հասավ Ալ. Խատիսյանի վարչապետության շրջանում: Այդ ընթացքում

վերանորոգվեցին ու գործարկվեցին բազմաթիվ գործարաններ, ջուլհականոցներ ու արհեստանոցներ՝ օճառի, կաշվի, կոնյակի, հախճապակու, ծխախոտի, մանածագործության և այլն: Երևանում, Ալեքսանդրապոլում և մյուս քաղաքներում կային մի քանի տասնյակի հասնող ջուլհականոցներ և այլ մանածագործական արհեստանոցներ, կիսամանուֆակտուրային մեխանիկական ձեռնարկություններ: 1919 թ. վերջին Հայաստանում արդեն գործում էր ծխախոտի 5 ֆաբրիկա: Պետականացվեց Շուստովի կոնյակի գործարանը (նախկին «Արարատ» տրեստը: 1919 թ. հանրապետության սահմաններում ստացվել է 1,7 միլիոն աստիճան խաղաղի սպիրտ: Սարիղամիշում և Դիլիջանում հիմնվեցին սղոցարաններ, վերսկսվեցին Կողբի ու Կաղզվանի աղահանքերի և Ալավերդու ու Զանգեզուրի պղնձահանքերի շահագործումը: Վարչապետ Ալ. Խատիսյանի հայտնած տվյալներով արդեն 1920 թ. ամռանը ՀՀ-ում գործում էին **67 արդյունաբերական ձեռնարկություններ**:

Փորձեր արվեցին հայ և օտարերկրացի կապիտալիստների ներգրավելու Հայաստանի տնտեսության զարգացման մեջ: Տնտեսության մեջ՝ երկրի արդյունաբերության, ընդերքի և ջրային պաշարների հետազոտման ու շահագործման, հիդրոէլեկտրակայանների, ջրանցքների, հաղորդակցության ուղիների և այլնի մեջ ներդրումներ կատարելու հավասար պայմաններ առաջարկելու դեպքում կառավարությունը վարում էր հովանավորչական քաղաքականություն և նախապատվությունը տալիս էր հայ ազգային կապիտալին: Այսպես, օրինակ, 1920 թ. հունվարին ՀՀ նախարարների խորհուրդը հաստատում է Զանգու (Հրազդան) գետի ջուրը էներգետիկ նպատակներով շահագործելու Իլյա Մայիլյանի «Մայիլյան և որդիք» առևտրական ընկերության ներկայացրած կոնցեսիոն պայմանագրի նախագիծը: Այդ հիման վրա մերժվում է անգլիացի կապիտալիստի համանման առաջարկը:

Գործնական քաղաքականության բնագավառում դաշնակցական կառավարությունը պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը, օտար ներդրումները, տնտեսավարման ազատությունը, պետության կողմից կանոնակարգվող ազատական-շուկայական հարաբերությունները և այլն:

Այս կապակցությամբ հարկ է ուշադրություն հրավիրել հետևյալ հանգամանքի վրա: Բանն այն է, որ մեզանում, թե՛ անցյալում և թե՛ ներկայումս, հասարակական-քաղաքական որոշ շրջանների կողմից տարածում ունի այն թյուր կարծիքը, թե ՀՅԴ կուսակցությունը իբրև կառավարող քաղաքական ուժ ոչ միայն չի քաջալերում մասնավոր տնտեսական գործունեությունը, այլև իբր արգելք է հանդիսանում ապրանքաշուկայական հարաբերություններին ընդհանրապես: Այս ամենը արվում է՝ ելնելով այն տրամաբանական դատողությունից, որ ՀՅԴ իր բնույթով սոցիալիստական է, հետևաբար և դեմ կլինի մասնավոր սեփականությանը և շուկայական տնտեսությանը: Պետք է ասել, որ ՀՅԴ-ը՝ որպես ընկերվարական (սոցիալիստական) կուսակցություն, նրա դավանած սոցիալիզմը ընդհանուր ոչինչ չուներ անձնական նախաձեռնությունը մեռցնող խորհրդային-բոլշևիկյան համայնատիրական սոցիալիզմի հետ: ՀՅԴ որդեգրած ընկերվարությունը ազգային առանձնահատկությունների հաշվառմամբ հարստացված արժեքների ու պատկերացումների այն համակարգն էր, որով ներկայումս առաջնորդվում են արևմտաեվրոպական շատ երկրներ: Ավելին, ՀՀ-ում հիմնական կառավարող Դաշնակցություն կուսակցությունը դեռ մտադիր չէր սոցիալիզմ կառուցել, որովհետև նա ստիպված էր ժողովրդի հետ միասին մաքառել արտաքին թշնամու, սովի, ցրտի, համաճարակի, խավարի դեմ: ՀՅԴ-ն և նրա կառավարությունը իրավացիորեն կարծում էին, որ տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց, որբերով ու գաղթականներով լեցուն Հայաստանում վաղաժամ ու ավելորդ էր խոսել սոցիալիզմի մասին: Հայաստանը գյուղատնտեսական երկիր էր, դրա համար էլ պետք էր առաջին հերթին անցկացնել հողային բարեփոխություն (ռեֆորմ) և կարգի գցել տնտեսության այդ բնագավառը: Կառավարությունը և խորհրդարանը ընդունեցին մի շարք օրենքներ կալվածատիրական բոլոր հողերի բռնագրավման և դրանք գյուղացիներին անհատույց հատկացնելու վերաբերյալ: Կառավարությունը ձեռնպահ մնաց միայն Մայր աթոռի կալվածքների բռնագրավումից, քանզի նրա միջոցներով էին պահվում հոգևոր կրթօջախները և գաղթականության առանձին հատվածներ: Հողային հարցը լուծելու նպատակով ստեղծվեցին հողային կոմիտեներ ու հողային հատուկ մարմիններ: Առաջնորդվելով հողի սոցիալիզացման (համայնացման) էսէռական ծրագրով՝ հողը

տրվում էր այն մշակողներին՝ արտադրական (ըստ աշխատող ձեռքի ու բանող անասունի) և սպառողական (ըստ ուտող բերանների թվի) նորմաներով: Հողը պատկանում էր համայնքին ու տեղական ինքնակառավարման մարմիններին և դադարում էր առուծախի առարկա լինելուց: Տեղական ինքնավարությունները իրավասու էին իրենց պատկանող վարելահողերն ու խատհարքերն անմիջապես վարձակալության տալ հողի կարիք ունեցող և այն սեփական աշխատանքով մշակողներին:
Հայաստանի բնակչությանը սովահարությունից փրկելու և երկրի արտադրողական ուժերը վերականգնելու ու խթանելու ամենահուսալի ուղին նախ սեփական գյուղատնտեսության զարգացումն էր: 1918 թ. հոկտեմբերի 25-ին ընդունվեց հողահարկի մասին օրենքը: Արդեն 1919 թ. մարտ ամսին՝ գյուղատնտեսական աշխատանքները սկսվելուն պես, 50 մլն. ռուբլի վարկ բացվեց սերմացու և գյուղատնտեսական գործիքներ (ինվենտար) ձեռք բերելու համար: Նույնքան վարկ էլ բացվեց հաջորդ տարի՝ գյուղատնտեսական գործիքներ գնելու համար: 1919 թ. ամռանը արտասահմանից ստացվեցին 15 հազար գերանդիներ ու մանգաղներ և մատչելի գներով վաճառվեցին ազգաբնակչությանը: 1920 թ. մայիսին հանրապետության գյուղնախարարությունը ձեռք բերեց 9 տրակտոր և այլն:
Տեղաշարժեր կատարվեցին անասնապահության բնագավառում: Ձեռնարկվեց պետական օրինակելի կաթնատնտեսություն Կարսի նահանգում: Հանրապետությունում վերանորոգվեցին ու կառուցվեցին մի շարք ջրանցքներ: Կատարվեցին ճահճուտների չորացման և աղուտների վերացման աշխատանքներ: Ռուս ինժեներ (ճարտարագետ) Ս. Զավալիշինի գլխավորությամբ մշակվեց 200 հազար դեսյատին աղուտային և ճահճացած հողերի մելիորացման և 255 հազար ձիաուժ հզորությամբ էլեկտրակայանների կառուցման նախագծեր, որոնք հետագայում գործողության մեջ դրվեցին արդեն Խորհրդային Հայաստանում: Հայաստանի ընդերքը ուսումնասիրելու համար բաց թողնվեց 1 մլն. ռուբլի և այլն:
Արտասահմանում՝ Լոնդոնում, տպագրվեց պետականության խորհրդանիշ համարվող հայկական թղթադրամը (ռուբլին) ու փոխադրվեց Հայաստան: Բայց մինչ այդ շրջանառության մեջ էին հայկական չեկերը: Բացի այդ, ՀՀ-ը, Անդրկովկասի մյուս երկու

հանրապետությունների հետ համատեղ, օգտվում էր Անդրկովկասի Կոմիսարիատի և ապա Սեյմի կառավարության դրամանիշներից՝ բոներից: Շրջանառության մեջ էր նաև արտասահմանյան վալյուտան (արժույթը)՝ ռուսական ռուբլին, դոլարը, ֆրանկը, ֆունտ ստեռլինգը, թուրքական լիրան, պարսկական թումանը: Ազատ շրջանառության միջոց էին ոսկե և արծաթե դրամները և այլն: Այդ ամենը վկայում է հանրապետությունում ապրանքադրամական հարաբերությունների ազատ գործունեության մասին:
Հիմնվեց պետական բանկ (գանձատուն): Բարձրացվեց ակցիզային (անուղղակի) հարկը: Կազմակերպվեց մաքսային գործը: Հայաստանի կառավարությունը իրականացնում էր առևտուրը խրախուսող մաքսային քաղաքականություն: Հանրապետության սահմանների ողջ երկայնքով հիմնվեցին առաջին և երկրորդ կարգի հետևյալ մաքսային կետերը՝ Ձուլֆայի, Սարիղամիշի, Կարաուրգանի, Կաղզվանի, Իգդիրի, Քոլագերանի, Նորագավիթի, Ուզունթալայի և Շահթախթիի: Մաքսատները առաջնորդվում էին Հայաստանի խորհրդարանի կողմից մշակված և ընդունված կանոնադրությամբ:
Հանրապետության ներսում ամեն տեսակ ապրանքների ու կենսամթերքների տեղափոխությունն ազատ էր: Ազատ էր նաև արտասահմանից Հայաստան ներկրվող ապրանքների մուտքը: Դրանք մաքսային հարկման չէին ենթարկվում, ուստի և բյուջեի համալրման աղբյուր չէր համարվում: Ներկրվող ապրանքները պարզապես սահմանագլխին ցուցակագրվում էին: 1919 թ. կեսերին Հայաստանը հասցրեց նաև առանց մաքսատուրքի տարանցիկ (տրանզիտ) ազատ առևտրի պայմանագրեր կնքել Վրաստանի և Ադրբեջանի հետ: Մասնավորապես, Ադրբեջանի հետ կնքված պայմանագրով Հայաստան պետք է փոխադրվեր 8 մլն. փութ նավթ, բայց հայ-ադրբեջանական հարաբերությունների հետագա բարդացման հետևանքով այն չկենսագործվեց: Վրաստանի հետ հարաբերությունները շատ ավելի բարվոք էին:
Կարգի բերվեցին հաղորդակցության ուղիները: Անկախության առաջին ամիսներին Հայաստանն ուներ ընդամենը 7 վերստ երկարությամբ երկաթուղի, 2 շոգեքարշ և 20 վագոն, իսկ 1920 թ.՝ 418 վերստ երկաթուղի, 40 շոգեքարշ և 630 վագոն: Նոր երկաթուղային գծեր կառուցելու, ինչպես նաև Սևանա լճի վրա շոգենավեր աշխատեցնելու

նախագծեր պատրաստելու որոշումներ կայացվեցին: 1919 թ. մայիսին հիմնվեց Սևանի լճային նավատորմ, և ջուր իջեցվեց ռազմաբեռնատար «**Աշոտ Երկաթ**» երկկայմ առագաստանավը: Երկաթուղային գործունեության կենտրոն դարձավ Ալեքսանդրապոլը, ուր կային համապատասխան արհեստանոցներ: Ալեքսանդրապոլի երկաթուղային հանգույցը ռազմավարական կապող օղակ էր Երևանի և Կարսի միջև: Չպետք է զարմանալ, որ Առաջին հանրապետության շրջանում ևս Հայաստանը Ադրբեջանի կողմից հաճախակի ենթարկվել է երկաթուղային շրջափակումների, տրանսպորտի աշխատանքը կազմալուծելու նպատակով հաճախ նավթամթերքը կանխամտածված ուշացվում էր կամ պարզապես արգելափակվում: Դեռ այն ժամանակ երիտասարդ Հայաստանի Հանրապետության համար հրամայական պահանջ էր դարձել հարևան հանրապետության վառելիքային կախվածությունից ազատվելը: Հայ-ադրբեջանական առավել լարվածության շրջանում հայկական երկաթուղին հարկադրված վառելափայտով էր աշխատում: Բացի երկաթուղուց, Հայաստանում կային շուրջ 2 հազար վերստ ընդհանուր երկարության խճուղիներ: Ընդհանուր առմամբ, հանրապետության ճանապարհներով ամսական փոխադրվում էր միջին հաշվով մի քանի մլն. փութ բեռ:1919 թ. երկրորդ կեսից սկսեց աշխուժանալ առևտուրը: Երկրից արտահանվում էին բամբակ, կոնյակ, այլ խմիչքներ, բուրդ, կաշի, մորթի, պղինձ, աղ, չոր խոտ և այլն:

Այդուհանդերձ, հանրապետության տնտեսության աքիլլեսյան գարշապարը մնում էին ֆինանսները, որոնք ուղղակի կախված էին առևտրից և արդյունաբերությունից: 1918 թ. սեպտեմբերից մինչև 1920 թ. հունվարի 1-ը հարկերից ստացված եկամուտները կազմել էին ընդամենը 30 մլն. ռուբլի, մինչդեռ ծախսերը ամսական կազմել են միջին հաշվով 17,5 մլն. ռուբլի: Հասկանալի է, որ նման պայմաններում իր ընթացիկ ծախսերը ծածկելու համար կառավարությունը ստիպված էր լրացուցիչ թղթադրամ բաց թողնել (էմիսիա), որի հետևանքով էլ սկսեց արագորեն արժեզրկվել ռուբլին: Հիշեցնենք, որ պետբյուջեի ծախսերը գնում էին հիմնականում երկու խոշոր հոդվածներով՝ ա) բանակի ու երկրի պաշտպանության և բ) գաղթականության ու որբերի պահպանության վրա:

Սոցիալ-դեմոկրատ (Սպեցիֆիկ) **Բախշի Իշխանյանի** գլխավորած Հայաստանի պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունքի հավաքած տվյալներով մեկ տարվա ընթացքում (1919 թ. մարտից մինչև 1920 թ. մարտի 1-ը) Հայաստանից արտահանվել է (չհաշված բամբակը) ընդամենը 170 հազար փութ կամ ավելի քան 36 մլն. ռուբլի արժողությամբ ապրանք, որի հիմնական տեսակներն էին խմիչքները և կաշվեղենը: Վիճակագրական բաժանմունքի հրապարակած մեկ այլ տվյալով՝ ընդամենը չորս ամսում (1919 թ. նոյեմբեր-1920 թ. փետրվար) Հայաստանից արտահանվել է 49929 փութ բամբակ: Այսպիսով, ոչ լրիվ տվյալներով՝ մեկ տարում Հայաստանից արտահանվել է շուրջ 220 հազար փութ համախառն ապրանք:
Այդ նույն ժամանակ հանրապետություն էին ներմուծվում շատ ավելի մեծ ծավալի ապրանքատեսակներ՝ նավթամթերք, հացահատիկ, ալյուր, բրինձ, շաքար, ձուկ, օճառ, թեյ, բուսական յուղ, կտորեղեն (մանուֆակտուրա), ապակի, դեղորայք և այլն: Արտահանման և ներմուծման ծավալային մեծ խզումը ցույց տալու համար նշենք, որ վերը նշված ժամանակահատվածից ավելի պակաս ժամկետում (ընդամենը 9 ամսում) Հայաստանի հանրապետություն է ներմուծվել ավելի քան 5,5 մլն. փութ համախառն ապրանք, որի արժեքը կազմել է մոտ 443 մլն. ռուբլի: Բայց այստեղ պետք է վերապահում անել այն իմաստով, որ Հայաստան ներմուծված այդ ապրանքների (5,5 մլն.) ընդհանուր ծավալում շուրջ 77 տոկոսը կամ 4,2 մլն. փութը կազմել են միայն ամերիկյան ապրանքները ու մասնավորապես ամերիկյան օգնության հացամթերքը:
Առևտրատնտեսական կյանքի աշխուժացման նպատակով հիմնվեց Հայաստանի կոոպերատիվների միությունը (Հայկոոպը): Հայաստանում կային 280 կոոպերատիվներ՝ 112 հազար անդամներով: Գործի դրվեց և ընդլայնվեց փոստ-հեռագրային ծառայությունը: 1919 թ. բացվեցին փոստ-հեռագրման 15 կետեր: Ինչ վերաբերում էր հեռախոսային ցանցին, այն բնականաբար դեռևս թույլ էր զարգացած: Այդուհանդերձ, 1920 թ. մայիսին ավելի քան **60 հազար** բնակչություն ունեցող Երևանում կար 250 հեռախոս: Չպետք է զարմանալ, որ խորհրդահայ պատմակուսակցական գրականության մեջ խորհրդային-կոմունիստական քարոզչամեքենան, հասկանալի նկատառումներով, 1920 թ. Երևանի բնակչության թիվը ներկայացվել է ավելի քան կրկնակի

պակաս: Այս իմաստով, կեղծվել կամ աղավաղվել են շատ փաստեր ու իրողություններ, պատմաքաղաքական շատ իրադարձությունների տրվել են խեղաթյուրված, միտումնավոր կողմնակալ գնահատականներ:
Հանրապետության կառավարությունը հատուկ նշանակություն էր տալիս ճարտարապետաշինարարական աշխատանքներին, որի պատմական ավանդույթն ունեցել է շինարար անունը վաստակած հայ ժողովուրդը: Հատկապես մեծ ուշադրություն է տրվել քաղաքաշինության ու մասնավորապես մայրաքաղաքի վերաշինությանը: Այդ նպատակով 1920 թ. մայիսի 8-ին խնամատարության և վերաշինության նախարարությանը կից ստեղծվեց ճարտարապետական գլխավոր վարչություն, որը ղեկավարում էր հայ մեծանուն ճարտարապետ, ակադեմիկոս **Ալ. Թամանյանը**: Նշված վարչությունը հասցրեց կատարել մի շարք նախագծային աշխատանքներ: Հենց այս շրջանում էլ հանճարեղ ճարտարապետ Ալ. Թամանյանը գծեց 60-հազարանոց Երևանի զարգացման փաստորեն առաջին գլխավոր հատակագիծը, որի համար հատկացվեց 23 մլն. ռուբլի վարկ:
Խնդիր դրվեց պատշաճ ուշադրություն դարձնել հանրապետության տարածքում գտնվող պատմամշակութային նշանակություն ունեցող հուշարձանների վերականգնման ու պահպանությանը: Այդպիսի հուշարձանների թվին էին դասվում Սարդարի պալատը, Անիի հուշարձանները, հանրապետության տարածքում գտնվող տաճարները, եկեղեցիները, ամրոցները, մզկիթները և այլն:
Մինչ անկախության ձեռք բերումը աննկարագրելի ծանր էր բնակչության բժշկական սպասարկման և սանիտարահիգիենիկ վիճակը: 1918 թ. թուրքական արշավանքից հետո Հայաստանում հաշվվում էր ընդամենը 9 հիվանդանոց՝ 300 մահճակալով: Թուրքերի հեռանալուց հետո վիճակը նկատելիորեն բարելավվում է, և արդեն 1919 թ. կեսերին բացվում են 30 հիվանդանոց՝ 1600 մահճակալով, 5 բժշկական և 15 բուժական կետեր: Հիմնվում է կենտրոնական դեղատնային պահեստ: Պլանավորվել էր անցկացնել կոյուղի Երևան, Ալեքսանդրապոլ, Կարս, Նոր Բայազետ, Էջմիածին և այլ քաղաքներում, բոլոր բնակավայրերը մատակարարել առողջարար ջրով, չորացնել հիվանդաբեր ճահիճները, բացել առողջարաններ, մսուր-մանկապարտեզներ և այլն:

4.Կրթամշակութիին կյանքը

Դրական տեղաշարժեր կատարվեցին մշակութային կյանքում: Հայոց անկախ պետականության վերականգնումը հայրենիք վերադառնալու նպաստավոր պայմաններ ստեղծեց հայ մտավորականության համար: Հայաստան եկան կամ տեղում գործում էին գիտության ու մշակույթի բազում գործիչներ՝ Ալ. Թամանյանը, Թ. Թորամանյանը, Հ. Աբելյանը, Հ. Մանանդյանը, Մ. Աբեղյանը, Ն. Աղբալյանը,, Լ Շանթը, Յու. Ղամբարյանը, Ստ. Մալխասյանը և շատ ուրիշներ: Նրանք լծվեցին գիտակրթական գործի բարելավմանը:
Առաջընթաց ապրեց կրթական գործը: 1918 թ. սեպտեմբերին հիմնվեց հանրային կրթության առանձին նախարարություն, խորհրդարանում գործում էր **դպրոցական** հանձնաժողովը: Չանսալով եղած դժվարություններին՝ հոկտեմբերի 1-ից սկսվեց նոր ուսումնական տարին: Ուսուցիչների վարձատրության չափը 2,5 անգամ գերազանցում էր նվազագույն աշխատավարձը: Հանրապետությունում գործում էր «Դպրոցների մասին» օրենքը: Նրանում պաշտպանվում էր այն գաղափարը, որ դպրոցը պետք է լինի ապաքաղաքականացված ու ապակուսակցականացված, մի պարագա, որը ուսանելի պետք է լինի մերօրյա կրթօջախների համար: ՀՀ-ում դպրոցը դադարում էր պետության մենաշնորհը լինելուց, այսինքն՝ պաշտպանվում էր ազատ դպրոցի գաղափարը, և որ յուրաքանչյուր ոք իրավունք ուներ սեփական միջոցներով դպրոց բացել:
1920 թ. հունվարի սկզբին ընդունվեց օրենք եկեղեցին պետությունից անջատելու մասին: Ապրիլ ամսին ընդունված մեկ այլ օրենքով հայոց հոգևոր ուսումնական հաստատությունները և ծխական եկեղեցական դպրոցները աշխարհականացվելու ու պետականացվելու էին:
Ամբողջ Հայաստանը բաժանված էր 11 ուսումնական օկրուգների:Դպրոցական համակարգը դարձավ երկաստիճան՝ տարրական և միջնակարգ: Եթե 1918/19 ուս. տարում Հայաստանն ուներ ընդամենը 133 տարրական դպրոց՝ 383 ուսուցչով և 11136 աշակերտով, ապա 1919/20 ուս. տարում՝ 456 տարրական դպրոց, 1047 ուսուցիչ և 41188 աշակերտ: Բացի այդ, հանրապետությունում գործում էին 20 միջնակարգ ուսումնական հաստատություն՝ 283 ուսուցչով և 5162

սովորողով: 1920 թ. հունվարից **տարրական դպրոցներում սահմանվեց անվճար կրթություն**:
Մշակվեցին դպրոցական ուսումնամեթոդական ծրագրեր: Նիկոլ Աղբալյանի և Գևորգ Ղազարյանի նախարարության շրջանում քայլեր արվեցին արմատախիլ անել ուսման սխոլաստիկ բնույթը՝ կրթությանը կից կարևորություն տալով նաև աշակերտների աշխատանքային դաստիարակությանը, պրոֆեսիոնալ կողմնորոշմանը, արհեստների տիրապետմանը: 1920 թ. մայիսից հայերենին չտիրապետող ուսուցիչները ազատվեցին աշխատանքից: Դպրոցն ու կրթությունը ավելի ու ավելի դառնում էին ազգային ու հայեցի:
Առանձին քայլեր ձեռնարկվեցին կրթության ոլորտ չքավոր, գաղթական և որբ երեխաներ ընդգրկելու ուղղությամբ: Պետության հաշվին սրանց տրվում էր պատսպարան, անվճար սնունդ, գրենական պիտույքներ: Կրթության նախարարության ոչ լրիվ տվյալներով՝ օգնության կարիք ունեցող այդպիսի դպրոցահասակ երեխաների թիվը հասնում էր շուրջ 22 հազարի: Այս առնչությամբ նաև ուշադրության է արժանի կրթության և արվեստի նախարար Ն. Աղբալյանի նախաձեռնությամբ 1920 թ. հունվարի 5-ին խորհրդարանի ընդունած օրենքը՝ սկսած 1914 թ. սեպտեմբերի 1-ից Հայաստանի ազատագրության կռվում զոհված զինվորների զավակներին պետական գանձարանի հաշվին անվճար դպրոցական պիտույքներ բաժանելու մասին և այլն:
Հայաստանի խորհրդարանն ու կառավարությունը քայլեր ձեռնարկեցին նաև անգրագիտության վերացման (հաղթահարման) ուղղությամբ: Այդ կապակցությամբ անցկացվելու էին անվճար վեցամսյա ուսուցմամբ դասընթացներ մի քանի կատեգորիայի հասակավորների համար՝ անգրագետների, կիսագրագետների և գրագետ հասակավորների համար: Գրագետ հասակավորների դպրոցը կոչվում էր ժողովրդական համալսարան: Այդ դասընթացներին կարող էին հաճախել հանրապետության բոլոր քաղաքացիները՝ առանց ազգի, կրոնի ու սեռի խտրության: Ուշադրություն էր դարձվում նաև նախադպրոցական հիմնարկների ստեղծմանը: Այդ նպատակով 222 հազար ռուբլի վարկ բացվեց՝ հանրապետության 15 վայրերում մանկապարտեզներ բացելու համար:
Հայաստանի ազգային-մշակութային կյանքում նշանակալի իրադարձություն եղավ **պետական համալսարանի** հիմնադրումը: **1919 թ.**

մայիսի 16-ին կառավարությունը որոշում կայացրեց բացել հայկական համալսարան: 1920 թ. հունվարի 31-ին առաջին անգամ Հայաստանի հողի վրա ժամանակակից չափանիշներով բացվեց բարձրագույն ուսումնական հաստատություն (իհարկե, եթե չհաշվենք միջնադարյան հայ բարձրագույն տիպի վարդապետարանները՝ համալսարանները): Մայրաքաղաքում հարմար շենք չլինելու պատճառով ժամանակավորապես այն բացվեց Ալեքսանդրապոլում, իսկ հաջորդ ուս. տարուց փոխադրվեց Երևան: Համալսարանի հանդիսավոր բացման ժամանակ վարչապետ Ալ. Խատիսյանը մասնավորապես արտահայտեց հետևյալ սրտառուչ և խորիմաստ խոսքերը. «**Մենք կործանեցինք բռնության շղթան, իսկ այժմ եկել է ժամանակը՝ փշրելու տգիտության շղթան**»: Բացման օրը համալսարանն ուներ 8 դասախոս և 200 ուսանող:Համալսարանի ռեկտոր նշանակվեց նշանավոր իրավագետ, պրոֆեսոր **Յու. Ղամբարյանը**:
1919 թ. նոյեմբերին Ղարաքիլիսայում (Վանաձոր) բացվեց ժողովրդական համալսարան, ուր կարդացվում էին դասախոսություններ՝ ժողովրդական առողջապահության և հասարակական-քաղաքական բնույթի թեմաներով: Համազգային արժեք էր պետական պատկերասրահի, ազգային գրադարանի, հնագիտական, ազգագրական և այլ թանգարանների բացումը: Կառավարությունը ձեռք բերեց 100 հազար ռուբլու նկարներ: Ուշադրություն էր դարձվում ժողովրդական թատրոններին, ազգագրական երգ-երաժշտությանը, հնությունների պահպանմանը, պատանիների ֆիզիկական դաստիարակությանը: Սկիզբ դրվեց սկաուտական շարժմանը և այլն: Ծրագրվում էր 1920 թ աշնանը Երևանում բացել կոնսերվատորիա, պետական թատրոն, բժշկական, գյուղատնտեսական կրթօջախներ, Ալեքսանդրապոլում՝ գեղարվեստի ուսումնարան, Կարսում՝ ռազմական գիմնազիա և այլն: Սակայն 1920 թ. աշնան թուրքական ներխուժման հետևանքով այդ գործերը մնացին կիսակատար:
Հայաստանի Հանրապետությունում գրողները հովանավորվում և նպաստ էին ստանում պետությունից: Հայ գրողների, գիտնականների և հրապարակախոսների նյութական պայմանները քիչ թե շատ մեղմելու նպատակով 1919 թ. հուլիսին նախարարների խորհուրդը հատկացնում է 100 հազար ռուբլի: Հեղինակների երկերի հրատարակության համար հատկացվեց 3,2 մլն ռուբլի, նույնքան գումար էլ՝ գիտական և

գեղարվեստական գրականության թարգմանությունների համար: 1920 թ. մարտի 5-ին օրինագիծ մտցվեց խորհրդարան՝ վաստակավոր գրողներին օգնելու համար 1,5 մլն. ռուբլի վարկ բաց թողնել գրողների ընկերությանը: Ն. Աղբալյանի օրենսդրական նախաձեռնությամբ հաստատվում է օրինագիծ՝ Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ կրթական գործին նպաստելու համար 1,5 մլն. ռուբլի հատկացնելու վերաբերյալ: Եվ կառավարությունը որոշում է իր պահուստային ֆոնդից հատկացնել նշված գումարը: Բացի այդ, նախարար Ն. Աղբալյանի նախաձեռնությամբ նախահաշիվ կազմվեց Զանգեզուրում բացել 45 տարրական դպրոց՝ 82 դասարաններով, և մեկ միջնակարգ դպրոց: Հարկ է առանձնահատուկ նշել, որ գրական-մշակութային, լուսավորական-կրթական գործում անուրանալի են նախարար **Նիկոլ Աղբալյանի** ծառայությունները:
Կրթական համակարգի կարևորագույն բաղադրիչներից էր, արդեն հիշատակված, 1919 թ. դեկտեմբերի 26-ին ընդունված **Լեզվի մասին** օրենքը, որով հանրապետության սահմաններում պետական պաշտոնական լեզուն համարվում էր հայերենը: Օրենքը պարտավորեցնում էր պետական պաշտոնատար անձանց մեկ տարվա ընթացքում տիրապետելու հայերենին (բանավոր և գրավոր): Բացի այդ, գերատեսչություններում, հաստատություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, բանակում և այլուր հաղորդակցման, քաղաքացիների ընդունելությունների անցկացման, գրագրության և գործավարության լեզուն համարվում էր միայն հայերենը: Առանձին օրենքով հանձնարարվել էր հանրային կրթության և արվեստի նախարարությանը Երևանում և Ալեքսանդրապոլում բացել հայոց լեզվի դասընթացներ պետական պաշտոնատար անձանց համար: Պաշտոնատար անձանց լեզվի իմացությունը ստուգելու համար հիմնվելու էին հանձնաժողովներ: Հայոց լեզու չիմացողները ենթարկվելու էին քննության և անհաջողության դեպքում ազատվում էին պաշտոնից: Լեզվի կանոնները խախտելու դեպքում յուրաքանչյուր հիմնարկություն կամ քաղաքացի կարող էր հայց ներկայացնել դատարան, որի վճիռը պարտադիր էր բոլորի համար: Ցավոք, միշտ չէ որ հետևում էին լեզվի մասին կանոններին, մի շարք հիմնարկներում՝ ռազմական, ֆինանսական, առողջապահական, դեռևս շարունակում էր պահպանվել նաև ռուսերենը:

Պետական-պաշտոնական լեզվի գործավարությթների հայացման գործում ոչ պակաս դժվարություն էին ստեղծում օտար տերմինները, պակասում էին դրանց հայերեն համարժեքները: Օտար տերմինները հայացնելու և հայոց լեզուն օտարաբանությունից մաքրելու նպատակով Թիֆլիսում հիմնվեց մի հանձնաժողով՝ **Ստ. Լիսիցյանի** նախագահությամբ: Հանձնաժողովը ձեռնամուխ եղավ համանման բառարանի կազմմանը: Խորհրդարանը նախնական 150 հազար ռուբլի վարկ բացեց իրավաբանական, բժշկա-սանիտարական, տեխնիկական և գիտական-դպրոցական տերմինների բառարաններ կազմելու և հրատարակելու համար և այլն:
Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետության ներքին, տնտեսական և կրթամշակութային կյանքում փոփոխությունները ակնբախ էին: Չնայած սկզբնական շրջանում առաջին վարչապետ Հ. Քաջազնունու նկարագրած հանրապետության սոցիալ-տնտեսական աղետալի կացությանը, այնուամենայնիվ, կարճ ժամանակում հնարավոր եղավ դնել տնտեսության հիմքերը, տեղաշարժեր արձանագրել կրթամշակութային ոլորտում, բացել համալսարան և այլն: Այն, ինչը որ հնարավոր չեղավ իրագործել ՀՀ կարճատև գոյության ընթացքում, դրանք հետագա զարգացում պետք է ստանային արդեն Խորհրդային Հայաստանում:

Գլ. 4.- Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը

4.1.Հասարարական-քաղաքական կյանքը

Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր դրությունն, անշուշտ, իր դրոշմն էր թողնում հասարակական-քաղաքական կյանքի վրա: Այդուհանդերձ, աստիճանաբար նկատվում էր հասարակական-քաղաքական կյանքի աշխուժացում: Երևանը և Ալեքսանդրապոլը դարձան հասարակական-քաղաքական կյանքի կենտրոններ: Հանրապետությունում լույս էին տեսնում վեց տասնյակ անուն պարբերականներ՝ թերթեր ու ամսագրեր: Դրանց շուրջ կեսը ընդդիմադիր կամ անկախ էին, գործում էին բազմաթիվ հրատարակություններ ու տպարաններ: Թերթերն ու ամսագրերը լուսաբանում էին երկրի առօրյան, հասարակական-քաղաքական կյանքը: Կային զանգվածային լրատվության այնպիսի միջոցներ, որոնք գտնվում էին կառավարության հսկողության տակ: Այդպիսի ամենագլխավոր միջոցը Հայաստանի հեռագրական գործակալությունն էր (ՀՀԳ): Հայաստանը փոստ-հեռագրական կոնվենցիաներ է կնքում Վրաստանի և Ադրբեջանի հետ:1919 թ. սեպտեմբերին բացվում է Երևանի ուժեղ ռադիոկայանը: Կառավարությունը հիմնականում ապահովում էր խոսքի ու մամուլի ազատությունը: Քաղաքական այլախոհության համար օրենքով պատիժ չէր նախատեսվում: Հանրապետությունում ազատորեն գործում էին բոլոր կուսակցությունները, թույլատրվում էին այլակարծություն, բացախոսություն, քննադատության ազատություն, գոյություն ուներ ընդդիմություն, փաստորեն չկար գրաքննություն: Այդ ամենը հիմք է տալիս ընդհանուր առմամբ խոսելու Հայաստանում այսպես կոչված **չորրորդ իշխանության** կայացման մասին:
Հանրապետության քաղաքական կյանքի հիմնական դերակատարները, իհարկե, կուսակցություններն էին: Ինչպես արդեն ասվել է, Հայաստանում գործում էին մի շարք քաղաքական կուսակցություններ: Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի գլխավոր դերակատարը ՀՅԴ կուսակցությունն էր, որը համարվում էր հիմնական կառավարող կուսակցությունը: ՀՀ կյանքում նշանակալի

իրադարձություն եղավ 1919 թ. աշնանը նորանկախ հանրապետության մայրաքաղաքում անցկացված ՀՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը: Դրանում ծրագրային բնույթի բանաձևումներ տրվեցին Հայաստանի ու հայ ժողովրդի արտաքին ու ներքին բնույթի խնդիրների վերաբերյալ, որոնք պետք է կողմնորոշիչ դառնային կուսակցության մարմինների և ինչու չէ նաև կառավարության աշխատանքներում: Ընդհանուր ժողովում ընդունված ծրագրային բնույթի ամենամեծ փոփոխությունն այն էր, որ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փաստական իրողությունը և Փարիզի խաղաղության կոնֆերանսում Հայկական հարցի հուսադրող ընթացքը՝ որոշվեց՝ հրաժարվել կուսակցության նախորդ ծրագրում որդեգրած Ռուսահայաստանի և Տաճկահայաստանի ինքնավարության պահանջից և ամրագրել **Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան** կերտելու ծրագրային հիմնապահանջը:
Բացի ՀՅԴ-ից՝ ՀՀ հասարակական-քաղաքական դաշտում գործում էին Հայ ժողովրդական, Հայ (սահմանադրական) ռամկավար, Սոցիալիստ-հեղափոխական (էսէռ), Սոցիալ-դեմոկրատ (մենշևիկ, բոլշևիկ) կուսակցությունները: 1920 թ. հունվարին նախկին Սպեցիֆիկների հիմքի վրա ստեղծվեց Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցությունը (ՀՍԴԲԿ): Իսկ 1920 թ. հունիսի 30-ին Ադրբեջանի տարածքում ստեղծվեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունը (ՀԿ(բ)Կ), որն ամենաանհաշտն էր Հայաստանի իշխանություններին: Հանրապետությունում շատ չնչին էր Ս. Դ. Հնչակյան կուսակցության դերակատարությունը: Վերոնշյալ կուսակցությունների մի մասը պաշտպանում էր սոցիալիզմի գաղափարներ, իսկ մյուս մասը՝ ազատական (լիբերալ) արժեքներ: Նախընթաց տասնամյակների կուտակած փորձով Հայաստանի հասարակությունը հստակ ճանաչում էր գլխավոր դերակատար կուսակցություններին: Կարելի է վստահաբար ասել, որ հանրապետությունում ձևավորված էր բազմակուսակցական համակարգ, որն,անշուշտ, նպաստում էր երկրում բազմակարծության, ընդդիմության ձևավորմանը, ժողովրդավարացման (դեմոկրատացման) այլ գործընթացներին:
Երկրի առջև ծառացած բարդ խնդիրները լուծելու համար իբրև ավանդույթ և ժողովրդավարության արտահայտություն Դաշնակցությունը երկու անգամ խառը (կոալիցիոն) կառավարություն է

կազմել Հայ ժողովրդական և էսէռ կուսակցությունների հետ: Առավել արդյունավետ է եղել սոցիալիստական համարվող ՀՅԴ և բուրժուական որակվող ՀԺԿ կոալիցիան: Վերջինս Դաշնակցության պես պաշտպանում էր երկու՝ Արևելյան և Արևմտյան Հայաստանների միավորումով Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու գաղափարը: Այդ ծրագիրն էր պաշտպանում նաև Հայ ռամկավարների կուսակցությունը: Ռամկավարները արտահայտում էին գերազանցապես հայ գաղթականների շահերն ու ձգտումները: Հատկանշական է, որ ազգային հարցում, բացառությամբ բոլշևիկների, մնացյալ հայ քաղաքական կուսակցությունները հիմնականում միակամ էին: Կուսակցությունների կողքին կային հասարակական զանազան կազմակերպություններ ու միություններ՝ արհեստակցական, Կարմիր խաչի, հայրենակցական, բարեգործական, կանանց, աշակերտական, սկաուտական և այլն:

* * *

Այդ ամենի կողքին, ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի ամենացավոտ հարցերից էին հանրապետությունում զգալի թիվ կազմող թուրք-թաթարների շարունակական խռովությունները: Նրանք չէին ճանաչում Հայաստանի անկախությունը, հրահրվում և ուղղորդվում էին Թուրքիայի և Ադրբեջանի կողմից: Վերջիններս ձգտում էին խորտակել Հայաստանի անկախությունը, զավթել նրա տարածքները և անմիջական սահմանային կապ հաստատել իրար հետ: Հակահայկական շարժման թեժ օջախներ էին համարվում Մեծ Վեդին, Զանգիբասարը (Մասիսի շրջ.), Շարուր-Նախիջևանը, Արդահանը, Սուրմալուն և այլն: ՀՅԴ ականավոր գործիչ, ռազմական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի պատկերմամբ՝ ՀՀ մարմնի վրա հայտնվել էին 20-ի հասնող նման հիվանդաբեր թարախապալար:

1918 թ. վերջին՝ աշխարհամարտի ավարտից հետո, օսմանյան թուրքերը, հեռանալով Անդրկովկասից, Հայաստանի թուրքաբնակ վայրերում թողեցին մեծ թվով ասկյարներ (զինվորներ) ու զինվորական մասնագետներ: Նրանք սկսեցին հավաքագրել տեղացի մահմեդականներին: Թուրք-թաթարական խռովարարները չէին ենթարկվում Հայաստանի օրինական իշխանություններին: Նրանք հալածում էին հայ խաղաղ բնակչությանը, կատարում ահաբեկչական գործողություններ, փակում երկաթուղին, ճանապարհները և այլն:

Անգամ Երևանում հավատարմագրված Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը զբաղված էր Հայաստանի դեմ ուղղված լրտեսական գործունեությամբ:
Ստեղծված պայմաններում Հայաստանի իշխանությունները ստիպված էին դիմել համապատասխան գործողությունների: Սկզբում փորձ արվեց կոնֆլիկտները հարթել խաղաղ միջոցներով: Բայց արդյունք չտվեց, խռովարարները դա համարեցին Հայաստանի թուլության նշան: 1919 թ. կեսերից թուրք-թաթարական խռովությունները ստացան բացահայտ զինված ապստամբության բնույթ: Հայաստանի կառավարությունը ստիպված էր զինված ուժի գործադրման միջոցով հնազանդեցնել նրանց: Արդեն 1920 թ. ամռանը հիմնականում կասեցված էին թուրք-թաթարական խռովությունները: Թուրքերի մի մասը հեռացավ Հայաստանից: Մի շարք ազատված բնակավայրերում բնակություն հաստատեցին արևմտահայ գաղթականներ ու Ադրբեջանից տեղահանված հայ փախստականներ:

4.2.1920 թ. Մայիսյան ապստամբությունը

ՀՀ հասարակական-քաղաքական կյանքի, թերևս, ամենախռովահույզ իրադարձությունը, անշուշտ, համարվում է 1920 թ. Մայիսյան ապստամբությունը: Հանրապետությունում գործող գրեթե բոլոր քաղաքական կուսակցությունները և հասարակական կազմակերպությունները, բացառությամբ բոլշևիկ-համայնավարների, ընդհանուր առմամբ պաշտպանում էին հայոց անկախ պետականությունը, մի մասն էլ՝ Միացյալ Հայաստանի գաղափարը: Մինչդեռ Հայաստանի բոլշևիկները բաց չէին թողնում իշխանությունը գրավելու և Ռուսաստանի օրինակով Հայաստանում ևս խորհրդային կարգեր հաստատելու առիթը: Չունենալով բավարար ազդեցություն և ուժ՝ նրանք հույսը կապել էին դիսի՝ Խորհրդային Ռուսաստանի ու նրա կարմիր բանակի օգնության հետ:
1919 թ. սեպտեմբերին Հայաստանում առկա, հիմնականում Վրաստանից ու Ադրբեջանից ներթափանցած փոքրաթիվ բոլշևիկները, համախմբելով իրենց տեղական կազմակերպությունները, ստեղծեցին իրենց ղեկավար կենտրոնը, որը կոչվեց Հայաստանի կոմիտե կամ **Արմենկոմ**: Արդեն 1920 թ. հունվարին Հայաստանի բոլշևիկյան

կազմակերպությունների խորհրդաժողովը (կոնֆերանսը) որոշեց արտաքին ու ներքին նպաստավոր պայմանների դեպքում ապստամբել և գրավել իշխանությունը: Եվ նրանք այդպիսի նպաստավոր իրադարձություն համարեցին 1920 թ. ապրիլի 28-ին Ադրբեջանի խորհրդայնացումը ռուսական 11-րդ Կարմիր բանակի կողմից: Կարմիր բանակի մուտքը Անդրկովկաս և Ադրբեջանի անկրակոց խորհրդայնացումը ոգևորեց և ակտիվացրեց նաև դրսի ու ներսի հայ բոլշևիկներին, որը և ազդանշան հանդիսացավ Հայաստանում ապստամբություն բարձրացնելու օրինական իշխանությունների դեմ՝ այն տապալելու և Հայաստանում խորհրդային կարգեր հաստատելու: Սակայն տվյալ պահին ապստամբությանը դեմ էր ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Կովկասյան բյուրոն՝ գտնելով որ Հայաստանի խորհրդայնացման պահը դեռևս չի հասունացել: Հայաստանում ապստամբություն սկսելուն դեմ էին նաև հայտնի բոլշևիկներ Ստեփան Ալավերդյանը և Բագրատ Ղարիբջանյանը:
Ադրբեջանի խորհրդայնացումից և Բաքվի նավթին տիրելուց հետո Ռուսաստանի խորհրդային կառավարությունը և ՌԿ(բ)Կ ԿԿ-ի Քաղբյուրոն, ելնելով արտաքին ու ներքին ռազմաքաղաքական բարդություններից, մայիսի 4-ին ընդունված որոշումով ժամանակավորապես օրակարգից հանեցին Հայաստանի, ինչպես նաև Վրաստանի խորհրդայնացման հարցը: Խնդիրն այն էր, որ Կովկասում գտնվող կարմիր բանակի մի շարք դիվիզիաներ, այդ թվում 11-րդ բանակի հիմնական ուժերը պետք է շտապ փոխադրվեին Արևմտյան ճակատ՝ մասնակցելու Լեհաստանի դեմ սկսված լայնամասշտաբ ռազմական գործողություններին, ուստի Բաքվից և Կարմիր բանակից Հայաստանի աշխատավորներին «օգնություն» չէր կարող լինել, ինչպես որ ակնկալում էին ապստամբները: Բացի այդ, Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացման հարցը հետաձգվեց նաև այն պատճառով, որովհետև Անտանտի կողմից Բաթումում նոր դեսանտ իջեցնելու վտանգ կար: Բայց դա բնավ չխանգարեց, որ հայ բոլշևիկները դիմեն անժամանակ և անկազմակերպ մի արկածախնդրության:
Ամեն ինչ սկսվեց 1920 թ. մայիսմեկյան ցույցերով ու միտինգներով, որոնք ընթացան բոլշևիկյան կարգախոսներով: Հարկ է նշել, որ Մայիսի 1-ը՝ որպես աշխատավորների համերաշխության տոն, պաշտոնապես

նշվել է նաև նախորդ տարում: ՀՅԴ, իրեն համարելով սոցիալիստական կուսակցություն, այն ոչ միայն համարում էր թույլատրելի, այլև իր կառույցներով ինքն էլ էր մասնակցում տոնական արարողություններին: Սակայն այլ ընթացք ու բնույթ ստացավ 1920 թ. Մայիսը: Ապստամբության կենտրոն դարձավ ձախլիկ տրամադրություններով հայտնի Ալեքսանդրապոլ (այժմ՝ Գյումիր) քաղաքը: Քաղաքում անցկացված մայիսմեկյան տոնի ժամանակ բոլշևիկները՝ Ավիս Նուրիջանյանի ստորագրությամբ, ողջույնի երկու հեռագիր են ուղարկում Ադրբեջանի հեղկոմին: Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեն իր մայիսմեկյան կոչում հավաստիացնում էր Բաքվի դռները բախող հաղթական Կարմիր բանակին ու Բաքվի պրոլետարիատին, որ «այսօրվանից մեր կռիվը թուրք բանվորի ու գյուղացու դեմ չէ, այլ դաշնակցական կառավարության»:
Ապստամբության օջախներ դարձան Կարսը, Սարիղամիշը, Բասարգեչարը, Նոր Բայազետը, Ղազախ-Դիլիջանը, Գորիսը և այլն: Բոլշևիկները որոշեցին 1920 թ. մայիսմեկյան հակակառավարական ցույցերը վերածել զինված ապստամբության և Ադրբեջանից Հայաստան հրավիրել 11-րդ Կարմիր բանակը: Ապստամբների կողմն անցան կեղծ հեղափոխական գաղափարներով տարված, Հայաստանի անկախությունը և անվտանգությունը պաշտպանել չցանկացող զինվորականության մի մասը և «Վարդան Զորավար» զրահագնացքը: Մայիսի 7-ին զրահագնացքում կայանում է բոլշևիկյան գաղտնի խորհրդակցություն, որտեղ վերցվում է զինված ապստամբության կուրս և ստեղծվում ապստամբության ղեկավար կենտրոն՝ Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտե (**ՀՌՀԿ**): Ապստամբական ուժերի ղեկավար նշանակվեց զրահագնացքի հրամանատար կապիտան **Սարգիս Մուսայելյանը:** Դրությունը բարդանում էր նաև նրանով, որ այդ նույն ժամանակ երկրում սկսեցին աշխուժանալ նաև բոլշևիկների բարեկամը հանդիսացող և Հայոց անկախ պետականությունը խորտակել ցանկացող թուրք-թաթարական տարրերը: Պետականության համար ստեղծվեց վտանգավոր դրություն: Կառավարությունը սկզբում շփոթության մեջ էր: Քաղաքական ճգնաժամը հաղթահարելու համար որոշվեց ստեղծել ուժեղ ձեռքի կառավարություն: Մայիսի 5-ին խորհրդարանի արտակարգ նիստում ընդունվեց Ալ. Խատիսյանի կառավարության հրաժարականը և դրա

փոխարեն կազմվեց ՀՅԴ Բյուրոյի անդամներից կազմված **Բյուրո-կառավարություն**: Վարչապետ նշանակվեց **Համազասպ Օհանջանյանը** (1873-1947): Խորհրդարանն ուղարկվեց հարկադիր արձակուրդ, իսկ նրա օրենսդրական գործառույթները ժամանակավորապես ստանձնեց կառավարությունը: Նորաստեղծ Բյուրո-կառավարությունը ձեռնարկեց մի շարք արտակարգ միջոցառումներ, ընդունեց խիստ օրենքներ,արգելվեցին գործադուլները և ցույցերը: Արտակարգ իրավիճակի թելադրանքով հիմնվեցին արտակարգ դատարաններ, սահմանվեց մահապատիժ և այլն: Փաստորեն հայտարարվեց Դաշնակցության դիկտատուրա:
Բոլշևիկների հակապետական խռովության դեմ կոչով հանդես եկան գրեթե բոլոր կուսակցությունները և հասարակական ուժերը՝ ժողովրդականները, ռամկավարները, հայ մենշևիկները, անկուսակցականները, նախկին սպեցիֆիկները, գաղութահայ հնչակյանները, մասամբ էսէռները: Ստեղծված քաղաքական ճգնաժամի թելադրանքով նշված հասարակական-քաղաքական ուժերը վճռականորեն հադես եկան բոլշևիկների հակապետական ելույթի դեմ հանուն Հայաստանի անկախության և Միացյալ Հայաստանի գաղափարի պաշտպանության:
Թեև բոլշևիկների ստեղծած Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ) մայիսի 10-ին Ալեքսանդրապոլում քաղաքային իշխանությունը վերցրեց իր ձեռքը, սակայն անվճռական գտնվեց, և մի քանի օր անց՝ մայիսի 14-ին, կառավարությանը հավատարիմ ուժերը **Սեպուհի** (Արշակ Ներսիսյան) հրամանատարությամբ առանց լուրջ միջադեպի ստիպեցին ապստամբներին անձնատուր լինել: Ապստամբության ձախողումը Ալեքսանդրապոլում մեծապես կանխորոշեց դրանց անհաջողությունը հանրապետության մյուս քաղաքներում ու բնակավայրերում: Ապստամբական թույլ բռնկումներ եղան նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում, Ղազախ-Շամշադինում և այլուր: Ընդվզող հիմնական տարրը դասալիք զինվորականությունն էր: Ընդամենը մեկ օր տևեց Կարսի ելույթը (մայիսի 12-ին), որի ղեկավարներից 14 հոգի, այդ թվում բոլշևիկ Ղուկաս Ղուկասյանը բեռնատար մեքենայով փորձեցին անցնել Ալեքսանդրապոլ, սակայն ճանապարհին Արգինա գյուղի մոտ (Բաշկադքլար), ընդհարվեցին ոստիկակական ուժերի հետ, որի հետևանքով 9-ը

սպանվեցին, այդ թվում Ղ. Ղուկասյանը, իսկ մնացած 5-ը ձերբակալվեցին: Մնացած ելույթները նույնպես հեշտությամբ ճնշվեցին: Արտակարգ դատարանների վճռով մահապատժի են ենթարկվել ինը ակտիվ կազմակերպիչներ: Առանց դատի հաշվեհարդար է կատարվել երկու հոգու՝ ուսուցիչ Հ. Սարուխանյանի և պատգամավոր Ա. Մելքոնյանի հանդեպ, իսկ մոտ 250 մարդ ենթարկվել է բանտարկության: Կասեցվեց նորաստեղծ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցության (ՀԿ(բ)Կ) գործունեությունը: Նրանց մի մասն անցավ ընդհատակ, իսկ մյուս մասը հեռացավ Խորհրդային Ադրբեջան, որպեսզի այնտեղից նախապատրաստեր իշխանությունը գրավելու նոր գործողություններ:
Այսպիսով՝ բոլշևիկների ձեռնարկած հակապետական Մայիսյան ապստամբությունը պարտվեց: Պարտության հիմնական պատճառն այն էր, որ ապստամբ բոլշևիկները բավարար աջակցություն չստացան ժողովրդից: Ապստամբության ղեկավարները հույսը դրել էին դրսի՝ Կարմիր բանակի օգնության վրա, որը 1920 թ. գարնանը սկսված խորհրդա-լեհական պատերազմի հետևանքով տեղի չունեցավ: Ապստամբությունը ընթացավ անկազմակերպ, անջատ-անջատ, առանց միասնական ղեկավար կենտրոնի, ականավոր պատմաբան, ակադեմիկոս Ա. Հովհաննիսյանի բնորոշմամբ՝ նմանվելով անառագաստ և անղեկ նավի:
Այդուհանդերձ՝ չնայած Մայիսյան ապստամբությունը ճնշվեց, սակայն այդ ելույթը թուլացրեց իշխանության դիրքերը: Քանի որ ընդվզող հիմնական տարրը զինվորականությունն էր, ուստի այդ հանգամանքը խմորումներ առաջացրեց բանակում, ընկավ նրա մարտունակությունը, որը պետք է բացասական անդրադարձ ունենար արդեն 1920 թ. աշնան թուրք-հայկական պատերազմի ժամանակ:

Գլ.-5. Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը (1918-1920 թթ.)

5.1.Հարաբերությունները հարևան պետությունների հետ

ՀՀ արտաքին քաղաքականության հիմնական ուղղություններից մեկը հարաբերությունների կարգավորումն ու կայունացումն էր անմիջական հարևանների հետ, ծագած տարածքային-սահմանային հարցերը լուծել խաղաղ միջոցներով, իսկ մյուս գերակա ուղղությունը՝ ի վերջո նոր իրողությունների լույսի ներքո հասնել բազմաչարչար Հայկական հարցի լուծմանը, այն է՝ երկու հայաստանների միավորումով ստեղծել **Միացյալ և Անկախ Հայաստան**:
Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր անմիջական հարևանների հետ հարաբերությունները կառուցելիս աշխատում էր ըստ կարելվույն առաջնորդվել բարի դրացիության սկզբունքով և ծագած վեճերն ու հակամարտությունները լուծել քաղաքական բանակցությունների, փոխադարձ համաձայնության ճանապարհով:
Հայաստանի կառավարություններից, հարևանների հետ բարդություններից խուսափելու համար, չափից ավելի զգուշավոր քաղաքականություն է վարել Հ. Քաջազնունու կաբինետը:
Ինչպես այժմ, այնպես էլ 100 տարի առաջ Հայաստանի հարևանները նույն չորս երկրներն էին՝ Թուրքիան, Վրաստանը, Ադրբեջանը և Պարսկաստանը (Իրանը): Դիտարկելով Հայաստանի միջպետական հարաբերությունների վիճակը 100 տարիների հեռավորությունից՝ կարելի է արձանագրել, որ գրեթե նույնն է, ըստ էության էական տարբերություն չկա: Թուրքիայի և Ադրբեջանի հետ Հայաստանի հարաբերությունները եղել ու մնում է անհաղորդ, կոնֆլիկտային ու գրեթե թշնամական, Վրաստանի հետ՝ ոչ այնքան միանշանակ բարեկամական: Միակ անմիջական հարևան երկիրը Իրանն էր, որը ինչպես անցյալում, այնպես էլ ներկայումս Հայաստանի հետ չի ունեցել որևէ լուրջ խնդիր և միջպետական հարաբերությունների ողջ ընթացքում պահպանվել է ավանդաբար բարեկամական հարաբերություններ ու բարյացակամ չեզոքություն:

Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի կանոնավոր հարաբերությունների հաստատումը հարթ չընթացան, որովհետև կային ազգային, տարածքային-սահմանային լուրջ վեճեր: Հայ-թուրքական հարաբերությունների հետ կապված, ասվածին պետք է հավելել պետական մակարդակով հայերին ցեղասպանելը և նրանց հայրենազրկելը: Ինչպես այն ժամանակ, այնպես էլ մեր ժամանակներում Հայաստանը Թուրքիայի հետ պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ չի ունեցել և ներկայումս էլ չունի:
Ոչ պակաս լարված ու կոնֆլիկտային (թշնամական) էին հարաբերությունները Ադրբեջանի հետ, որոնք փաստորեն ընթանում էին չհայտարարված պատերազմական իրավիճակներով, սահմանային բախումներով, թուրք-թաթարական խռովություններով: Այդ թշնամանքի հիմնական պատճառը տարածքային-սահմանային վեճերն էին Արցախի, Սյունիքի, Նախիջևանի և այլ երկրամասերի պատկանելության շուրջ, որը Հայաստանի ու Ադրբեջանի հանրապետությունների գրեթե ողջ ժամանակաշրջանում վերածվեց հայ-ադրբեջանական չհայտարարված պատերազմի:
Բայց մյուս կողմից չի կարելի ասել, թե Անդրկովկասյան հանրապետությունները բնավ չեն ունեցել շահերի ընդհանրություն: Սակայն այդ ընդհանրությանը վնասել են մի կողմից անլուծելի թվացող տարածքային-սահմանային վեճերը, իսկ մյուս կողմից՝ նրանց քաղաքական տարամերժ կողմնորոշումները: Դրա հետ մեկտեղ, չնայած բարդ քաղաքական փոխհարաբերություններին, այնուամենայնիվ, Անդրկովկասյան երեք հանրապետությունները մի քանի անգամ Թիֆլիսում, Բաքվում համատեղ կոնֆերանսներ (խորհրդաժողովներ) են հրավիրել և այլ մակարդակի բանակցություններ վարել՝ փորձելով գտնել փոխադարձ շահերի ընդհանրության եզրեր և ներդաշնակել դրանք: Բայց Վրաստանը և Ադրբեջանը, լինելով տնտեսապես ավելի հզոր և իրենց ձեռքում պահելով հաղորդակցության ուղիները, տրանզիտի և առևտրատնտեսական այլ հարաբերությունների դիմաց Հայաստանից պահանջում էին տարածքային զիջումներ:
Հարկ է նշել, որ Անդրկովկասյան երեք հանրապետությունների միջև տարածքային- սահմանային վեճերն էին, որոնք տխուր ժառանգություն

էին մնացել ռուսական ինքնակալության տիրապետության ժամանակներից ի վեր: Ինչպես հայտնի է՝ Անդրկովկասի վարչական բաժանումները ցարիզմի օրոք, կատարվել էին կամայականորեն, բաժանիր, որ տիրես սկզբունքով: Դրանք կատարվել էին ոչ ըստ ազգային, պատմաէթնիկական հատկանիշի ու հատկապես հայերի համար շատ աննպաստ պայմաններով: Որպեսզի պատկերը պարզ լինի, փաստենք, որ Անդրկովկասի 9 նահանգներից ու մարզերից միայն Երևանի նահանգում էին հայերը կազմում մեծամասնություն: Ստացվել էր այնպես, որ հայահոծ բնակչությամբ բնիկ հայկական մի շարք շրջանների՝ Ախալքալաքի, Լոռու, Լեռնային Ղարաբաղի, Զանգեզուրի և այլնի, որոնք նախկինում մտնում էին Թիֆլիսի և Ելիզավետպոլի նահանգների մեջ, վրացիները և կովկասյան թուրքերը հավակնություններ ունեին: Դեռ ժամանակավոր կառավարության օրոք Անդրկովկասի սահմանային բաժանման հարցում հայերի առաջարկած ազգային (էթնիկ) սկզբունքը հանդիպում էր վրացիների և թուրք-թաթարների միասնական դիմադրությանը: Արդեն անկախության շրջանում այդ խնդիրը ավելի սրվեց և վերաճեց հակամարտության ու միջպետական պերմանենտ բախումների:

5.2.Հայ-վրացական հարաբերությունները

Վրաստանի և Հայաստանի անկախության հռչակումից հետո այնքան էլ դյուրին չընթացան հայ-վրացական հարաբերությունները: Պատմական և էթնիկ առումներով բնիկ հայկական Ախալքալաքի և Լոռի-Փամբակի տարածքների նկատմամբ հավակնություններ ուներ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունը:
Պատմությունից մենք գիտենք, որ հայ և վրաց ժողովուրդների միջև գոյություն է ունեցել ավելի քան երկհազարամյա բարեկամություն: Նրանք շատ անգամ համատեղ պայքարել են օտար նվաճողների դեմ: Սակայն 1918 թ. Վրաստանի և Հայաստանի անկախության հռչակումից հետո տարածքային-սահմանային վեճ ծագեց նրանց միջև, որի պատճառը, ինչպես արդեն ասվեց, դեռևս ցարիզմի ժամանակներում կատարված վարչատարածքային առանց պատմական ու էթնիկ հաշվառման կատարված մեխանիկական բաժանումն էր: Հայկական

երկու գավառներ՝ Լոռին ու Ախալքալաքը, մտցվել էին Թիֆլիսի նահանգի մեջ:
Հայ-վրացական հարաբերությունները առավել սրվեցին Առաջին աշխարհամարտի ավարտից հետո: Այն բանից հետո, երբ աշխարհամարտում պարտված Օսմանյան Թուրքիան իր զորքերը դուրս բերեց Անդրկովկասից ու Հայաստանից, և հայկական զորաջոկատները մուտք գործեցին Բորչալուի գավառի Լոռու գավառամաս՝ իր հսկողության տակ վերցնելով հայկական 40-ից ավելի գյուղերի պաշտպանությունը: Մինչդեռ Վրաստանի Հանրապետությունը ամեն կերպ ձգտում էր իր սահմանների մեջ ներառել հայաբնակ այդ գավառները: Հ. Քաջազնունու կառավարությունը ջանում էր հարցը լուծել բանակցությունների միջոցով: Վրաց իշխանությունները թշնամանքով ընդունեցին հայկական զինուժի քայլը և կողմերի միջև ծագած դիվանագիտական հակամարտությունը ի վերջո 1918 թ. դեկտեմբերին վերաճեց հայ-վրացական կարճատև պատերազմի, մի անցանկալի երևույթ, որպիսին չէր եղել հայ վրացական հարաբերությունների դարավոր պատմության ընթացքում:
Դեկտեմբերի 13-ին սկսվեցին ռազմական գործողությունները երկու հանրապետությունների կանոնավոր զորքերի միջև: Հայկական զորքը, որի հրամանատարն էր **Դրաստամատ Կանայանը** (Դրոն), կարճ ժամանակամիջոցում մաքրում է Լոռին վրաց ուժերից, դեկտեմբերի 23-ին գրավում է Սադախլոն և պատրաստ էր արշավել նույնիսկ Թիֆլիսի վրա: Պատերազմի երկրորդ փուլում վրաց զինուժը փորձեց կասեցնել հայկական զորամասերի հետագա առաջընթացը: Ռազմական բախման ընթացքում հալածանքի ու հետապնդումների ենթարկվեցին Վրաստանում ապրող հայերը: Փակվեցին ճանապարհները: Բարեբախտաբար պատերազմը կարճ տևեց՝ շուրջ երեք շաբաթ: Դեկտեմբերի 31-ին դադարեցվեցին ռազմական գործողությունները: Խնդրին միջամտեցին Անտանտի՝ Անգլիայի և Ֆրանսիայի զինվորական ներկայացուցիչները: 1919 թ. հունվարի 17-ին կողմերի միջև կայացվեց համաձայնություն: Լոռին հայտարարվեց «չեզոք գոտի»: Կարճ ժամանակամիջոցում բարելավվեցին հայ-վրացական հարաբերությունները, վերաբացվեցին երկաթուղին, հաղորդակցության մյուս ուղիները, կապը: Հայաստանը ստացավ ապրանքների փոխադրման տրանզիտի (տարանցիկ առևտրի) իրավունք և այլն:

Հետագայում հայ-վրացական տարածքային կնճիռը վերջնականորեն լուծվեց նրանով, որ 1921 թ. Ախալքալաքի գավառը կցվեց Վրաստանին, իսկ Լոռին միացվեց Հայաստանին: Կասկածից վեր է, որ եթե հայ-վրացական այդ կարճատև պատերազմում Հայաստանը տանուլ տար, ապա Լոռին ևս կարժանանար Ախալքալաքի ճակատագրին:

5.3.Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Արցախը և Զանգեզուրը

Շատ ավելի բարդ էին հարաբերությունները Ադրբեջանի հետ: Առանձնապես սուր ու շարունակական բնույթ կրեցին տարածքային-սահմանային վեճերը: Ադրբեջանը ձգտում էր նվաճել Լեռնային Ղարաբաղը (Արցախը), Զանգեզուրը (Սյունիքը), Շարուր-Նախիջևանը և այլ տարածքներ: Այդ խնդրում Ադրբեջանին աջակցում էին Անգլիան և Թուրքիան, իսկ 1920 թ. գարնանից՝ նաև Խորհրդային Ռուսաստանը: Հայտնի է, որ 1918 թ. վերջին անգլիացիների միջամտությամբ կասեցվեց Անդրանիկի զորախմբի առաջխաղացումը դեպի Շուշի ու Արցախ: Անգլիական զորքերի հրամանատարության գիտությամբ ու համաձայնությամբ 1919 թ. հունվարի կեսերին Արցախ-Զանգեզուրի նահանգապետ նշանակվեց հայտնի հայատյաց, ջարդարար **Խոսրով բեկ Սուլթանովը**: Արցախ-Սյունիքի ավելի քան 300 հազար հայությունը միանշանակ չճանաչեց Ադրբեջանի իշխանությունը և զենքը ձեռքին՝ պայքարի ելավ ազատության, իր ազգային տարածքային իրավունքների պաշտպանության և մայր հայրենիքին միանալու համար: ՀՀ կառավարությունը ձգտում էր խաղաղ միջոցներով լուծել Ադրբեջանի հետ ունեցած վիճելի հարցերը: Սակայն այդ բանակցությունները արդյունք չտվեցին: Մեծ տերությունները, շահագրգռված լինելով Բաքվի նավթով, ավելի հաճախ ճնշում էին գործադրում Հայաստանի վրա, որպեսզի նա զիջումներ անի Ադրբեջանին:
Ինչպես այսօր, այնպես էլ 100 տարի առաջ հայ-ադրբեջանական հակամարտության առանցքային խնդիրներից է եղել **Լեռնային Ղարաբաղի** (**Արցախի**) հիմնահարցը: Տասնամյակներ շարունակ մեզանում տարածում է գտել այն թյուր տեսակետը, թե իբր այն ժամանակ ՀՀ բարձրագույն իշխանությունները բավարար

ուշադրություն ու հետևողականություն չեն ցուցաբերել Արցախի խնդրում, և որ դրա համար էլ նա վերջին հաշվով հայտնվեց Ադրբեջանի վարչատարածքային սահմաններում: Սակայն որքան էլ ծանր էր Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակը, հանրապետության կառավարությունը անում էր հնարավորին ամեն ինչ տեր ու պաշտպան կանգնելու արցախահայության արդար դատին՝ «Ղարաբաղը համարելով անբաժանելի մասը Միացյալ և Անկախ Հայաստանի Հանրապետության»: Հանրապետության կառավարությունը ֆինանսական, նյութական և զինական օգնություն էր ցույց տալիս: Օժանդակություն էր ցուցաբերվում նաև կուսակցական խողովակներով և անհատական կարգով: Այսպես, օրինակ, 1919 թ. ամռանը ՀՅԴ Բաքվի ԿԿ Ղարաբաղի Ազգային խորհրդին էր փոխանցել 1.06 մլն. ռուբլու օժանդակություն:

Արցախում փաստական իշխանությունը, սկսած 1918 թ. կեսերից, գտնվում էր տեղի հայ Ազգային խորհրդի ձեռքում: Վերջինս, 1918 թ. մայիսից մինչև 1920 թ. մայիսը, իր հրավիրած տասը համագումարներում և դրանից հետո էլ՝ մինչև երկրամասի չարաբաստիկ բռնակցումը Ադրբեջանին, գործնականում չի ընդունել և չի ճանաչել Ադրբեջանի իշխանությունը:

Ինչպես հայտնի է, 1920 թ. սկզբներից ռազմաքաղաքական դրությունը բարդացավ Կովկասյան տարածաշրջանում, այդ թվում նաև Արցախում ու Զանգեզուրում: Դա կապվում էր Կարմիր բանակի տարածաշրջան հայտնվելու հետ, մի հանգամանք, որը ավելի ակտիվացրեց Ադրբեջանի մուսավաթական իշխանություններին: Արցախահայերի ազատագրական պայքարին թուրք-ադրբեջանական միացյալ զինյալ ուժերը պատասխանում են հայերի զանգվածային կոտորածներով: Օրինակ, 1920 թ. մարտի 23-ին Շուշիի հայությունը ենթարկվեց ահավոր ջարդի: Զոհվեց մոտ 8 հազար հայ: Շուշիի հայկական թաղամասը թալանվեց և հրկիզվեց :

Հայաստանի կառավարության որոշմամբ Դրոյի զորախումբը Զանգեզուրից մտավ Ղարաբաղ: Տեղում հայ ժողովրդի պայքարը ազատության և անկախության համար ղեկավարում էր Ղարաբաղի հայ Ազգային խորհուրդը: Ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը որոշում կայացրեց Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայաստանի Հանրապետությանը: Համատեղ ջանքերի շնորհիվ

Լեռնային Ղարաբաղը գործնականում միացվում է Հայաստանի Հանրապետությանը:
Իրադրությունը հայ-ադրբեջանական հարաբերություններում կտրուկ փոխվեց, երբ մի քանի օր անց՝ ապրիլի 28-ին, 11-րդ Կարմիր բանակի միջամտությամբ, առանց որևէ կրակոցի, խորհրդայնացվեց Ադրբեջանը: Դրանից հետո վերջինիս սկսեց պաշտպանել Խորհրդային Ռուսաստանը: Հաջորդ երկու օրերին Ադրբեջանի հեղկոմը և Ռուսաստանի 11-րդ բանակի հրամանատարությունը Հայաստանին վերջնագիր ներկայացրին՝ երեք օրվա ընթացքում հայ զորքերից մաքրել Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը, հակառակ դեպքում պատերազմ կհայտարարվի Հայաստանին: Վերջնագրի պատասխանի համար տրվում էր երեք օր ժամանակ: Վերջնագրում Նախիջևանի մասին խոսք չկար, քանի որ վերջինս, սկսած 1919 թ. կեսերից, ՀՀ չէր ենթարկվում, և նրանք Նախիջևանի հարցը գործնականում համարում էին լուծված: Դրան հետևեց թուրք-թաթար-բոլշևիկ զինուժի ներխուժումը Ղարաբաղ, Զանգեզուր և Նախիջևան: Կարմիր բանակի օգնությամբ Ադրբեջանը տիրեց Լեռնային Ղարաբաղին: Մայիսի 26-ին Դրոն հարկադրված իր զորամասով Արցախից վերադառնում է Զանգեզուր և ապա Դարալագյազ (Եղեգնաձոր):
Արցախյան խնդրում հետագա դեպքերն ընթացան այնպես, որ խորհրդային կուսակցական-պետական մարմիններում ձգձգվող ու իրարամերժ վճիռներից հետո, ի վերջո, 1921 թ. հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, Մոսկվայի գիտությամբ, ընդունեց տխրահռչակ որոշում՝ Լեռնային Ղարաբաղը (Արցախը) Ադրբեջանի կազմում թողնելու վերաբերյալ, թեև այդ նույն Կովկասյան բյուրոն նախորդ օրվա (հուլիսի 4-ի) իր նիստում, ձայների մեծամասնությամբ, ընդունել էր որոշում հօգուտ Հայաստանի: Ինչևէ, վճիռը կայացվել էր, և Խորհրդային Հայաստանի ղեկավարների ու հայ բնակչության բողոքները մնացին անհետևանք: Այդ չարաբաստիկ որոշումից հետո՝ 1923 թ. հուլիսի 7-ին, վարչականորեն կազմվեց Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Ավելին, ՀՍԽՀ և ԼՂԻՄ արանքում 1923 թ. ստեղծվեց բուֆերային «Կարմիր Քրդստան» ազգային օկրուգ: Միտումնավոր անցկացվեց վարչատարածքային այնպիսի սահմանագիծ, որպեսզի մարզն անմիջական սահմանային շփում չունենա Հայաստանի հետ այդպիսով լիովին կտրվի մայր հայրենիքից:

Արցախյան խնդրի նման անարդարացի լուծումն էլ եղավ այն թանձրույթը, որն աստիճանաբար կուտակվելով՝ պոռթկած 1988 թ.՝ սկիզբ դնելով արցախյան համաժողովրդական շարժման:
Այդ տեսակետից ծանր ճակատագիր ունեցավ նաև Նախիջևան խնդիրը: 1919 թ. կեսերին անգլիացիների օգնությամբ Նախիջևանի գավառը պաշտոնապես միացվեց Հայաստանի Հանրապետությանը: Սակայն տեղի թաթարները Ադրբեջանի և Թուրքիայի իշխանությունների աջակցությամբ ապստամբություն բարձրացրին և հրաժարվեցին ճանաչել Հայաստանի իշխանությունը: Շարուր-Նախիջևանի թաթարների շարունակական խռովությունների, ավերածությունների, թալանի հետևանքով երկրամասը գրեթե լիովին հայաթափվեց: Նախիջևանահայության մի մասը կոտորվեց, իսկ մյուսը հարկադրված դիմեց արտագաղթի: 1920 թ. աշնանը՝ թուրք-հայկական պատերազմի ժամանակ, Թուրքիան բռնազավեց Նախիջևանի գավառը: Իսկ 1921 թ. Մոսկվայի և Կարսի հակահայ պայմանագրերով Նախիջևանի երկրամասը հանձնվեց Խորհրդային Ադրբեջանին:
Բոլորովին այլ ընթացք ստացան դեպքերն ու իրադարձությունները Զանգեզուրում: Երկրամասը, սկսած 1918 թ. երկրորդ կեսից, անկախ էր շնորհիվ Անդրանիկի, իսկ 1919 թ. մարտից՝ ՀՀ ներկայացուցիչ, Արցախ-Սյունիքի նահանգապետ **Արսեն Շահմազյանի**: Վերջինիս հետո փոխարինուն է **Ս. Մելիք-Յոլչյանը**: Արցախ-Սյունիքի կռիվների հետագա եռուն շրջանում՝ 1919 թ. օգոստոսին, ՀՅԴ Բյուրոյի որոշմամբ Սյունիք է գործուղվում տաղանդավոր զորավար, ականավոր քաղաքագետ ու գաղափարախոս, փոխգնդապետ **Գարեգին Նժդեհը** (Գարեգին Տեր-Հարությունյան) (1886-1955), որը շուրջ երկու տարի գլխավորում է Լեռնահայաստանի աննկուն ժողովրդի հերոսական ինքնապաշտպանական մարտերը: Այդ պայքարի նվիրյալներից էր նաև Մեղրու հատվածի պատասխանատու մեծ հայրենասեր, ազնվագույն անձնավորություն **Աշոտ Մելիք-Մուսյանը**:
Հիրավի, Հայոց պատմության լուսավոր էջերից է Զանգեզուրի քաջակորով ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը թուրք-թաթար-բոլշևիկյան ոտնձգությունների դեմ: Զանգեզուրում կացությունը հատկապես ավելի է ծանրանում, երբ 1919 թ. ամռանը Նախիջևանի երկրամասում մնացած օսմանցի սպաների ու էմիսարների օժանդակությամբ տեղի թուրք-թաթարական տարրերին հաջողվում է

ժամանակավորապես գրավել Շարուր-Նախիջևանը և, փաստորեն, օղակման մեջ առնել Զանգեզուրը: Վերջինիս պաշտպանությունը ստանում է ստրատեգիական նշանակություն, քանզի այն բուն Հայաստանի և Արցախի միջև կապող միակ օղակն էր: Ուստի կորցնել Զանգեզուրը, նշանակում էր կորցնել նաև Արցախը: Թուրք-թաթարական զորքերը բազմիցս փորձեցին զավթել Սյունիքը, սակայն ամեն անգամ հանդիպելով տեղացի քաջարի հայ բնակչության հակահարվածին՝ մեծ կորուստներով հետ նահանջեցին:
Այն բանից հետո, երբ 1920 թ. ամռանը Կարմիր բանակը գրավում է Գորիսը, Սիսիանը, Կապանը և պատրաստվում էր շարժվել դեպի Գենվազ (Արևիկ) և Մեղրի (Գողթան) միանալու համար Օրդուբադ-Նախիջևանի թուրքական ուժերին, իսկ Դրոյի գլխավորած հայկական զորամասը, խուսափելով բոլշևիկների հետ առճակատումից, օգոստոսի սկզբներին Զանգեզուր-Սիսիանից նահանջում է Դարալագյազ, միայն Գ. Նժդեհը, չանսալով Հայաստանի իշխանությունների հորդորներին, անհավասար մարտեր մղելով Կապանի համար, իր փոքրաթիվ ուժերով բարձրանում է **Խուստուփ** լեռը՝ շարունակելու համար իր հերոսական պայքարը օտար նվաճողների դեմ:
Իսկ մինչ այդ, հայ-բոլշևիկյան կռիվներին վերջ տալու և ավելորդ բարդություններից խուսափելու նպատակով, օգոստոսի 10-ին Թիֆլիսում Հայաստանի կառավարության ներկայացուցիչ Ա. Զամալյանը Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ ստորագրում է ժամանակավոր համաձայնագիր, ըստ որի Ղարաբաղը, Զանգեզուրը և Նախիջևանը՝ իբրև վիճելի տարածքներ, ժամանակավորապես պիտի մնային խորհրդային ուժերի հսկողության տակ: Այդ նշանակում էր, որ Նախիջևանի վրայով արդեն անմիջական սահմանային կապ էր հաստատվում բոլշևիկների և թուրքերի միջև: Սակայն ՀՀ կնքած այդ աննպաստ ժամանակավոր համաձայնագիրը չի ճանաչում Զանգեզուրի ժողովուրդը՝ իր սիրելի հրամանատար Նժդեհի գլխավորությամբ: Եվ 1920 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին Գ. Նժդեհը և նրա սիսիանցի քաջ զինակից **Պողոս Տեր-Դավթյանը**, ժողովրդի աջակցությամբ տանելով մի շարք հնարամիտ ու փայլուն հաղթանակներ, լիովին ազատագրում են Կապանը, Սիսիանը և Գորիսը: Այդպիսով, 1920 թ. աշնանը Խուստուփի հերոս հռչակված Գ. Նժդեհի կազմակերպած երկամյա ինքնապաշտպանական համառ կռիվների

շնորհիվ լիովին ազատագրվեց Զանգեզուրը: 1920 թ. դեկտեմբերի 25-ին Տաթևի համազանգեզուրյան առաջին համագումարում հռչակվում է **Ինքնավար Սյունիք**, մինչև որ նպաստավոր պայմանները հնարավորություն կտային միանալու մայր Հայաստանին: Գ. Նժդեհը կարգվում է Ինքնավար Սյունիքի սպարապետ: 1921 թ. ապրիլի 26-ին Տաթևի վանքում գումարված համազանգեզուրյան երկրորդ համագումարում Ինքնավար Սյունիքը հռչակվում է Անկախ **Լեռնահայաստան**: Լեռնահայաստանի վարչապետ է ընտրվում սպարապետ Նժդեհը: Եվ միայն այն բանից հետո, երբ կայուն երաշխիքներ են տրվում Զանգեզուրը Խորհրդային Հայաստանին միացնելու համար, 1921թ. հուլիսի կեսերին գեներալ Գ. Նժդեհը, իրեն բավարարված համարելով, փոքր զորախմբով անցնում է արտասահման (Իրան)՝ իր հետ տանելով անկախ Հայաստանի դրոշը: Ներկայումս Սյունիքի մարզը Հայաստանի կազմում լինելու համար հայ ժողովուրդը մեծապես պարտական է Մեծն Գ. Նժդեհին: Եթե չլիներ Գ. Նժդեհի գլխավորած տևական ու համառ պայքարը, ապա, ամենայն հավանականությամբ, Զանգեզուրը ևս կարժանանար Նախիջևանի և Արցախի ճակատագրին: Զանգեզուրի հերոսամարտի հաղթական փորձը լավագույն հաստատումն է այն գաղափարի, որ ազատությունը և անկախությունը չեն ստանում, այլ նվաճում են: Իմաստալի ու իմաստասիրական է այն միտքը, որ արյունով ձեռք բերած ազատությունն ու անկախությունը ավելի թանկ է, և այն պահպանելու և հավերժելու ձգտումը շատ ավելի մեծ:
Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին, ապա դրանք անմիջականորեն առնչվում էին Հայկական հարցին:

Գլ. 6.- Հայկական հարցը Փարիզի խաղաղության կոնֆերանսում: Սևրի պայմանագիրը

6.1.Հայկական պատվիրակությունները Փարիզի կոնֆերանսում

Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության գլխավոր խնդիրը Հայկական հարցի լուծումն էր: Այսինքն՝ պահանջ էր դրվում Թուրքիայի տիրապետության տակ գտնվող արևմտահայ 6-7 նահանգները միացնելու Հայաստանի Հանրապետությանը և այդպիսով՝ **Ազատ Անկախ և Միացյալ Հայաստանի** ստեղծումը:
Ինչպես հայտնի է, 1918 թ. հոկտեմբերի 30-ին ստորագրված Մուդրոսի (նավահանգիստ էգեյան ծովում) զինադադարով Թուրքիան անձնատուր եղավ (կապիտուլացվեց) և պատավորվեց իր զորքերը դուրս բերել նաև Անդրկովկասից ու Հայաստանից: Պարտություն կրեցին Քառյակ միության նաև մյուս երկրները, ու այդպիսով՝ ավարտվեց Առաջին աշխարհամարտը: Բաթումի պայմանագիրը իր ուժը պահպանեց մինչև աշխարհամարտի ավարտը:
Իմանալով, որ հաշտություն կնքելու նպատակով շուտով՝ 1919 թ. հունվարին, Փարիզում բացվելու է խաղաղության վեհաժողով, որոշվեց Հայաստանից պատվիրակություն ուղարկել Եվրոպա՝ ներկայացնելու համար հայկական պահանջները: Հայաստանը համարվում էր հաղթանակած Անտանտի «փոքր դաշնակից», որովհետև մասնակցություն էր ունեցել պատերազմին և կրել էր վիթխարի կորուստներ:
1919 թ. հունվարի 18-ին Փարիզում՝ Վերսալի պալատում, բացվեց խաղաղության կոնֆերանսը (վեհաժողովը), որին մասնակցում էին 27 երկրների մոտ 2000 պատվիրակներ: Հաղթանակած Անտանտի երկրները (Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան, Ճապոնիան և այլն) այստեղ պետք է հաշտության պայմանագրեր կնքեին պարտված Քառյակ միության երկրների, այդ թվում՝ Թուրքիայի հետ:
Մինչ այդ, Հայաստանի ու հայ ժողովրդի պահանջները կոնֆերանսում ներկայացնելու համար 1918 թ. դեկտեմբերի սկզբին կազմվեց կառավարության պատվիրակություն՝ **Ավետիս Ահարոնյան** (նախագահ, ՀՅԴ) , **Միքայել Պապաջանյան** (ՀԺԿ) և **Համո Օհանջանյան** (ՀՅԴ) անդամներ կազմով: Վերջինս գտնվում էր Բեռլինում և նրանց պետք է

միանար Փարիզում: Պատվիրակության հետ Եվրոպա մեկնեցին նաև արևմտահայ ներկայացուցիչներ՝ Վ. Փափազյանը և Տ. Թերզիբաշյանը: Ընդհանուր թվով պատվիրակությունը խորհրդականների, քարտուղարների և այլ օժանդակ աշխատակիցների հետ միասին կազմել է 14 մարդ:
Սահմանվեց պատվիրակության իրավասության շրջանակը: Կառավարության պատվիրակության առաքելության խնդիրն էր՝ իրենց առաջարկություններով, խնդրանքներով, ծանոթություններով, հանրային նպաստավոր կարծիք ստեղծելու միջոցով հաղթած տերությունների ուշադրությունը հրավիրել Հայկական հարցի վրա և ամեն կերպ նպաստել դրա արդարացի լուծմանը:
Հաշվի առնելով Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո Հայկական հարցի համապարփակ լուծման համար ստեղծված նպաստավոր ռազմաքաղաքական և դիվանագիտական պայմանները՝ ՀՀ կառավարությունը Հայաստանի ամբողջությունը վերականգնելու նպատակով առաջ քաշեց ու պաշտպանեց Հայաստանի երկու հատվածների (ռուսահայ և տաճկահայ նահանգների) միավորումից Միացյալ և Անկախ Հայաստան ստեղծելու մասին գաղափարը: Ընդ որում՝ կառավարության դեկտեմբերի 7-ի հրահանգով պահանջվելու էր առավելագույնը արևմտահայ 6 վիլայեթ, իսկ նվազագույնը՝ 3 վիլայեթ (Վան, Բաղեշ և Էրզրում, առանց ոչ հայաբնակ ծայրագավառների)՝ սեփական ելքով դեպի Սև ծով:
Միացյալ Հայաստանի հարցում ՀՅԴ որոշ գործիչներ՝ Ռուբեն Տեր-Մինասյանը, վարչապետ Հ. Քաջազնունին, Ալ. Խատիսյանը, Ս. Վրացյանը անգամ դեմ էին ծովային ելքի պահանջին, իսկ Կիլիկիայի մասին առհասարակ խոսք չկար: Մյուս կողմից հարկ է նշել, որ ՀՅ Դաշնակցության շարքերում նույնպես կային անհատ գործիչներ, հատկապես գաղութահայ հատվածից, որոնք ավելի մեծ պահանջներ էին դնում: Սակայն ՀՅԴ-ի և կառավարության քաղաքական ուղեգիծը որոշելիս նրանք որոշակի ազդեցություն չեն ունեցել:
Արդեն 1919 թ. փետրվարի 6-13-ը Երևանում գումարված Արևմտահայերի երկրորդ համագումարում ընդունված քաղաքական բանաձևում առաջին անգամ ընդունվում է «**Ազատ և Միացյալ Հայաստան**» ստեղծելու մասին պլատֆորմը: Համագումարը պահանջում էր նաև դատարանով պատժել Հայոց Մեծ եղեռնի

դահիճներին: Այդ նույն գաղափարի մարմնավորման շուրջ ավելի ուշ՝ 1919 թ. աշնանը, Երևանում կայացած ՀՅ Դաշնակցության Թ (9-րդ) Ընդհանուր ժողովը (համագումար), նույն կերպ արտահայտելով հաստատակամություն Հայաստանի անկախության և Հայկական հարցի համապարփակ լուծման խնդիրների շուրջ, բանաձևեց՝ «**Նվիրագործել Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությանը և անոր ամբողջացման ու զարգացման ձգտել բոլոր զորությամբ, ժողովրդավար հանրապետության հիման վրա**»[4]:

Ինչպես արդեն տեղեկացվել է, ավելի վաղ՝ 1912 թ. նոյեմբերից, հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ի հանձնարարությամբ Փարիզում գործում էր եգիպտահայ մեծահարուստ, հասարակական գործիչ Պողոս Նուբար փաշայի գլխավորած Ազգային պատվիրակությունը: Նախատեսվում էր, որ ՀՀ կառավարության և Պողոս փաշայի գլխավորած պատվիրակությունները պետք է համախորհուրդ նպաստեին Հայ դատի, այսինքն՝ Միացյալ Հայաստանի գաղափարի իրականացմանը: Սակայն հենց սկզբից Միացյալ Հայաստանի գաղափարի բովանդակության և տարածքային պահանջների շուրջ նրանց միջև լուրջ տարաձայնություններ ծագեցին: Եթե հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունը, ՀՀ պատվիրակությունը հանդես էին գալիս համեմատաբար չափավոր պահանջներով՝ առավելագույնը արևմտահայ 6 նահանգ, իսկ նվազագույնը՝ 3 նահանգ՝ ծովային ելքով, ապա Ազգային պատվիրակության ղեկավար Պողոս Նուբար փաշան, Հայ ս. ռամկավարները, նրանց գաղափարակից ու ձայնակից ՀԺԿ, որը կոալիցիայի մեջ էր ՀՅԴ հետ, ինչպես նաև գաղութահայ Ս.Դ. Հնչակյանները պահանջում էին ծովից ծով Հայաստան՝ թուրքահայ 7 նահանգներ՝ Կիլիկիայի չորս սանջակների հետ միասին:

Հարկ է նկատել, որ Փարիզի խաղաղության կոնֆերանսի շրջանում Հայաստանի կառավարության և Պողոս փաշայի միջև ծագել էր ակներև տարընթերցում «Միացյալ Հայաստան» հասկացության բովանդակության հարցում: Այսպես՝ ՀՅԴ Բյուրոն և Հայաստանի կառավարությունը Միացյալ Հայաստան ասելով հասկանում էին ՀՀ և արևմտահայ մի քանի նահանգների միավորումով հիմնել Միացյալ և Անկախ Հայաստան, մինչդեռ Ազգային պատվիրակության ղեկավար

[4] Քաղվածներ Հ.Յ.Դ. 9-րդ Ընդհանուր ժողովի որոշումներից, Ե., 1920, էջ 205:

Պողոս փաշան և իրեն աջակից կուսակցությունները Միացյալ Հայաստանի տակ հասկանում էին արևմտահայ 7 նահանգները Կիլիկիայի 4 սանջակների հետ միասին:
Ավելին, անձամբ Պողոս փաշան և արևմտահայ ռամկավար շրջանակները դեմ էին, որ ՀՀ հարցը խառնել Տաճկահայ դատի հետ: Նրանք գտնում էին, որ այդ երկու հարցերը պետք է տարանջատել իրարից և հասնել առաջին հերթին Տաճկահայաստանի (հնարավորության դեպքում նաև Կիլիկիայի հետ) ինքնուրույն անկախության, Ռուսահայաստանի հարցը չպետք է խառնել Տաճկահայ հարցին, որն, իրենց կարծիքով, կխանգարի Հայկական հարցի հայանպաստ լուծմանը: Ազատական ժողովրդավարական գաղափարներ դավանող Հայ ժողովրդական կուսակցությունը Հայկական հարցում համերաշխվում և առաջնորդվում էր Պողոս փաշայի և Հայ ս. ռամկավարների առաջադրած համանման գաղափարներով ու մոտեցումներով: Ինչպես արդեն ասվել է, հենց այդ տարաձայնություններն էլ դարձան այն շարժառիթը, որ ՀՅԴ-ՀԺԿ կոալիցիան քայքայվեց, և խորհրդարանը լուծարվեց:
Մեր կարծիքով, Պողոս Նուբար փաշայի, Հայ ռամկավարների ու Հայ ժողովրդականների սխալն այն էր, որ տարանջատելով և կարևորություն չտալով Հայաստանի Հանրապետություն գործոնին, որի առանցքի շուրջ հենց պետք է միավորվեին հայկական մնացյալ հողերը, և ստեղծվեր Միացյալ և Անկախ Հայաստան, դրա փոխարեն նրանք Արևմտյան Հայաստանի (Տաճկահայաստանի) հարցը կտրում էին իրատեսական հիմքից և Միացյալ, Անկախ Հայաստան ասելով՝ հասկանում էին տաճկահայ նահանգները և Կիլիկիան միասին:
Բացի այն, որ ՀՅԴ և Հայ ռամկավար-ժողովրդականները տարբեր կերպ էին հասկանում Միացյալ և Անկախ Հայաստանը, վերջիններիս հավակնություններից մեկն էլ այն էր, որ նրանք ապագա Միացյալ Հայաստանի կառավարության ղեկին տեսնում էին միայն իրենց պաշտելի Պ. Նուբար փաշային, նույնիսկ Փարիզում կազմել էին ստվերային կառավարություն՝ ռամկավար Փաշայի գլխավորությամբ:
Հայկական երկու պատվիրակությունները չկարողացան ընդհանուր լեզու գտնել ոչ միայն տարածքային պահանջների հարցում, այլև նույնիսկ մրցակցում էին իրար հետ, թե այդ երկու պատվիրակություններից որն է գլխավորը: Դրանք հարցեր էին, որոնք,

անկասկած, իրենց բացասական ազդեցությունը պետք է ունենային Հայ դատի դրական լուծման ընթացքի վրա:
Այդուհանդերձ, Հայաստանի կառավարության պատվիրակությունը որոշ ուշացումով՝ փետրվարին, հասնելով Փարիզ, փորձեց Ազգային պատվիրակության հետ գործակցել, նույնիսկ տարածքային պահանջներ ներկայացնելու հարցում մեծ զիջողության գնալ: Հայկական պատվիրակությունները համատեղ 1919 թ. փետրվարին խաղաղության կոնֆերանսին ներկայացրին հայկական պահանջների մի հուշագիր «**Memorandum**», որով դաշնակից տերություններից պահանջվում էր ստեղծել Միացյալ և Անկախ Հայաստան մեկ ամբողջական տարածքի վրա: Այն ներառելու էր Կովկասահայաստանը Կարսի մարզի ու Արցախի հետ միասին, Արևմտահայ յոթը նահանգները (վիլայեթները)՝ Էրզրումի, Վանի, Բաղեշի (Բիթլիսի), Դիարբեքիրի, Խարբերդի, Սվազի և Տրապիզոնի մի մասը՝ դեպի Սև ծով ելքի համար, ինչպես նաև Կիլիկիայի չորս սանջակները, մի խոսքով՝ լայնատարած մի պետություն՝ Սև ծովից մինչև Միջերկրական, այսինքն՝ ծովից-ծով Հայաստան: Ցավոք, գաղութահայության ընդհանուր ոգևորության ազդեցության տակ և Ազգային պատվիրակության հորդորներով (պնդումով) Ա. Ահարոնյանը, փաստորեն անտեսելով կառավարության անհամեմատ համեստ հրահանգները, ստորագրեց փետրվարի 12-ի Դաշնակից տերություններին ներկայացվող ծովից ծով Հայաստան պահանջող հուշագրի տակ, որն, անշուշտ, լուրջ շեղում էր Հայաստանի կառավարության հրահանգից և իրատեսական չէր:
1919 թ. փետրվարի 26-ին Ա. Ահարոնյանը և Պողոս փաշան մասնակցեցին Տասի խորհրդի նիստին և ներկայացրին հայկական պահանջները: Հայկական միացյալ պատվիրակությունը կոնֆերանսին ներկայացրեց նաև վերոհիշյալ նահանգների սահմաններով գծված ապագա Մեծ Հայաստանի համապատասխան քարտեզը: Հայկական պահանջների հուշագիրը վավերացվեց 1919 թ. փետրվարի 24-ից մինչև ապրիլի 21-ը Փարիզում գումարված Արևմտահայ Ազգային համագումարում: Սակայն, ինչպես հայտնի է, այդ հուշագրի առավելագույն պահանջները հետագայում Անտանտի տերությունները և ԱՄՆ-ը չափավորեցին ու 1920 թ. ապրիլին Սան-Ռեմոյում ընդունված Թուրքիայի հետ կնքվելիք ապագա հաշտության պայմանագրի նախագծում ՀՀ-ի մեջ ներառվելու էին Արևմտյան Հայաստանի 3

նահանգ և Տրապիզոնի նահանգի մի նեղ պարանոցով ելք էր ապահովելու դեպի Սև ծով: Այդ նշանակում է, որ Ա. Ահարոնյանը վերջին հաշվով փաստորեն վերադարձել է կառավարության հրահանգին:
Բացի Միացյալ և մեծ Հայաստան ստեղծելու պահանջից՝ ներկայցված հուշագրում խոսվում էր Հայաստանի մանդատի, նրա Ազգելի լիգա մտնելու, պատերազմից կրած վնասների, բռնագրավումների, զրկանքների, տեղահանությունների, կոտորածների դիմաց հատուցումներ ստանալու մասին: Մասնավորապես, Հայաստանի պատվիրակությունը Փարիզի վեհաժողովին էր ներկայացրել աշխարհամարտի տարիներին հայ ժողովրդի կրած նյութական վնասների չափը, որը կազմել էր 14 մլրդ. Ֆրանկ:
Միացյալ հայկական պետության կայացման համար շատ կարևոր էր ունենալ որևէ հովանավոր կամ խնամակալ պետության երկրի աջակցությունը՝ **մանդատը:** Այլ խոսքով՝ անհրաժեշտ էր, որ մի հզոր պետություն հովանավորեր Միացյալ Հայաստանին, ապահովեր նրա անվտանգությունը, օգներ տնտեսապես ոտքի կանգնելու, մինչև որ կայանար որպես ինքնուրույն պետություն: Նկատի ունենալով, որ Փարիզի խաղաղության վեհաժողովում մեծ տերություններից Հայաստանի նկատմամբ ավելի բարյացակամ էր և մեծ հետաքրքրություն էր հանդես բերում ԱՄՆ-ը, հայկական պատվիրակությունները ցանկություն հայտնեցին Միացյալ, Անկախ և Ազատ Հայաստանի հովանավորությունը (մանդատը) հանձնել ԱՄՆ-ին կամ նոր կազմվելիք **Ազգերի լիգային** (նեկայիս ՄԱԿ-ի նախորդն ու նմանակը): Մասնավորապես հույս էր փայփայվում, որ Միացյալ Հայաստանի խնամակալությունը կստանձնի ԱՄՆ-ը. մանավանդ որ նախագահ **Վուդրո Վիլսոնը** (1856 -1924) շատ էր հետաքրքրվում Հայաստանով, բարյացակամ էր տրամադրված հայ ժողովրդի հանդեպ, և հույս կար, որ ԱՄՆ-ը կստանձնի Հայաստանի մանդատը:
1919 թ. մայիսի 14-ին Անտանտի տերությունների Չորսի խորհուրդը որոշեց Հայաստանի մանդատը տալ ԱՄՆ-ին: Ծրագրվում էր, որ մանդատի տևողությունը պետք է լիներ տասը տարի, որը երկկողմ համաձայնությամբ կարող էր երկարաձգվել: Նորաստեղծ Ազգերի լիգան ևս որոշում է Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին: Տերությունների նախնական համաձայնությամբ Թուրքիան պետք է մասնատվեր երեք

մասի՝ Հայաստանի, Թուրքիայի և Կ. Պոլսի՝ որևէ մի պետության խնամակալության ներքո: Ինչպես տեսնում ենք, բանակցությունների սկիզբը խոստումնալից էր, և Հայկական հարցի լուծումը վեհաժողովում կարծես որևէ կասկած չէր հարուցում: Միայն հարցն այն էր, թե քանի նահանգ, որքան տարածք պետք է միացվեր Հայաստանին:
1919 թ. հուլիսին Փարիզի կոնֆերանսի Տասի խորհրդի որոշմամբ Հայաստանի գերագույն կոմիսար է նշանակվում ամերիկացի գնդապետ **Ուիլիամ Հասկելը**, որին մեծ ոգևորությամբ ու պատիվներով ընդունում է Հայաստանի կառավարությունն ու հայ ժողովուրդը: Հայաստանի խնամակալությունը ստանձնելու հնարավորություններն ուսումնասիրելու համար Հայաստան ու տարածաշրջան է ժամանում նաև ամերիկյան միսիան՝ գեներալ **Ջեյմս Հարբորդի** գլխավորությամբ: Նախնական հաշվարկները ցույց էին տվել, որ մանդատը ստանձնելու դեպքում ԱՄՆ-ը Հայաստան պետք է ուղարկեր 50 հազար ամերիկյան զինվոր՝ երկիրը պաշտպանելու համար: Դրա հետ մեկտեղ Ջ. Հարբորդի ամերիկյան Սենատին ներկայացրած զեկուցագրով Հայաստանի մանդատը ընդունելու դեպքում ԱՄՆ-ը 5 տարում պիտի ծախսեր 757 մլն. դոլար և այլն:
Սակայն երկար քաշքշուկից հետո՝1920 թ. հունիսի 1-ին, ԱՄՆ-ի Սենատը մի շարք, այդ թվում վերոնշյալ պատճառաբանություններով, նախագահ Վ. Վիլսոնի կամքին հակառակ, ձայների մեծամասնությամբ մերժում է ընդունել Հայաստանի մանդատը: Այն հրաժարվում են ընդունել նաև Ազգերի լիգան, Անգլիան, Ֆրանսիան, Իտալիան և այլ երկրներ: Իհարկե, քաղաքական և պատմական առումներով դա խորը հիասթափություն էր հայ ժողովրդի ու նրա քաղաքական շրջանակների համար, որից դասեր կարելի է առնել նաև մեր ժամանակների համար:

6.2.Սևրի պայմանագիրը

Համաշխարհային պատերազմում պարտված Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրի նախապատրաստական քայլը եղավ 1920 թ. ապրիլին Իտալիայի ծովափնյա **Սան-Ռեմո** քաղաքաում Անտանտի տերությունների (Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի) ղեկավարների կոնֆերանսը, ուր մշակվեց և սուլթանական կառավարությանը ներկայացվեց ապագա հաշտության պայմանագրի

նախագիծը: Այնտեղ հստակեցվեցին նաև Հայկական հարցի հետ կապված մի շարք խնդիրներ՝ մանդատի, տարածքների, Հայաստանին ռազմական օգնության և այլն:
Դրանից հետո՝ **1920 թ. օգոստոսի 10-ին,** Փարիզի Սևր կոչվող արվարձանում Անտանտի երկրները սուլթանական Թուրքիայի հետ կնքեցին հաշտության պայմանագիր: Հայաստանի կողմից պայմանագիրը ոսկյա գրիչով ստորագրեց հանրապետության պատվիրակության ղեկավար Ա. Ահարոնյանը: Նա այդ օրը համարել է իր կյանքի ամենաերջանիկ օրը:
Պայմանագրի 88-93-րդ հոդվածները վերաբերում էին Հայաստանին: Օսմանյան Թուրքիան պարտավորվում էր ճանաչել Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանը: Հայաստանին էին անցնելու Էրզրումի, Վանի, Բաղեշի (Բիթլիսի) և Տրապիզոնի նահանգները ոչ ամբողջությամբ՝ ընդամենը 90 հազար քառ. կմ՝ ելքով դեպի Սև ծով: Դա նշանակում էր, որ Միացյալ, Անկախ Հայաստանի ընդհանուր տարածքը հանրապետության (Արևելյան Հայաստանի) առկա 70 հազար քառ. կմ-ի հետ կազմելու էր 160 հազար քառ. կմ: Ընդ որում՝ Հայաստանի և Թուրքիայի պետական սահմանը որոշելու էր ԱՄՆ-Ի նախագահը, որն էլ նույն թվականի նոյեմբերի 22-ին գծեց Միացյալ, Անկախ Հայաստանի քարտեզը:
Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարն իր իրավական մարմնավորումը գտավ Սևրի դաշնագրում և նախագահ Վ. Վիլսոնի իրավավար վճռում: Սակայն, ցավոք, այն մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում: Պատմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձությունները Հայաստանի ու հայ ժողովրդի համար այնպիսի աննպաստ ընթացք ունեցան, որ ոչ միայն Սևրի պայմանագրով ստորագրված և նախագահ Վիլսոնի իրավավար վճռով գծված Միացյալ, Անկախ, Ազատ Հայաստանի պահանջը չկենսագործվեց, այլև շուտով աշխարհի շատ պետությունների կողմից պաշտոնապես ճանաչված բուն Հայաստանի Հանրապետությունը դարձավ հարձակման թիրախ քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի կողմից, որի արդյունքում նա կորցրեց իր տարածքների մի զգալի մասը, անկախությունը և խորհրդայնացվեց:
Դեռևս 1919 թ. կեսերից Թուրքիայի խորքերում ծավալվել էր ազգայնական (միլլիական) զինված մի շարժում՝ թուրք գեներալ

Մուստաֆա Քեմալի գլխավորությամբ: Քեմալականները չճանաչեցին սուլթանական կառավարության ստորագրած Սևրի պայմանագիրը, և ծավալվեց մի շարժում Թուրքիայի տարածքային ամբողջականությունը վերականգնելու ուղղությամբ: Այդ գործում քեմալականներին օգնության հասավ Խորհրդային Ռուսաստանի բոլշևիկյան կառավարությունը: Մյուս կողմից՝ Սևրի պայմանագիրը ստորագրած, Հայաստանին դաշնակից համարվող պետությունները՝ Ֆրանսիան, Իտալիան, ապա Անգլիան, հանձնառու չեղան կենսագործելու իրենց իսկ ստորագրած պայմանագիրը: Ավելին, նրանք, իրենց քաղաքական ու տնտեսական շահերի թելադրանքով, աստիճանաբար սիրային խաղեր սկսեցին քեմալականների հետ: Հայկական հարցը լուծելու համար ասպարեզում մնում էր միայնակ Հայաստանը, որը, սակայն, չուներ բավարար ուժ և կարողություն՝ քեմալականներից ազատագրելու արևմտահայ նահանգները:
Միջազգային իրավունքի տեսակետից և՛ Սևրի պայմանագիրը, և՛ նախագահ Վ. Վիլսոնի իրավավար վճիռը Միացյալ Հայաստանի հայ-թուրքական սահմանի վերաբերյալ հանդիսանում են միջազգային իրավաբանական փաստաթղթեր հայ ժողովրդի իր պատմական հայրենիքի՝ Արևմտյան Հայաստանի նկատմամբ իրավատեր լինելու վերաբերյալ: Հասնել այդ խնդրի վերջնական ու արդարացի լուծման՝ կնշանակի լուծել Հայկական հարցը: Այն ժամանակներում Միացյալ Հայաստանի գաղափարը միանգամայն իրականանալի գործընթաց էր: Այն կարող էր որոշակի սահմաններում իր մարմնավորումը ստանալ: Որքան էլ անողոք լիներ դատաստանը հայ ժողովրդի նվիրական ձգտումների հանդեպ, սակայն աներկբա փաստ է այն իրողությունը, որ 1920 թ. Սևրի պայմանագրով պաշտոնական Թուրքիան և Արևմուտքը ճանաչել են հայ ժողովրդի իրավունքը իր հայրենիքի նկատմամբ: Սևրի պայմանագիրը Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր անկախ այն հանգամանքից, որ այն կյանքի չկոչվեց:
Հայ ժողովրդի իղձերի իրականացման աստեղային ժամ համարվող սևրյան ժամանակներից անցել է շուրջ մեկ դար, սակայն նա այսօր էլ իր հասարակական-քաղաքական կառույցներով հետամուտ է Հայկական հարցի արդարացի լուծման: Այդ խնդիրը, կապված Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման, Հայոց

պահանջատիրության հետ, ստացել է **Հայ դատ** անվանումը: Այդ տեսլականը կշարունակվի այնքան ժամանակ, քանի կա հայ ժողովուրդը: Չի բացառվում, որ կգան ժամանակներ, երբ Սևրը կարող է կրկին ներառվել միջազգային քննարկումների օրակարգի մեջ՝ նոր իրողությունների լույսի ներքո:

6.3.Կիլիկիահայության աղետը

Հայկական հարցի բաղադրիչներից էր Կիլիկիայի հարցը: Սևրի պայմանագիրը սերտորեն առնչվում էր նաև կիլիկիահայության ճակատագրի հետ: Պայմանագրով Կիլիկիայի հովանավորությունը ստանձնել էր Ֆրանսիան: Կիլիկիահայության համար լուրջ սպառնալիք դարձավ քեմալական շարժումը:
1920 թ. սկզբին քեմալական զինյալ ուժերը և թուրք-քրդական զինված խաժամուժը հարձակվում են հայ և մյուս քրիստոնյա բնակչության վրա: Հայերի կողմից ինքնապաշտպանական մարտեր ծավալվեցին Մարաշում, Հաճընում, Այնթապում, Ուրֆայում և Կիլիկիայի այլ վայրերում: Սակայն ֆրանսիական զինված ուժերի կողմից հայերին լքելու հետևանքով ինքնապաշտպանությունը թուլացավ, և տեղի ունեցան հայկական կոտորածներ:
Հայ ազգային-քաղաքական շրջանները մտադիր էին Կիլիկիայում ստեղծել ինքնավարություն՝ Ֆրանսիայի հովանու ներքո: 1920 թ. օգոստոսի 4-ին հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը՝ **Ինքնավար Հայաստան**, ազգային գործիչ **Միհրան Տամատյանի** (1863-1945) գլխավորությամբ: Սակայն Ֆրանսիան իր շահերի թելադրանքով դեմ արտահայտվեց Կիլիկիայի ինքնավարությանը: Շուտով նա գործարքային համաձայնության եկավ քեմալականների հետ: Արձակվեց Մ. Տամատյանի գլխավորած կառավարությունը: Հայերին զինաթափեցին: Ֆրանսիական զինված ուժերը լքեցին Կիլիկիան՝ տեղի 150 հազար հայությանը թողնելով թուրքական հրոսակների ճիրաններում: Հոսեցվեցին հայերի և մյուս քրիստոնյաների արյան գետեր: Կենդանի մնացած հայության բեկորները հարկադրված արտագաղթեցին դեպի հարևան արաբական երկրներ՝ Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, նաև Կիպրոս, Եվրոպա, Ամերիկա և այլուր: Երկրամասը հայաթափվեց:

Ահա այսպիսի աղետալի հետևանքներ ունեցավ Ֆրանսիայի վարած քաղաքականությունը Կիլիկիայի ու կիլիկիահայության խնդրում: Այստեղ տեղին է հիշեցնել, որ երբ աշխարհամարտի տարիներին Ֆրանսիային օգնություն էր հարկավոր, կազմվեց հիմնականում հայերից բաղկացած 5000-անոց «Արևելյան լեգեոնը» (1916 թ.), որն աչքի ընկավ մի շարք կռիվներում, այդ թվում Արարայի ճակատամարտում, իսկ այժմ, երբ պետք էր Ֆրանսիայի գործնական օգնությունը հայերին, այն չկայացավ: Հանրագումարի բերելով Առաջին աշխարհամարտի ավարտից հետո Հայկական հարցի լուծման գործընթացը՝ կարելի է եզրակացնել, որ չնայած ստորագրված մեծախոստում Սևրի պայմանագրի, որով հռչակվում էր Միացյալ և Անկախ Հայաստան, սակայն պայմանագիրը ստորագրած այդ նույն տերությունների խարդավանքների հետևանքով այն չկենսագործվեց կյանքում: Հայաստանի իշխանությունները հույսեր էին կապել մեծ տերությունների աջակցության հետ, որոնք հերթական անգամ չարդարացան: Ինչպես հայոց պատմության երկու-երեք հազարամյա, այնպես էլ Հայկական հարցի դառը փորձը ուսուցանում է, որ հիմնականում սեփական ուժերին, Խրիմյան Հայրիկի հնչեցրած «երկաթե շերեփին» ապավինելն է Հայաստանի ու հայ ժողովրդի անվտանգության, նրա զարգացման ու ազգային իղձերի իրագործման միակ ճշմարիտ երաշխիքը:

Գլ. 7.- Հայաստանը «բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի» միջև

7.1.Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում

Ռուսական կայսրության կործանումից և Հայաստանի անկախության հռչակումից հետո բավականին բարդ հարաբերություններ ստեղծվեցին Ռուսաստանի հետ: 1917 թ. Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանում փաստորեն առաջացել էին երկու հակադիր ուժեր, որոնք քաղաքացիական կռիվներ էին մղում իրար դեմ: Դրանցից մեկը Վ. Լենինի և Լ. Տրոցկու գլխավորած Խորհրդային Ռուսաստանն էր (ՌՍՖԽՀ): Նա բանվորների ու աշխատավորների անունից պայքարում էր խորհրդային սոցիալիստական կարգերը Ռուսաստանում, իսկ հեռանկարում նաև ամբողջ աշխարհում հաստատելու համար: Խորհրդային Ռուսաստանի կողմնակիցներին այլ կերպ կոչում էին «կարմիրներ»: Մյուս կողմը հին ՝ բուրժուական համարվող կարգերի պահպանման կողմնակից ուժերն էին, որոնք չէին ընդունում բոլշևիկյան կարգերը: Սրանց էլ կոչում էին «սպիտակներ»: Ռուսաստանի հարավային և արևելյան շրջաններում ստեղծվեցին մի շարք ոչ խորհրդային պետական կազմավորումներ՝ Կուբանի, Դոնի, Թերեքի, Ղրիմի, Սիբիրի և այլն: Սրանք ղեկավարում էին նախկին ցարական գեներալներ՝ Ա. Դենիկինը, Ա. Կոլչակը, Պ. Վրանգելը և ուրիշներ:

Նորանկախ Հայաստանի կառավարությունը ի սկզբանե չկարողացավ նորմալ հարաբերություններ հաստատել «կարմիրների»՝ Խորհրդային Ռուսաստանի հետ, թեև այդ ուղղությամբ որոշ փորձեր արվեցին: Դրա հիմնական պատճառն այն էր, որ Հայաստանի իշխանությունները չէին ընդունում խորհրդային-բոլշևիկյան վարչաձևը: Իր հերթին՝ խորհրդային կառավարությունն էլ ցանկություն չուներ ճանաչելու Հայաստանի անկախությունը: Բացի այդ, ամբողջ 1918-1920 թթ. Ռուսաստանը զբաղված էր քաղաքացիական պատերազմով և անհնար էր ակնկալել Խորհրդային Ռուսաստանի օժանդակությունը Հայկական հարցին:

Դրան հակառակ՝ բավականին սերտ հարաբերություններ հաստատվեցին Ռուսաստանի հարավի, Ուկրաինական Ռադայի և Սիբիրի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ:

Հայաստանը այնտեղ դիվանագիտական ներկայացուցչություններ բացեց: Հայաստանը նյութական որոշակի օգնություն ստացավ ոչ խորհրդայիյն պետական կազմավորումների ու հատկապես գեներալ **Անտոն Դենիկինի** գլխավորած Հյուսիսային Կովկասի կառավարությունից: Լավ կապեր էին հաստատվել նաև Ուկրաինայի, Սիբիրում՝ ծովակալ **Ալեքսեյ Կոլչակի** կառավարությունների հետ և այլն: Վերջիններումս ակտիվ դիվանագիտական աշխատանքներ էր վարում հայտնի իրավաբան **Գրիգոր Զամոյանը** (**Զամոև**): Այս ամենի հետ մեկտեղ՝ ռուսական գեներալները ևս առաջնորդվում էին «Միասնական և Անբաժան Ռուսաստան» կարգախոսով: Այդուհանդերձ, հայ-ռուսական հարաբերությունների այս վիճակը շարունակվեց մինչև 1920 թ. սկզբները:

Այն բանից հետո, երբ խորհրդային Կարմիր բանակը քաղաքացիական կռիվների արդյունքում պարտության մատնեց Դենիկինի կամավորական բանակին և մտավ Հյուսիսային Կովկաս, անմիջական վտանգ ստեղծվեց Անդրկովկասի երեք անկախ հանրապետությունների խորհրդայնացման համար:

1920 թ. ապրիլի 28-ին առանց դիմադրության խորհրդայնացվեց Ադրբեջանը: Խորհրդայնացված Ադրբեջանի ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ), որը գլխավորում էր թուրքացած հրեա **Նարիման Նարիմանովը**, նպատակ ուներ Կարմիր բանակի օգնությամբ կենսագործել մուսավաթականների ծրագիրը՝ գրավել և Ադրբեջանին միացնել հայկական տարածքները (Ղարաբաղը, Զանգեզուրը, Շարուր-Նախիջևանը) դրանով իսկ «լուծել իր ազգային խնդիրները»: Եվ, իրոք, չուշացավ այդ օգնությունը:

Փոփոխված իրադրության պայմաններում Հայաստանի կառավարությունը որոշեց բանակցել Խորհրդային Ռուսաստանի հետ՝ բարեկամական դաշնագիր կնքելու և Հայաստանի անկախությունը ճանաչել տալու նպատակով: Այդ առաքելությամբ 1920 թ. ապրիլի 30-ին Մոսկվա մեկնեց ՀՀ պատվիրակությունը՝ խորհրդարանի փոխխոսնակ, տաղանդավոր գրող **Լևոն Շանթի** (1869-1951) գլխավորությամբ: Սկզբում հաջող սկսված հայ-ռուսական բանակցությունները հետագայում գործնական որևէ արդյունք չտվեցին:

Դրանք ձախողվեցին այն պատճառով, որ թե՛ ռուսական և թե՛ հայկական կողմը պատշաճ կամք և պատրաստակամություն հանդես

չբերեցին փոխընդունելի պայմանագիր կնքելու համար: Մի կողմից՝ Հայաստանի կառավարությունը թեև ցանկություն ուներ Ռուսաստանի հետ կնքելու բարեկամական դաշնագիր, սակայն մյուս կողմից շարունակում էր հույսեր կապել Արևմուտքի «դաշնակիցների» հետ, որովհետև առաջիկայում սպասվում էր մեծախոստում Սևրի պայմանագրի ստորագրումը: Իր հերթին՝ խորհրդային կողմն էլ Հայաստանի հետ պայմանագրի կնքումը պայմանավորում էր նրանով, որ Հայաստանը պետք է որոշակի տարածքային զիջումներ աներ Ադրբեջանին ու Թուրքիային, ինչպես նաև տարանցիկ ճանապարհ տար, որպեսզի Կարմիր բանակը ցամաքով կապվեր քեմալական Թուրքիայի հետ: Հայկական կողմը չհամաձայնեց դրան: Մոսկովյան բանակցությունները մտան փակուղի, ընդհատվեցին՝ Երևանում շարունակելու հեռանկարով: Հայ-ռուսական բանակցությունները խորհրդային կողմի առաջարկով ընդհատվեցին այն պատճառով, որովհետև հուլիսի կեսերից նույն Մոսկվայում սկսվել էին խորհրդա-թուրքական ավելի գրավիչ բանակցությունները:
Այդ նույն օրերին՝ 1920 թ. հուլիսին, երբ Շանթի պատվիրակությունը դեռ Մոսկվայից չէր վերադարձել, Ադրբեջանի հեղկոմը և 11-րդ կարմիր բանակի հրամանատարությունը փաստորեն պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Կարմիր բանակի զորամասերը, գույնը փոխած մուսավաթական խաժամուժի հետ միասին, անցան հարձակման՝ Ղարաբաղը, Զանգեզուրը, Նախիջևանը գրավելու նպատակով: Դրանով սպառնալից վիճակ ստեղծվեց ոչ միայն հայկական այդ երկրամասերի, այլև ամբողջ Հայաստանի Հանրապետության համար:

7.2.Քեմալական շարժումը և խորհրդա-թուրքական մերձեցումը

Ինչպես հայտնի է, աշխարհամարտում պարտված Թուրքիայի արևելյան նահանգներում 1919 թ. կեսերից սկսվել էր թուրք-ազգայնական (միլլիական) մի շարժում, որը հաճախ նրա ղեկավար գեներալ **Մուստաֆա Քեմալ** փաշայի անունով կոչում են նաև քեմալական շարժում: Այդ շարժման նպատակն էր՝ պայքարել Անտանտի երկրների դեմ՝ պահպանելու Թուրքիայի տարածքային ամբողջականությունը: Այդ շարժումն իր սուր ծայրով ուղղված էր նաև Հայաստանի ու հայ ժողովրդի ազատագրական ձգտումների դեմ: Քեմալականները խնդիր

էին դրել ուժի միջոցով հակազդել Փարիզի կոնֆերանսին և թույլ չտալ տարածքային որևէ մասնատում: Ավելին՝ նրանք նպատակ ունեին **բռնազավթել արևելահայ տարածքները և ոչնչացնել հայկական բանակն ու պետականությունը**: Այդ մասին են վկայում քեմալական շարժումն սկզբնավորող, 1919 թ. հուլիսին **Էրզրումի** և սեպտեմբերին **Սվազի** համաժողովները և դրանցում մշակված «**Ազգային ուխտ**» կոչված փաստաթուղթը:1920 թ. հունվարի 28-ին Կ. Պոլսի օսմանյան խորհրդարանը (մեջլիսը) հաստատեց թուրքերի տարածքային պահանջների «Ազգային ուխտ» անվամբ այդ փաստաթուղթը: Այստեղ զարգացվում էր այն գաղափարը, որ անձեռնմխելի է Թուրքիայի տարածքային ամբողջականությունը, և որ ոչ մի տարածքային զիջում չի արվի հայերին: «Ազգային ուխտ»-ի համաձայն՝ Թուրքիայի սահմանների մեջ էին մտնելու ոչ միայն արևմտահայ բոլոր նահանգները, այլև արևելահայ՝ Կարսի և Արդահանի շրջանները: Այս պահանջները դրվեցին քեմալականների գործողությունների հիմքում: Քեմալականները վճռական էին հայերին ոչ մի թիզ հող չզիջելու հարցում:

1920 թ. ապրիլին թուրք ազգայնականները Անգորայում (Անկարա), Կ. Պոլսի սուլթանական կառավարությունից անկախ, ստեղծեցին առանձին կառավարություն՝ Մ. Քեմալի գլխավորությամբ, երկրում փաստորեն ստեղծելով **երկիշխանություն**, օրինականը՝ սուլթանի, իսկ խռովարարը՝ քեմալական: 1920 թ ապրիլի վերջերին Անգորայում բացվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովը (ԹԱՄԺ), որը ձևավորեց կառավարություն՝ Մ. Քեմալ փաշայի գլխավորությամբ: Վերջինս ապրիլի 26-ի հատուկ նամակով մերձենալու ու բարեկամանալու առաջարկ արեց Խորհրդային Ռուսաստանի (ՌՍՖԽՀ) կառավարությանը: Վ. Լենինը առաջինը շնորհավորեց Քեմալի կառավարությանը և հունիսի սկզբին դիվանագիտական հարաբերություններ հաստատվեցին նրանց միջև: Աշխարհամարտից թուլացած Թուրքիան ակնկալում էր Ռուսաստանից ստանալ քաղաքական-դիվանագիտական, տնտեսական և ռազմական օգնություն և մեծ չափերով ստացավ այդ համակողմանի օգնությունը: Խորհրդային Ռուսաստանը պայքարում էր իմպերիալիստ համարվող Անտանտի տերությունների դեմ: Այդ նույն պայքարի դրոշով էին հանդես գալիս նաև քեմալականները: Ստացվեց այնպես, որ պատմականորեն իրար թշնամի այդ երկու երկրների

ռազմաքաղաքական շահերը համընկան: Ավելին, համաշխարհային հեղափոխության հրդեհի տարածման ու հաղթանակի պատրանքներով տարված ռուս բոլշևիկ առաջնորդներին իրենց թակարդը գցելու համար քեմալականները քարոզչական կեղծ լոզունգներով հայտարարեցին, որ իրենք ևս հեղափոխականներ են և որ իբր նպատակ են դրել Թուրքիայում և ամբողջ մուսուլմանական արևելքում նպաստել համաշխարհային հեղափոխության հաղթանակին ու հաստատել տալ խորհրդային սոցիալիստական կարգեր: Բոլշևիկ առաջնորդները հեշտությամբ ընդունեցին քեմալականների այս խայծը: Այդ ամենի հիման վրա տեղի ունեցավ բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի մերձեցում և համագործակցություն: Ընդ որում, Ադրբեջանը պետք է դառնար կապող օղակ (միջնորդ-շարժափոկ) բոլշևիկյան Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև: Դեռ 1919 թ. նոյեմբերին Բաքվում մշակվել էր այն պլանը, որով թուրքական զորքը պիտի անցներ Հայաստանի վրայով՝ Դենիկինի թիկունքին հարվածելու համար: ՀՀ ռազմական (զորական) նախարարության գլխավոր շտաբի հետախուզական բաժանմունքի պետ կապիտան Մուրադյանը 1919 թ. վերջերի մի գաղտնի ամփոփագրում հայտնում էր, որ ստացված լուրերի համաձայն՝ թուրքերի և բոլշևիկների միջև կայացել է համաձայնություն, որով մինչև Արփաչայ (Ախուրյան) գետը տրվում է թուրքերին, իսկ վերջիններս էլ դրա դիմաց պատրաստվում են Ադրբեջանի հետ միասին Դենիկինի կամավորական բանակի թիկունքից հարվածելու համար: Դենիկինի հետ հաշիվները մաքրելուց և Ադրբեջանը խորհրդայնացնելուց հետո հերթի դրվեց Հայաստանի խորհրդայնացման հարցը:

Հիշեցնենք, որ իրադարձությունների այս փուլում, նոր փոփոխված իրադրության պայմաններում, Խ. Ռուսաստանի հետ քաղաքական հարաբերությունները կարգավորելու ու բարեկամական դաշնագիր կնքելու համար 1920 թ. մայիսին Մոսկվա մեկնեց Լ. Շանթի գլխավորած ՀՀ պաշտոնական պատվիրակությունը: Սկզբում հաջող սկսված հայ-ռուսական բանակցությունները հետագայում գործնական որևէ արդյունք չտվեցին: Ռուսական կողմի պահանջով դրանք ընդհատվեցին՝ աշնանը Երևանում վերսկսելու նպատակով:

Այստեղ դժվարությունն այն էր, որ հայ-ռուսական բանակցություններին գրեթե զուգահեռ նույն Մոսկվայում բանակցություններ ընթացան նաև Խ.

Ռուսաստանի և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատվիրակությունների միջև, բանակցություններ, որոնք Ռուսաստանի համար ավելի հեռահար ու շահավետ էին, քան «միջազգային իմպերիալիզմի դաշնակից ու գործակալ» որակվող Հայաստանի հետ: Այդ բանակցությունների արդյունքում երկու երկրների արտգործժողկոմների՝ Գ. Չիչերինի և Բեքիր Սամի բեյի միջև օգոստոսի 24-ին նախաստորագրվեց խորհրդա-թուրքական մերձեցման գաղտնի պայմանագիրը, որն իր սուր ծայրով ուղղված էր Հայաստանի դեմ: Պայմանագրի նախագծով Խորհրդային Ռուսաստանը ճանաչում էր Թուրքիայի «Ազգային ուխտով» գծված սահմանները: Այդ նշանակում էր, որ Ռուսաստանը ճանաչում էր մինչև 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը եղած պետական սահմանը, այլ խոսքով՝ ոչ միայն Առաջին աշխարհամարտում ռուսական զորքերի կողմից գրավյալ արևմտահայ նահանգների, այլև արևելահայ Կարսի մարզի ու Արդահանի վերադարձը Թուքիային: Սա միաժամանակ նշանակում էր, որ խորհրդային կառավարությունը պաշտոնապես չեղյալ էր համարում 1917 թ. դեկտեմբերի վերջին իր իսկ ընդունած «Թուրքահայաստանի մասին» դեկրետը:
Ավելին, բոլշևիկ-թրքական դաշնագիրը նպատակ ուներ հակազդել և ի չիք դարձնել Սևրի պայմանագիրը: Խորհրդային Ռուսաստանը պարտավորվում էր քայլերի դիմել, որ հայանպաստ այդ պայմանագիրը չկենսագործվի: Բանակցությունների ավարտին պես խարհրդային կառավարությունը համակողմանի օգնություն ցուցաբերեց թուրքերին՝ դրամով (ոսկով), զենքով ու զինամթերքով: Հենց նախաստորագրված պայմանագրից անմիջապես հետո Անգորա վերադարձած թուրք արտգործժողկոմն իր հետ տարավ խորհրդային կառավարության դրամական առաջին մասնաբաժինը՝ մեկևկես միլիոն ռուբլին ոսկով: Թուրքերն անչափ կարևորում էին Հայաստանի վրայով տրանզիտի հարցը առաջին հերթին Նախիջևանով՝ Ռուսաստանի հետ կապվելու, զենք ու զինամթերք փոխադրելու նպատակով: Հենց այդ շահագրգռության դիմաց օգոստոս ամսին ռուսները, խախտելով հայ-ռուսական օգոստոսի 10-ի Թիֆլիսի (Զամալյան-Լեգրան) համաձայնագիրը՝ թույլ տվեցին թուքերին գրավելու Սարիղամիշ-Շահթախթի գիծը: Դա մի կողմից հնարավորություն տվեց անմիջական ցամաքային կապ հաստատել Զանգեզուրից Նախիջևան մտած

Կարմիր բանակի հետ, իսկ մյուս կողմից ռուսներից ստանալ սպասվելիք զենք-զինամթերքը: Բացի այդ, առավել մեծ սպառնալիքն այն էր, որ Սարիղամիշ-Շահթախթի գծի գրավումով քեմալականների համար ճանապարհ էր բացվում արշավելու դեպի Կարս և Ալեքսանդրապոլ:
Այդ ամենով հանդերձ՝ Թուրքիայի դաշնակից խորհրդային կառավարությունը Բաքու-Նախիջևան, Նովոռոսիյսկ-Տրապիզոն, Օդեսա-Սամսուն և այլ ցամաքային ու ծովային գծերով անընդհատ մատակարարում էր շատ մեծ չափերի հասնող զենք, ռազմամթերք, դրամ-ոսկով, ցույց էին տալիս զինվորական խորհրդատվություն և դիվանագիտական աջակցություն: Ոչ լրիվ տվյալներով 1920 թ. ամռանը քեմալականները օգնության կարգով Խ. Ռուսաստանից ստացան 6000 հրացան, ավելի քան 5 մլն. փոմփուշտ, 17600 արկ, իսկ սեպտեմբերին 200,6 կգ ձուլածո ոսկի: Հոկտեմբեր ամսին թուրքերը Ռուսաստանից ստացան 16 վագոն հրացան ու փամփուշտ, որը շոգեմակույկներով Տուապսեից փոխադրվեց Տրապիզոն ու բաժանվեց հայկական ռազմաճակատ մեկնող չեթեներին («չեթա» բառը սերբերեն նշանակում է «վաշտ»): Այդ օգնությունը շատ ավելի մեծ չափեր ընդունեցին հետագայում՝ 1921-1922 թթ.: Սակայն միամտություն կլինի կարծել, թե քեմալականները Ռուսաստանի անկեղծ բարեկամներն էին: Այդ բարեկամությունը ժամանակավոր էր, կեղծ ու շինծու, որը ասպարեզ էր նետվել որոշակի քաղաքական-դիվանագիտական հաշվարկներով, որից էլ մեծապես տուժեց հայ ժողովուրդը և նրա ստեղծած անկախ պետականությունը:
Սակայն ստացվեց այնպես, որ թուրքերին հատկացվող խորհրդային ռազմաֆինանսական օգնությունը Անտանտի տերությունների դեմ պայքարի համար օգտագործելու փոխարեն, ուղղվեց Հայաստանի ու Թուրքիայի մյուս ճնշված ազգային փոքրամասնությունների՝ հույների, քրդերի, ասորիների, արաբների դեմ: Մյուս կողմից՝ Խորհրդային Ռուսաստանը Ադրբեջանի խորհրդայնացումից հետո հերթի դրեց Հայաստանի Հանրապետության խորհրդայնացումը և անկախազրկումը: Բոլշևիկ-քեմալական գործակցության ուժեղացման տեսակետից մեծ դեր խաղաց Արևելքի ժողովուրդների 1-ին համագումարը Բաքվում (1-8-ը սեպտեմբերի 1920 թ.): Այն կազմակերպել էր 3-րդ Կոմունիստական ինտերնացիոնալը: Ի դեպ, համագումարի 1891 պատգամավորներից

110-ը հայեր էին: Տարված լինելով համաշխարհային հեղափոխության պատրանքներով՝ կոմունիստների առաջնորդները մեծ հույսեր էին կապում Արևելքի ժողովուրդներին համաշխարհային սին հեղափոխության մեջ ներքաշելու հետ: Այդ պայքարում, Վ. Լենինի, Լ. Տրոցկու և Գ. Զինովևի հաշիվներով, հեղափոխական շարժման առաջամարտիկի (միջնաբերդի) դեր պետք է ստանձներ Թուրքիան: Եվ պատահական չէր, որ այդ խառնաժողովում ամենապատվավոր տեղում էին նստած Հայոց Մեծ եղեռնի մի քանի կազմակերպիչները, այդ թվում՝ հայ ժողովրդի դահիճ Էնվեր փաշան: Այդ համագումարում քննվեց պատերազմի հարցը՝ «միջազգային իմպերիալիզմի գործակալ», «համաշխարհային հեղափոխության խոչընդոտ դաշնակցական» Հայաստանի դեմ և ազդարարվեց «կանաչ լույս»՝ թուրքական հարձակման համար: Արդեն սեպտեմբերի 17-ին նույն Բաքվում «Արևելքի ժողովուրդների քարոզչության և գործողությունների Խորհրդի» կողմից կազմվեց Հայաստանի վրա հարձակման ու խորհրդայնացման ծրագիրը, որում ռազմական առումով գլխավոր դերակատարը լինելու էր քեմալական Թուրքիան: Դրանով հող նախապատրաստվեց «իմպերիալիզմի գործակալ» Հայաստանի վրա հարձակման համար:
Թուրքական հարձակման պայմաններում ռուսական Կարմիր բանակը՝ իբրև «ազատարար», մտնելու էր Հայաստան և հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից «փրկելու» պատրվակով խորհրդայնացնելու էր թուրքական բռնազավթումներից զերծ հատվածը: Այլ խոսքով, Խ. Ռուսաստանը նպատակ էր դրել թուրքական սպառնալիքով ընկճել Հայաստանի դիմադրական ոգին և հեշտությամբ խորհրդայնացնել այն: Այնպես որ Հայաստանի կառավարության ու նրա բանակի ուժերից վեր էր դիմակայել թուրք-բոլշևիկյան գործակցության հետևանքով հյուսիսից և հարավից ահագնացող մահացու հարձակման վտանգը: Եվ սեպտեմբերի 17-ին Բաքվում մշակված ծրագրից մի քանի օր անց Թուրքիան սկսեց ռազմական գործողությունները Հայաստանի դեմ, որն էլ ի վերջո կործանարար եղավ հայոց պետականության համար: Այսպիսով՝ 1920 թ. աշնանը Հայաստանի Հանրապետությունը կանգնեց թուրքական ներխուժման սպառնալիքի առաջ: Հայաստանի Հանրապետությունը փաստորեն հայտնվեց երկու զորեղ ուժերի՝

Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի՝ Սիմոն Վրացյանի պատկերավոր խոսքերով «**բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի**» միջև:

3.Թուրք-հայկական պատերազմը: Ալեքսանդրապոլի պայմանագիրը

Իր հերթին, Թուրքիան, հետամուտ իր հակահայ պլաններին, պատրաստվում էր զենքի ուժով վերացնել «հայկական սեպը»: Եվ պատրվակ բռնելով Օլթիի ածխահանքերի գրավումը հայկական զորքերի կողմից՝ սեպտեմբերի 23-ին, առանց պատերազմ հայտարարելու, թուրքական 50-հազարանոց բանակը հարձակվեց Հայաստանի վրա: Սկսվեց թուրք-հայկական պատերազմը, որը տևեց շուրջ երկու ամիս: Սեպտեմբերի 28-ից ծավալվեցին վճռական ռազմական գործողությունները: Սեպտեմբերի 29-30-ին ոսոխը գրավեց Սարիղամիշն ու Մերդենեկը: Ի սկզբանե պատերազմն անհաջող ընթացք ունեցավ հայկական կողմի համար: Հայկական 40-հազարանոց բանակը, ցավոք, չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ: Թուրքական զորքը քանակապես և փորձառությամբ գերազանցում էր հայկականին:

«Հայրենիքը վտանգի մեջ է» ընդհանուր կարգախոսով կառավարությունը մի շարք արտակարգ միջոցառումներ ձեռնարկեց՝ երկիրը պատերազմական պայմաններին համապատասխանեցնելու և անարգ թշնամուն հակահարված տալու համար: Երկրում մտցվեց ռազմական դրություն, դասալքության համար սահմանվեց մահապատիժ, հայտարարվեց 20-35 տարեկան տղամարդկանց զորահավաք, արտակարգ լիազորություններով ճակատ մեկնեցին շատ նախարարներ ու պատգամավորներ, հայրենիքը փրկելու կոչերով հանդես եկան հայ հասարակական-քաղաքական բոլոր ուժերը, բացի բոլշևիկներից, սակայն դրությունը փրկել չհաջողվեց: Հայաստանը ընդամենը երկու ամիս կարողացավ դիմադրել:

էական արդյունք չտվեցին նաև դիվանագիտական քայլերը՝ Թուրքիայի ագրեսիան մերկացնելու և դրսից օգնություն ստանալու համար: Հայաստանի կառավարությունը շոշափելի օգնություն չստացավ «դաշնակիցներից», ճակատագրական այդ պահին նրանք հիմնականում անտարբեր գտնվեցին, եթե չհաշվենք Անգլիայի 1 մլն. ոսկու գումարի հասնող զենքի, ռազմամթերքի ու զինվորական հանդերձանքի օգնությունը: Պատերազմի ընթացքում Հայաստանի հարևան Վրաստանը

պահպանեց չեզոքություն: Հայաստանին չկարողացավ օգնել Հունաստանը և անձամբ նրա առաջնորդ, հայ ժողովրդի բարեկամ **Վենիզելոս էլեֆտերիոսը**, որը պետք է ռազմական գործողություններ վարեր Փոքր Ասիայում և դրանով թուլացներ լարվածությունը հայ-թուրքական ճակատում: Ինչ վերաբերում է Խորհրդային Ռուսաստանի կառավարությանը, ապա նրա համակրանքը իր դաշնակից Թուրքիայի կողմն էր: Ավելին, հայկական զինված ուժերի մի մասը ստիպված էր գամված մնալ Ղազախի, Բասարգեչարի, Դարալագյազի և Շարուրի շրջաններում՝ պաշտպանելու սահմանները խորհրդային զորքերի հաճախացող հարձակումներից: Փաստորեն Հայաստանի Հանրապետությունը ստիպված էր պատերազմել մի քանի ճակատով՝ թե՛ թուրքերի, թե՛ Կարմիր բանակի, էլ չենք հաշվում «հայոց 5-րդ շարասյունը»՝ հայ բոլշևիկներին:
Հայկական բանակի մարտունակության անկման, դասալքության ուժեղացման գործում,անշուշտ, իր բացասական դերը խաղաց նաև հայ բոլշևիկների հակապետական,պարտվողական քարոզչությունը՝ քեմալական «ընկերներին» օգնելու համար: Վերջիններս դիմում էին զինվորներին, որ դասալքեն և չկռվեն «բարեկամ» թուրք զորքի դեմ, քանի որ, ըստ նրանց, ժողովրդի գլխավոր թշնամին Հայաստանի կառավարությունն է, ուստի պետք է զենքն ուղղել դաշնակցական կառավարության դեմ, և որ իբրև թուրք ասկյարը գալիս է ազատություն բերելու հայ ժողովրդին:
1920 թ. հոկտեմբերի 30-ին, առանց լուրջ դիմադրության, ընկավ լավ ամրացված Կարս քաղաք-ամրոցը, ուր և սրի քաշվեց մոտ 6000 հայ, և գերի ընկավ մոտ 3000 զինվոր: Կարսի անկումը, փաստորեն, կանխորոշեց պատերազմի ելքը: ՀՀ նախկին նախարար, բժիշկ Արտաշես Բաբալյանը Կարսի անկման վերաբերյալ ցավով արձանագրել է. «Կորցրեցինք Կարսը, նրա հետ միասին՝ մեր անկախությունը»: Իսկ մեծ հայրենասեր, Գարեգին արք. Հովսեփյանը Կարսի աղետալի անկման կապակցությամբ հոկտեմբերի 30-ին՝ Կարսի անկման օրը, համարել է իր կյանքի ամենադժբախտ օրը:
Մի քանի օր անց՝ նոյեմբերի 7-ին, հանձնվեց նաև Ալեքսանդրապոլը: Հանրահայտ փաստ է, երբ թուրքական բանակը մոտեցել էր Ալեքսանդրապոլին, տեղի բոլշևիկյան կոմիտեն կարմիր դրոշներով և հեղափոխական լոզունգներով ընդառաջ է գնացել՝ ողջունելու թուրք

«ազատարար» զորքերին Հայաստանը «դաշնակների դժոխքից» ազատելու համար: Թուրքական մահաբեր արշավանքի տագնապալի օրերին կոմունիստները պացիֆիստական, դավաճանական բովանդակությամբ թռուցիկներ էին տարածում զինվորների և խուճապահար ժողովրդի մեջ. «Չկրակե՛ս, հայ աշխատավոր զինվոր, եղբայրական թուրք բանակի վրա: Նա քեզ բերում է ոչ թե ստրկություն, այլ ազատություն: Նա գալիս է օգնելու քեզ՝ քո սրբազան պայքարի մեջ»:

Ընդհանուր առմամբ՝ հայկական երիտասարդ բանակը չկարողացավ լուրջ դիմադրություն ցույց տալ թուրքական փորձառու և մարտերում թրծված բանակին՝ չնայած առանձին դեպքերում հայ զինվորականների ցուցաբերած խիզախությանը: Հայաստանը ծանր պարտություն կրեց իր դարավոր ախոյանից և կորցրեց իր տարածքների մի զգալի մասը: Հայաստանի պարտության հիմնական պատճառը ոչ միայն թուրքական զորքի փորձառությունն ու թվային գերազանցությունն էր, այլև այն, որ հայկական բանակը չցուցաբերեց բավարար մարտունակություն և պատշաճ կազմակերպվածություն: Իր բարձրության վրա չգտնվեց բանակի շտաբը, մի շարք գեներալներ: Բանակի շարքերում բացակայում էր հայրենիքը պաշտպանելու ազգային ոգին: Ճակատային հրամանատարներից, թերևս, կարելի է առանձնացնել Դրոյին և Սեպուհին (Արշակ Ներսիսյանին), որոնք իրենց հատկացված հատվածներում լուրջ դիմադրություն էին ցույց տալիս և նույնիսկ հաջողություններ արձանագրում: Կարսի մատույցներում 5-րդ (Ալեքսանդրապոլի) գնդի զինվորների կողմից հրամանները չկատարելու ու մարտադիրքերը լքելու համար հուսահատությունից ինքնասպանություն գործեց երիտասարդ գնդապետ **Հ. Մազմանյանը** և այլն:
Ներկայումս՝ հարյուր տարիների հեռվից, քննելով ու դիտարկելով այն ժամանակվա իրադարձությունների հայրենակործան աղետաբեր մտայնությունները, պատմության դառը փորձի ու դասերի հաշվառմամբ, այսօր վստահաբար կարելի է արձանագրել, որ ներկայիս Հայոց բանակը այլևս չի կարող վարակվել բոլշևիկյան հակապետական պարտվողական «բացիլներով», որովհետև ժողովրդի ծոցից ելած հայ

զինվորը հստակ համոզմունքով գիտի, թե ով է թուրքը, ով է ադրբեջանցին, ով է ռուսը կամ եվրոպացին:
Լիակատար ջախջախումից խուսափելու և քիչ թե շատ պատվաբեր հաշտություն կնքելու նպատակով նոյեմբերի 18-ին Ալեքսանդրապոլում կողմերի միջև կայացվեց վերջնական զինադադար, և դադարեցվեցին ռազմական գործողությունները:
Հայաստանի ռազմական պարտությունը առաջ բերեց քաղաքական խոր ճգնաժամ: Ստեղծված աղետալի պայմաններում հայ հասարակական-քաղաքական շրջանակները ու բուն ժողովուրդը ստիպված էին հրաժարվել այնքան թանկ գնով ձեռք բերած անկախությունից: Կուսակցությունների, ժողովրդի ու բանակի մեջ գնալով ավելի ու ավելի գերիշխող է դառնում ռուսական քաղաքական արևելումը (կողմնորոշումը): Կարսի և Ալեքսանդրապոլի անկումը արդեն կանխորոշել էին Բյուրո-կառավարության բախտը:
Թուրքերի հետ քիչ թե շատ տանելի հաշտություն կնքելու և խորհրդային կառավարության համակրանքը շահելու նպատակով կազմվեց համեմատաբար մեղմ հայացքներով նոր կառավարություն: 1920 թ. նոյեմբերի 23-ին հրաժարական տվեց Հ. Օհանջանյանի Բյուրո–կառավարությունը: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 24-ին, Երևանում կազմվեց **Սիմոն Վրացյանի** (1882-1969) գլխավորած ձախ կոալիցիոն կառավարությունը՝ էսէռների մասնակցությամբ, որն էլ անմիջապես սկսեց հաշտության բանակցությունները թուրքերի հետ: Հայկական կողմը պատրանք ուներ, թե Սևրի պայմանագրից հրաժարվելու դիմաց Թուրքիան Հայաստանին որոշ զիջումներ կանի, բայց այդ հաշվարկները ևս սխալ դուրս եկան:
ՀՀ գոյության մայրամուտին կառավարության առջև ծառացած էր երկու շատ կարևոր խնդիր. ա) Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի ստորագրումը և բ) իշխանության հանձնումը բոլշևիկներին ու Հայաստանի խաղաղ խորհրդայնացումը:
Առաջին խնդրի իրականացումը լիազորվեց Ալ. Խատիսյանի գլխավորած Հայաստանի պատվիրակությանը, որը նոյեմբերի 25-ին Ալեքսանդրապոլում պաշտոնապես սկսեց հաշտության բանակցությունները Արևելյան ճակատում թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի հետ: Վերջինս հայկական պատվիրակությանը թելադրեց հաշտության պայմանները, իսկ

նոյեմբերի 30-ին Հայաստանին ներկայացրեց երկօրյա վերջնագիր, որի ժամկետը լրանալու էր դեկտեմբերի 2-ի երեկոյան:
Հաշվի առնելով հայ ժողովրդի գլխին կախված թուրքական մահացու վտանգը՝ Հայաստանի կառավարությունը դեկտեմբերի 1-ին հարկադրված ընդունեց թուրքական դաժան վերջնագրի պայմանները: Եվ 1920 թ. դեկտեմբերի 2-ի լույս 3-ի գիշերը՝ ժամը 2-ին, այսինքն՝ իրականում դեկտեմբերի 3-ին Ալեքսանդրապոլի միջնաբերդում ստորագրվեց բիրտ ուժով Հայաստանին պարտադրված **Ալեքսանդրապոլի** (Գյումրի) հաշտության պայմանագիրը: Սակայն մինչ այդ՝ դեկտեմբերի 2-ի կեսօրին, ինչպես հետո կնշվի, ՀՀ կառավարությունը, հանձին Դրո-Լեգրան համաձայնագրի, արդեն հրաժարական էր տվել, հետևաբար հայկական պատվիրակության ստորագրությունը չուներ իրավական ուժ: Բացի այդ, Ալեքսանդրապոլի պայմանագիրը չի վավերացվել ո՛չ Հայաստանի և ո՛չ էլ Թուրքիայի խորհրդարանների կողմից: Այդուհանդերձ, փաստը կատարվել էր, և Հայաստանին էր պարտադրվել մի ծանր պայմանագիր:
Մյուս կողմից, Ալեքսանդրապոլի 18 հոդվածներից բաղկացած թալանչիական պայմանագիրը, որն իր շատ հոդվածներով նման էր Բաթումի դաշնագրին, ստորագրվեց այն մտահոգությամբ, որ հակառակ դեպքում, Հայաստանը կարող էր մնալ առանց հայերի:
Ամենից առաջ Թուրքիայի պարտադրանքով Հայաստանը հրաժարվում էր Սևրի դաշնագրից: Պայմանագրով, փաստորեն, Թուրքիային էին անցնում (թեև խոսվում էր հանրաքվե անցկացնելու մասին) Կարսի մարզը և Սուրմալուի գավառը: Վերջինս երբեք չէր եղել Թուրքիայի կազմում: Նախիջևանի մարզը նույնպես անցավ Թուրքիայի հովանավորության տակ և շուտով (խորհրդա-թուրքական Մոսկվայի 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով) հանձնվեց Ադրբեջանին: Հայ-թուրքական պետական սահմանը անցնելու էր Ախուրյան և Արաքս գետերով: Ալեքսանդրապոլի գավառը մնալու էր թուրքերի կողմից ժամանակավորապես ռազմակալված մինչև Հայաստանի սահմանված չափով զինաթափումը: Մի քանի ամիս անց՝ 1921 թ. ապրիլի 22-ին, թուրքերը մեծ թալան, ավերածություններ ու հայերի զանգվածային կոտորածներ իրականացնելուց հետո վերջապես հեռացան գավառից: Պայմանագրի համաձայն՝ Հայաստանը մեծապես զինաթափվում էր: Նա իրավունք ուներ պահելու խիստ սահմանափակ թվով զինված ուժեր

(1500 զինվոր, 8 հրանոթ և 20 գնդացիր), Թուրքիան կարող էր միջամտել Հայաստանի ներքին գործերին և այլն: Տարածքային-սահմանային առումով, եթե նկատի ենք առնում, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով գծվում էր միայն հայ-թուրքական սահմանը և որևէ առնչություն չի ունեցել Լոռու չեզոք գոտու, Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի և այլ շրջանների հետ, ապա ստացվում է, որ Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանը պիտի ունենար գրեթե այնքան տարածք, ինչքան ունեցավ 1921 թ. մարտի 16-ի Մոսկվայի՝ խորհրդա-թուրքական և նույնի, ըստ էության, կրկնությունը համարվող 1921 թ. հոկտեմբերի 13-ի Կարսի՝ թուրք-անդրկովկասյան պայմանագրերով: Թվային արտահայտությամբ Ալեքսանդրապոլի և նրա շարունակությունը համարվող Մոսկվայի և Կարսի պայմանագրերով Հայաստանը պարփակվեց ընդամենը շուրջ 30 հազար քառ. կմ տարածքում: Այդ նշանակում է, որ 70 հազար քառ. կմ տարածք ունեցող Հայաստանի Հանրապետության տարածքների կեսից ավելին՝ 40 հազարը, բռնազավթվել է Թուրքիայի ու Ադրբեջանի կողմից:

4.Երևանի 1920թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության անկումը

ՀՀ իշխանության առջև ծառացած մյուս խնդիրը իշխանության հանձնումը և Հայաստանի խորհրդայնացումն էր: Ինչպես արդեն ասվել է, 1920 թ. հուլիսին Մոսկվայում ընդհատված հայ-ռուսական բանակցությունները պետք է վերսկսվեին Երևանում: Տարբեր պատճառներով դրանք ձգձգվեցին և վերսկսվեցին միայն հոկտեմբերի կեսերին (14-ին), այն ժամանակ, երբ արդեն սկսվել էր թուրք-հայկական պատերազմը, և հայ ժողովրդի գլխին կախվել էր մահացու վտանգ: Ռուսական կողմից բանակցությունները վարող Հայաստանում ՌՍՖԽՀ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի դիվանագիտական առաքելության նպատակն էր հանդես գալ միջնորդի դերում Թուքիայի և Հայաստանի միջև և ժամանակ շահելով՝ նպաստավոր պայմաններ ստեղծել Հայաստանի խաղաղ խորհրդայնացման համար: Բանակցությունների արդյունքում հոկտեմբերի 28-ին ստորագրվեց հայ-ռուսական նախնական պայմանագրի արձանագրությունը: Պայմանագրի նախագծով բավականին խոստումներ էր տրվում Հայաստանին. այն է՝

Խորհրդային Ռուսաստանը պետք է ստիպեր իր ռազմավարական գործընկեր Թուրքիային իր զորքերը հետ քաշել մինչև 1914թ նախապատերազմյան ռուս-թուրքական սահմանը, ինչպես նաև ճանաչել ՀՀ անքակտելի իրավունքները Նախիջևանի և Զանգեզուրի նկատմամբ: Իր հերթին՝ Հայաստանը պարտավորվում էր հրաժարվել Սևրի պայմանագրից և տարանցիկ ճանապարհի իրավունք տալ խորհրդային Կարմիր բանակին՝ Հայաստանի վրայով զորք, զենք և ռազմամթերք փոխադրելու Թուրքիա: Սակայն այդ պայմանագրի նախագիծը հավանության չարժանացավ խորհրդային իշխանությունների կողմից: Կեղծ ու շինծու է մտածել, թե Խորհրդային Ռուսաստանը պատրաստ էր ճանաչել Հայաստանի անկախությունը, նույնիսկ լուծել նրա հողային հարցերը, որովհետև պատմական փաստերն ու իրողությունները հակառակն են ապացուցում: Պարզապես այդ ժամանակ Վ. Լենինի գլխավորած կառավարությունը նպաստավոր պահի էր սպասում, որպեսզի Հայաստանը կրկին բռնակցեր կայսրությանը: Բոլշևիկյան Ռուսաստանը 1920 թ. ապրիլին այդպես վարվեց Ադրբեջանի, դեկտեմբերին՝ Հայաստանի, իսկ 1921 թ. փետրվարին՝ Վրաստանի հետ: Եվ նրա համար էական նշանակություն չուներ, թե ինչպիսի կուսակցական-պետական վարչակարգ էր այդ երկրներում՝ մուսավաթական, դաշնակցական, թե մենշևիկյան:
Հայաստանի պարագայում Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը նպատակ ուներ ժամանակ շահել, սպասել, որ Հայաստանը լիակատար ռազմական պարտություն կրի Թուրքիայից և հարմար պահին խաղաղ ճանապարհով խորհրդայնացնել: Պատերազմի ողջ ընթացքում խորհրդային կառավարությունը ոչ մի անգամ հանդես չեկավ նոտայով կամ հայտարարությամբ, թե պետք է վերջ տրվի պատերազմին և կողմերը նստեն բանակցությունների սեղանի շուրջ: Տասնամյակներ շարունակ հայ հասարակական-քաղաքական որոշակի շրջանակներում շրջանառվել է այն կեղծ թեզը, թե, իբր, ռուս բոլշևիկը (Կարմիր բանակը) գալիս է փրկելու հայ ժողովրդին թուրք նվաճողներից: Հարց է ծագում. եթե բոլշևիկները իրոք գալիս էին փրկելու հայերին, ապա այդ նույն բոլշևիկները ինչո՞ւ էին մեծ խմբաքանակներով զենք ու զինամթերք տրամադրում թուրքերին և գործնականում ուղղում Հայաստանի դեմ: Իսկ Ալեքսանդրապոլի հայ բոլշևիկներն էլ աղուհացով էին դիմավորում Ք. Կարաբեքիրին: Պատմական

հետադարձ թռիչք կատարելով մեր ժամանակները՝ այժմ էլ է արդիական հնչում Ռուսաստանի կողմից զենքի վաճառքը Հայաստանի թշնամիներին՝ Ադրբեջանին ու Թուրքիային, միայն այն տարբերությամբ, որ այն ժամանակներում դա արվում էր որոշակի քաղաքական ակնկալիքներով, իսկ այժմ՝ բիզնես-վաճառքի ձևով: Հարցադրման պատասխանը միանշանակ է. այն ժամանակ Կարմիր բանակը գալիս էր ոչ թե հայերին փրկելու, այլ պարզապես Հայաստանը խորհրդայնացնելու և Ռուսաստանին կցելու:
Մինչ հայոց հողի վրա կատարվում էին օրհասական այդ իրադարձությունները, Հայաստանը կանգնած էր անխուսափելի պարտության շեմին, երկրի խորհրդայնացումը դառնում է օրակարգի հարց, նոյեմբերի 4-ին «կարմիր» Բաքվում՝ Ի. Ստալինի գլխավորությամբ, վճռվում է Հայաստանի ճակատագիրը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն, քննելով Հայաստանում ստեղծված կացությունը, մերժելով հայ-ռուսական հոկտեմբերի 28-ի նախնական պայմանագրի արձանագրությունը, որոշում է խորհրդայնացնել Հայաստանը: Բ. Լեգրանը նոյեմբերի 30-ին, այսինքն՝ թուրքական պատվիրակության ղեկավար Ք. Կարաբեքիրի կողմից Ալ. Խատիսյանին ներկայացրած վերջնագրի օրը, Խ. Ռուսաստանի կառավարության անունից վարչապետ Ս. Վրացյանին ներկայացրեց վերջնագիր՝ Հայաստանի խորհրդայնացման մասին:
ՀՀ հետագա ճակատագրի հարցը վերջնականորեն վճռելու համար նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերը տեղի ունեցավ խորհրդակցություն ՀՅԴ Բյուրոյի, ՀՅԴ Հայաստանի ԿԿ-ի, խորհրդարանի ՀՅԴ խմբակցության, կառավարության անդամների և մի քանի ճանաչված գործիչների մասնակցությամբ: Խորհրդակցությունում պետք է Լեգրանի ներկայացրած վերջնագրին պատասխան տրվեր: Կառավարության և զինվորական նախարար Դրոյի զեկուցումներից պարզ դարձան, որ դրությունը անհույս է: Դրոն հայտարարեց, որ հայ զինվորը չի կրակի ռուս բոլշևիկի վրա: Նիստում մտքերի փոխանակության արդյունքում ձայների մեծամասնությամբ որոշվեց առանց դիմադրության ընդունել «կարմիրների» մուտքը Հայաստան, և իշխանությունը հանձնելով նրանց՝ երկիրը խաղաղ խորհրդայնացնել, մանավանդ որ, ինչպես արդեն ասվեց, այդ նույն օրը նաև Թուրքիան էր Հայաստանին վերջնագիր ներկայացրել հաշտության պայմանները

ընդունելու կամ մերժելու վերաբերյալ: Արդյունքում Հայաստանը ստիպված էր միաժամանակ ընդունել և՛ Ռուսաստանի, և՛ Թուրքիայի վերջնագրերը:
Դեկտեմբերի 1-ին հանձնարարվեց Դրոյին և Հ. Տերտերյանին բանակցել Բ. Լեգրանի հետ, կնքել իշխանության հանձնման և Հայաստանի խաղաղ խորհրդայնացման համաձայնագիր: Այդ նույն օրը հրահանգվել էր նաև Խատիսյանին ընդունել թուրքերի վերջնագիրը և կնքել հաշտություն: Մինչ այդ արդեն Հայաստանի հյուսիսային սահմանին կանգնած 11-րդ Կարմիր բանակի զորամասերին հրահանգված էր մտնել Հայաստան և խորհրդայնացնել այն: Նոյեմբերի վերջերին Ադրբեջանի տարածքում ստեղծված Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեն (ՀՌՀԿ)՝ **Սարգիս Կասյանի** (1876-1937) նախագահությամբ և կարմիրբանակայինների ուղեկցությամբ, նոյեմբերի 29-ին Ղազախով մտնում են Իջևան (Քարվանսարա) և հայտարարություն անում Հայաստանի խորհրդայնացման մասին: Հայկական զորքը դիմադրություն ցույց չի տալիս ռուսական զորամասերին, և հայ ժողովուրդը լուռ համաձայնությամբ ընդունում է խորհրդային իշխանությունը: Դեկտեմբերի 4-ին Երևան են հասնում Կարմիր բանակի զորամասը և ապա նաև՝ Հայհեղկոմը:
Այս անգամ էլ (ինչպես 1918 թ. մայիսին) ստեղծվեց մի այնպիսի կացություն, երբ այլընտրանք չկար: Այժմ արդեն միակ ելքն այն էր, որ հարկավոր էր փաստորեն հրաժարվել անկախ պետականությունից և ընդունել խորհրդային կարգեր, քանզի **Հայաստանի խորհրդայնացում՝ նշանակում էր անկախության կորուստ**: Հայաստանի Հանրապետության քաղաքական ղեկավարությունը, առանց կռվի ու դիմադրության, գնաց նման խոշոր զոհողության՝ հանուն հայ ժողովրդի ֆիզիկական գոյության փրկության:
Հայոց գլխին կրկին կախված թուրքական մահացու սպառնալիքն էր պատճառը, որ հայ ժողովուրդը նախապատվությունը տվեց չարյաց փոքրագույնին՝ Ռուսաստանին, չդիմադրեց նրա զորքերին՝ քաջ գիտակցելով, որ դրանով նա կորցնում է իր անկախ պետականությունը:
1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում հինգշաբթի օրը՝ ժամը 12-ին մոտ՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումից մի քանի ժամ առաջ, Հայաստանի ներկայացուցիչ Դրոյի և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Լեգրանի միջև ստորագրվեց 8-կետանոց

համաձայնագիր, որով Հայաստանը հայտարարվում էր սոցիալիստական խորհրդային հանրապետություն (ՀՍԽՀ) և խաղաղ ճանապարհով բովանդակ իշխանությունը հանձնվում էր Հայհեղկոմին: Այդպես էլ արվեց. կատարվեց իշխանության խաղաղ փոխանցում: Համաձայնագրի ստորագրումից հետո՝ նույն օրը, ՀՀ կառավարության անդամները՝ վարչապետ Ս. Վրացյանի գլխավորությամբ, ստորագրեցին իշխանությունից հրաժարվելու մասին ԱԿՏ: Ս. Վրացյանի կառավարությունը կամավոր հեռացավ ասպարեզից, և ամբողջ իշխանությունը անցավ Հայաստանի Հեղկոմի (Հայհեղկոմի) ձեռքը: Սակայն մինչև Հեղկոմի Երևան ժամանելը ամբողջ իշխանությունը ժամանակավորապես (գործնականում մինչև դեկտեմբերի 4-ը) անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի գլխավորությամբ: Դրանով ՀՀ դադարեց գոյություն ունենալուց, որի իրավահաջորդը դարձավ ՀՍԽՀ: Այդ միաժամանակ նշանակում է, որ իրավաբանորեն իշխանափոխությունը և Հայաստանի խորհրդայնացումը կատարվել է դեկտեմբերի 2-ին և ոչ թե նոյեմբերի 29-ին: Ուստի ստահոդ է խորհրդային պատմագրության մեջ տարածում գտած այն կեղծ վարկածը, թե իբր Հայաստանը խորհրդայնացել է նոյեմբերի 29-ին, այն էլ, իբր, բանվորագյուղացիական ապստամբության հետևանքով:
Երբ այժմ 100 պատմության բարձունքից նայում ու վերագնահատում ենք այդ ժամանակների բախտորոշ դեպքերն ու իրադարձությունները, ապա գալիս ենք այն հետևության, որ Հայաստանի անկախազրկումը և խորհրդայնացումը կատարվել է ստոր խաբեությամբ, թուրքական մահաբեր ներխուժման սպառնալիքի միջոցով:
Հանձինս բոլշևիկյան «մուրճի» և թուրքական «սալի»՝ Հայաստանը և հայ ժողովուրդը հայտնվեցին քաղաքական մի այնպիսի պարտադրված իրավիճակում, որ նրանց չէր մնում այլ բան, քան հրաժարվել անկախությունից, զրկվել տարածքների մի զգալի մասից, պարփակվել ընդամենը 30 հազար քառ. կմ-ի մեջ և ընդունել խորհրդային վարչաձև: Այսպիսով, թուրք-բոլշևիկյան համատեղ ներդաշնակված ռազմադիվանագիտական հարվածների տակ անկում ապրեց Հայաստանի առաջին հանրապետությունը, ծվատվեցին նրա տարածքները հարևան երկրների միջև: Դրանով վերջ տրվեց 20-րդ դարի Հայոց առաջին անկախ պետականությանը: Նրան հաջորդելու եկավ Խորհրդային Հայաստանը, որն, իր թերություններով ու բացերով

հադերձ, դարձավ հետագա հայ պետականության միակ կրողը, հայ ժողովրդի շարունակական հայրենիքը, նրա ֆիզիկական, հոգևոր ու մշակութային վերընձյուղման միակ հուսալի երաշխավորը:

ԱՄՓՈՓՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության նորերս բոլորող 100-ամյա տարիների հեռվից, արդի իրողությունների լույսի տակ, դիտարկելով, քննելով ու գնահատելով Առաջին հանրապետության խաղացած դերն ու նշանակությունը հայ ժողովրդի պատմական ճակատագրում, կարելի է հանգել հետևյալ հանրագումարային եզրահանգումների:

* Հայաստանի անկախությունը տրամաբանական արդյունքն էր նախընթաց պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների, ոչ միայն Առաջին աշխարհամարտի, 1917 թ. ռուսական հեղափոխությունների, այլև առաջին հերթին 1918 թ. Մայիսյան հաղթական հերոսամարտերի:

* Հայոց պատմության նորագույն ժամանակաշրջանը սկսվում է Մայիսյան 1918 թ. անանց հաղթական հերոսամարտերով և նրա ծնունդ՝ Առաջին հանրապետության պատմությամբ: Մայիսյան հաղթական հերոսամարտերը հայ ժողովրդին տվեցին երկու մեծագույն արդյունք. ա) Սարդարապատի, Բաշ Ապարանի և Ղարաքիլիսայի հերոսամարտերով, նաև Բաքվի հայության ինքնապաշտպանությամբ, վիժեցվեց Արևելյան Հայաստանը զավթելու ու տեղի հայությանը ցեղասպանելու երիտթուրքական ծրագրերը և բ) հայ ժողովուրդը ոչ միայն պաշտպանեց իր ֆիզիկական գոյությունը, այլև ստիպեց հակառակորդին հաշվի նստել իր հետ և ճանաչել իր անկախ ապրելու իրավունքը:

* Հիրավի, դարավոր ընդմիջումից հետո, հայ ժողովրդի մղած ազատագրական ոգորումների արդյունքում վիթխարի զոհողությունների գնով վերականգնվեց հայոց անկախ պետականությունը, որը համարվում է անձեռակերտ հուշարձան հայ բյուր-հազարավոր զոհերի: Դժվար չէ տեսնել, որ հայ ժողովրդի պատմության, թերևս, ամենաողբերգական էջի՝ Հայոց մեծ եղեռնից երեք տարի անց՝ ռազմաքաղաքական մեծ ալեկոծություններից ու վայրիվերումներից հետո, Հայաստանի մի փոքր հողակտորի վրա հայ ժողովուրդը ուժ գտավ իր մեջ հռչակելու անկախություն և կերտելու նոր ժամանակների հայոց պետականությունը՝ Հայաստանի Հանրապետությունը: Պատմական այդ իրադարձությունը, անտարակույս, կարելի է համարել

20-րդ դարի հայոց պատմության ամենանշանավոր իրադարձություններից մեկը:

* Հայ ժողովրդի հազարամյակների պատմության փորձը ցույց տվեց, որ անցյալում՝ հին ու միջին դարերում, հարուստ պետականությունների (թագավորական և իշխանական հարստությունների) անցյալ ու փորձ ունեցող ժողովրդի մեջ նոր ժամանակներում չէր մարել պետականության, ազատության ու անկախության գիտակցությունն ու գաղափարը: Նորագույն ժամանակներում՝ 20-րդ դարի սկզբին, պատմաքաղաքական դեպքերի ու իրադարձությունների տրամաբանական գործընթացների արդյունքում Հայոց արգանդը ծնեց իր անկախ պետականությունը, եվրոպական քաղաքակրթական արժեհամակարգին համապատասխան, ժողովրդավարական (դեմոկրատական) հանրապետության ձևով և ցույց տվեց ինքնակազմակերպման այս ձվով ապրելու և հարատևելու իր կամքը:

* Հայաստանի առաջին հանրապետության կերտողը հայ ժողովուրդն է: Պատահական չէ, որ Մեծն Գարեգին Նժդեհը իրավացիորեն Մայիսի Քսանութի հեղինակը համարում էր Երկրի հայությանը՝ իր զոհողություններով, տառապանքներով նաև թռիչքներով ու շինարար ոգով: Ժողովրդի հետ միասին դրանում իր քաղաքական մասնակցությամբ անուրանալի դերակատարություն ունի ՀՅԴ կուսակցությունը: Լրացուցիչ ապացույցի կարիք չունի այն իրողությունը, որ 1918 թ. գարնանը ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում՝ թուրքական ներխուժման դիմակայման, Հայաստանի անկախության հռչակման շատ համարձակ քայլի նախապատրաստությունից մինչև հանրապետության անկման վերջին օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ը, այդ կուսակցությունն է եղել կառավարող քաղաքական գլխավոր ուժը, և նա է հիմնականում իր ուսերին կրել իշխանության մարմինների ձևավորման, պետական իրավակարգի ու կարգուկանոնի հաստատման, բանակի կայացման, տեղական ինքնակառավարման արմատավորման, արտաքին ու ներքին քաղաքականության վարման հիմնական բեռը: Գործնականում նա է ստանձնել անկախ պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ողջ պատասխանատվությունը: Պետականության կայացման գործում մասնակցության իրենց չափաբաժինն ունեն ՀԺԿ և

ՀՀ մյուս կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները:
* ՀՅԴ քաղաքական ասպարեզ էր իջել սկզբնական շրջանում օտարի կողմից տարանջատված երկու Հայաստանների՝ Արևմտյան և Արևելյան, ինքնավարության (համապատասխանաբար Թուրքիայի և Ռուսաստանի կազմում) համեստ պահանջով: Սակայն դարասկզբի աշխարհացունց դեպքերի ու իրադարձությունների տրամաբանությամբ նա, հայ ժողովրդի հավաքական ուժի հետ միասին, կյանքի ու մահվան գնով հանգում է Արևելահայ հատվածի անկախության, իսկ այնուհետև՝ երկու Հայաստանների միավորումով՝ **Միացյալ և Անկախ Հայաստանի** տեսլականին: Պետք է ասել, որ այն ժամանակ Միացյալ Հայաստանի ստեղծումը միանգամայն իրականալի խնդիր էր:
* Յուրաքանչյուր պետության կայացած լինելու աստիճանը և ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նրա հասարակական-քաղաքական կյանքով, կուսակցական համակարգով, խոսքի ու մամուլի ազատությամբ, իրական ընդդիմության գոյությամբ ու գործունեությամբ և այլն: Պետք է ասել, որ ՀՀ-ում գործել են շուրջ մեկ տասնյակի հասնող կուսակցություններ, որոնք իրենց քաղաքական դավանանքով ու հետապնդած նպատակներով լրացնում էին հանրապետության քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը:
* Պետական կառուցվածքի տեսակետից Հայաստանը խորհրդարանական գերակայության հանրապետություն էր: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ընտրվում և հրաժարեցվում էր խորհրդարանի կողմից: Խորհրդարանն իրեն ենթակա կառույցի՝ Պետական վերահսկիչ մարմնի միջոցով վերահսկում էր կառավարության ֆինանսատնտեսական գործունեությունը: Ուշագրավ է, որ ներկայիս ՀՀ, ցուցաբերելով իրավահաջորդության ու ժառանգորդական կապ, 2015 թ. ընդունված սահմանադրության փոփոխություններով որդեգրել է կառավարման խորհրդարանական համակարգ, ինչը գտնում ենք, որ ավելի հոգեհարազատ կլինի հայ ժողովրդի կոլեկտիվ մտածելակերպին ու հոգեկերտվածքին: Հիրավի, արդար ընտրությունների արդյունքով ձևավորված պառլամենտական կառավարման պարագայում մեծապես կսահմանափակվի մենիշխանության վտանգը և բազմակուսակցական, իրական ընդդիմություն ունեցող խորհրդարանի պարագայում էապես կնվազի

երկրում իրականացվող քաղաքականության սխալների հավանականությունը:
* Միանգամայն անհիմն է մեր ժամանակներում որոշ շրջանակների կողմից ինչ-ինչ նկատառումներով շրջանառվող այն միտքը, թե ՀՀ պետական կառուցվածքի խորհրդարանական կառավարման մոդելն էր հիմնական պատճառը, որ հանրապետությունը հետագայում անկում ապրեց: Իրականում ՀՀ անկման պատճառը ոչ թե երկրի խորհրդարանական կառավարման ձևն էր, որը հանրապետության անկման փուլում, սկսած 1920 թ. մայիսից, առհասարակ խորհրդարանը ուղարկվել էր հարկադիր արձակուրդ, ըստ էության չէր էլ գործում, այլ խորհրդա-թուրքական գործարքի և ռազմական բիրտ միջամտության: Այդ զորեղ ուժերին անհնար էր դիմակայել ցանկացած կենտրոնացված ու դիկտատորական կառավարման դեպքում: Չէ՞ որ այդ նույն պատմաշրջանում նույն ճակատագրին արժանացան Ադրբեջանը և Վրաստանը և դա բնավ կապ չուներ նրանց կառավարման ձևից:
* Քաղաքական և պետական կառուցվածքի տեսակետից՝ հանրապետության խորհրդարանն ու կառավարությունը միասին նպատակ էին դրել Հայաստանը դարձնել Արևմտյան տիպի խորհրդարանական, դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն: Ընդհանուր առմամբ Հայաստանի Հանրապետությանը բնորոշ էր կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Հայաստանը՝ որպես խորհրդարանական դեմոկրատական հանրապետություն, ծրագրել էր Հայկական հարցի բարեհաջող լուծումից հետո մշակել և ընդունել Սահմանադրություն, մտցնել նախագահական ինստիտուտ: Սակայն պատմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձությունները Անդրկովկասում ու Հայաստանում այնպիսի աննպաստ ընթացք ունեցան, որ այդ նպատակադրումները չկենսագործվեցին:
* ՀՀ գործող կուսակցությունների, մասնավորապես նրանց խորհրդարանական գործունեության փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երբ հայ ժողովրդին ու նրա հայրենիքին արտաքին ու ներքին մեծ վտանգ էր սպառնում, տեղի էր ունենում հայ քաղաքական գրեթե բոլոր ուժերի, բացառությամբ բոլշևիկների (համայնավարների), համախմբում (կոնսոլիդացիա), իսկ երբ թուլանում կամ վերանում էր այդ վտանգը, կրկին ուժեղանում էին ընդդիմությունն ու

ներքաղաքական պայքարը կուսակցությունների միջև, ինչը պետք է համարել բնական գործընթաց: Ուրախությամբ պետք է արձանագրել, որ համազգային ու համապետական շահի գիտակցման այս առողջ ավանդույթը պահպանվում է նաև մեր օրերում՝ հայ հասարակական-քաղաքական կազմակերպությունների գործելակերպում:

* Անշուշտ, Հայաստանի առաջին հանրապետությունն ունեցել է պետական կառույցի իրավաքաղաքական, ժողովրդավարական, սոցիալ-տնտեսական զարգացման, ռազմապաշտպանական և այլ բնույթի թերություններ ու բացթողումներ: Եվ դա կարելի է հասկանալ այն իմաստով, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ էր փորձ արվում կայացնել 20-րդ դարի եվրոպական արժեհամակարգին համապատասխանող պետականություն՝ հանրապետական, ժողովրդավարական, պառլամենտական կառավարման սկզբունքներով: Բնականաբար պակասում էին փորձը, ձեռնահաս ուժերը, կառավարելու այնքան բարդ արվեստը, հասարակության և քաղաքական ուժերի ոչ բավարար քաղաքական և կրթամշակութային մակարդակը, ուստի և անխուսափելի էին սխալներն ու բացթողումները:

* Թեև Հայաստանի Հանրապետությունում պակասում էին շատ օրենքներ, դրսևորվում էին անիշխանության երևույթներ, չարաշահումներ, «մաուզերիզմ» և այլն, բայց և այնպես, իր ամբողջության մեջ վերցրած, 1918-1920 թթ. **Հայաստանի Հանրապետությունը կազմակերպված պետություն էր՝** դրան բնորոշ անկապտելի բոլոր հատկանիշներով: ՀՀ պետահիրավական, քաղաքական, սոցիալ-տնտեսական և այլ բնորոշ գծերով հիմնականում ժողովրդավարական տիպի հանրապետություն էր:

* Առաջին աշխարհամարտում վիթխարի կորուստներ ու զրկանքներ կրած հայ ժողովուրդը հույսեր էր փայփայում, որ տերությունները արդարությամբ կլուծեն Հայկական հարցը և անգամ ստորագրվեց Սևրի պայմանագիրը, որը պետք է կյանքի կոչեր **Միացյալ և Անկախ Հայաստանի** գաղափարը, և ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի իրավավար վճռով գծվեց ապագա Միացյալ Հայաստանի հայ-թուրքական պետական սահմանը: Սակայն 1920 թ. կեսերից պատմաքաղաքական դեպքերն ու իրադարձություններն այնպիսի աննպաստ ընթացք ունեցան, որ Հայաստանը հայտնվեց այսպես կոչված «ռուսական մուրճի և թուրքական սալի» արանքում: Նա, չդիմանալով քեմալական

Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի կործանարար հարվածներին, պարտություն կրեց, կորցրեց անկախությունը և խորհրդայնացվեց, իսկ նրա տարածքների զգալի մասը բռնազավթվեց ու նվիրաբերվեց հարևան երկրներին:

* Հայ ժողովուրդը արտաքին բիրտ միջամտության հետևանքով կորցրեց իր անկախ պետականությունը, բայց նա չկորցրեց հավատը Հայաստանի հետագա անկախության. վկա՝ մերօրյա Հայաստանի երրորդ հանրապետությունը: Հայ ժողովուրդը՝ որպես իր նվիրական իղձ, շարունակում է պահպանել Ազատ, Անկախ և Միացյալ Հայաստան ունենալու և կերտելու տեսլականը: Այդ նվիրական գաղափարի իրագործման մի փոքր արտահայտություն կարելի է համարել Ազատ, Անկախ և հպարտ Արցախի Հանրապետությունը:

* Մեկդարյա հեռավորությունից Առաջին հանրապետության պատմության այբբենական ճշմարտության դասերից մեկն էլ այն է, որ յուրաքանչյուր պետություն կամ ազգ նախ և առաջ հետամուտ պետք է լինի իր սեփական, ազգային-պետական շահերի պաշտպանությանը: Առանց այդ շահերի հաշվառման, անմտություն կլինի կարծել, թե որևէ պետություն կպաշտպանի մեկ այլ պետության կամ ժողովրդի շահերը: այդ համադրույթից ելնելով՝ պետք է ասել, որ ոչ Արևմուտքի տերությունները, ոչ էլ Ռուսաստանը, իրենց շահերից ելնելով, մատը մատի չտվեցին՝ պաշտպանելու նաև իրենց մեղքով մեծ ողբերգություն ապրած հայ ազգի շահերը: Ընդհակառակը, նրանք հաջորդաբար բարեկամացան օրավուր ուժեղացող ու ամրապնդվող քեմալական Թուրքիայի հետ հանուն իրենց մեծապետական շահերի:

* Հայաստանի Հանրապետության անկման գլխավոր պատճառը արտաքին ուժերն էին՝ բոլշևիկյան Ռուսաստանը և քեմալական Թուրքիան: 1920 թ. գարնանը մութ ամպեր կախվեցին հանրապետության գլխին: Հարևան Ադրբեջանի խորհրդայնացումից հետո հերթը հասավ Հայաստանին: Միաժամանակ տեղի ունեցավ քեմալա-բոլշևիկյան ռազմաքաղաքական մերձեցում և դաշինք, որի արդյունքում աշխարհի մի քանի տասնյակ պետությունների կողմից իրավապես ու փաստացի ճանաչված Հայաստանի Հանրապետությունը դարձավ այդ գործարքի զոհը:

* Հանրապետության տարածքները ծվատվեցին: Դրանք հետագայում պայմանագրային-իրավական ձևակերպումը ստացան Մոսկվայի և Կարսի 1921 թ. պայմանագրերում: 1920 թ. Հայաստանի Հանրապետության ավելի քան 70 հազար քառ. կմ տարածքից խորհրդայնացած Հայաստանին բաժին թողնվեց ընդամենը 29,8 հազար քառ. կմ, մնացած մեծ մասը՝ 40 հազարը, գործնականում Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ հանձնվեց Թուրքիային ու Ադրբեջանին: Տարածքային մեծ կորուստներով այսպես անկում ապրեց Առաջին հանրապետությունը, որի իրավահաջորդը դարձավ Երկրորդ հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը:
* Երբ 100-ամյա հեռավորությունից դիտարկում ենք Հայաստանի Հանրապետության պատմությունը, ապա նկատում ենք, որ չնայած նրա կարճատև՝ ընդամենը 2,5 տարվա գոյության, այդուհանդերձ, նա խոր հետք է թողել Հայոց նորագույն պատմության մեջ: Նա ծնվեց Մայիսյան հերոսամարտերից, կյանքի ու մահվան կռիվներից: Չնայած երկրի ու ժողովրդի համար ստեղծված արտասովոր աղետալի պայմաններին՝ պատերազմ, գաղթականություն, քայքայում, սով, համաճարակ, թշնամական շրջապատում և այլն, այնուամենայնիվ, հայ քաղաքական այրերը ժողովրդին համախմբելով կարողացան կերտել եվրոպական արժեքային համակարգին բնորոշ պետականություն, իր կառավարությամբ, խորհրդարանով, իշխանության թևերի տարանջատմամբ, բազմակուսակցական համակարգով, դիվանագիտական կապերով, բանակով, պետական խորհրդանիշներով և այլն:
* Ուժերի ու ջանքերի գերմարդկային լարումով, գրեթե ոչնչից, իր ժամանակի պահանջներին ու չափանիշներին համապատասխան կերտված Առաջին հանրապետությունը դարձավ այն հիմքը, որի վրա, իբրև իրավահաջորդ, բարձրացավ Երկրորդ հանրապետությունը՝ Խորհրդային Հայաստանը, իսկ այդ հանրապետության հիմքի վրա էլ՝ մերօրյա՝ ավելի հպարտ ու հեռանկար խոստացող Երրորդ հանրապետությունը:
* Հայաստանի երեք հանրապետությունների պատմությունը պետք է դիտարկել որպես իրար իրավահաջորդ ու միմյանց փոխլրացնող մի ամբողջություն: Ասվածը հիմք է տալիս համոզմունք հայտնելու, որ

ինչքան հեռանանք Առաջին հանրապետության ժամանակներից, այնքան կմեծանա 1918 թ. խորհուրդն ու համազգային արժեքը: Հայոց վերջին 100 տարիների պատմության տարեգրությունը ցույց է տալիս, որ Հայաստանն ու հայ ժողովուրդն իրենց կերտած պետականություններով, ստեղծած նյութական, հոգևոր ու բարոյական արժեքներով՝ անուրանալի ներդրում ունեն համաշխարհային քաղաքակրթության գանձարանում:

∗ Դրսի ուժերի կոպիտ միջամտությամբ Առաջին հանրապետության անկումից հետո էլ անկախ պետականության տեսլականը՝ իբրև հիմնարար քաղաքակրթական արժեք, չմարեց հայ հասարակական-քաղաքական մտքում: Այն նոր շունչ ու ոգի ստացավ արդեն մեր ժամանակներում՝ Երրորդ հանրապետությունում: Ինչ վերաբերում է Երկրորդ հանրապետությանը, ապա այն խորհրդային մեծ կայսրության (ԽՍՀՄ) համակարգում կարողացավ լուծել հայապահպանական, սոցիալ-տնտեսական ու կրթամշակութային առանձին խնդիրներ, որոնք անհրաժեշտ հիմք հանդիսացան մերօրյա Երրորդ հանրապետության համար:

∗ Ժառանգորդության և իրավահաջորդության ներքին հոգևոր կապ կա «**Մայիսի 28-ի**» «**Սեպտեմբերի 21-ի**» միջև: Հայաստանի առաջին հանրապետության անկումից հետո էլ՝ դրան հաջորդած խորհրդային 70 տարիների ընթացքում, հայ ժողովրդի մեջ՝ հայրենիքում հարկադրված լուռ, իսկ գաղթաշխարհում բարձրաձայն, բնավ չմարեց անկախության ոգին, վկան՝ Հայաստանի ներկայիս հանրապետությունը: Վերջինս առաջինի իրավահաջորդն է և հոգեհարազատ ժառանգորդը: Առանց առաջին հանրապետության, ամենայն հավանականության, չէր լինի նաև այսօրվա հանրապետությունը: Հենց դրանում է կայանում «Մայիսի 28-ի» և «Եռագույնի» խորհուրդը: Հայոց անկախ պետականությունը պետք է հանդիսանա հայ ազգային գաղափարախոսության հիմնասյուններից մեկը:

∗ 100 տարիների հեռվից ըստ արժանվույն գնահատելով 20-րդ դարի Հայոց առաջին անկախ պետականությունը՝ այսօր նոր՝ երրորդ հազարամյակում տեխնոլոգիական թռիչքներ ապրող, շարունակ փոփոխվող ու նոր մարտահրավերներով հագեցած աշխարհում մեզ համար առաջնայինը պետք է լինի ոչ թե մեր ժողովրդի սոսկ ֆիզիկական գոյատևման հիմնահարցը, ինչպիսին, ցավոք, նախընթաց

դարերում մշտապես ուղեկից է եղել, այլ քաղաքակիրթ ազգերից բնավ հետ չմնալու, ժամանակակից չափանիշներով հայոց պետականության շրջանակներում և նրանից դուրս զարգանալու և բարգավաճելու, հասնելու ազգային նվիրական բաղձանքների իրագործմանը: Արդ, ժամանակն է պետականորեն մտածելու և գործելու, քաղաքակիրթ աշխարհին ցույց տալու հայ ժողովրդի արարող ներուժը, կենսունակությունը, հավերժելու անկոտրում կամքը:

Բ ո վ ա ն դ ա կ ո ւ թ յ ո ւ ն

Պ ա տ մ ա կ ա ն ա կ ն ա ր կ ---------- 3
Գլ.1.- Հայաստանը անկախության վերականգնման ճանապարհին: Ռուսական 1917 թ. հեղափոխություններից մինչև 1918 թ մայիս
1.Իրադրությունը Անդրկովկասում և Հայաստանում ռուսական 1917 թ. հեղափոխությունների շրջանում ---------- 10
2.Թուրք-անդրկովկասյան ռազմաքաղաքական հարաբերությունները 1917 թ. վերջին
և 1918 թ. սկզբներին ---------- 20
3.Թուրքական զորքերի ներխուժումը Արևելյան Հայաստան և Մայիսյան հերոսամար-
տերը ---------- 26
4.Հայաստանի Հանրապետության հռչակումը ---------- 32

**Գլ. 2.- Հայաստանի Հանրապետության կազմավորումը: Պետակա-
նության կայացումը**
1.Բաթումի պայմանագիրը ---------- 44
2.Պետական իշխանության մարմինների ձևավորումը.
ա) Կառավարության ստեղծումը ---------- 46
բ) Արամ Մանուկյանի քաղաքական դիմանկարը ---------- 50
գ) Օրենսդիր մարմնի՝ խորհրդարանի ձևավորումը և օրինաստեղծ աշխատանքը-53
դ) Դատական իշխանությունը ---------- 70
ե) Տեղական իշխանության մարմինները (ՏԻՄ) ---------- 71

զ) Ազգային բանակի ստեղծումը ---------- 73
է) Դիվանագիտական կապերի հաստատումը ---------- 77
ը) Հայաստանի Հանրապետության պետական խորհրդանիշները ---------- 78

Գլ. 3.- Հանրապետության սոցիալ-տնտեսական և կրթա – մշակութային կայանքը
1.«Անձև քաոս և ավերակների կույտ» ---------- 80
2. Գաղթականության վիճակը և ներգաղթի խնդիրը ---------- 83
3. Տնտեսության վերականգնմանը և զարգացմանը ուղղված միջոցառումները --- 87
4.Կրթամշակութային կյանքը ---------- 94

Գլ.4.- Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքը: 1920 թ. Մայիսյան ապստամբությունը
1.Հասարակական-քաղաքական կյանքը ---------- 99
2.1920 թ. Մայիսյան ապստամբությունը ----------102

Գլ. 5.- Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքա-կանությունը (1918-1920 թթ.)
1.Հարաբերությունները հարևան պետությունների հետ ---------- 106
2.Հայ-վրացական հարաբերությունները ---------- 108
3.Հայ-ադրբեջանական հարաբերությունները: Արցախը և Զանգեզուրը ---------- 110

Գլ. 6.- Հայկական հարցը Փարիզի խաղաղության կոնֆերանսում:

Սևրի պայմանագիրը

1.Հայկական պատվիրակությունները Փարիզի կոնֆերանսում ---------- 114
2.Սևրի պայմանագիրը ---------- 120
3.Կիլիկիահայության աղետը ---------- 122

Գլ.7.- Հայաստանը «բոլշևիկյան մուրճի և թուրքական սալի» միջև

1.Հայաստանը ռուս-թուրքական հարաբերությունների ոլորտում ---------- 125
2.Քեմալական շարժումը և խորհրդա-թուրքական մերձեցումը ---------- 128
3.Թուրք-հայկական պատերազմը: Ալեքսանդրապոլի պայմանագիրը ---------- 133
4.Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը: Հայաստանի Հանրապետության անկումը ---------- 138

Ամփոփում և գնահատականներ ---------- 142

ԱՐԱՐԱՏ ՄԽԻԹԱՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(1918 - 1920ԹԹ.)